

ISSN 2579-2733

УНИВЕРСИТЕТ
ГРИГОР НАРЕКАЦИ



UNIVERSITI
GRIGOR NAREKATSI

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆԴԵՍ

2 (12)-2021

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

Հասարակական գիտությունների

հանդես

2021-2 (12)

-

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

*Գլխավոր խմբագիր՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*Главный редактор: ВАРДАН АКОПЯН
Ответственный секретарь: АМАЛИЯ ГРИГОРЯН*

*Chief Editor: VARDAN HAKOBYAN
Executive Secretary: AMALYA GRIGORYAN*

© Հանդեսում գետեղված հեղինակներ, 2021
© Ստեփանակերտի «Գր. Նարեկացի» համալսարան, 2021
© «Դիզակ պլյուս» հրատարակչություն, 2021

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐՄԵՆ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԱՎԱՆԵՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ – պատմական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ պրոռեկտոր

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր

ԲԱԲԱՅԱՆ ԴԱՎԻԹ – պատմական գիտությունների դոկտոր, ԱԳ նախարար

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Լուտովիկա և Յակոբ Այնթապյեան կենտրոնի տնօրեն, Որակի ապահովման պատասխանատու

ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱԶԱՏ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայ-ռուսական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզվի դասախոս

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՎԱԿ – իրավաբանական գիտությունների թեկնածու, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր

ՄԱՆԱՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԱՆՈՒՇ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական քարտուղար

ՄԿՐՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս

ՍՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀՈՎԻԿ – բանասիրական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս

ՄՈՒՐԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ակադեմիկոս, Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՐՔՄԵՆԻԿ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АВАКЯН АРЦРУН – доктор филологических наук, профессор, декан филологического факультета ЕГУ

АВАНЕСЯН АРМЕН – кандидат филологических наук, старший научный сотрудник литературного института имени М. Абегяна НАН РА

АВАНЕСЯН ВАЛЕРИЙ – доктор исторических наук, проректор АрГУ

АРЗУМАНЯН ЛИЛИТ – доктор филологических наук, профессор, ректор Ереванского государственного института театра и кино

АКОПЯН СЕВАК – кандидат юридических наук, проректор по научной части и международного сотрудничества Степанакертского университета «Григор Нарекаци»

БАБАЯН ДАВИД – доктор исторических наук, министр иностранных дел

ГРИГОРЯН АМАЛИЯ – кандидат филологических наук, доцент, директор западно-армянского арменоведческого научно-исследовательского центра Лютовики и Акопа Айнтаплеан Степанакертского университета «Григор Нарекаци», ответственная по обеспечению качества

ДЕВРИКЯН ВАРДАН – доктор филологических наук, директор литературного института имени М. Абегяна НАН РА

ЕГИАЗАРЯН АЗАТ – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой армянского языка и литературы армяно-русского университета

МАНАСЯН АЛЕКСАНДР – доктор философских наук, член-корреспондент НАН РА, профессор кафедры философии и логики ЕГУ

МАРГАРЯН СИРАНУШ – кандидат филологических наук, научный секретарь литературного института имени М. Абегяна НАН РА

МКРТЧЯН ЭДУАРД – доктор филологических наук, профессор, преподаватель кафедры армянского языка и литературы Степанакертского университета "Григор Нарекаци"

МУРАДЯН САМВЕЛ – доктор филологических наук, профессор, ЕГУ, заведующий кафедрой армянской литературы и истории имени академика Г. Тамразяна

МУСАЕЛЯН ОВИК – доктор филологических наук, преподаватель кафедры литературы и журналистики АрГУ

НИКОГОСЯН АРКМЕНИК – кандидат филологических наук, старший научный сотрудник
литературного института имени М. Абегяна НАН РА

ТОВМАСЯН ЛУСИНЕ – кандидат филологических наук, доцент, преподаватель кафедры языков
Степанакертского университета «Григор Нарекаци».

EDITORIAL COUNCIL

ARTSRUN AVAGYAN - Doctor of Philology, Professor, Dean of the Faculty of Philology of YSU.

ARMEN AVANESYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Institute of Literature after M. Abeghian of NAS of RA.

VALERI AVANESYAN - Doctor of Historical Sciences, ASU Vice-rector.

LILIT ARZUMANYAN - Doctor of Philology, Professor, Rector of Yerevan State Institute of Theatre and Cinematography.

DAVIT BABAYAN - Doctor of Historical Sciences, Minister of Foreign Affairs

AMALYA GRIGORYAN - Candidate of Philological Sciences, Docent, Director of Lutovica and Agob Aintablean Western-Armenian and Armenology Research Centre at Stepanakert «Grigor Narekatsy» University, in charge of Quality Assurance.

VARDAN DEVRIKYAN - Doctor of Philosophy, Rector at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA.

AZAT EGHIAZARYAN - Doctor of Philology, Professor, Head of the Armenian Language and Literature Chair at Armenian-Russian University.

LUSINE TOVMASYAN - Candidate of Philological Sciences, Associate, Lecturer of Foreign Language at Stepanakert «Grigor Narekatsy» University.

SEVAK HAKOBYAN - Candidate of Law Sciences, Vice-Rector for Scientific-International Cooperation at Stepanakert "Grigor Narekatsy" University

ALEXANDR MANASYAN - Doctor of Philosophy, Corresponding Member of NAS RA, Professor of the Chair of Theoretical Philosophy and Logic of YSU.

SIRANOUSH MARGARYAN - Candidate of Philological Sciences, Scientific Secretary at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA.

EDUARD MKRTCHYAN - Doctor of Philology, Professor, Lecturer of Armenian Language and Literature Chair at Stepanakert "Grigor Narekatsy" University

HOVIK MUSAELYAN - Doctor of Philosophy, Lecturer of the the Literature and Journalism Chair at ASU.

SAMVEL MURADYAN – Doctor of Philology, Professor, YSU, Head of the History of Armenian Literature Chair named after Academician Hr. Tamrazyan.

ARQMENIK NIKOGHOSYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Literature Institute after M. Abeghian of NAS of RA.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
Ֆրականագիտություն

Ամայա Գրիգորյան

Մաքառող գրականության ազգային ոգին 14

Զուխրա Երվանդյան

Գրիգոր Գուրգադյան. հայրենասիրության գաղափարի կերպավորումը 21

Անահիտ Ավագյան

Պատկերավորման արվեստը Համո Սահյանի պոեզիայում 28

Ազատուհի Աղբաթյան

Հոգեվարքի և հույսի երգերը Միամանթոյի պոեզիայում 35

Լեզվաբանություն

Ինգա Մարգարյան

Նորաբանությունները Վարդան Հակոբյանի ստեղծագործություններում 44

Քաղաքագիտություն

Ալեքսանդր Մանասյան

Կեղծ բանաձև, որով Բաքուն քողարկում է զավթողական իր քաղաքականությունը 53

Մանկավարժություն և մեթոդիկա

Ալվարդ Նազարյան

«Մատյան Ողբերգության» պոեմի ուսուցման նոր մոտեցումներ..... 58

Արնիկ Բաբայան

Օտար լեզվի ժամանակակից ուսուցչի նկարագիրը, դերակատարությունները, ուսուցչին ներկայացվող որակական պահանջները 63

Կարինե Բաղիյան

Անահիտ Առաքելյան

Ժամանակակից մեթոդների և ՏՀՏ գործիքների կիրառումը պատմության դասաժամերին որպես դասի արդյունավետության բարձրացման միջոց 69

Պատմություն

Էլինա Մխիթարյան

Ռուս-հայկական հարաբերությունների զարգացման ակունքները ռուսական պատմագիտության մեջ 76

Ժիրայր Միրումյան

Մյունի իշխանական տունը 6-7-րդ դարերում 83

Իրավագիտություն

Վլադիմիր Հովսեփյան

Տունդարձի նորմ՝ բազմաթիվ հարցականներով 97

Գրետա Արզումանյան

Դատական քննության հրապարակայնությունը 108

Կարինե Դավթյան

Դատապարտյալի իրավունքները և պարտականությունները 115

Տնտեսագիտություն

Հենրիկ Մանուկյան

Տվյալների վերլուծական ծրագրերի կիրառումն աուդիտում որպես ընտրանքային
ոփսկը նվազեցնելու միջոց 121

Հոգեբանություն

Արկադի Թովմասյան

Պարույր Սևակի հայրենասիրական քնարերգության հոգեբանական
Արժանիքները 129

Փոխադրումների և երթևեկության անվտանգության կազմակերպում

Գեղամ Միքայելյան

Կարո Մոսիկյան

Արամայիս Եսոյան

Կոմերցիոն ավտոմոբիլների և անիվավոր ռազմական տրանսպորտային
միջոցների կանոնակարգված տեխնիկական շահագործման
նորմատիվ բազայի մշակում 137

СОДЕРЖАНИЕ
Литературоведение

Амалия Григорян

Национальный дух борющейся литературы 14

Зухра Ервандян

Григор Гурзадян: изображение идеи патриотизма 21

Анаит Авагян

Искусство иллюстрации в поэзии Амо Сагяна 28

Азатуи Ахкатын

Песни агонии и надежды в поэзии Сиаманто 35

Языкознание

Инга Маргарян

Нововведения /неологизм/ к сборникам стихов и поэм Вардана Акопяна 44

Политическая наука

Александр Манасян

Ложная формула, которой Баку маскирует свою захватническую политику..... 53

Педагогика и методика

Алвард Назарян

"Новые подходы обучения поэмы "книга скорбных песнопений"" 58

Аревик Бабян

Образ современного учителя иностранного языка, его роль, качественные требования, предъявленные учителю 63

Карине Багиян

Анаит Аракелян

Применение современных методов и инструментов ИКТ на уроках истории как средство повышения эффективности урока 69

История

Элина Мхитарян

Истоки развития русско-армянских отношений в русской историографии 76

Жирайр Мирумян

Княженский дом Сюни в 6-7 веках 83

Юриспруденция

Владимир Овсепян

Нормы возвращения: с многочисленными вопросами 97

Грета Арзуманян

Гласность судебного разбирательства 108

Карине Давтян

Права и обязанности осужденного 115

Экономика

Генрик Манукян

Использование программного обеспечения для анализа данных в аудите
как способ снижения риска выборки 121

Психология

Аркадий Товмасян

Психологические особенности патриотической лирики Паруйра Севака 129

Организация безопасности передвижения и перевозок

Гегам Микаелян

Каро Мосикян

Арамаис Есоян

Повышение эффективности эксплуатации подвижного состава
комерческих автомобилей 137

CONTENT

Literary Criticism

Amalya Grigoryan

The National Spirit of Struggling Literature 14

Zoukhra Yervandyan

Grigor Gurzadyan: Depiction of the idea of patriotism 21

Anahit Avagyan

The art of illustration in Hamo Sahyan's poetry 28

Azatuhi Aghkatyan

Songs of agony and hope in Siamanto's poetry 35

Linguistics

Inga Margaryan

Neologisms in Vardan Hakobyan's verse and poems 44

Political science

Alexandr Manasyan

False Resolution, by Which Baku Covers Its Occupational Policy 53

Pedagogy and Methodology

Alvard Nazaryan

New approaches to teaching the poem "The book of sadness" 58

Arevik Babayan

The description and the role of a foreign language modern teacher and his quality requirements 63

Karine Baghiyan

Anahit Araqelyan

Application of modern methods and ICT tools in history classrooms as a means of increasing lesson efficiency 69

History

Elina Mkhitarian

The origins of development of russian-armenian relations in russian historiography 76

Jirayr Mirumyan

The prince house of Syuni in the 6th to 7th centuries 83

Jurisprudence

Vladimir Hovsepyan	
<i>The Norm of Homecoming</i>	97
Greta Arzumanyan	
<i>Publicity of proceedings</i>	108
Karine Davtyan	
<i>The rights of the convicted person and responsibilities</i>	115

Economics

Henrik Manukyan	
<i>The use of data analytics software in auditing as a way to reduce sampling risk</i>	121

Psychology

Arkadi Tovmasyan	
<i>The Psychological Merits of Paruyr Sevak`s Patriotic Lyric</i>	129

Organization of Security of Transportation and Traffic

Gegham Mikayelyan	
Karo Mosikyan	
Aramayis Yesoyan	
<i>Improving the efficiency of commercial vehicle rolling stock operation</i>	137

ՄԱՔԱՌՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒԳԻՆ

Հոդվածագիրը քննության առնելով «Ձայն արցախական» ժողովածուն՝ ընդհանրության մեջ ներկայացրել է ինչպես արցախյան առաջին, այնպես էլ ապրիլյան և 44-օրյա պատերազմներում գրողի և Արցախում ստեղծվող գրականության դերին ու նշանակությանը: Հոդվածում անդրադարձ է կատարվում անկախության շրջանից առ այսօր գրականության թեմատիկ-գաղափարական ընդգրկումներին և զարգացման առանձնահատկություններին: Երեք պատերազմներն էլ իրենց գեղարվեստական արտացոլումն են գտնում գրականության մեջ: Առանձնապես Արցախում ստեղծվող գրականությունն առանձնահատուկ է նրանով, որ հեղինակը մասնակիցն է ազատամարտին կամ ականատեսը: Հանգամանք, որ գրականության մեջ հավաստիության, անմիջականության և խոսքի համոզականության ապահովման լավագույն միջոցներից է, այս գույքահեռի վրա ի հայտ է գալիս նաև ազգային ցավի տաք զգացողությունը:

Բանալի բառեր: «Ձայն արցախական» ժողովածուն, արցախյան ազգային-ազատագրական պայքար, 44-օրյա պատերազմ, պոեզիա, արձակ, հայրենիքի կերպարը, դրամատիկական շերտեր, «առաջնագծի սերնդի» պոետներ, ազգային ոգի, գեղարվեստական տարեգրություն:

«Ձայն արցախական» ժողովածուի ստեղծման շարժառիթն, ահավասիկ, արցախյան վերջին՝ 44-օրյա ծանր ու Արցախի, հայ ժողովրդի համար անդառնալի հետևանքներով պատերազմն է: Այն կրկին փոթորկեց համայն հայությանը, և ցպահանջ դարձավ մեր ինքնության վերահաստատումն ու համախմբման անհրաժեշտությունը՝ համազգային միասնականության գաղափարի շուրջ՝ հանուն վտանգված ազգային ու հոգևոր արժեքների պահպանման, տարածման: Գրքի կազման ուշագրավ գաղափարը հնարավորություն ընձեռեց մեկտեղել Արցախում ապրող և ստեղծագործող գրողների երկերը, որոնք ընդհանրության մեջ ներկայանում են որպես մի հավաքական ամբողջություն՝ արդի հայ գրականության համապատկերում, ուրույն ձևով ներկայացնելով Արցախն ու արցախցուն. նրա ճակատագիրը, ազգային ազատատենչ ոգին, արժեհամակարգը, խաղաղասիրական ձգտումները, արդարության համար մղվող պայքարը: Առանձնապես, այդ գործերում առանցքային են՝ արցախյան երեք դաժան պատերազմների, հետպատերազմյան ողբերգական իրականության, սոցիալական, հոգեբանական խնդիրների, վերելքների ու վայրէջքների, ինչպես նաև ներքաղաքական և աշխարհաքաղաքական իրողությունների ու գոյաբանական վտանգների, տագնապների միջով անցնող մարդկանց կենսակերպն ու ներաշխարհը, նրանց չվերջացող մաքառումն ու բարոյահոգեբանական լարված վիճակը: Ժողովածուում ընդգրկված են ավագ, միջին և երիտասարդ սերնդի ստեղծագործողները՝ իրենց չափածո և արձակ ժանրի գործերով:

«Ձայն արցախականը» թեմատիկ և գաղափարական առումով բավականին ընդգրկուն է. հայրենիքի, բնության, սիրո փիլիսոփայական ընկալումները՝ գեղարվեստ-

տական մարմնավորում են ստանում ուրույն պատկերների մեջ:

*Ոտնահետքդ կայծա՛կ է,
երբ քո տունն է՝ ավերված,
սուր է ճամփադ, եւ զարկդ
երկնքի՞ց է՝ պահանջված:
Փրկելով գիր ու հավատ՝ խի՛ղճն ես
փրկում մարդկության,
վերծանելո՞ւ՝ անցյալդ՝
ունենում ես դե՛մք ու ձայն՝:*

(Ռոբերտ Եսայան)

Հետաքրքիր արձակ է ստեղծում երիտասարդ գրող Հերմինե Ավագյանը, թեպետ վաղուց ի վեր Արցախը ռազմագործողությունների թատերաբեմ է, սակայն արցախցին չի կորցնում հայրենի հողում ապրելու, արարելու իր երկաթե կամքը, վաղվա օրվա և խաղաղության հանդեպ հավատը: «Ամեն առավոտ խաղաղությունը գալիս է գյուղ, գնում է գյուղամեջ, հայտարարում է, որ եկել է, շրջում է տներով, որպեսզի ոտքերը տաքացնի վառարանների մոտ, որովհետեւ ցուրտ տեղերից է գալիս և չգիտի՝ վաղը կկարողանա՝ գալ, թե՛ ոչ: Նա գիտի՝ ինչքան էլ տրտնջանք, մեկ է, երբ էլ գա՝ գրկաբաց ենք ընդունելու, որովհետև մեր երազանքները միայն նրան կարող ենք պատմել, որովհետև ուրիշ ընկեր չունենք, որովհետև մենք միշտ ընտրում ենք նրան, իսկ նա ոչ միշտ է մեզ ընտրում...»²:

Պետք է ասել, որ գրական գործն առհասարակ, Արցախում սկսեց աննախադեպ վերելք ապրել հատկապես անկախության տարիներին, ուր և ծնունդ առավ ազատամարտի արցախյան գրականությունը՝ գեղարվեստական ուրույն որակով ու մակարդակով, ազատության ու անկախության պայքարի բովում թրծված: Արցախի գրական ընտանիքի հիմնադիր Գրիգոր Ներսիսյանի ստեղծած ավանդները շարունակեցին նորերը՝ Բագրատ Ուլուբաբյան, Բոգդան Ջանյան, Սարգիս Աբրահամյան...

Առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող հասկացությունները՝ պետություն, անկախություն, ազատություն, գրականություն, օրգանական մի ամբողջություն են կազմում և, անշուշտ, մեկնելի են մեկը մյուսի ընդհանուր համատեքստի մեջ: Անդրադառնալով այս հարցերին՝ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը հանգել է միանգամայն նոր ու ինքնատիպ եզրահանգման, որը մեր գրականագիտական մտքի պատմության մեջ կարևոր շեշտադրումներ է մտցնում: Ահավասիկ. «Հայրենիքը նույն պետությունն է, եւ պատկերացնել պետություն հասկացությունն առանց առարկայացված մշակութային այս արժեքների՝ անհնարին է: Այդ արժեքները ստեղծագործում է գրականությունը (բանահյուսությունը): Եվ այստեղ է, որ գրականությունն ու պետությունը դառնում են համարժեք: Գրականությունը պետության հիշողությունն է, առանց որի այն վերացական գաղափար է: Կարելի՛ է պատկերացնել Հունաստանն առանց իր դիցաբանի, չէ՞ որ հենց այս միֆերն են, որ կազմավորում են Հունաստանի պետական-էթնիկական դիմանկարը, տեղայնացնում երկիրը: Կամ փորձենք Հունաս-

¹ Եսայան Ռ., *Արամորդու գիրք, Ստեփանակերտ, 2020, էջ 95:*

² Ավագյան Հ., *Վազում եմ, սպասի՛ր...», «Անտարես» հրատ., Երևան, 2020, էջ 27:*

տանն ազատել Հոմերոսից, եւ նա կդիմագրկվի, կկորցնի իր անունը՝ այնքան նույնարժեք են Հունաստան-Հոմերոս խորհրդանիշները»³:

Անկախության շրջանում գեղարվեստական խոսքի զարգացումը պայմանավորված էր մի կողմից ազատ մտածողության հնարավորությամբ, մյուս կողմից մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նոր՝ արցախյան փուլով: Պատերազմը, թող ներվի, այսպես ասած, նոր գրական միջավայր ձևավորելու նախադրյալներ ստեղծեց: Արցախը դարձավ աշխարհի ամենաթեժ կետը, դա «արցախյան ֆենոմենի ինքնագիտակցման ժամանակն էր, որ ազդարարը եղավ հայոց ազգային ոգու արթնացման և խորհրդանիշն ազգային ազատագրական շարժման հոգևոր վերելքի մակընթացության»⁴:

«Արցախյան գրականությունը ստեղծվել է դժվար, անասելի դժվար պայմաններում եւ նվիրյալ գրական մարդկանց ազնիվ ջանքերով եւ գոհողություններով... ուրովիեստե նրանցից առաջիններն, իրոք, գոհվել, գոհ են դարձել խարավանքներին, ուրոնց մշտական հեղինակները թուրք-ազերիներն են», - գրում է Բոգդան Ջանյանը եւ ակնարկում, թե «ղարաբաղյան գրողների բաժանմունքը» աղբբեջանական ուժայինների համար միջոց է եղել «նացիոնալիստներ որսալու համար»⁵:

Արցախի գրողը, լինելով ժողովրդական տրամադրությունների ու իդեերի արտահայտիչը, ինչպես ասում են, ազատագրական պայքարի բոլոր փուլերում էլ հայտնվել է իրադարձությունների կիզակետում: Նա հանդես եկավ ոչ միայն որպես ազգային արդար ցասման ու ընդվզումների գաղափարախոս, այլև՝ ընթացք տվեց պայքարին: Իր հարցազրույցներից մեկում Վ. Հակոբյանը խոստովանել է. «Արցախի գրողը, դժբախտաբար, նախ հասարակական-քաղաքական գործիչ է, ապա՝ գրող: Եվ դա ընդգծված երեւաց ամենաճակատագրական ժամին՝ շարժման բուռն տարիներին ու պատերազմի ընթացքում»:

Արցախյան համազգային շարժումն առանձնացավ մեր պատմության մեջ մի կարևոր ու էական կողմով ևս, այն իր մեջ ընդգրկեց յուրաքանչյուր հայի՝ աշխարհի որ ծագում էլ նա լինե, ամբողջ հայությանը, ժողովրդին: Եվ, անշուշտ, պայքարի հաջողության գրավականներից մեկն էլ հենց դա էր: Արցախի ազատագրական շարժումն իր բովանդակությամբ համազգային էր, և, բնականաբար, այն իր ուրույն արտացոլումը գտավ հայ գրականության, հրապարակախոսության և բանաստեղծության մեջ: Իրենց ստեղծագործությամբ շարժմանն արձագանքեցին Հրայր Բեգլարյանը, Վարդան Հակոբյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Մաքսիմ Հովհաննիսյանը, Սոկրատ Խանյանը, Նվարդ Ավագյանը, Արկադի Թովմասյանը, Մովսես Յախշունցը, Բոգդան Ջանյանը և այլք: Նրանց ստեղծագործությունները, հիրավի, եզերքային բնավորություն ունեն իրենց խորքերում, Արցախ են ներկայացնում, յուրաքանչյուր բառ շնչում է ազգային այն առանձնահատուկ հատկանիշներով, որոնք բնորոշ են դարեր շարունակ ազատության համար մաքառող հային: Ինչպես Հ. Բեգլարյանն է գրում իր բանաստեղծութ-

³ Մարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք չորրորդ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2004, էջ 20:

⁴ Մարինյան Ս., Բանաստեղծի հայտնությունը, «Արցախ» հրատ., Ստեփ., 1998թ., էջ 17:

⁵ Ջանյան Բ., Հեռացած հեռուներ, Ստեփ., «Դիզակ պլյուս» հրատ., 2009, էջ 3:

յուններից մեկում՝ «Որտեղ Ավարայր//Ես այնտեղ թուր եմ»⁶:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարը, բնականաբար, իր արժանի արտացոլումն է գտնել հայ գրականության մեջ: Ստեղծվել է գեղարվեստական տարեգրություն՝ ազգային ավանդույթների ամուր հիմքերի վրա: Գրական ժանրերից գեղարվեստական խոսքի մեջ առավել վառ արտահայտություն է գտել պոեզիան, որն այլաբանորեն շարունակել է հայրենիքի ու բնաշխարհի մոտիվը՝ բեկված ազգային ոգու ազատասիրական անուրջներում: Հայրենիքի կերպարը՝ ստեղծված ռազմաշունչ գործերում, ձեռք է բերել կոնկրետություն: Եվ ամենաբնորոշ առանձնահատկությունը, որ որդեգրել է արցախյան բանաստեղծությունը, դա գեղարվեստական ճշմարիտ խոսքին հատուկ դինամիզմն է ու պոլեմիկան, իսկ դրամատիկական այն շեշտերը, որոնցով կարելի է բնութագրել Արցախում ծնվող ցանկացած բանաստեղծություն՝ անկախ նրա գեղարվեստական մակարդակից, դա բացատրվում է հինավուրց հայկական այս եզերքին բաժին հասած ճակատագրով ու դժվարին պայմաններով, մեկը մյուսին հաջորդող տխուր իրադարձություններով: Գրական ընտանիքի գրեթե բոլոր ներկայացուցիչները արձագանքել են ազատամարտին (Գուրգեն Գաբրիելյան, Հրաչյա Բեգլարյան, Վարդան Հակոբյան, Սոկրատ Խանյան, Արկադի Թովմասյան, Նորել Գասպարյան, Կիմ Գաբրիելյանը, Ժաննա Բեգլարյան, Դավիթ Միքայելյանը և այլք), իսկ նրանցից շատերը՝ և գրչով, և զենքով (Ռոբերտ Եսայան, Արիս Արսենի...)՝ դարձել հայրենիքի պաշտպաններ: Երիտասարդ բանաստեղծ Կոմիտաս Հակոբյանն իր կյանքը գոհեց հանում հայրենիքի: Հատկանշական է, որ գոյապայքարն արտացոլող բոլոր ստեղծագործություններում առաջին խնդիրը ոչ միայն Արցախ երկրամասի, այլև հայոց աշխարհի լինելության, ամբողջականության, չմասնատվածության գաղափարն է: Այս մասին հետաքրքիր ձևակերպում ունի Գարեգին Նժդեհը. «Հայաստանն ինչ ցուցանակ էլ որ կրելու լինի, չի կարող գոյություն ունենալ առանց Ղարաբաղի ու Զանգեզուրի»⁷:

Արցախյան ազատամարտն ոչ միայն թեմատիկ առումով, այլև գեղարվեստական միջոցների, հնարավորությունների, գաղափարական շեշտադրումների տեսանկյունով զգալիորեն հարստացրեց Արցախում ստեղծվող պոեզիան, որն, անշուշտ, զարգացման ներքին աղբյուրներ ունի համաշխարհային գրականության նորօրյա հայտնությունների հետ: Եվ պատահական չէ, որ քննության առարկա ժողովածուում տեղ են գտել եւ ավանդական չափի դավանող, եւ ազատ մտքի ու բանաստեղծության հետևորդները: Ահավասիկ. ընդհանրապես, պիտի ասել, որ պատերազմական թեմատիկայի նկատմամբ ոչ միայն մեր, այլև համաշխարհային իրականության մեջ հետաքրքրությունը մեծ է: Եվ պատճառներն, իհարկե, շատ են: Դրանցից մեկը, անշուշտ, բացատրվում է կյանքի ու մահվան սահմանագծում՝ էքզիստենցիալ իրավիճակներում, ծավալված անզիջում պայքարով, ավելի վառ արտահայտված մարդկային հատկանիշների, բնավորության գծերի, նպատակադրումների գործոնով, գործողությունների տաք ու բուռն ընթացքով, որոնք և չեն կարող իրենց արտացոլումը չգտնել գրական գործերում, որոնցում պատկերված ենք տեսնում ժամանակի թելադրանքով պայքարի մեջ մտած մարդն՝ իր ճակատագրի ողջ ողբերգականությամբ: Իրա-

⁶ Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, «Պոլիգրաֆ» հրատ., Ստեփ., 2000, էջ 31:

⁷ <https://hhpress>

դարձությունները փոխում են նաև մոտեցումները, արժեհամակարգերը, ընկալումները նորանում են, մեկնությունները կառուցվում միանգամայն այլ ելակետերի վրա: Ողբերգական ժամանակը ծնում է իր մոտեցումը՝ ցանկացած երևույթի նկատմամբ: Առանձնապես, արձակի ժանրում հնարավորություն ընձեռվեց առավել խորը և ընդգրկուն ներկայացնել ժամանակի ընթացքը, նկարագիրն ու հոգեբանությունը: Մնայուն և ուշագրավ գործեր են ստեղծել՝ Մաքսիմ Հովհաննիսյանը, Արտաշես Ղահ-րիյանը, Կոմիտաս Դանիելյանը, Կիմ Գաբրիելյանը, Նորել Գասպարյանը..., որոնցում գեղարվեստական վարպետությամբ արտացոլված ենք տեսնում՝ մարտնչող Արցախ աշխարհին իր ոգեղենությամբ ու գունեղանքով, արցախցու անկոտրուն կամքը, ազ-գային բնավորությունը, խոհը, ցավը, նրա որակական հատկանիշները՝ դիմացկու-նությունը, տոկունությունը, խիզախությունը, անձնագոհությունը, և վերջապես՝ ար-ցախյան գոյապայքարն իր անդառնալի կորուստերով ու ձեռքբերումներով: Անշուշտ, անհատականացված խոսքի, մոտեցումների ու պատկերավորման միջոցների համա-լիր դիտարկումը, գեղարվեստական տարբեր հնարավորությունների ու զաղափարա-կան լուծումների բազմազանության առկայությունը մեզ հնարավորություն են տալիս ավելի հստակ գծերով ներկայացնել այն կարևոր առանձնահատկություններից մեկը, գուցե և՛ ամենագլխավորը, որն ունի Արցախում ստեղծվող գրականությունը: Դա գրո-ղական խոսքի՝ որպես գեղարվեստական երևույթի հավաստիության խնդիրն է, որն, առաջին հերթին, բացատրվում է նրանով, որ հեղինակը մասնակիցն է ազատամարտի կամ ակնատեսը: Հանգամանք, որ գրականության մեջ անմիջականության և խոսքի համոզականության ապահովման լավագույն միջոցներից է, այս զուգահեռի վրա ի հայտ է գալիս և ազգային ցավի տաք զգացողությունը:

Արցախյան առաջին պատերազմին հաջորդած՝ ապրիլյան քառօրյա և վեր-ջին՝ 44-օրյա աղետալի պատերազմները նույնպես իրենց գեղարվեստական արտացո-լումն են գտնում գրականության մեջ: Երիտասարդ գրողները դարձյալ ակտիվորեն զինվորագրվել են գոյապայքարին ու մարտնչել հերոսաբար: Առանձնապես, բանաս-տեղծներ՝ Վիտալի Պետրոսյանը և Հայասեր Հովսեփյանը, կարելի է ասել, «առաջ-նագծի սերնդի» պոետներ դարձան, քանի որ նրանց տողը ծնվել է հենց խրամատում, ռազմագործողությունների ժամանակ, և որում հստակ է՝ պատերազմը մերժելու և խաղաղությունը հաստատելու շեշտադրումները, և որտեղ տիրապետող է առհա-սարակ զինվոր-սահմանապահի հոգեզգայական ապրումները, կորստի ցավն ու հայ-րենի հողի պաշտպանության գաղափարը: Ցավոք, Հայասեր Հովսեփյանը նահա-տակվեց այս վերջին պատերազմում: Մարտիկ-բանաստեղծի պոեզիան, ըստ ամենայ-նի, ներկայացնում է պատերազմի բոլորովին այլ ընկալում:

*Ես կառչել եմ այս հողին
իմ գոյությամբ,
ինչպես ծառն իր արմատներով,
ինչպես քարն՝
իր ծանրությամբ,
- համբուրում եմ նրա մեջ
այն արյունը,*

որ այս երկրի փրկության համար

թափվել է

հայ զինվորի սրտից՝

(Հայասեր Հովսեփյան)

Հավատարիմ խեչյանական պատգամին՝ գրականությունը կարողանալու հնարավորություն է՝ պատերազմն ատել տալու, գրողներն իրենց թե՛ չափածո, թե՛ արձակ գործերում ներկայացնում են այն աղետալի հետևանքներն ու հոգեբանական անկշռելի ցավը, որն մնում է պատերազմից հետո: Ավագ և միջին սենյի կողքին այսօր իրենց հաստատուն քայլերն են անում երիտասարդ ստեղծագործողներ՝ Սերգեյ Սաֆարյանը (Նեմրութ), Հերմինե Ավագյանը, որոնք իրենց թարմ ու ինքնատիպ մտածողությամբ նոր որակ են հաղորդում Արցախում ստեղծվող գրականությանը:

Մեր ժողովուրդը արհավիրքներ շատ է տեսել ու դրանք հաղթահարել է պատվով՝ առաջին հերթին իր ամուր կամքով ու ապագայի հանդեպ հավատով: Հայոց գիրն ու գրականությունը բոլոր դժվար պահերին, բոլոր ժամանակներում, անգամ Դեր-Ջորի անապատներում, հոգևոր հենակ են եղել հային՝ նրա մեջ ամուր պահելով անմեռելի ոգին: Եվ բնական է, որ ներկա ժողովածուի ամենաթախծոտ տողերում անգամ կա մի պայծառ լավատեսություն. «Ինչ էլ, որ լինի// մենք լինելու ենք», կամ՝ «Թե փուլ գա հանկարծ աշխարհն անգամ, //Դու միշտ կանգուն ես մնալու, Արցախ»⁸ (Վ. Հակոբյան):

«Ձայն արցախական» ժողովածուն հայ ժողովրդի, հայոց Արցախ աշխարհի հավերժ լինելության վկայագիրն է՝ գեղարվեստական խոսքի մի ուրույն ձեռքբերում:

НАЦИОНАЛЬНЫЙ ДУХ БОРЮЩЕЙСЯ ЛИТЕРАТУРЫ - АМАЛИЯ ГРИГОРЯН -Исследуя сборник "Арцахский голос", автор статьи представил обществу сложившейся в Арцахе роли писателя и значение литературы как в первую арцахскую, так и апрельскую, 44- дневную войнах. В статье затрагиваются особенности тематико-идейных внедрений литературы и развития независимых времен до сегодняшних дней. Все три войны находят художественное отражение в литературе. Литература, сложившаяся в Арцахе, особенна тем, что автор - участник или очевидец освободительной войны. Тот факт, что лучшим способом в литературе является обеспечение убедительности слова, правдивости, непосредственности; на этой параллели появляется также теплое ощущение национальной боли.

Ключевые слова: сборник "Арцахский голос", арцахская национально-освободительная борьба, поэзия, проза, 44- дневная война, образ родины, драматические пласты, поэты "поколения линии фронта", национальный дух, художественная хроника.

⁸ <http://artsakhwriters.com>

⁹ Հակոբյան Վ., Նշագրության լուսնի վրա, «Անտարես» հրատ., Երևան, 2016, էջ 137:

THE NATIONAL SPIRIT OF STRUGGLING LITERATURE- AMALYA GRIGORYAN-
Examining the "Voice of Artsakh" collection, the author of the article presented the role and significance of both the writer's and the literature in Artsakh during the first Artsakh war and April war and the 44-day war. The article refers to the thematic-ideological inclusions of the literature and its development of peculiarities from the period of independence till today. All three wars find their artistic reflection in the literature. The literature created in Artsakh in particular is special in that the author is a participant in the liberation war or an eyewitness. The circumstance that one of the best ways in the literature is authenticity, directness, and persuasiveness of the speech, also appears the warm feeling of national pain in this parallel.

Key words: *"Voice of Artsakh" collection, Artsakh national-liberation struggle, 44-day war, poetry, prose, the image of the homeland, dramatic layers, poets of the "front line generation", national spirit, artistic chronicle.*

**ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱՐՅԱՆ. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ
ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ**

**(«Հանձար՝ աստվածներից մերժված» խոհագրության
հերոսի՝ Հաննիբալ Բարկայի կերպարը)**

Գրիգոր Գուրգադյանի կերտած ինքնատիպ կերպարներից է Կարթագենի աշխարհահռչակ զորավարը՝ «աստվածներից մերժված հանձար» Հաննիբալ Բարկան։ Հերոսը, որ իրեն շրջապատող մարդկանց և պատմական իրականության բարոյական ըմբռնումների կրողն է, ձգտում է հաստատել վարքականոն կարգավորող կարևոր հիմնադրույթներից մեկը, այն է՝ ազգային ողբերգությունն ապրող անհատը պետք է առանձնանա շրջապատից նվիրական նպատակի համար մարտնչելու իր պատրաստակամությամբ։ Հերոսի ներաշխարհում տեղի ունեցող փոթորկումների հոգեբանական վերլուծությունները, նրա մտածումների իմաստասիրական բացահայտումները միտված են պատմական այդ ժամանակաշրջանի խորապատկերի վրա ցույց տալու հայրենիքի պատվի, նրա փառքի ու գործության համար պատասխանատվություն կրող անձի ներքին ողբերգությունը։

Բանալի բառեր՝ կենսահաստատ, պատմամշակութային, բանականության, դրամատիզմ, բովանդակալի, ներաշխարհ, անքննելի, բարոյահոգեբանական, իմաստություն, կենսունակ։

Գրիգոր Գուրգադյանի ստեղծագործական որոնումների ընդերքում անընդհատ խմորվող ծավալումներ կան՝ պայմանավորված եղած և տեղի ունեցող իրադարձություններով, պատմական տեղաշարժերով, հասարակայնորեն և պատմականորեն նշանավորվող ժամանակա-տարածաշրջանային առանձնագծերով։ Հենց այդ որոնումների ծավալումներից էլ գուրգադյանական արձակում ձևավորվում են քրոնոտոպի այնպիսի դրսևորումներ, որոնք հետաքրքիր են նախևառաջ հեղինակային նպատակաուղղվածության ընդգծմամբ։ Հատկանշականն այն է, որ այդ նպատակաուղղվածությունը միտված է հատկապես համամարդկային բացահայտմանը կոնկրետ ժամանակաշրջանից և կոնկրետ տարածությունից վերհանելու միջոցով։ Գեղագիտական նման իրողությունը հնարավորություն է տալիս որոշակի դիտանկյան տակ դնել Գուրգադյանի արձակի ստեղծագործական խնդիրների առանձնահատկությունները։

Յուրաքանչյուր գրողի գաղափարագեղագիտական ծրագրի հիմքում, անշուշտ, առաջնային տեղ ունի նաև մարդու և հասարակության հոգեբարոյական աշխարհը ներկայացնելու համակարգը, որի մանրահամակարգերից մեկը կերպարայինը, Գուրգադյանի խոհագրություններում ինքնօրինակ դրսևորումներով է։

Խոհագրությունների կերպարային համակարգը ներկայացնող հերոսներն առանձնանում են նախևառաջ իրենց մարդկային որակներով։ Առանձնագիծ, որով և շատ դեպքերում պայմանավորվում են ստեղծագործության գաղափարական ու գեղագիտական հարցադրումները։

Հերոսների կերպարավորման գուրգադյանական համակարգն ինքնատիպ է. կերպարները ներկայացվում են ոչ միայն ըստ իրենց՝ պատմության ընթացքի մեջ ունե-

ցած դերակատարության, այլ նաև ըստ ունեցած բարոյագեղագիտական ըմբռնումների և մարդկային որակների գնահատման իրենց սահմանած չափանիշների:

Գուրգադյանի կերպարավորած մարդիկ, որոնց էության անբաժան մասը գերերևոյականությունն է, ընդգծված անհատականություն-վերհանումներ են, որոնք մեծ մասամբ ցուցադրվում են վարպետորեն հյուսված իրավիճակներում՝ հեղինակային հիմնավորված միջամտություններով: Նրանցից շատերը, ի դեպ, ներկայացվում են իրենց գյուտերի, ստեղծագործությունների, աշխատությունների վերաբերյալ արվող դիտարկումների, դրանց վերլուծությունների խորապատկերի վրա: Նրանք միմյանց լրացնում են իրենց մարդ-տեսակի, գիտնական-տեսակի առանձնահատկություններով՝ այդպիսով հարստացնելով, ամբողջականացնելով խոհագրությունների կերպարասրահը:

Գուրգադյանի ստեղծած կերպարասրահի ինքնատիպ դեմքերից է Կարթագենի աշխարհահռչակ գորավարը՝ «աստվածներից մերժված հանձար» Հաննիբալ Բարկան (**«Հանձար՝ աստվածներից մերժված»**): Նա որպես «մարդ-իրադարձություն» ներկայացված անհատականությունների շարքում հատկապես առանձնացող հերոս է:

Ըդիանրացնող, տիպական նշանակություն ունեցող վառ անհատականություն է Հաննիբալը, որի էության, ներաշխարհային տարածքների ծավալումների և ընդգրկումների բացահայտումները կատարվում են ինչպես նրա ապրումների, զգացումների պատկերման օգնությամբ, այնպես էլ հոգեվիճակի անկեղծ ու հուզումնալից նկարագրություններով: Այս հերոսի ներաշխարհի նկարագրվող նրբերանգների ամբողջությունը առանձնանում է ինքնատիպ հմայքով և առինքնող ուժով:

Կերպարի ամբողջականացմանը հեղինակը հասնում է աշխարհի, աշխարհին իմաստավորող ու հարստացնող մշակութային արժեքների նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքը լավագույնս արտահայտող խոհ-պատկերներով, որոնցում կերպավորվում է մարդու հոգևոր փոխակերպման գաղափարը՝ որպես փոխակերպման ազդակ դիտարկելով մշակույթը:

Գրողն անթաքույց հիացմունքով է ի ցույց դնում իր վերաբերմունքը պատմական այս հզոր անհատականության նկատմամբ: Յուրովսանն ստեղծելով հերոսի գործողությունների հոգեբանական դրդապատճառները ներկայացնող իրավիճակներ՝ նա ոչ միայն մտքի ու կամքի մեծ ուժը է հաղորդում նրա արարքներին, այլև դրանք օժտում է մարդկային խիզախումների նոր որակներով: Հաննիբալի կերպարով Գուրգադյանը փորձում է հերոսականության առումով իր պատմական-հասարակական ըմբռնումներն ու պատկերացումները արտացոլող գաղափարականությունը դարձնել ընդհանրացումների հիմք և ծառայեցնել կենսական երևույթների ճշմարտացի արտացոլմանը: Եվ պետք է խոստովանել. դա հաջողված իրողություն է:

«Հանձար՝ աստվածներից մերժված» խոհագրության բարձր գեղարվեստականության հիմքը գաղափարական ուղղվածության բարձրարվեստ դրսևորումն է: Այս գործը հասարակական աշխարհայացք ձևավորող հղագրումներով է, որոնց նպատակն ու նրանում ամրակայված բարոյագեղագիտական իդեալը կենսավորվում են հեղինակի՝ ժողովուրդների պատմության և հասարակական կյանքի զարգացման օրինաչափությունների անխեղաթյուր ըմբռնումներից ու խորքային ընկալումներից:

Փոթորկուն ներաշխարհով Հաննիբալի կերպարի բնորոշ առանձնահատկություններից է ներքին, խորաշերտային հակադրությունների ամբողջականությունը: Այս հերոսը անընդհատ ինքն իր հետ բախման մեջ է, և այդ բախումն առանցքային է. այն կերպարին հաղորդում է որոշակի գործառույթներ և ծառայեցնում թեմայի իրացմանը:

Պատմական հզոր անհատի բարոյահոգեբանական ապրումների, ինչպես և նրա շրջապատի հոգեբանական կացության նկարագրությունները՝ կապված ազգային իրականության հետ, ակնառու են դարձնում հյուսվածքի ներքին խորհուրդները: Իրական կյանքի, իրական երևույթների պատրանքի ստեղծման խորապատկերի վրա (ստեղծագործական հնարանք, որն իրականացվել է անհատականացված պատկերների միջոցով) գրողին հաջողվել է անձնագոհ հայրենանվիրության, բուռն, անսահման կենսասիրության գաղափարը կերպավորել: Հանձին Հաննիբալի՝ մենք տեսնում ենք այն մարդ-իրադարձությանը, որի կերպարով հեղինակին հաջողվել է կենսավորել հանուն հավատամքի անձնագոհության գնալու գաղափարը: Եվ այդ կենսավորումը իրականացվել է մեծ զորավարի անձին հարիր հանդիսավոր ոճի ամբողջ վեհությամբ ու շքեղությամբ: Հերոսի աշխարհայացքի համակարգը կազմող տարրերը ձևավորվել են էմպիրիկ ձևով, տարերայնորեն: Կյանքն ու տիրող աշխարհակարգն են նրան դարձրել լայնախոհ, սովորեցրել, թե ինչպես ապրի դաժան բարքերից մոլեգնող աշխարհում, ինչպես հատկորոշի իր դերը հայրենիքի ճակատագրում, ինչ համոզմունքներով ապրի, ինչ դիրքորոշումով ապրեցնի իր ժողովրդին: Պատմական իրադարձությունների, մարդկային ապրումների խտացում-պատկերումներով ներկայացնելով որոշակի ժամանակաշրջանի համապատկերը և ներըմբռնողական թանձրացումներով հարստացնելով զորավարի Հաննիբալի կերպարը՝ Գուրգադյանը այն ծառայեցնում է հայրենանվիրության իր դավանած գաղափարի ելակետային դրույթների վերհանմանը:

«Հանձար՝ աստվածներից մերժված» խոհագրության բովանդակային տարածքը մեծ չէ. այնուամենայնիվ, հեղինակին հաջողվել է մեծ վարպետությամբ գլխավոր հերոսի արարքները թելադրող հանգամանքները կենսականացնել և կերպարը կենդանի բնավորության վերածել: Հետաքրքիր է, որ անհատի՝ հենց իր երկրի, իր ժողովրդի ներքին միջավայրից բխող դրաման է դառնում հոգեբանական այն առանցքը, որի շուրջը հյուսվում և ծավալվում է ամբողջ պատմությունը:

Հաննիբալի ներաշխարհի պատկերումը կատարվում է հոգեբանական թանձրացումներով: Հերոսը, որ իրեն շրջապատող մարդկանց և պատմական իրականության բարոյական ըմբռումների կրողն է, ձգտում է հաստատել վարքականոն կարգավորող կարևոր հիմնադրույթներից մեկը, այն է՝ ազգային ողբերգություն ապրող անհատը պետք է առանձնանա շրջապատից նվիրական նպատակի համար մարտնչելու իր պատրաստականությամբ: Այս առումով՝ Հաննիբալի բարոյական նկարագիրը շահեկան դրսևորումներով է: Մարդկային ըմբռնման տեսակետից նա, իրոք, վեր է իր պահից. նա հաղթող մարդու հոգեբանության կրող է և համակված է հանուն հայրենիքի մղվող կռվում տարած հաղթանակի հասարակական-բարոյական վեհության գիտակցումով:

Հաննիբալը, ինչպես նշում է Գուրգադյանը, ամբողջ կյանքում ունեցել էր մի խնդիր, մի նպատակ միայն՝ դեռ մանկուց եկած՝ իր հայրենիքի, Կարթագենի անկախությունը, անկախությունը հռոմեական տիրապետությունից: Իր հոր՝ հզոր զորավար Համիլկար Բարկայի հետ ռազմական արշավանքների ժամանակ, զիջերները միայնակ, խարույկի կողքին կուչ եկած, նա՝ այդ լռակյաց պատանին, միայն մի բան էր երազում՝ իր հայրենիքի ազատությունը... Եվ ուխտի վերածված այդ երազանքի իրականացմանը ծառայեցրեց իր ողջ կյանքը... Հաննիբալը ապրեց իր դաժան կյանքը Հռոմի հանդեպ ունեցած ատելությամբ՝ երբեք չմոռացվող, ոչ մի ակնթարթ չթուլացող... Այդ ամբողջ ժամանակ ունենալով իր ներսում մի խնդիր, մի նպատակ ու մի հիշո-

դություն՝ իր հայրենիքի անկախությունը...¹

Այնուամենայնիվ, Հաննիբալն իր ներաշխարհում ինքն իր հետ կռիվ ունեցող մարդ է՝ լի հակասականությամբ։ Ու պատահական չէ, որ արտասովոր էությամբ այս հերոսի վարքագիծն ու գործողությունների ընթացքը ընթերցողին նախապատրաստում են նրա ողբերգական կործանմանը։

Մարդու այլագոյության գաղափարի շուրջ է խորհել տալիս գրողը, երբ ներկայացնում է Հաննիբալին՝ Հռոմի Ֆորումի դիմաց՝ մտքերի մեջ խորասույգ։ Պահի հուզական նախատրամադրվածությունն օգնում է հերոսի խոհերի և հույզերի բացահայտման ընթացքը դիտարկելու մարդու երկփեղկվածության խորապատկերի վրա։ Իրատեսական աշխարհայացքով առանձնացող Հաննիբալի աշխարհագրացողությունն ասես փոխվում է. արվեստի գլուխգործոցի առջև հայտնվում է միստիկ վիճակում. նա իր ներսում գոյավորվող մի այլ աշխարհում էր։

Գիտակցական ձգտումը ենթագիտակցական ոլորտում ենթարկվում է կերպավորման, և հերոսի արարքի հոգեբանական դրդապատճառի բացահայտման կարիքն ըստ էության կորցնում է իր կարևորությունը։ Գլխավորվում է այն իրողության գիտակցումը, ըստ որի՝ համամարդկային կենսունակ ավանդները, անկախ ազգային աշխարհայացքից, ունակ են մարդուն հոգևոր փոխակերպման ենթարկելու։

Հայտնի է՝ գիտակցության կեցության ձևերից մեկն էլ մտքի տարածությունը հաղթահարելու կարողությունն է։ Հաննիբալին հաջողվում է հենց բախտորոշ այդ տարածությունը հաղթահարել։

Հռոմի վրա հարձակվելու, այն ավերակների վերածելու չարիքի ողջ խորությունն ու ծավալը քաջ գիտակցող զորավարից վերիբախտ հոգեկան ուժ, հզոր կամքի դրսևորում էր պահանջվում երդումը դրժելու և իր զորքով Հռոմի մատույցներից հեռանալու համար։ Այդ պահին, անկասկած, ժողովրդի հավաքական իմաստությունն էր արթնացել հերոսի ներսում։ Զորավարի հայտարարությունը՝ *«Ճակատամարտը Հռոմի համար չի լինի»*, քարացրել, պապանձեցրել էր նրա հետ միասին անուր տառապանքների, անհաշիվ կռիվների ու ճակատամարտերի միջով անցած կարթագենցիներին... *«Ի՛նչ կատարվեց նրա հետ, ինչո՞ւ Ֆորումի տեսքն առաջ բերեց այդ ցնցումը նրա մեջ՝ հրաժարվել այն մտքից, այն խնդրից, ինչի համար իր կյանքն էր դրել...»*²։ Պատասխանը փնտրենք մերօրյա փիլիսոփայի դիտարկումներից մեկում. *«Մշակույթն իր ողջ իմաստն ու մարդկայնացնող էությունը ձեռք է բերում հոգևոր ստեղծագործության ոլորտում, քանզի այստեղ ոչ միայն մշակույթը ստանում է իր համակարգված ու ամբողջական բնույթը, այլ նաև բացահայտվում է մարդու անսահման ստեղծագործական հնարավորությունները, մարդու հոգևոր ու մտավոր վերելքը դեպի ազատությունը, գեղեցիկը, բարին ու ճշմարիտը։ Այստեղ է նաև, որ ի հայտ է գալիս մարդու հոգևոր կատարսիսի ողջ յուրահատկությունը, որպես մարդու լինելության, կատարելության, ներքին մաքրագերծման ու մարդկայնացման անսահման հնարավորություն»*³։

Իսկ Գրիգոր Գուրգադյանը ընդհանրապես մարդկության հարատևման գաղտնիքի բանալին համարում է այն իրողությունը, որ ինչպես մարդու, այնպես էլ *մարդկության գոյության ընթացքում վատն ու արգահատելին անցնում է, մոռացվում վերջին հաշվով, մինչդեռ լավն ու գեղեցիկը մնում է, կուտակվում և դառնում է արժեք, հոգևոր հարստություն*։

¹ Գր. Գուրգադյան, *Տիեզերքը ասիի մեջ, «Զանգակ-97» հրտ, Եր., 2005, էջ 361-362*։

² Գր. Գուրգադյան, *Մի սիրո պատմություն, «Զանգակ-97» հրտ, Եր., 2004, էջ 24*։

³ Ս. Մարգարյան, *Մշակութաբանություն, «Նոյան Տապան» հրտ., Եր., 1997, էջ 49*։

Հաննիբալի արարքի նկատմամբ Գուրգադյանի վերաբերմունքը իր բարոյահոգեբանական հիմնավորումն ունի. չէ՞ որ նա այն ազգի արժեհամակարգային բարոյականների կրողն է, որի ժողովրդի բանահյուսած և ոչ մի գործում հերոսը խաբեությամբ չէ, որ հաղթում է հակառակորդին: Թերևս բարոյահոգեբանական նման արժեքներով իր ներաշխարհը կրթած Գուրգադյանը հրաշալի էր հասկանում Հաննիբալի «հոգևոր կատարսիսի ողջ յուրահատկությունը, որպես մարդու լինելության, կատարելության, ներքին մաքրագերծման ու մարդկայնացման անսահման հնարավորություն»: Այնինչ, նպատակին հասնելու համար ոչնչի առաջ կանգ չառնող, Ֆորումի տեսքի ազդեցության տակ տպավորապաշտության սարդոստայնում հայտնված Հաննիբալի վարքագիծը հասկանալի չէ ավանդական մտայնությամբ առաջնորդվող նրա զինակցի համար: (Ինչպես նման դեպքերում կասեր Գուրգադյանը **սա մտածելու բան է**):

Մարդու ներաշխարհում կատարվող անքննելի շարժերի թեմայի մասնավորումը գրական հանգանակի դեր կատարող այս գործում չարիքի ողջ խորությունն ու ծավալը գիտակցող Հաննիբալի կերպարը մարդու այլագոյության հաջողված վկայություններից է. այն մեծապես օգնում է իրականացնելու խոհագրության հյուսվածքի ներքին խորհորդները, դարաշրջանի համապատկերի մաս կազմող գոյաբանական գործոնների գեղարվեստական քննությունը:

«Ներքին մաքրագերծման ու մարդկայնացման անսահման հնարավորություն» ստեղծող արվեստը, որ «բացարձակ է, մեծ է, ինչպես աշխարհը, և պարզ է, ինչպես ճշմարտությունը»⁴, մարդու գեղագիտական գիտակցության ու մտքի վրա նշանակալից ազդեցություն ունի: Այդ ազդեցությունը պայմանավորված է հեղինակի աշխարհընկալումով, նրա հոգեկերտվածքով ու արարող երևակայությամբ, ինչպես և երևույթներն ու իրողությունները իմաստավորելու, դրանք գեղարվեստորեն բովանդակավորելու և արժեքավորելու կարողությամբ. հատկանիշներ, որոնք Գուրգադյանին տրված էին շոայլորեն:

Ըստ գերմանացի փիլիսոփա Էդմունդ Հուսսերլի՝ ճշմարտության չափանիշը սուբյեկտի անձնական ապրումներն են⁵: Գուրգադյանի համոզմամբ Հաննիբալի՝ «Հռոմի վրա չնետվելը նույնպես հանճարեղ որոշում էր...»⁶, և այն մեծապես պայմանավորված էր նրա անձնական ապրումներով: Գրողի կենսաանպատ հայեցումից ծնված գեղագիտական այս միտքը արվեստի՝ հոգեկերտ, ներգագցական աշխարհը տակուլրա անող հզոր կարողության շեշտումն ու պանծացումն է: Բնավորության, կեցվածքի ու հասարակական պահվածքի ցայտուն հատկանիշներով օժտված Հաննիբալը իր ապրումներով, զգացմունքներով դրա փայլուն վկայությունը կերպավորող հերոս է: Այս առանձնահատկության շեշտումն է հենց առավել բովանդակալի որակներ հաղորդում ստեղծագործությանը:

«Հանճար՝ աստվածներից մերժված» խոհագրության ամբողջ պատումը վարպետորեն կերտվող գեղարվեստական մանրամասներով է, որոնք, ժամանակատարածային սահմանները զանց առած, իրենց՝ վարպետորեն ներկայացված գեղագիտական, գաղափարական կոմաններով ժամանակի կերպավորման ամբողջականացումն են իրականացնում: Դրանք, ժամանակի մտայնությանը հնարավորինս հարագատ մնալով, կենսական ճշմարտացիություն են հաղորդում ծավալվող իրադար-

⁴ Վ. Փափազյան, «Հետադարձ հայացք», գիրք առաջին, «Մովետ. գրող» հրտ., Եր., 1999, էջ 26:

⁵ Աղբյուրը՝ Ռընե Ուելլեթ, Օսթին Ուորրեն, Գրականության տեսություն, Մարգիս Խաչենց / Փրինթինգտոն, Եր., 2008, էջ 496:

⁶ Գր. Գուրգադյան, Տիեզերքը ակփի մեջ, էջ 25:

ձուլություններին:

Ստեղծագործության բովանդակությունը ներկայացնող պատումային ընթացքն ունի մեծ լարվածություն: Դրամատիզմով հագեցած դեպքերի զարգացումը տանում է դեպի հերոսի դավանած գաղափարների, ձգտումների, ապրումների ու զգացմունքների ներքին բախման, որի արդյունքում նրա հոգեկան աշխարհում ծավալվող կոնֆլիկտը վերածվում է խորին ողբերգության: Կենսական այս իրողությունը նշանակալից է դարձնում խոհագրության հասարակական իմաստն ու գեղագիտական նշանակությունը:

Հերոսի մեջ ընդհանրականը՝ կերպարայինը, կենսավորած է ըստ գաղափարական ու գեղագիտական որոշակի նպատակադրման: Նրա ներաշխարհում տեղի ունեցող փոթորկումների հոգեբանական վերլուծությունները, նրա խոկումների իմաստասիրական ենթաշերտերի բացահայտումները միտված են պատմական այդ ժամանակաշրջանի խորապատկերի վրա ցույց տալու հայրենիքի պատվի, նրա փառքի ու գործության համար պատասխանատվություն կրող անձի ներքին ողբերգությունը: Այդպիսով հեղինակը ուզում է ընդգծել հանրային փառք վայելող անհատականության՝ իր ժողովրդի ողբերգությունից սկիզբ առնող մեծ տառապանքի խորքն ու դրա համամարդկային բնույթը:

Գործողությունների ծավալման ժամանակաշրջանի բանականության բովանդակավորումը հուզախառն փաստերով ներկայացնող այս խոհագրությունում գրողի գեղագիտական խնդիրը հենց հայրենիքի ցավն ու տառապանքն իր մեջ կրող մարդու ներաշխարհի բացահայտումն է, նրա կերպարավորումն ու կոթողայնացումը:

Ընթերցողի մտքի տիրույթ բերվող տեղեկատվական լայնածավալ գիտելիքները, հերոսների հոգեբանական կացությունների նկարագրություններով ազգային պահելված ու գոյակերպ թելադրող բարոյականների արծարծումները ոչ միայն անհատական, այլև համընդհանրական բարոյագրագրական կողմնորոշիչների դեր են կատարում, մտածողության համար նոր ծիրեր բացում:

Այս գործի «հերոսներից» մեկն էլ ժամանակն է, որի կերպավորումը, անշուշտ, ինքնանպատակ չէ: Ելակետային դրույթների ուղղվածությունը մարդկային պատմության մեջ ճակատագրական դերակատարում ունեցած անհատի՝ բարոյահոգեբանական դժվարին կացությունների մեջ ունեցած վարքագծի բացահայտումն է կոնկրետ ժամանակաշրջանի համապատկերում:

Բարոյական հարթության վրա ներկայացնելով հոգեկործանումի տանող ճանապարհից հետ կանգնող Հաննիբալին՝ Գուրգադյանը հաղթանակի դափնին տալիս է պատմամշակութային նշանակություն ունեցող արժեքներին և ժողովրդական բարոյախոսությանը:

Դիտարկման առումով՝ Հաննիբալի կերպարը վերածվում է ուղենշող իդեալի: Լ. Ն. Տոլստոյի բնորոշմամբ՝ «*Բղեալը ուղեցույց աստղ է: Առանց նրա չկա հաստատուն ուղի, իսկ երբ չկա ուղի, չկա կյանք*»⁷: Ըստ էության՝ սա մարդ-իրադարձության կենսահաստատ գոյության փիլիսոփայական հիմնավորումն է:

Հաննիբալը Գուրգադյանի կերպարավորած մարդ-իրադարձությունների շարքում աչքառու առանձնագծերով հերոս է: Եվ նա եզակի չէ: Անկախ մարդ-իրադարձություններին ներկայացնող իրավիճակ-իրադարձությունների ծավալումների չափերից՝ նրանց թիվը խոհագրություններում շատ է, և դա գեղագիտական առումով բարեբախտություն է:

⁷ Է. Լ. Դубко, Բ. Ա. Титов, *Идеал, справедливость, счастье, М., 1989, ст. 6.*

ГРИГОР ГУРЗАДЯН: ИЗОБРАЖЕНИЕ ИДЕИ ПАТРИОТИЗМА (ОБРАЗ ГАННИБАЛА БАРКИ, ПЕРСОНАЖА ЭССЕ "ГЕНИЙ, ОТВЕРГНУТЫЙ БОГАМИ") - **ЗУХРА ЕРВАНДЯН** - Одним из своеобразных персонажей, созданных Григором Гурзадяном, является всемирно известный полководец Карфагена, "отвергнутый богами гений" Ганнибал Барка. Герой, являющийся носителем нравственного восприятия исторической реальности и окружающих его людей, стремится установить один из основополагающих принципов поведения, а именно, личность, переживающая национальную трагедию, должна выделяться от окружающих своей готовностью бороться за заветное дело.

Психологические анализы волнений, бушующих во внутреннем мире героя, выявления его философских размышлений, направлены на изображение внутренней трагедии человека, несущего ответственность за честь, славу и могущество Родины на фоне того исторического периода.

Ключевые слова: Жизнеутверждающий, историко-культурный, разумности, драматизм, содержательный, внутренний мир, непостижимый, морально-психологический, мудрость, жизнеспособный

GRIGOR GURZADYAN: DEPICTION OF THE IDEA OF PATRIOTISM (THE IMAGE OF HANNIBAL BARCA, THE CHARACTER OF THE ESSAY "GENIUS REJECTED BY THE GODS")- **ZOUKHRA YERVANDYAN**-One of the peculiar characters created by Grigor Gurzadyan is the world-famous commander of Carthage, "the genius rejected by the gods" Hannibal Barca.

The hero, being the bearer of the moral perception of the people around him and the historical reality, seeks to establish one of the fundamental principles of behavior, that is, the person experiencing a national tragedy, should stand out from those around him by his readiness to fight for the cherished goal.

Psychological analyzes of the inner world of the hero, revealing his philosophical thoughts, are aimed to depict the inner tragedy of a person responsible for the honor, glory, and power of the homeland in that historical period.

Key words: Vital, historical-cultural, rationality, dramatic effect, meaningful, inner world, inconceivable, moral psychology, wisdom, viable

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՄՈՒ ՄԱՀՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում է Համո Սահյանի պոեզիայի պատկերավորման արվեստը: Արվեստ, առանց որի չի կարող շնչել պոեզիան: Արվեստ, որի շնորհիվ հարստանում է ընթերցողի աշխարհայացքը: Իրավամբ, Սահյանին կարելի է համարել պատկերավորման արվեստի մեծագույն վարպետ: Նա տողի, հանգի, բառի նկատմամբ հոգատար վերաբերմունք ունի: Նրա խոսքարվեստը բացառիկ հարուստ է: Ուսումնասիրության նպատակն է աշակերտներին ներկայացնել Սահյանի կիրառած պատկերավորման բոլոր միջոցներն իրենց նրբերանգներով: Ուսումնասիրության արդյունքում երիցս համոզվում ենք, որ պատկերավորման արվեստը պոեզիայի զարդն է:

Բանալի բառեր՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, չափազանցություն, նվազաբերություն, հակադրություն, հնչյունախաղ, երգիծանք, բույրի զգացողություն, գույնի զգացողություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱՀՅԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Իմ ամեն մի տողը զսպված մի տարերք է:
Զարկերակի զարկ է ն արյունի եռք է...**

Սահյանի մուտքը հայ գրականություն շփնդով չեղավ, նա մտավ անաղմուկ, կամացուկ, բայց և հասկացրեց աշխարհին, որ եկել է ինքը՝ <<ամենամիակը>> և <<ամենաեւը>>: Եկել է՝ բացահայտվելու, գտնելու ինքն իրեն, եկել է՝ դառնալու <<քարափների դեսպան>>, դառնալու <<փոքրիկ մեծություն>>, <<մայր բնության աչք ու ականջը>>:

Ասում են՝ երբ թնդանոթները որոտում են, մուսաները լռում են: Համո Սահյանի պարագայում ուրիշ բան ստացվեց. որոտացող թնդանոթներին զուգահեռ լսվեց և Սահյանի ձայնը:

Սովորական մահկանացուի և Սահյանի աչքերի միջև կա ահռելի տարբերություն: <<Աչք>> ես նկատի չունեմ կոնկրետ օրգանը, այլ այն, թե ինչպես է տեսնում Սահյանը, և ինչպես է տեսնում սովորական մարդը: Նրա մոտ <<արևը կարող է հոտ ունենալ>>, <<առուն կարող է ուշաթափվել>>, <<տերևները կարող են պահմտոցի խաղալ>>, <<քամին կարող է փշաքաղվել>>, <<թարթիչներից կարող են լեռներ կախվել>>, <<ծաղիկները կարող են թռչել>>, <<մողեսները կարող են սիրահարվել>>: Փաստորեն Սահյանի ամենամեծ առանձնահատկությունն այն է, որ նա գտել է պատկերներով մտածելու գաղտնիքը:

Սահյանն իրեն համարում էր <<գիծ>> բանաստեղծ: Եվ իր այս տարօրինակ ինքնագնահատումը նա հաստատում էր իր համար ճշամարտություն դարձած տողերով. <<Մինչև 18 տարեկանը բոլորը բանաստեղծ են, 18-30 բանաստեղծներն են

բանաստեղծ, 30-ից հետո գծերն են բանաստեղծ>>¹: Նա զուգահեռներ է անցկացնում իր և... <<Երեխաները, խենթերը և բանաստեղծները միևնույն ձևով են մտածում>>: Փաստորեն բանաստեղծ լինելուց առաջ կարևորագույն պայման է երեխա լինել, մի խենթ երեխա...

***Երանի նրան, ով մեծացել է
Ու երեխա է մնացել դեռ...***

Սահյանն իր աշխատանքին վերաբերվում էր երկյուղածությամբ, նրա համար պոեզիան սուրբ տաճար մտնելու նման մի բան է. <<Բանաստեղծությունը նախքան թղթին հանձնելը ես մտքումս գրած եմ լինում: Եվ եթե որևէ բառ, որևէ արտահայտություն է պակասում, գրի չեմ առնում: Ես սպիտակ թղթից վախենում եմ: Ով է մեզ իրավունք տվել նրա մաքրախորհուրդ չգրվածությունը խախտել>>²:

Սահյանն աստվածային երկյուղածությամբ է լցված ոչ միայն մաքուր էջի, թղթի նկատմամբ, այլև իր ստեղծած յուրաքանչյուր տողի, գրքի նկատմամբ: Համալսարանի ուսանողների հետ մի հանդիպման ժամանակ այն հարցին, թե ինչ զգացմունքներ է ունենում, երբ լույս է տեսնում իր գիրքը, Սահյանը պատասխանել է այսպես. <<Ինձ այնպես է թվում, թե ես կողոպտված եմ: Տունս դատարկ է, նստելու տեղ չկա, քնելու տեղ չկա, այլևս հնարավոր չէ ապրել...>>:

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՀՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

<<Չեմ հիշում, թե ով է Տոլստոյի <<Խղիստամեր>> պատմվածքը կարդալուց հետո ասել, թե իրեն այնպես է թվում, թե Տոլստոյը ինչ-որ ժամանակ ձի է եղել>>³: Համո Սահյանին կարդալիս քեզ թվում է, թե Սահյանն ինչ-որ ժամանակ բնություն է եղել, եղել է քարափ, ջրվեժ, երկինք, լեռ... Բնությունը դարձել է Սահյանի երկրորդ կեսը, նրա հարազատն ու մտերիմը.

***Եթե դու երբևէ այս քարափին նայես,
Չկասկածես երբեք, որ ես նա եմ, նա՝ ես:***

Գուրգեն Մահարին Սահյանի և բնության կապը տեսել է ուրույն ձևով. <<Համո Սահյանի գրչի տակ բնության երևույթները դառնում են <<բնավորություններ>> և <<կերպարներ>>⁴: Ըստ Սահյանի՝ գոյություն ունի կարոտ մարդու և բնության միջև. <<Ոչ միայն մարդն է կարոտում բնությանը, այլև բնությունն է կարոտում մարդուն: Ես այդ մասին գրել եմ>>: Մարդու և բնության փոխներթափանցումը, ըստ Սահյանի, Գյոթեի այն մտքի ցոլացումն է, որ մարդը ինքնաճանաչման մակարդակին հասած բնությունն է.

Օգնիր ինձ իմանալ, ինձ քեզանից գատեն ու խառնվեմ քեզ հետ:

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԱՐՎԵՍԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

<<Բանաստեղծը բնության ցոլացումը պետք է ըլլա, թե ոչ բանաստեղծ չէ իրապես, քերթվածներն իբրև բառ պետք է ունենան տերևին թրթռումը, թռչունին դայլայլը,

¹ Հրանտ Մաթևոսյանի հետ կայացած զրույց / Հանրային հեռուստաընկերություն /

² Լևոն Մկրտչյան, <<Ջրույցներ բանաստեղծի հետ>>

³ Շ. Խաչատրյան, <<Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ>>

⁴ Գրական թերթ, 1959 թ., համար 7, Գուրգեն Մահարի, <<Գրական նամականի>>

մարդերուն գորովը, դաշտին ու լերան մշտանույն գորությունը>>⁵: Այսպիսի զգացողություն ունի նաև Սահյանը, և այս զգացողությանն է նա պարտական արվեստի մեջ իր մեծ ավանդն ունենալու համար: Պատկերավորման համարյա բոլոր միջոցներն իրենց նշանակությունն ունեցան Սահյանի պոեզիայում, նշանավորվեցին իրենց բոլոր նրբերանգներով:

ՄԱԿԴԻՐ

<<Մակդիրները սիրուհիների նման են: Հարկավոր է նրանց փոխել: Հիմա մշտական մակդիրների ժամանակը չէ>>⁶:

Ընդհանրապես գեղարվեստական խոսքում պատկերավորման միջոցներից ամենաշատ գործածվողը մակդիրն է, և գեղարվեստական խոսքը պատկերացնել առանց մակդիրների հնարավոր չէ:

Կան և եղել են բանաստեղծներ, որոնք իրենց երկերը հեղեղել են մակդիրներով, որոնց կուտակումը, անպայման մակդիրներով խոսելու ճիգը, գեղեցկագարդման տենչը ոճը դարձնում են անկենդան ու արհեստական: Սահյանը, խուսափելով մակդիրների կուտակումից, ոճը դարձնում է սեղմ, դիպուկ և բնական՝ ամեն մի տեղին օգտագործվող մակդիր դարձնելով պատկեր, պատկերավոր մտածողություն:

Ուր գնացին խեղճ ու կրակ, ոտաբորիկ տարիներս, Իմ թևավոր, իմ թևաբեկ տարիներս:

Համաշխարհային ճանաչում գտած կոլումբիացի գրող Գաբրիել Գարսիա Մարկեսը տվել է յուրօրինակ մեկնաբանություն մակդիրի դերի և նշանակության մասին. <<Ինձ համար ամենամեծ դժվարությունը ածականն է, ածականի տեղը, և դրանից է կախված, թե այսինչ գրվածքը պատկանում է, թե չի պատկանում գրականությանը: Ածականն այն է, որ զանազանում է մի գրողին մյուսից, դա իրականությունը տեսնելու նրա եղանակն է, գույնը, ձայնը>>:

Սահյանի համար մակդիրն ունեցել է իր ուրույն նշանակությունը, և նա կարողացել է դիպուկ օգտագործել այն.

***Ինչ է ուզում ինձնից այս կատաղած քամին,
Այս ծաղրածու քամին, լարախաղաց քամին,
Մի մեծ, մի լավ աշուն տարած-թաղած քամին:
Թող գա այգուս խշշուն խաշամն առնի գնա
Փռչակալած, փռշոտ, փշաքաղված քամին:***

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Համեմատությունները կազմում են Սահյանի օգտագործած պատկերավորման միջոցների գերակշիռ մասը.

Զով արա նրա կյանքին, հոր նման զգվիր անքուն...

<<Նաիրյան դալար բարդի>>

Մերթ փարվում ես հովի պես, մերթ հողմի պես ինձ չարչարում...

<<Փնտրում ես դու>>

⁵ Միսաք Մեծարենց, <<Ինքնադատության փորձ մը>>

⁶ Լևոն Մկրտչյան, <<Պոեզիան կօզնի մարդուն>>

Քարի պես պինդ եմ, հողի պես փխրուն...

<<Ինչ արած, մարդ եմ>>

Բանաստեղծություններից մեկը՝ <<Ջրի պես>>, համեմատության մի ամբողջական պատկեր է, այդ է հուշում և բանաստեղծության խորագիրը.

**Կռիվ տայի անդադար ու փրփրեի ջրի պես,
Թափառեի քարեքար, քար փշրեի քարի պես,
Լվանայի քեզ, աշխարհ ու մաքրեի ջրի պես:
Քչքչայի սարն ի վար, մարգ ջրեի ջրի պես⁷:**

Սահյանի օգտագործած համեմատությունները խճողված, բարդ չեն, այլ պարզ և հասկանալի: Նա համեմատությունը կարողացել է օգտագործել մտածված, որպեսզի բնութագրի երևույթի էությունը:

**Կայմ ու կողերը ջարդված, անառգաստ ու անդեկ
Եվ անդռոշ նավի պես ինձ բաց թողեք՝ ես գնամ:**

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Արիստոտելը, նշելով փոխաբերության բացառիկ կարևորությունը վեհ, գեղեցիկ խոսք ստեղծելու գործում, հաջողված փոխաբերություն ստեղծելը գրողի անհատականության, տաղանդի չափանիշ է համարում. <<Պոեզիայի բոլոր գեղեցկություններից միայն դա է, որ սովորել չի կարելի: Այն իսկական տաղանդի նշան է, քանի որ գտնել բնական մետաֆորներ, նշանակում է՝ կարողանալ բնության մեջ նկարել առարկաների նմանությունը>>⁸:

Փոխաբերությունն իր մեծ նշանակությունն ունեցավ Սահյանի պոեզիայում, այնքան մեծ, որ Սահյանն իրավամբ համարվեց փոխաբերության մեծ վարպետ.

Ամառվա բաց երկնքից ձյուն մաղեց մորս ծամին:

Սև լուրեր եկան կովից ու կանաչ-կարմիր հավատ:

Սահյանն այն վարպետության է հասել, որ համարյա թե յուրաքանչյուր բառ կարողացել է դարձնել փոխաբերություն և բառին հաղորդել է գույն, ռիթմ, շարժում.

Երկինքը ձորն է մտել, ցուքը ցողոտ է:

Գիրկ ու ծոցը ծիծառոտ, փեշքը հողոտ է:

ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄ

Համո Սահյանի օգտագործած պատկերավորման միջոցները եթե դնենք աստիճանական սանդղակի վրա, աներկբայելի է, որ նա ամենաշատը օգտագործում է անձնավորումը.

Ձկնիկն առվին խուտուտ տվեց և առուն պարզ ու անբիծ

Քրքջալով ու շաթափվեց ու ձորն ընկավ քարափից...

Ջարկվեց քարին, ուշքի եկավ, շուրջը նայեց կասկածով

Եվ մի կապույտ ժպիտ շուրթին ճամփա ընկավ դեպի ծով:

Սահյանն անձնավորման այնպիսի ուժեղ պատկերներ է ստեղծում, այնպիսի վարպետությամբ է անկենդան առարկաներին շունչ ու հոգի տալիս, որ թվում է, թե մեր շուրջը շնչում, ապրում է ամեն ինչ՝ քարը, ջրվեժը, ձորը և նույնիսկ մահը.

⁷ Համո Սահյան, Երկեր 2 հատորով, Սովետական գրող, Երևան, 1984 թ.

⁸ Արիստոտել, <<Պոետիկա>>

*Ուշաթափվել է ջրվեժը ձորում, քարափի գլխից ընկել է ներքև:
Ձեր գլուխները մի տարուբերեք, հաղարջի, հոնի, մի քիչ համբերեք:*

ՉԱՓԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՎԱԶԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Չափազանցության օրինակները շատ են Սահյանի պոեզիայում, նրա երևակայությունը ընդունակ է անկանխատեսելի թռիչքների.

Օրն էլ է փախել օրվա ճիչերից:

Լեռներ են կախվել իմ շրթունքներից:

Ըստ էության՝ նվազաբերությունն ունի արտահայտչական նույն արժեքը, ինչ չափազանցությունը.

Մի ծվեն ծիծաղ, հույսի մի պատառ,

Շոշոտված մի շող, անպոտված մի ծիլ...

Չափազանցությունը և նվազաբերությունը երբեմն հանդիպում են միասին: Այս սկզբունքով է կառուցված <<Ես հարուստ էի>> բանաստեղծությունը.

Ես հարուստ էի: Ես կարող էի իմ վերհուշերի անհուն պաշարով

Գնել աշխարհի ծովերը բոլոր ու տալ քեզ նվեր,

Բայց դու ծովերի կարիք չունեիր, քեզ հարկավոր էր լուկ մի հայելի

Մազերիդ վրա մատներիս մեղքը տեսնելու համար:

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Դու հողածին, դու և աստված, դու և հաղթող, դու և պարտված,

Դու անտակ վիհ, դու և բարձունք, դու և ժպիտ, դու և արցունք:

Մարդը՝ գրականության հիմնական առարկան, ինքնին հակադրությունների ամբողջություն է՝ ազնիվ ու խարդախ, կեղծ ու շիտակ, չար ու բարի, նուրբ ու կոպիտ, միամիտ ու խորամանկ, ստեղծող ու կործանող, և Սահյանն ինքն էլ է խոստովանում իր, ասել է, թե մարդու՝ հակադրություններով լեցուն լինելը.

Մերթ ոտից գլուխ զարդեր եմ հագնում,

Մերթ այնպես անշուք, պարզ ու անզարդ եմ,

Մերթ քար ու քարափ, մերթ վայրի խոպան,

Մերթ կանաչ անտառ ու ցանած արտ եմ:

Սահյանն իրավունք ունի Ուիթմենի նման ասել. <<Ես բավականաչափ տեղ ունեմ իմ մեջ հակասություններ տեղավորելու համար>>:

ՀՆՉՅՈՒՆԱԽԱՂ

Սահյանի հնչյունախաղերը կամ հնչյունական կրկնություններն ամենից առաջ հնչյունական զարդարանքներ են, որոնք շոյում են լսելիքը:

Առձայնությո՞ւր հիմնականում ունի խոսքը բարեհունչ, երաժշտական դարձնելու նպատակ.

Հարցում արի, ժպտաց, առուն անուն չունեք:

Անհուն ձորերի մեջ կարգին մի հուն չունեք:

Բաղաձայնությո՞ւր բարեհնչյունությունից բացի որևէ տրամադրության, հոգեվիճակի արտահայտություն է.

*Շածանվում է ծառն ի վար
Շիածանի մի ծվեն...*

ԵՐԳԻԾԱՆՔ

Կյանքում հանդիպում են մարդիկ, ովքեր էության միմյանց հետ, նրանց մոտ ուրախությունը և տխրությունն իրար հետ ընթացող երևույթներ են: Սահյանն այս էությունն ունի: Եվ, որպես կանոն, այս էության տեր մարդու ստեղծագործությունն էլ է լինում այսպիսին: Երգիծանքի ասպարեզում Սահյանը մեծ նվաճումների չհասավ, բայց կարողացավ իր մի քանի /շատ սակավ/ երգիծական գործերով իր ձեռքի զենքով՝ գրչով, ծաղրել իրեն դուր չեկող երևույթները:

Վահագն Դավթյանը, խոսելով Սահյանի էության մասին, չի անտեսում և նրա սրամիտ լինելը. <<Նա այն եզակիներից է, որ հումորն ու երգիծանքը ամենից առաջ իր վրա է կիրառում, բայց Աստված չանի, որ մարդ ընկնի Համոյի լեզվի տակ>>⁹:

Սահյանի ծաղրը սուր, դաժան չէ, այն ավելի շուտ կարելի է համարել բարի ծիծաղ, որն ուղղված է բոլորին՝ և՛ անարժան պոետներին, և՛ տգետ խմբագիրներին, և՛ նախանձ, կարծիք չունեցող, անտաղանդ մարդկանց:

<<Թեփավաճառը>> բանաստեղծության մեջ Սահյանը ծաղրում է մի բանաստեղծի, ով, գրագողությամբ զբաղվելով, մեծերից շատ բան խլելով, <<արժնորում>> է իրեն.

***Չարենցի խախալի ծակից վեր ընկած մի ռսպ է գտել,
Խառնելով սեփական թեփին՝ եկել ու շուկա է մտել:***

Երգիծանքի ասպարեզում Սահյանը նոր որակ չբերեց, նորություն չստաց, նա իր միակ դրական հերոսով՝ ծաղրով, շատերին կանգնեցրեց դատաստանի առաջ և հավաստեց մեծ երգիծաբան Լեո Կամսարի խոսքը. <<Առանց ծիծաղի կյանք չկա>>:

ԳՈՒՅՆԻ ԶԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

<<Սպիտակին տվող կապույտ: Իմ ամենասիրելի գույնն է, շատ մեղմ գույն է, որ տարբերվում է ուրիշ ճշացող գույներից>>: /Համո Սահյան/

Թեև երկրաչափական գիտությունից հայտնի է, որ գուգահեռները երբեք չեն հատվում, բայց կյանքում լինում են գուգահեռներ, որոնք հատվում են, դառնում մի ամբողջություն: Արվեստի և գրականության մեջ այդօրինակ գուգահեռ է իրենից ներկայացնում Սահյան-Սարյան գույգը՝ գույնի, երանգի արքաներ, և այդ նվաճման համար երկուսն էլ պարտական են մայր բնությանը: Որպես փաստացի ապացույց՝ կարելի է բերել Սարյանի <<Ինքնադիմանկար. 3 հասակ>> և <<Տարիներս>>, <<Զրնգում էր կանաչ քամին>> բանաստեղծությունները.

***Ճառագում էր ձերմակ քամին աչքն անհայտին առած,
Իմ ձերության ձերմակ երգը բերանացի արած:***

Սահյանի մեջ ամբողջ կյանքում քնած են եղել բանաստեղծը և նկարիչը, և կախարդական փայտիկը արթնացրել է բանաստեղծ Սահյանին:

ԲՈՒՅՐԻ ԶԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

Սահյան բանաստեղծի հոգում գույնի զգացողության հետ միաժամանակ ապրում էր և բույրի զգացողությունը.

Բույրերի բուք է ու գույների ճիչ...

Բուրում են սունկը, քարը, արևը, ջուրը, հոտ է գալիս նույնիսկ թիթեռից ու

⁹ Վահագն Դավթյան, <<Ի սկզբանե էր բանն>>, Երևան, Խորհրդային գրող, 1989 թ.

ավերակից, լույսից ու կայծից: Արդեն դադարում ենք զարմանալ նաև այն պարագայում, երբ սկսում են բուրել բառն ու խոսքը.

Թավալվում էր երգը շաղոտ, ծաղկի բույրով թևահարում...

ՎԵՐՋԱԲԱՆ

Ինձ կհիշեն ամեն անգամ, երբ ամպը թաղքի,

Եվ քարափի թամբից կախված մասրենին ծաղկի...

Համո Սահյանը ֆիզիկապես այլևս գոյություն չունի, բայց նրա պոեզիայի ոգին ապրում և թևածում է՝ հաստատելով, որ Սահյան բանաստեղծի ստեղծագործությունը չի մեռնի, հավերժ է: Համո Սահյանն ունեցավ իր անկրկնելի տեղն ու դերը հայ պոեզիայում, նրա ստեղծագործությունը դարձավ մեր դարավոր պոեզիայի ինքնակա ու հետաքրքիր երևույթներից մեկը, որն իրավունք ունի մտնելու հայ դարավոր պոեզիայի գանձարանը: Եվ Սահյանի նպատակն է եղել նույնիսկ մահից հետո էլ իր աճյունի միջոցով օգտակար լինել պաշտելի բնությանը.

Աճյունս տարեք մի հեռու, անշուք գերեզմանատուն

Եվ մի անտաշ քար դրեք իմ հողին...

***Որ սիրահարված մողեսներն արթուն արևկող անեն այդ քարի կողին,
Տաքանան, գգվեն, համբուրեն իրար, մի բան հասկանան աշխարհի բանից,
Ու երբ հեռանան գոհացած, ուրախ, իրենց մտքի մեջ ողորմի տան ինձ:***

ИСКУССТВО ИЛЛЮСТРАЦИИ В ПОЭЗИИ АМО САГЯНА-АНАИТ АВАГЯН - В статье исследуется искусство изображения стихов Амо Сагяна. Искусство, без которого поэзия не дышит. Искусство, обогащающее мировоззрение читателя. Действительно, Сагяна можно считать величайшим мастером искусства иллюстрации. Он бережно относится к строчке, рифме, слову. Его речь исключительно насыщена. Цель исследования – познакомить учеников со всеми средствами иллюстрации, используемыми Сагяном в их нюансах. В результате исследования мы трижды убеждаемся, что искусство иллюстрации украшение поэзии.

Ключевые слова: Эпитет, сравнение, метафора, персонификация, преувеличение, уменьшение, контраст, звуковая игра, сатира, обоняние, чувство цвета.

THE ART OF ILLUSTRATION IN HAMO SAHYAN'S POETRY- ANAHIT AVAGYAN - The article studies the art of depicting Hamo Sahyan's poetry. Art without which poetry cannot breathe. An art that enriches the reader's worldview. Indeed, Sahyan can be considered the greatest master of the art of illustration. He has a caring attitude towards line, rhyme, word. His speech is exceptionally rich. The purpose of the study is to introduce the students to all the means of depiction used by Sahyan in their nuances. As a result of the study, we are thrice convinced that the art of illustration is the ornament of poetry.

Key words: Epithet, comparison, metaphor, personification, exaggeration, diminution, contrast, sound play, satire, sense of smell, sense of colour.

**ՀՈԳԵՎԱՐՔԻ ԵՎ ՀՈՒՅՄԻ ԵՐԳԵՐԸ
ՄԻԱՄԱՆԹՈՅԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ**

Միամանթոն, անշուշտ, իր հանճարով կարող էր երկնել սիրուն, բնությանը, մարդուն հուզող այլևայլ թեմաներին նվիրված բանաստեղծություններ: Մակայն իր ապրած ժամանակները ազգին դրել էին լինել-չլինելու օրհասական խնդրի առաջ, և նա գրիչը նվիրում է միայն հայրենիքին:

Միամանթոյի ապրած ժամանակներից անցել է ավելի քան մեկ դար, ու նրա ստեղծագործությունները մեր օրերում շարունակում են մնալ արդիական: Վկա՝ Արցախյան առաջին ազատամարտը, վկա՝ Ապրիլյան քառօրյան, 44-օրյա Գոյամարտը՝ իր ողբերգական հետևանքներով: Հետևաբար բանաստեղծի վերոգրյալ հարկադրանք – պատգամը անհրաժեշտաբար պիտի դառնա «արդի հայուն Հայր մերը»՝ հանուն Կյանքի, հանուն Հույսի, հանուն Հողի ու մայրական Հայաստանի...

Բանալի բառեր՝ Սրտի և Մտքի հավերժական պայքար, ցեղի կեցության ուղիների որոնում, հեթանոսության և քրիստոնեության հակադրում, ոգի, ուժ, կամք, հոգեվարքի և հույսի երգեր, Սրի ու Գրչի դաշինք, մաքառում, մայրական Հայաստան, արդիականություն:

Խոսել արվեստագետի մասին և գնահատել նրա ստեղծագործական ժառանգությունը՝ առանց հաշվի առնելու այն դարաշրջանը, որում ապրել և ստեղծագործել է նա, բացառելով այն արտաքին աշխարհը, որը հզոր ազդակներ է տալիս ընդհանրապես մարդու և հատկապես արվեստագետի ներքին աշխարհին, նշանակում է հենց սկզբից սխալ ուղու վրա լինել:

Յուրաքանչյուր արվեստագետ իր ժամանակի ու միջավայրի ծնունդն է և սնունդ է առնում հենց այդ ժամանակից ու միջավայրից: Եվ որքանով որ նա, սևակյան բնորոշմամբ, «ժամանակակից», բայց ոչ «ժամանակին կից» է մնում, որքանով որ պատկերելով իր դարի մարդուն ու երևույթները, այդուհանդերձ դուրս է գալիս տարածա-ժամանակային նեղ շրջանակից ու դառնում մարդկային հոգու և մարդկանց աշխարհում տեղի ունեցող երևույթների ու օրենքների թարգմանը, այնքանով նա մեծ է ու մշտակա:

Վաղուց ի վեր՝ հայտնի այս ճշմարտությունը վերաբերում է նաև գրականությանը և ամենից առաջ՝ հայ գրականությանը:

Ինչպես որ սերմը, ընկնելով այս կամ այն հողի մեջ, հայտնվելով կլիմայական որոշ պայմաններում, կարող է ծիլ տալ, աճել ու պտղավորվել և կամ ընդհանրապես չաճել, այդպես էլ արվեստագետն է, որովհետև «հանճարները և տաղանդները նման են հատիկների... և բնությունը մի մարդացան է, որ միննույն ձեռքով, նույն պարկից հանում է մշտապես և սփռում մոտավորապես նույն քանակությամբ, նույն որակով: Բայց անհրաժեշտ է որոշ բարեխառնություն, որ որոշ տեսակի տաղանդները զարգանան:

Եթե այդ բարեխառնությունը չկա, նրանք վիժում են»¹:

Չնայած այդ «բարեխառնության» անբավարար քանակին՝ հայ գրականությունը համաշխարհային գրականությանը տվել է իր Մարկեսն ու Դոստոևսկին: Փոքր ժողովրդի ճակատագիրն է պատճառը լույս, որ նրանք նույնքան ճանաչված չեն: Նույն ճակատագիրն է պատճառը, որ ամենից ավելի, քան որևէ այլ գրականություն, այն քննում է ազգային գոյության ու կեցության հարցերը: «Հայ գրականության մեջ իշխող գաղափարը, նրա հիմնական առաջնիշխ ուժը ազգային գոյության, ազգային անկախության գաղափարն է: Սակայն այդ ընդհանուր և իշխող գաղափարն ունեցել է մեզանում իր բնորոշ ու առանձնահատուկ գույնը, որ գրեթե բոլորովին անհասկանալի է օտար մարդուն թե՛ իր ելույթամբ, թե՛ արտահայտման ձևով: Հայրենիքի երգը հնչել է մեզանում առավել կամ պակաս ուժեղ Եղիշեից ու Խորենացուց սկսած մինչև մեր օրերը»², - Տերյանի այս դժգոհությունն անտեղի չէր և բխում էր հայ գրականության եվրոպականի հետ համաքայլ ընթանալու մտահոգությունից: «Կուլտուրական ազգ» դառնալու և «ազգային կուլտուրա» ստեղծելու ճանապարհով միայն կարող ենք մտնել «եվրոպական ազգերի շարքը»: Վերջին հաշվով, «հոգևոր Հայաստան» ունենալով է, որ պետք է ապահովվենք Հայաստանի հետագա լինելությունը, ինքնությունը. սա է Տերյանի համոզմունքը:

Մինչդեռ արևմտահայ մտավորականների համար անհամեմատ առավել «շոշափելի» և օրհասական էր հայրենիքի լինելության հարցը ոչ թե վաղվա, այլ հենց այդ օրվա, հենց այդ պահի գոյության գերիսնդրի հստակ գիտակցումով:

Ոճի իր և ավերումի մի դարաշրջանում, երբ մարդկային միտքը արդեն ծնել էր եղեռնի գաղափարը և իրագործում էր մի ողջ ազգի նկատմամբ, «երեք հարյուր գոհերու մղձավանջին մեջ հորինված» ազգի բանաստեղծը «ծիծաղելի կըլլար ինքզինքը չմոռնալով»³:

Շատ լավ իմանալով գեղարվեստի՝ գրականությանն առաջադրող պահանջները, հրաշալի ծանոթ լինելով եվրոպական գրականությանը՝ հայ, հատկապես արևմտահայ գրականությունը հաճախ է անդրադառնում հայրենիքի թեմային, պոեզիայի նյութ դարձնում հայրենիքի բախտն ու ճակատագիրը, տառապանքն ու հույսը: Եվ, այնուամենայնիվ, քչերն են մնում սոսկ այդ թեմայի շրջանակներում՝ գիտակցելով, որ ամենադատ ժամանակի առաջ միայն այդ թեմայով չէ, որ քննություն են բռնելու:

«Հայրենիքը զմեզ մեր անձեն խիստ հեռացուցած է: Պետք է մեր սրտին նշխարները, որոնք երեք միլիոն ժողովրդին մեջ բաժնված են, հավաքել, կեդրոնացնել մեկ կուրծքի տակ և զգալ իր սեփական Կյանքը, զոնե նվազ ժամանակվան մը համար ի սե ր Արվեստին, ի սե ր Կյանքի Երգին»⁴, - այս ճիշտ մտահոգությամբ բոլորն էլ դուրս են գալիս անձուկ շրջանակից, փոխում իրենց լարերը:

Քչերից մեկը՝ Սիամանթոն, թվում է, անհաղորդ է մնում իր գրչակիցներին հուզող այս հարցին և մնում միօրինակ՝ պոեզիայի նյութ դարձնելով միայն հայրենի երկիրը, նրա ճակատագիրը, նրա ցավն ու տառապանքը: Եվ թվում է, թե սա Սիամանթոնի՝ որպես բանաստեղծի, հիմնական խոցելի կողմն է: Բայց տեղի է ունենում հակառակը. Սիամանթոն դառնում է ժամանակի արևմտահայ գրականության «ազգայնական երեք մեծ քերթողներն (մյուսներն ըլլալով Վարուժան ու Թեքեյան) մին»՝

¹ Հիպոլիտ Տեն, Գեղարվեստի փիլիսոփայությունը, Մոսկվա, 1936, էջ 47:

² Վահան Տերյան, Հայ գրականության գալիք օրը, Երկեր, Երևան, 1989, էջ 294-95:

³ Զ. Օշական, Հայ դպրության կորուստները Մեծ եղեռնին, Հայ կեդրոն, Բուենոս Այրես, 1965, թիվ 4-5:

⁴ Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ.3, Նամականի, էջ 408:

մնալով նաև առհասարակ հայ գրականության մեծերից մեկը:

Մաքառուման և ընդվզումի նրա հրաբորբ երգերը, Սրի ու Գրչի անխախտ դաշինքի նրա հավատամբը այսօր էլ, ցավոք, նույնքան հնչեղ են, որքան իր ապրած օրերում: «Ցավոք» ենք ասում, քանի որ 21-րդ դարում մեզ տակավին այնքան պետք է պաշտամունքը Սրի հանդեպ: Ուստի և անխուսափելի է, մեր խորին համոզմամբ, որ մեր երկրի ապագա տերերը՝ ներկայիս աշակերտները, հաղորդակից դառնան համաշխարհային պոեզիայի այս «ունիկումի» երգերին ու դաստիարակվեն նրա գաղափարախոսությամբ...

* * *

**«Եւ ասէին. Զի՛քերթողին այսքան սուգ...»
Խորեն արքեպ. Նարպէ**

1907 թ. Փարիզում հրատարակվում է Սիամանթոյի «Հոգեվարքի և հույսի ջահեր» ժողովածուն, որը զգալիորեն տարբերվում էր նախորդ երկու՝ «Դյուցազնորեն» և «Հայորդիներ» ժողովածուներից: Տարբերվում էր նախ թեմատիկ առումով: Առաջիններն ամենից առաջ ընդվզումի, մաքառուման գաղափարն էին առաջ բերում, մինչդեռ այստեղ արդեն գերակշռում են «ջքեղ» ցեղի ցավից ծնված տառապանքն ու հոգեվարքը.

**Տարիներով ու խավարներով ձեր մահացու ցավն իմ կարմիր ցավս եղավ,
Ու տառապանքիս տիեզերքին մեջ՝ ձեր արցունքն իբր անձրև,
հոգիիս վրա կտեղա**

**Ձեր հեծեծանքներն մահվան հովերուն պես մենավորի
լուսամուտիս փեղկերը կոտորտելու եկան...
Եվ անհնարին սոսկումներ ապրեցա ա՜ն անտառին մեջ որ ձեր հայրերուն
ոսկորներեն էր կազմված:**

Առանձին քերթվածների խորագրեր կոտորածների ու արյան, արցունքների ու ավերումների անուններ են՝ «Մահվան տեսիլք», «Ավերումի գիշեր», «Արյուն», «Արցունքներս», «Արյուն է որ կտեսնեմ», «Հոգեվարքի իրիկուն» և այլն:

Եվ, այնուամենայնիվ, նոր ժողովածուն չի մնում որպես լոկ ցավի ու տառապանքի երգերի գիրք: Եթե նախորդ ժողովածուների համար գործածվում է «հեթանոս» բառը՝ «մաքառումը» միայն երանգավորելու նպատակով՝ առանց հեթանոսության հետ որևէ աղերս ունենալու, ապա նոր գրքում արդեն առկա է հեթանոս դարերի նկատմամբ բանաստեղծի կարոտախտը:

Քրիստոնեության և հեթանոսության հակադրումը ծնվում է Գողգոթայի ճամփաներն ակոսող ցեղի ցավից ու նրա Ոգին վերածնելու ցանկությունից:

Արևմտահայ գրականության մեջ ստեղծվում է մի ողջ գրական շարժում՝ «հեթանոսական» կոչված, որը հայտարարում է «պաշտամունք և արտահայտություն հայ հոգվոյն»: Ինչպես հայտնի է, Վարուժանը դառնում է ոչ միայն շարժման պարագլուխներից մեկը, այլև ստեղծում է ամբողջ ժողովածու՝ «Հեթանոս երգեր» խորագրով:

Այն, որ շարժմանը հարողներից մեկն էլ Սիամանթոն էր, վկայում է հենց թեկուզ միայն «Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ» վերնագրով բանաստեղծությունը: Սակայն «հեթանոս» Սիամանթոն էապես տարբերվում է

«հեթանոս» Վարուժանից:

Վարուժանն իր գրքի լավագույն մեկնիչն է.

**Ես կերգեմ Գինին
-Բազիններուն ծիծաղը և
Խորաններուն արյունը:
Դարերու կյանքը կերգեմ,
Հանուն հաճույքի և
Տառապանքի գեղեցկության:**

Եվ որքան էլ որ «Գողգոթայի ծաղիկներ» բաժնում բանաստեղծը երգում է Գինին՝ խորաններուն արյունն ու տառապանքի գեղեցկությունը, որքան էլ Ներոնն արբեռում է քրիստոնյաների թափված արյամբ, իսկ Քրիստոսը՝ պատարագում, այդուհանդերձ «Հեթանոս երգերի» Վարուժանը ընթերցողի համար մնում է հեթանոս:

Միամանթոն այլ է, տարբեր. «Հոգեվարքի և հույսի ջահեր»-ում քրիստոնեական անտարբերությունն ու թողտվությունը մերժում է քրիստոնյան: Միամանթոն իր ելույթամբ հար և նման է մյուս քրիստոնյաներին.

**Մարդն է ինկած գարշապարին տակ հըսկա
Խուլ Աստուծո մը հրեա...**

(Վարուժան, «Մեռած աստվածներուն»)

Անհուն տրտմությամբ ու անձկությամբ նա գոչում է երկիւնքն ի վեր՝ Էլի լամա: Աղոթում է քրիստոնյան.

**Տե՛ր, հիվանդներուն և լքվածներուն սնարեն
Ոճրագործներդ ու իրենց սուրերուն սարսափը հեռացու՛ր,
Եվ ջուրերդ թող քիչ մը իրենց կատաղութենեն հանդարտին,
Որպեսզի մահապարտները քարտանքի նավերուն մեջ
Թեն քեզի անիծելով, բայց գոնե խաղաղությամբ ոգեվարին...**

Սկիզբ է առնում ժխտումը: Հիսուսին պաշտող, Հիսուսի պես խաչվող ազգը դեռևս հույսով սպասում է հրաշքին, բայց աստվածային գթությունը շարունակում է մնալ սպիտակ ու չհասունացող:

Շարունակվում է հոգու խորքերից բխող կշտամբանքի խոսքը առ Աստված.

**Չարիքիդ ոգիներն անավասիկ դաշտերը հրդեհեցին...
Ու արյունը Արարատին կատարները կարմրցուց...
Ու անավասիկ որ դժոխային մանգաղներդ ոսկին
Անմեղներու վիզերուն ի խնդիր հորիզոնին մեջ կգալարվին...**

Բառը ընդլայնում է իր սահմանները, ծառայում տողից դուրս, բառային նշաններից անդին ավելի շատ ու ամենակարևորը ասելուն: «Մանգաղ» բառի կիրառումը անմիջաբար կապվում է «խարտյաշ ցորյանի» հետ՝ խորհրդանշելով Քրիստոսին ու քրիստոնեությունը: Բայց մանգաղը դարձել է «դժոխային մանգաղ ոսկիե» և լուսնի մահիկի հանգույն «կգալարի անմեղներու վիզերուն ի խնդիր»:

**Աստիճանաբար տեսանելի է դառնում ժխտումը.
Մինչդեռ՝ եղեմներուդ բոլոր հրեշտակներն անդին,
Անձրևներն ու արեգակներն հուռթի հողերուն վրա,
Քու ձեռքերովդ օրհնված ամբարներու մեջեն,
Օ՛, անգթորեն ն, անգթորեն ն, անգթորեն ն,
Սոլախինդի ու կարմիր թույնի հունտերն,
Մեր բոլորին համար վաղվան մահը սերմանեցին:**

Մեկ անգամ ևս հաստատվում է թունանյանական հայտնի բանաձևումը՝ «բանաստեծի համար բառը մի աշխարհ է», որն էլ բանաստեղծության ամենակարևոր հայտանիշն է:

Խոսքը վերաբերում է «մոլախիհնդ» բառին, որը մեկ անգամ չէ, որ գործածում է Սիամանթոն:

Խորենացին գրում է. «Քանզի զհետ առաքեալ, կոչեն զնա՝ լինել ըստ կամաց նորա, և ունել զթագաւորութիւնն: Իսկ ի չհաւանել սրբոյն՝ տան նմա արբումն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աթենացիքն Սոկրատայ զմոլեխիհնդն»⁵:

Սուրբը, որին թունավորել են մոլախիհնդով, Տրդատ արքան է, այսինքն՝ հայոց վերջին հեթանոս արքան, որի օրոք ընդունվեց քրիստոնեությունը: Ահա այդ օրից ի վեր, երբ ցեղը հրաժարվեց իր աստվածներից՝ զորություն և ուժ պարգևող, և ընտրեց ազգություն չճանաչող քրիստոնեությունը, «անձրևներն ու արևներն հուռթի» հեթանոս «հողերուն վրա վաղվան մահերն» են սերմանվում:

«Գթություն» բանաստեղծության մեջ «Ժլատ» Սիամանթոն համեմատաբար ընդարձակում է իր միտքը «Հոգնություն» բանաստեղծության մեջ՝ այստեղ ևս մնալով բառի ու պատկերի վարպետը, լրիվ չմասնավորելով ասելիքը: Դարձյալ ընթերցողին է թողնվում վայելելու այն գերագույն հաճույքը, որը նա վաստակում է բանաստեղծության յուրաքանչյուր պատկերը, տողը, նույնիսկ բառը իր համար «բացելուց» հետո: Եվ նման գործերը, որպես կանոն, առավել երկար են ուղեկցում ընթերցողին՝ շնորհիվ իրենց գաղտնասացության.

Հոգիիս վրա լուսինը կձյունե...

Օ, դեպի Նավարներն ու Մոռացումը քալե,

Ով հոգնած ու դանդաղ ու ծանր ուխտավոր,

Աղբյուրներու սա պայծառ տղուն հետ առանձին.

Ան հոն տեղերը մարմարե մեհյաններ գիտե,

Ուր հինավուրց աստվածները ազնվորեն գորավոր,

Քու հոգնությունը կհասկնան...

Ու մարդկորեն անոր մեծ ցավը կապրին...

Հեթանոս աստվածների՝ մարդկորեն մարդու ցավն ապրելու հանգամանքն ավելի է մոտեցնում մարդուն իր պաշտած աստվածներին. փաստորեն տեղի է ունենում աստվածների մարդեղենացում և մարդկանց աստվածացում: Մարդկային ներգործության արտահայտմանը լայն հնարավորություն է տրվում: Կյանքը վայելելու, աստվածների հետ խրախճանք անելու և իրեն նույնիսկ աստված զգալու հեթանոս հատկությանը հակադրվում է քրիստոնյայի ինքնաժխտումը, ինքնաձաղկումը, աստվածորեն հզոր զգալու կարողության ինքնակամ ոչնչացումը.

Ավա դ, մինչև ե՞րբ մեր մարմինները տարփավոր

Այսչափ տենդորեն պիտի գալարվին...

Դեպի փայտե դագաղները դարավոր՝

Հավիտենական ու ապարդյուն կյանքին

Վերջապես իրիկուն մը մխրձվելու համար:

Յուրաքանչյուր մարդ, վերջին հաշվով, իր էությանմբ թե՛ վանական է, թե՛

⁵ Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, Երևան, 1991թ., էջ 247:

քրմապետ . տարփավոր մարմինն ու Կատարյալին ձգտող հոգին պայմանավորում են նրա երկվությունը: Սրտի և Մտքի հավերժական պայքարը շարունակ առկա է: Սակայն հեթանոս խենթությունն արյունվել է անհունորեն, և Անձկությունը տիրակալորեն իր Սև Դրոշն է բարձրացրել մարդկային հոգում.

Հոգիիս վրա լուսինը կը ձյունե...

Քանի դեռ հոգեվարքի ջահերն են վառվում, զգալիորեն իշխում են տրտմության, ցավի մոտիվները, իսկ հեթանոս դարերի վկայակոչումը առայժմ կարոտախտի հետևանք է: Այսինքն՝ հեթանոս Ուժի ոգեկոչումն ու հրավերը, որ առկա է Վարուժանի մոտ ու Սիամանթոյի նույն շարքի մյուս գործերում և արդեն այնքա՛ն որոշակի ու տիրական «Նավասարդյան աղոթքում», վերոհիշյալ բանաստեղծություններում դեռևս բացակայում է: Բայց ի վերջո Ցավը ծնում է ընդվզելու, պայքարելու այրող կամքը, Հոգեվարքը տեղի է տալիս Հույսի առաջ, ու ահա հնչում է ռազմի շեփորը.

***Ոտքի՛ կեցիր, երազներդ կոխտռելով ու աչքերդ հրավառելեն, ոտքի՛,
Ու ձեռքովդ հափշտակե՛ բոլոր շղթաներն այդ սև զանգերուն
Եվ բազուկներուդ բոլոր թափովը փոթորկե անոնց երկաթները
Թշնամիին վրա...***

***Քու վրեժիդ հեղեղին և աստելությանդ մոնյունին գորությանը
համեմատ,***

***Վասնզի և մեռելներս և ողջերդ, արցունքի տեղ, այսուհետև
Միշտ քինաշարժ և անդադրում մրրկումի պետք ունինք...***

Վառվում են Հույսի ջահերը: Չանձրախտի ու տրտմության ճիրաններում գալարվող հոգին հաղթահարում է իրեն ճնշող այդ զգացումները, և տիրապետող են դառնում հեթանոս դարերի կորովն ու կամքը.

***Երազուն ճակատիս համար՝ ամառվան տերևանքեն պսակներ
պիտի հորինես,***

***Եվ ծիածանե վերարկուս, հովերուն հետ, ուսերուս վրա,
արծվի մը պես պիտի ծփա...***

***Ու եբենոսե սրինգս՝ շունչիս, կամ գեղաքանդակ քնարս՝
ձեռքս առած,***

***Ոսկին դաշխությանես, աստվածներու գինիեն, գինի՛, գինի՛,
գինի՛ պիտի ըմպեմ...***

***Եվ հետո ես՝ ցնծության և Հույսերու կարմիր Ջահերը
կռապաշտորեն պիտի վառեմ...***

***Եվ անտառներուն համանվազը քու փառքիդ համար
Մրրիկներ պիտի երգե,***

***Սուրերը, մեր ծունկերուն դիմաց կոտրտելեն՝ արյունոտ կամ
անբիծ, անցյալին պիտի նետենք,***

***Եվ Հայ գինվորին պղնձե շեփորը պիտի պատռի՝ հաղթանակի
Ռազմերգին որոտումեն...***

Ժողովածուն ավարտվում է Գաղափարին ձոնված երգով՝ սերտորեն աղերսվելով «Դյուցազնորեն» և «Հայորդիներ» շարքերին.

***Հառաջացի՛ր, հառաջացի՛ր, Գաղափար,
Թեև ճիշտ է, դու հաղթեցիր,
Բայց պարտությունն իբր օրենք
Տիեզերքի ժանտ շրջանին,***

Հայուն համար, չարիքին հետ դեռ կսպասե:

Եվ որպեսզի պարտության փոխարեն հաղթանակը դառնա օրենք, Արարատի կատարներն իբրև սալ պետք է ծառայեն՝ կայծակներից սուսերներ դարբնելու համար: Ու վերջում՝

*Եվ քեզ՝ վճիտ Գաղափար,
Մեռյալներեդ խոսք մը նս...
Խոսք մը նս անոնցմե որ դրոշիդ փառքին համար
Իրենց հոգուն արյունը քեզ նվիրեցին.
Մի՛ մոռնար դուն, շեղբերուն վրա սուսերուդ
Կարմիր կամքիդ վճիռն այսպես կայծագրել.
«Արդարության աղամանդի օրերուն,
Ո՛վ անքննելի և եղերական պողպատներ,
Ձիթենիի կանաչագեղ ոստե՛ր եղեք...
Եվ շանթերու՛, շանթերու՛, շանթերու՛ պես՝
Պետք է շողա ք, պետք է շողա ք այն ատեն,
Երբ հայ արյունը անմեղորեն օր մը հոսի...»:*

Ընդվզումի ու մաքառման գաղափարից մինչև ժողովրդի ցավից ծնված անհատի դրամա և կրկին մարտահրավեր. ահա երեք՝ «Դուցագնդերն», «Հայրենի հրավեր» և «Հոգեվարքի ու հույսի ջահեր», ժողովածուների գլխավոր հատկանիշը, ինչը հատուկ է Սիամանյոյի ողջ պոեզիային առհասարակ:

«Յարճանյան քնար չունի,- գրում է Վարուժանը,- իր երգը կոփյուն մըն է, գորմեր նախնիքը Նավասարդի տոներուն կը հնչեցնեն՝ իրենց աշտեն զարնելով վահաններու ոսկեցով կումբին: Իր երգը ռազմի շեփորին երախեն արտահոսող մարտահրավերն է, որուն ունկնդիր, այսօր, Վիրգիլիոսին հետ և Տանդեի գրիչով, հիացմամբ լի, կ'ըսենք.

Պատիվ ըրեք վսեմական քերթողին»⁶:

* * *

Հավատարիմ մնալով հենց սկզբից որդեգրած գրողական դավանանքին՝ Սիամանյոն բերում է «ցավակոծ ցեղի բարկության բոցը և իր ավերված աշխատանքին մրրկե բողոքը»: Ըստ էության՝ նա բերում էր նաև իր ավերված աշխատանքի մրրկե բողոքը: Չէ՞ որ քերթողի կոչումն իրականում այլ է:

Սիամանյոն, անշուշտ, ի գործու էր ստեղծելու այնպիսի պայծառ էջեր՝ զարնանը, սիրուն, բնությանը նվիրված, ինչպես ստեղծեցին իր իսկ ժամանակակիցները՝ Վարուժանը, Թեքեյանը, Ռուբեն Սևակը: Դրա լավագույն ապացույցը իր բանաստեղծությունների մեջ թեև ժլատորեն, բայց, այնուամենայնիվ, մի քանի վրձնահարվածով վարպետորեն արված խաղաղ ու լուսավոր պատկերներն են:

Ստեղծագործական հետագա ճանապարհին նա շարունակում է ցեղի կեցության ձևի իր համառ որոնումները. «Սիամանյոն չէր կարող բաժանվել անցյալից, երեկվա աղետներից, չէր կարող ամռվել երեկվա համապարփակ վշտից. ողբերգական շեշտը, այնուամենայնիվ, մնում է նրա նոր երկերի մեջ: Բայց իսկական բանաստեղծը չէր կարող մնալ անցյալ տպավորությունների շրջանում, անտարբեր լինել

⁶ Դ Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 164:

կողքից ընթացող այն կյանքի նկատմամբ, որը հղի էր հուսատու երևույթներով, հեռանկարներով: Ներկան վերջ ի վերջո մնում էր նրա հիմնական տարերքը, ստեղծագործության բաբախուն զարկերակը: Անցյալի ու ներկայի այդ խոր զգացողությունը ինքնին ծնում է էականը՝ խոհրդ ժողովրդի գալիք բախտի նկատմամբ»⁷:

Եվ որովհետև ժողովրդի գալիք բախտը ամենևին պայծառ գույներով չէր պատկերանում նրա զավակին, հետևաբար նա պիտի հայտնաբերեր ու բանաձևեր գոյության սկզբից ի վեր խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով ապրել տենչացող իր ցեղի փրկության ուղին.

*Մեր սուրբ պիտի՝ ապրի՝ փրկության և ազատության
արեգակներուն ի խնդիր
Կյանքի՝ ն համար, Հույսի՝ ն համար, արգասաբեր հողի՝
և մայրական Հայաստանի՝ ն համար...*

Միամանկորդի ապրած ժամանակներից անցել է ավելի քան մեկ դար, ու նրա ստեղծագործությունները մեր օրերում շարունակում են մնալ արդիական: Վկա՝ Արցախյան առաջին ազատամարտը, վկա՝ Ապրիլյան քառօրյան, 44-օրյա Գոյամարտը՝ իր ողբերգական հետևանքներով: Հետևաբար բանաստեղծի վերոգրյալ հարկադրանք - պատգամը անհրաժեշտաբար պիտի դառնա «արդի հայուն Հայր մերը» հանուն Կյանքի, հանուն Հույսի, հանուն Հողի ու մայրական Հայաստանի...

ПЕСНИ АГОНИИ И НАДЕЖДЫ В ПОЭЗИИ СИАМАНТО - АЗАТУИ АХКАТЯН-Сиаманто, без сомнения, мог своим гением создать произведения, посвященные любви, природе и другим волнующим человека темам. Однако проживаемые им времена поставили нацию перед трудной задачей выживания, и свое перо он посвящает только Отечеству.

Со времен Сиаманто прошло больше века, и его произведения и в наши дни продолжают оставаться актуальными. Свидетельство тому первая Арцахская война, Апрельская 4-дневная война, 44-дневная война со своими трагическими последствиями. Следовательно, вышеизложенный завет поэта должен стать "Отче наш" для современного армянина во имя жизни, во имя надежды, во имя земли и матери-Армении.

Ключевые слова: вечная борьба Сердца и Мысли, поиск путей существования рода, противостояние язычества и христианства, дух, сила, воля, песни агонии и надежды, союз меча и пера, борьба, мать-Армения, актуальность.

SONGS OF AGONY AND HOPE IN SIAMANTO'S POETRY - AZATUHI AGHKATYAN - Of course, Siamanto could create poems dedicated to love, to nature and to other issues that concern people but the time he lived made him face the problem not being. He dedicated his pen to his homeland.

⁷ Թավադյան Հ. , Միամանկորդ, էջ 172-173:

More than a century has passed from Siamanto's living period, but his works are still contemporary nowadays. Artsakh's first fight for freedom, April four-day struggle, 44-day-long struggle for existence with its tragic consequences witness it. Therefore, the poet's above - written compulsion is the following: the precept should necessarily become "contemporary Armenian's Our Father" in the name of Life, Hope, in the name of our Land and motherland Armenia...

Key words: *the eternal struggle of heart and mind, the search for ways for the race to survive, Confrontation of Christianity and paganism, spirit, power, will songs of agony and hope, alliance of Sword and Pen, struggle, motherland Armenia, contemporaneity.*

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՒԲՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Վերջին շրջանում մեծ թափ են ստացել նորաբանությունները, նոր բառերը, իմաստային նորակազմությունները, բառագործածությունները ուսումնասիրելու, բառապաշարում դրանց տեղն ու դերը բացահայտելու լեզվապահպան գործընթացը: Այս առումով ոչ պակաս կարևոր է նաև առանձին հեղինակների նորաբանությունների քննությունը:

Լեզվաբանության մեջ նորաբանություն հասկացությունը միատարր չէ: Լայն առումով՝ նորաբանություններն են կոչվում լեզվի զարգացման յուրաքանչյուր նոր փուլում այն բոլոր նոր բառերը, որոնք մուտք են գործում բառապաշարի մեջ: Պետք է տարբերակել նորաբանություն, նորակազմություն և նոր բառ հասկացությունները: Նորաբանության նոր բառ դառնալու կամ նորի վերածվելու պայմանը հաճախ գործածվելն է: Նորակազմությունները ձևով և իմաստով միանգամայն նոր կազմություններն են, որոնք իրենց հերթին կարող են լինել դիպվածային, պոտենցիալ:

Վ. Հակոբյանի հեղինակային նորաբանությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզ պատկերացում կազմել նրա բանաստեղծությունների և պոեմների լեզվի մասին, բացահայտել ինքնատիպ ոճն ու կարևորել լեզվի ընդհանուր բառապաշարը յուրովի համալրելու գործոնը:

Ուսումնասիրվել է 160 բառային նորաբանություն՝ իրենց տեսակներով, կազմությամբ և նշանակությամբ: Օրինակ՝ գիժկատակ, լուսնահամ, Արցախատուն, մանուշակոտ, արձանվել, սովերուհի և այլն:

Բանալի բառեր՝ բառապաշար, հեղինակային նորաբանություն, նորակազմություն, դիպվածային բառեր, պոտենցիալ բառեր, բառակազմություն, կադապարներ, բանաստեղծություն:

Նորաբանությունների ստեղծումը լեզվի մեջ մեծ հաշվով պայմանավորված է հասարակության կյանքում առաջացած նոր առարկաները, երևույթներն ու հատկանիշներն անվանելու, ինչպես և՛ արդեն իսկ եղած, հայտնի ու տարածված առարկաներին, երևույթներին ու հատկանիշներին նոր, թարմ անվանում տալու պահանջով: Եվ խոսքի միավոր լինելու հանգամանքով էլ նորաբանությունները լինում են լեզվական և անհատական կամ հեղինակային:

Լեզվական նորաբանություններն առաջանում են արտալեզվական գործոնների ազդեցությամբ՝ լեզվի բառապաշարը հարստացնելու, համալրելու նպատակով, և դրանց ստեղծման գործընթացում ստեղծողի հեղինակային անհատականությունը չի կարևորվում, իսկ անհատական-հեղինակային նորաբանությունները մեկուսացած են. ստեղծվում են հիմնականում ոչ թե լեզվի բառապաշարը հարստացնելու, այլ ոճական նպատակադրումով և իրենց անվանողական գործառնությամբ էլ առավելապես անհատական վերաբերմունքի դրսևորման արտահայտություններ են¹: Հեղինակային նորաբանությունների ուսումնասիրության արդիականությունը, ըստ

¹ Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989, էջ 183 (այսուհետև՝ Էլոյան, 1989):

Լույսի, ենթադրում է քննական որոշակի մեթոդներ. Վ. Հակոբյանի երկերի բառապաշարի մասին ընդհանուր պատկերացում, հեղինակային ինքնատիպ ոճի բացահայտում, գեղարվեստական խոսքում գործածված հեղինակային նոր բառերի արձանագրում և հանրայնացում: Կարևոր է նաև բառակազմական և իմաստաբանական այն կաղապարների առանձնացումը, որոնք հիմք են հեղինակի համար հայերենի բառապաշարի կազմը նոր բառերով համալրելու համար:

Վարդան Հակոբյանի ստեղծագործությունների նորաբանությունները հասկանալիում են և՛ իրենց կազմությամբ ու իմաստային խորությամբ, և՛ հեղինակի գրելաձևին բնորոշ գծերի, հոյգերի, իրողությունների վառ, կտրուկ, սուր արտահայտչաձևերի ընդգծումով:

Վարդան Հակոբյանի «Նշանագրություն լուսնի վրա»² (այսուհետ՝ ՆԼՎ) և «Ընտրանի»³ (այսուհետ՝ Ը) բանաստեղծությունների և պոեմների ժողովածուներից առանձնացրել ենք հիմնականում բառային նորաբանություններ, որոնք այլաբանական խտացումներ չունեն. հասկանալի են ու պարզ⁴:

Քննությունը հիմք է տալիս փաստելու, որ հեղինակային-անհատական նորաբանությունները վկայված չեն՝

Մի շարք բառարաններում⁵,

1. «Նոր բառեր» գրքի 1-4 պրակներում⁶,
2. ԱՐԵՎԱԿ (Արևելահայերենի ազգային կորպուս) բաց էլեկտրոնային գրադարանում: Պետք է նշել, որ ԱՐԵՎԱԿ-ի մոտ 110 միլիոնանոց բառամթերքում վկայաբերվում են Վ. Հակոբյանի «Թների հեռուն» շարքի բանաստեղծություններից հետևյալ նորաբանությունները՝ **անաղբյուր, անփակագիծ, բարևուն, թոնրապատ, գիծկատակ, յոթնասն**⁷:

Լեզվաբանության մեջ նորաբանություն հասկացությունը միատարր չէ: Լայն առումով՝ նորաբանություն են կոչվում լեզվի զարգացման յուրաքանչյուր նոր փուլում այն բոլոր նոր բառերը, որոնք մուտք են գործում բառապաշարի մեջ: Բայց կարծում ենք, որ պետք է տարբերակել նորաբանություն, նորակազմություն և նոր բառ հասկացությունները: Նորաբանության (տվյալ պարագայում խոսքը հեղինակային նորաբանության մասին է) նոր բառ դառնալու կամ նորի վերածվելու պայմանը հետևյալն է.

² Վ. Հակոբյան, Նշանագրություն լուսնի վրա, Ե., Անտարես, 2016:

³ Վ. Հակոբյան, Ընտրանի, Ե., Անտարես, 2017:

⁴ «Ընտրանի» ժողովածուի «Հուշը՝ կացարան» բանաստեղծությունների շարքում ու «Տխրության հողովակ», «Բանաստեղծություններ՝ չորս գրչանցումով» պոեմներում գործածված նորաբանություններն ու էջերը նշում ենք վերջին ժողովածուից առնված օրինակներով, որոնք գետեղված են «Նշանագրություն լուսնի վրա» ժողովածուում:

⁵ Ն. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Ե., Լույս, 1973: Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., Հայաստան, 1976: Փ. Մելիքիսյան, Նոր բառերի բացատրական բառարան, Ե., Փյունիկ, 1996: Հայոց լեզվի բարբառային բառարան, ՀՀ ԳԱԱ, Ե., հ. 1-4, 2001-2010: Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., Նաիրի, 2002: Ա. Սուքիասյան, Ք. Սուքիասյան, Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Ե., Մակմիլան Արմենիա, 2002: Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., ԵՊՀ, 2009: Ռ. Սաքապետյան, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Ե., Տիգրան Մեծ, 2011: Ա. Սարգսյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Արցախի պետական համալսարան, Ե., 2013: Ս. Համբարձումյան, Հովհաննէս Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի նորակազմ բառերի բառարան, Ե., Ասողիկ, 2016:

⁶ Ա. Գալստյան, Ս. Գալստյան, Գ. Հովսեփյան, Ա. Սահակյան, Լ. Սահինյան, Ֆ. Հակոբյան, Նոր բառեր, 1-4 պրակ, Ե., 2015-1018:

⁷ Տե՛ս http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am:

«որքան հաճախ գործածվի տվյալ նորաբանությունը, որքան մեծ կարիք ու պահանջ լինի տվյալ բառի ամենօրյա գործածության, այնքան կմեծանա այդ նորաբանության նոր բառ դառնալու հավանականությունը»⁸: Նորակազմությունները ձևով և իմաստով միանգամայն նոր կազմություններն են, որոնք իրենց հերթին կարող են լինել դիպվածային, պոտենցիալ:

Վ. Հակոբյանի ժողովածուներում ուսումնասիրել ենք 160 բառային նորաբանություն, որոնցից միայն 3 են իմաստային նորաբանություն. սրանք լեզվում գոյություն ունեցող բառերի ձեռք բերած նոր, թարմ իմաստներն են: Դրանք են՝ **հացեփայտ, խաչեփայտ և նախապահ**: Առաջին երկու բառաձևերը «Միջին հայերենի բառարան»ում (հացի փայտ և խաչափայտ/խաչափար/խաչեփար) վկայված են որպես ծառատեսակի և բուսատեսակի նշող անվանումներ⁹: **Նախապահ** բառաձևը Շիրվանզադեն գործածել է որպես *կոչում*, որտեղ *պահ* բաղադրիչը նշում է *պահել*. «- Ինձ թվում է, պարոն *նախապահ*, -միջամտեց Սինոփյանը, -որ պարոն դատախազի հարցը գործին չի վերաբերում» (Շիրվ., Պատմվածքներ և վիպակներ)¹⁰, իսկ Վ. Հակոբյանի բանաստեղծում նշում է *պահը, ժամանակը*. «...անցնող վարկյանները **նախապահներ** են, քանի որ / ամեն ինչ միշտ լինում է հետո...» (Ը, էջ 51):

Քննվող ժողովածուների հեղինակային նորաբանությունների մեծ մասը ձևակազմությամբ և իմաստով նոր է՝ հատուկ հեղինակի ոճին, աշխարհընկալմանը և միաժամանակ բառախաղերի կերտման ու հանգավորման պահպանման հիմնալի միջոցներ: Իսկ մի որոշ մասն էլ լեզվում արդեն իսկ հայտնի կաղապարների, բառահիմքերի, արմատների հիման վրա բառակազմական ածանցում եղանակի միջոցով որոշակի փոփոխություն կրած ու նորովի արտահայտված բառաձևեր են:

Քանակական առավելություն ունեն հոդակապավոր բարդությունները, որոնք դրսևորում են կաղապարային բազմազանություն:

Անհողակապ, կցական բարդություններից հանդիպում են ընդամենը մի քանի օրինակներ՝ «...գետի **տխրեղեգ** ափի վրա / Բացում է իրեն» (Ը, էջ 21), «Թե ինչպես են **գիծկատակ** արևները / տերևների հետ կամաց-կամաց ծրարվում» (Ը, էջ 117), «**Տունկանչի** զանգ, / Զանգ Էրզրի, / զանգ արդարության...» (ՆԼՎ, էջ 93), «Մեկուսացված հայացք, / տխուր **խոսքեղանակ**...» (ՆԼՎ, էջ 112), «Բառը **միջկապ** է, / չգիտեմ՝ ում և ում, / ինչի և ինչի արանքում» (ՆԼՎ, էջ 119), «Թռչնի **քչամանում** հագիվ թե այդքան բառերը տեղավորվեն» (ՆԼՎ, էջ 249), «...լացում են **չորաչք**՝ չունեցած գրոշների համար» (Ը, էջ 263):

Առավել գործուն են **գոյական+գոյական** կաղապարով հոդակապավոր կազմությունները, որոնց բաղադրիչները հիմանականում արտահայտում են ա) որոշիչ-որոշյալ հարաբերություն **«Գիշերաթախիծը** դանդաղ սողոսկում է լեռան ձեղքերից» (Ը, էջ 87), **«Չյան փետրափաթիլները,** / մինչև ոտքդ գետնից կբարձրանա, ծածկում են / ոտնահետքերդ» (Ը, էջ 121), **«Գիշերաթուխալը** չի փակում տեսիլքը, որ / ես եմ հորինել» (Ը, էջ 267), **«Ամպերի առյուծաթավիշը** տեղ-տեղ / աղվեսամորթով է կարկատանված» (Ը, էջ 292) և բ) հատկացուցիչ-հատկացյալ՝ «Ինչպես են **որսահաճույքի** համար / աղեղը լարում Չինգիզ Խանի ձեռքերը» (Ը, էջ 84), «Ուղտի **լեռնասապատներով** անսահման անապատների ճանապարհն է սնվում» (Ը, էջ 132), «Երբ

⁸ Փ. Մելիքիսանյան, Նորաբանության, նոր բառի և նոր իմաստի ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ, ՊԲՀ, Ե., 1990, 3(43), էջ 49:

⁹ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., ԵՊՀ, 2009, էջ 417, 308:

¹⁰ Օրինակը բերել ենք ԱԸԵՎԱԿ (Արևելահայերենի ազգային կորպուս) բաց էլեկտրոնային գրադարանից:

առավոտի արծաթե լուսաթաղանթի վրա / **գրառիթմերն** իմաստ են ստանում» (ՆԼՎ, էջ 251), «**Լուսնահամ** մարմնիդ թուխ բուրմունքները փռելով չորս կողմ» (Ը, էջ 50), «Բարակաթել բռնատեղով բաժակները / մատներիս մեջ ու արյանս բջիջներում / զնգացել են **աստղագրգիռ...**» (ՆԼՎ, էջ 168): Այդպես և՛ **արյունափրփուր** (Ը, էջ 159), **տողաթել** (Ը, էջ 256), **երամախաղ** (Ը, էջ 300), **աղջկածաղիկ** (Ը, էջ 301), **երկնածարիք** (Ը, էջ 301), **ողբավարս** (Ը, էջ 312), **ոճրապահ** (Ը, էջ 133), **օրամիջ** (Ը, էջ 332), **պահանկար** (Ը, էջ 333), **լեռնամորուս** (ՆԼՎ, էջ 145), **մկնածակ** (ՆԼՎ, էջ 241) **մտափորձ** (ՆԼՎ, էջ 258), **ծխագիծ** (ՆԼՎ, էջ 20):

Լեզվական տարբեր հատկանիշներով մյուսներին չեն զիջում հետևյալ կաղապարները, որոնք ունեն գլխավորապես **ածականական, գոյականական** խոսքիմասային արժեք:

1. **Գոյական+ածական՝ «Անձրևաթանձր** մառախուղների ետևում....» (Ը, էջ 291), «...սրբում են բերանները նուրբ / և պատառաքաղ-մատներն իրենց **եղունգասուրք**» (ՆԼՎ, էջ 96), «Դու մենակ ես, **հանդամուրդ** / և անհեռու, անարահետ» (ՆԼՎ, էջ 155), «**Խոսքաչար** / բուրի / աչքերով / զիշերվա մեջ» (ՆԼՎ, էջ 278):
2. **Ածական+գոյական՝ «...որպես սեղմնապատկերը** նրա, որ / ապրում է մեր մեջ» (Ը, էջ 29), «Առաջ անցիր **խոնարհապար** / խոնարհաբար մի վարագույր ևս բացիր...» (Ը, էջ 22), «Տխուր եղանակ՝ անհատակ անցյալ, / ծառերի ծանոթ **մտերմաշրջուն**» (Ը, էջ 118), «**Մենամեղեդի**: Սիրո դիմաց սեր պահանջելը եսասիրություն է / անփոխադարձ» (Ը, էջ 225), «Ճանապարհների վրա **օտարամահ**, / Դեր-Ձոր դարձած աշխարհի վրա...» (ՆԼՎ, էջ 93):
3. **Ածական+ածական՝ «Մի քնքշաճերմակ** ամպ միանգամից / արձակեց կայծակե գոտին ու փուլ / եկաց սարի կրծքին» (Ը, էջ 313), «Իրիկուն է, տուն ես բերում / հանդում գտած մի արահետ / **մաքրաշիտակ** իր աղբյուրով» (ՆԼՎ, էջ 155):
4. **Գոյական (ածական)+բայարմատ՝ «Գունախաբ** ու անտիրական ինչպես թռչող կարապը, որը / երկնքից երևի թե երբեք չի իջնելու» (Ը, էջ 51), «Ոչ թե ժամանակներն են հիմա / **ազնվահերկ** դարձել ու բյուեղացել...» (ՆԼՎ, էջ 100) «Նրանք կելենն մի օր և օդը կմաքրեն անկուշտ **երկրակերներից**» (ՆԼՎ, էջ 240): Այդպես և՛ **կախարդաթով** (Ը, էջ 23), **լուսնամետ** (Ը, էջ 164), **երգամոռաց** (Ը, էջ 220), **կամրջաթող** (ՆԼՎ, էջ 239), **ծերունամուտ** (ՆԼՎ, էջ 36), **ծամաքաշ** (ՆԼՎ, էջ 253):

Կազմությունների մեջ կան բաղադրիչներ, որոնք վճռորոշ դեր են կատարում ոչ միայն բարդության բաղադրության գործում, այլև տվյալ պահին հաղորդվող, ներկայացվող երևույթի տպավորիչ արտահայտման համար: Կապված թեմայով, տրամադրության ուղղվածությամբ հեղինակը գործածում է առանցքային բառեր (արմատներ)՝ բանաստեղծում թաքնված բանաստեղծական ամենանուրբ երանգները բացահայտելու համար, Ս. Մարինյանի բնորոշմամբ. «Վ. Հակոբյանը բացառիկ գրավչությամբ է պատկերել արցախյան ոգու կանչը մարդկանց գիտակցության ու կենսաբանական զգացողություններում: Բանաստեղծը բնության և սիրո արանքում է, բնությունն իր հեքիաթներն է շռայլում, սերը շնչավորում է բնությունը, և պոետը թարգմանում է այն բանաստեղծությամբ...»¹¹:

Բառակազմորեն որպես առաջնաբաղադրիչ ակտիվ են **Արցախ, ժամանակ և թոնիր** արմատները, որպես վերջնաբաղադրիչ՝ **նյութ**-ը, իսկ և՛ առաջին, և՛ վերջին բաղադրիչներ՝ **մոմ, մութ, թեժ** արմատները:

¹¹ Ընտրանի, Ե., Սևտաբե, 2017, էջ 4:

«Արցախադարձ երկնքից արևը բոց է թափում» (Ը, էջ 219), «... Տարնում, Արցախատան Հին Հարարում, / Էրգրում հայոց տիրացան մեր սուրբ սարերին...» (Ը, էջ 271), «Դարերի ժամանակադաշտում / փոփոխություններ մտցնելով...» (ՆԼՎ, էջ 260), «Աներկիր խոսքեր, / ժամանակավայր / անմոլորակ» (ՆԼՎ, էջ 217), «Բսկ խոսք... ժամանակադարան է, / ուր բառն է գետին հոսեցնում» (ՆԼՎ, էջ 118), «Պարզ է, որ խմորահացը թոնրապատից չի բռնելու» (Ը, էջ 33), «Նման եղան թաժա հաց վերցնելուն՝ / թոնրաթեժ պողերը վրան» (ՆԼՎ, էջ 63), «Իմ կավանյութից է իմ բառը» (ՆԼՎ, էջ 125), «Իմ բառը իմ կովանյութից է» (ՆԼՎ, էջ 117), «Երկու մատնամով հանգչում են այրվող շուրթերիս վրա» (Ը, էջ 21), «Ուրվամովի / նման հալվում էր ճամփամերձ եզրագերանը...» (ՆԼՎ, էջ 253), «Հարսնամովի մեջ տաք-մեղրախոսում» (Ը, էջ 301), «Սպասումների անհունում, ամենախորքում ջրերի / մի մոմածաղիկ է վառվում» (Ը, էջ 52), «Կնաքարշ որձերի ոհմակը հոտոտում է մթնահունց եգերին» (Ը, էջ 26), «Մենությունը դառնում է մթնաթել...» (ՆԼՎ, էջ 259), «Ինքնամուր գիշեր» (Ը, էջ 385), «Ջնջված մի վայրում / մանկություն են կիսել / տխուր ու ածխամուր» (ՆԼՎ, էջ 250), «Շրջանցելով լուսումնությանին մրրիկներն ու / փորձարարական / շրջագծերը քամու» (ՆԼՎ, էջ 266), «Թերթերի էջերը «մաղալ» են դարձնում / թեժախարույկ, / ուր խորոված են պատրաստում «գրչի դեմոկրատները»» (ՆԼՎ, էջ 95), «Եվ մի ամբողջ գիշեր, թեժածարավ գույների մեջ թավալվելով» (Ը, էջ 293):

Ժողովրդական շունչն առավել զգալի է այն կազմություններում, որոնց կամ ձևը, կամ դրանց բաղադրիչներից մեկը կամ ածանցը բնորոշ է խոսակցականին, ինչպես՝ «...որ չորս պատերի մեջ / մնացած մինուճարատեր հարևանը / չլսի, չնեղանա» (Ը, էջ 320), «Սկսեցին արևագիլ դողանջներ / հնչել...» (Ը, էջ 325), «Մի քիչ / լռելուց հետո՝ ինքնուինքը. «Ցավի տված գերգայությունում»» (Ը, էջ 338), «Համացավցիներ ենք / Աշխարհում ոչ մի գույն ինքը չէ...» (Ը, էջ 147):

Նշելիսակային խոսքում գործածության քանակով և պատկերավորման հզոր լիցքով առանձնանում են բայական կազմությունները՝ անցյալանալ (Ը, էջ 86), հարցականել (ՆԼՎ, էջ 292), ծանծաղվել (ՆԼՎ, էջ 172), թերթաթափվել (Ը, էջ 258): Նշենք մի քանիսը բնագրային օրինակով. «Ծիտը մերկ ճյուղին տերևախաբ է տալիս» (Ը, էջ 11), «Մոռացածս՝ ափի մեջ, քանի տարի է քարեքարվելով» (Ը, էջ 377), «Տարբամերվել ենք / դիպակներում կյանքի: / Գիծ և գույն» (ՆԼՎ, էջ 223):

Նետաքրքրական են -վ- ածանցով բայերի գործածությունները: Բաղադրվելով անորոշ դերբայի -ել մասնիկի հետ՝ հասարակ գոյականներից սերում է բայեր՝ «Կաթիլ-կաթիլ աշխարհվում են» (Ը, էջ 12), «Կոկոնվում է հոգիս՝ լույսի քո ցողունին» (Ը, էջ 62), «Մեր աստղերը վաղուց ասուպվել են» (Ը, էջ 73), «Հիմա քարեր են փնտրում, որ իմ նմանակը լինեն գոնե: / Արձանվեմ» (Ը, էջ 146), «Աստվածամոր երազից ծաղկունքվել ես դու խոնարհ» (Ը, էջ 181), «...բռնցքներում երկնքված հենակներ են վեր հառնում» (Ը, էջ 202), «Իմ ձեռքն է ձգվում դեպի պողերը ծոցված կրակի» (ՆԼՎ, էջ 188), «Հողն Արցախս վրեժվում, որոգ շիրմին մխում է» (Ը, էջ 202):

Այս դեպքում բաղադրյալ -վել մասնիկն ունի բառակազմական գործառույթ, ինչը հաստատում է հայերենի զարգացման վերջին շրջանում այդ մասնիկի բառակազմական գործառույթով գործածությունների ակտիվությունը: Բավական է փաստել միայն Հ. Շիրազի «Հայոց դանթեական» պոեմը, որտեղ նման կազմությունների թիվը հասնում է ութ տասնյակի¹²:

¹² Ս. Համբարձումյան, Բառակազմական -վ- ածանցով բայերի գործածությունը Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեական» պոեմում, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2011, էջ 45:

Հանդիպում են նաև **գոյական+ավոր+վել** կաղապարով կազմություններ: **-Վ-** ածանցը նման բառակազմական (բայակերտման) նշանակությամբ բնորոշ է հայերենի գեղարվեստական լեզվին և առավելապես պոեզիային, որտեղ գոյական հիմքով կազմված շատ բայեր **-վ** ածանցով դարձել են առարկայական երևույթներից բխող գործողության պատկերավոր արտահայտություններ և ստացել ոճական յուրահատուկ արժեք¹³: «**Երազավորվել** է նրանց երգում ու թներում» (Ը, էջ 40), «**Ծիծաղելի** են դառնում ինքս էլ, / Ո՞նց **բառավորվել**» (Ը, էջ 179):

Ինչպես արդեն նշել ենք, հեղինակը ածանցման եղանակով ստեղծել է բառաձևեր, որոնք ժողովրդական մտածողության արդյունք են:

Հաճախադեպ են՝

1. **ան-** ժխտական նախածանցով կազմությունները՝ **անմեղավոր** (Ը, էջ 36), **անմենակ** (Ը, էջ 38), **անկանգունակ** (Ը, էջ 367), **անհարադիր** (ՆԼՎ, էջ 240): Նշենք մի քանիսը բնագրային օրինակով. «Ճանապարհների վրա անմեր, **անաղբյուր**» (ՆՎԼ, էջ 93), «Ես սա բանաստեղծություն չէ, եթե կուզեք / **անբանաստեղծություն** է» (ՆԼՎ, էջ 98), «**Անփակագիծ** ժպիտների զոհյալ ասպետ Ավոն է...» (Ը, էջ 131):
2. **-Ք** ածանցով՝ **հավքառատ** (Ը, էջ 371), **տաքավարք** (ՆԼՎ, էջ 112), **մեղքատեր** (ՆԼՎ, էջ 37), **մենախորք** (ՆԼՎ, էջ 256)¹⁴: Նշենք բնագրային օրինակներով ևս. «Գույներն են արթնանում մերկության մեջ հարսի առաջին **վայելքագիշերում**» (Ը, էջ 132), «Ուր արևը՝ մեր համբույրի տեսքով, / իր **շրթնահետքն** է թողնում ձյունների վրա» (ՆԼՎ, էջ 61), «Թերթիկներ է գլորվում **արբունքագեղ** ջրերի ակուն» (Ը, էջ 140):
3. **-Ուհի** վերջածանցով՝ «Ուզում է կողքի **թռնուհուն** սեր խոստովանել հավքը» (Ը, էջ 39), «Աչքերիդ մեջ լալիս էր մի կապույտ մանուշակ, / մենակ աղջիկ, / **մենակուհիս...**» / Եվ այնքան խորն էի / թաքցրել սիրտս՝ աշխարհից, ցավից, / այդ ինչպե՛ս / գտար, / **անձրևուհիս**» (Ը, էջ 44), «Տխուր օդ: Անծանոթ **ստվերուհի**» (Ը, էջ 144):
4. **-Ապ** ժխտականով՝ «Մշտապես ես եմ, / որպես վաղվա շող՝ տապանակից դուրս, / **ապայծմյա ու** երկնածնունդ» (ՆԼՎ, էջ 265), «Կենսարար միջակայքում / շրջագայում է **ապահնչյունը**» (ՆԼՎ, էջ 51), «Աչքի առաջ պահել... / ակնհայտորեն ներփակ «նյութի երևակայությունը» / **ապաթատերական**» (ՆԼՎ, էջ 250):
5. **Նախա-** ածանցով՝ «**Նախագիշեր** է լույսը: / Լսելի քար: / Խնկելի բառ» (ՆԼՎ, էջ 225), «Իսկ իմ բառերը հնչում են միայն կապույտ օդում / որպես **նախաթղթային** բանաստեղծություն...» (ՆԼՎ, էջ 111), «Մի հատիկ ծիրան ընկել է ծառից / և մինչև հիմա անվերջ, անդադար / գլորվում է հին երկրագնդի շուրջ՝ / **նախաարեգակ** նման» (ՆԼՎ, էջ 45):
6. **Հակա-** ածանցով. «Եթե ես քո մեջ / չեմ՝ արևը չի երևում, և ամեն ձնծաղիկ **հակաձյուն** է» (Ը, էջ 94), «Դա ատելություն չէ, / այլ... **հակասեր**, / վայրկյանների ավարառու» (ՆԼՎ, էջ 217):
7. **-Ոտ** վերջածանցով. «Լսելի լինի լեռոտ ու **ձորոտ** դողանջը նրա» (ՆԼՎ, էջ 93), «Լույսի դեմքը մի քիչ **մուրոտ** էր, լավ եմ հիշում» (ՆԼՎ, էջ 34):

¹³ Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն և բառագիտություն, Ե., 1979, հ. 1, էջ 465:

¹⁴ Պետք է նատել, որ սրանցում **-ք** ածանցը հեղինակը չի կցել բառին: Ածանցով պատրաստի կազմությունները գործածվել են նորաբանություններ ստեղծելու համար: Մյուս դեպքերում հեղինակը հիմնականում ածանցների իմաստային նրբերանգներն ու նշանակությունը հմտորեն օգտագործել է նորակազմությունները ստեղծելու համար: Սա կարևոր մեթոդ է ոչ միայն գեղարվեստական խոսքը, այլև հայերենի բառապաշարը նոր հասկացություններով հարստացնելու համար, որով էլ արժևորվում է հեղինակի բանարվեստը:

8. **-Ուն** վերջածանցով. «Ամուր բռնի իր Նունեի երգներից՝.... / տաք-մեղրախոտուն» (Ը, էջ 301), «Կարոտ անմեռ է միայն անհասության մեջ **բարևուն**» (Ը, էջ 24):
9. Ածանցական այլ ձևեր՝ **գրչանցում**՝ (ՆԼՎ, էջ 235), **ջանվանություն** (ՆԼՎ, էջ 258), **ներումնավոր** (ՆԼՎ, էջ 17), **բազմաքննական** (ՆԼՎ, էջ 260), **արմատարան** (Ը, էջ 373), **արտապատճառային** (ՆԼՎ, էջ 247): Նշենք բնագրային օրինակներով ևս. «Մութի միտումներն անքննելի են, **ծաղկախոտության** / պահերից դուրս» (ՆԼՎ, էջ 242), «Վարկյանը երկու կշռաքար ունի՝ սերը և **չսերը**» (ՆԼՎ, էջ 236):

Անհատական-ոճական նորաբանությունների մեջ տարբերակվում են նաև **դիպվածային** և **պոտենցիալ** բառերը:

Դիպվածային բառերն առանձնանում են իրենց գոյացման հապճեպությամբ, արտառոցությամբ, այսպես ասած՝ ստեղծովի, սարքովի բնությամբ և ինչպես որ հան-պատրաստից ստեղծվում են բանավոր խոսքում, այնպես էլ անցնում և մոռացվում են¹⁵: Գեղարվեստական խոսքում դրանք հիմնականում ունեն ոճական նպատակադրում:

Վ. Հակոբյանի ստեղծած դիպվածային բառերի մեծ մասը բազմաբաղադրիչ են, երկարաշունչ, ունեն միանգամյա գործածություն: Ինչպես՝ **բառարանապարտադրա-կան** (Ը, էջ 258), **փեղկափակոց** (Ը, էջ 68), **գորաջիղ** (ՆԼՎ, էջ 265), **հմայաշունչ** (ՆԼՎ, էջ 266), **հարահույս** (ՆԼՎ, էջ 274), **վանքադարան** (Ը, էջ 373), **տարատանջ** (Ը, էջ 21), **բուրումնավարդ** (Ը, էջ 21), **յոթնասն** (Ը, էջ 132): Նշենք մի քանիսը բնագրային օրինակներով՝ «Խաչքարերը թևեր են **մարիամակույս** ճամփեքին» (Ը, էջ 219), «Քեզ կնայեն իմ նախնիները / քարերին դաջված **ստորագրախաչի** տեսքով» (Ը, էջ 259), «...կուսակցապետերով՝ իրարամերժ, / **իրարազանց**, / իրարակեր» (ՆԼՎ, էջ 274):

Դիպվածային նորաբանություններից հատկապես շատ են **-ություն** ածանցով կազմվածները՝ **տաքորսություն** (Ը, էջ 294), **ինքնահայտնաբերություն** (Ը, էջ 296), **ձայնիմացություն** (ՆԼՎ, էջ 248), **հավասարատարածականություն** (ՆԼՎ, էջ 256), **խորթմայրություն** (Ը, էջ 22): Նշենք բնագրային օրինակներով ևս. «Իսկ գետը **ձայնանկարչության** դասեր է տալիս մանուկ հովերին... / իսկ վառած մոմդ **լուսաբերաժշտության** դասեր է տալիս ծղոդ աստղերին» (Ը, էջ 10), «Հորս ձենը **կիսա-տախտություն** էր միշտ / հատու հստակ վերջակետերով» (ՆԼՎ, էջ 253):

Պոտենցիալ բառերի կազմությունը բխում է լեզվի բառակազմական համակարգից: Կամված լինելով լեզվի արդյունավետ բառակազմական կադա-պարներով՝ դրանք, սակայն, մնում են իբրև անհատական նորակազմություններ և խոսքային իրողություններ¹⁶:

Հեղինակի լեզվում նման կազմությունները նպաստում են հանգերի պահպանմանը, խոսքի թեթև, սահուն արտահայտմանը. «Անահիտ՝ իմ քույր / Դու երգ-երգենի, / դու հուր-հրենի, / Սուրբ-Չարենցենի» (Ը, էջ 233), «**Կանչիրգամ** աչքերով աղջիկ, / **Չեմգաչեմգա** շուրթերով աղջիկ» (Ը, էջ 302), «...հազար ու մի խոստումներով, / զինու լիաշուրթ բերաններով, / **երդումուտումներով**» (Ը, էջ 263): Նման կազմությունները, լինելով խոսքային իրադրության արդյունք, անսովոր են, այդ իսկ պատճառով հիմնականում չեն մտնում և չեն ընդունվում լեզվի բառապաշարում:

Հայտնի է, որ հեղինակային նորակազմությունները հիմնականում ստեղծվում են նմանողության (անալոգիային) սկզբունքով: Նման կազմություններն արտահայտ-չական ուժ են ստանում միևնույն բանաստեղծում գործածվելիս: Ինչպես՝ «Անցած և

¹⁵ Էլոյան, 1989, էջ 197:

¹⁶ Էլոյան, 1989, էջ 184:

անցնելիք՝ / չփորձարկված, / չցամաքարկված, / չջրարկված ճանապարհներ» (Ը, էջ 85), «Ամենակոշտ, ամենաքար, / ամենաժայռ մարդը անգամ / հալվում, փափկում, / մոամոռ է դառնում սիրո մի ժպիտից» (Ը, էջ 199), «Որովհետև մարդն ուժեղ է գերմարդուց, / որովհետև մարդն ուժեղ է վերմարդուց....» (Ը, էջ 256):

Խոսուն են հետևյալները. հեղինակը արդեն իսկ հայտնի *խաչքարարուռ, անցուղարձ, գրկանք* և *արդարակշիռ* բառերի համաբանությամբ կյանքի է կոչել *աստվածարուռ*՝ «....և ափիս մեջ վառվում է *աստվածարուռ* մի աշխարհ» (Ը, էջ 202), *անցուշարժ*՝ «Արջերը քաշվել են հերվա որջերի մեջ՝ / անխոս դուրս մնալով *անցուշարժերից*» (Ը, էջ 187), *ատելանք*՝ «Ի՞նչ կա քո մեջ՝ ատելա՞նք, սե՛ր, այդ ամենը մի հաշիվ է....» (ՆԼՎ, էջ 163) և *արդարանժար*՝ «....մենք նրա հետ քայլենք՝ / Պապ Ֆրանցիսկոսի *արդարանժար* / հայացքի ներքո» (ՆԼՎ, էջ 293) բառաձևերը:

Այսպիսով՝ նորաբանությունների, նորակազմ բառերի, նոր իմաստների, բառագործածությունների քննությունը միշտ էլ գնահատվել է յուրաքանչյուր լեզվի բառապաշարի ուսումնասիրման, համալրման գործում: Ուստի և՛ այս աշխատանքով փորձ է կատարվում ևս նպաստել վերջին շրջանում նորաբանությունների, նոր բառերի՝ համակողմանի ուսումնասիրման մեծ թափ ստացած լեզվապահպան գործընթացին: Անկախ նրանից, թե Վարդան Հակոբյանի հեղինակային նորաբանությունները, նորակազմությունները կգտնեն ընթերցողների լայն շրջան, կտարածվեն ու կմտնեն բառապաշարի ակտիվ շերտ, այնուհանդերձ, դրանց գոյությունը ընդգծում ու կարևորում է գրողի ինքնատիպ ոճն ու երևույթներին ու իրողություններին սուր բնութագրումներ տալու կարողությունը:

НОВОВВЕДЕНИЯ /НЕОЛОГИЗМ/ К СБОРНИКАМ СТИХОВ И ПОЭМ ВАРДАНА АКОПЯНА - ИНГА МАРГАРЯН - В последнее время набирает обороты процесс изучения нововведений/неологизма/, новых слов, смысловых новообразований, изучение словосочетаний определения их места и роли в лексикографии. В этом плане не менее важно также изучение нововведений отдельных авторов.

*В лингвистике понятие **неологизм** не является однородным. В широком смысле на каждом новом этапе развития языка все те новые слова, которые входят в лексику. Нужно различать понятия "неологизм", "новообразование" и "новое слово". Необходимым условием для того, чтобы стать новым словом в неологии или превратить его в новое, является его частое использование.*

Новообразование по форме и смыслу-совершенно новые структуры, которые, в свою очередь, могут быть эфемерными, потенциальными.

Изучение авторских нововведений /неологизма/ В. Акопяна дает возможность составить четкое представление о языке его стихов и поэм, выявить своеобразный стиль и придать важность фактору своеобразного пополнения общего лексикона языка.

Изучено 160 словарных новшеств по своим видам, составу и значению. Например: сумасшедший «գիժկառաշկ», прозрачный «լուսնահալ», «Արցախառուն» Родина Арцах «Արցախառուն», «արձանվել» каменеть, «սովերոնիկ» тень ж. и т. д.

Ключевые слова - лексика, авторский неологизм ,новообразование, эпизодические слова, потенциальные слова, словообразование, шаблоны, стихотворение.

NEOLOGISMS IN VARDAN HAKOBYAN'S VERSE AND POEMS - INGA MARGARYAN- *The linguistic process of studying neologisms, new words, new semantic coinages has greatly sped up recently. The need to find and understand their usage and function in the mainstream vocabulary has become urgent.*

The notion of neologisms as linguistic data is not one facet. In a larger sense neologisms are all those new words that enter a language during every new period of development it undergoes. We have to differentiate between protologisms (freshly coined words, neologisms at their early stage) and neologisms, new words. Whether or not a neologism becomes a new word, enters the active/mainstream vocabulary of a language depends on the frequency of its usage. Neologisms, at the stage of being protologisms, are completely new in their form and meaning, which can in their turn be occasional, potential.

The study of V. Hakobyan's neologisms (author's neologisms) gives opportunity to form a clear understanding of the language of his verse and poems, to unveil his unique style and to stress his contribution to the enrichment of mainstream vocabulary of language.

160 lexical neologisms, including their different types, formations and meanings have been studied. For example: «գիժկաստակ» (referring to the November sun, “crazy-mocking”), «լուսնահաս» (moon flavoured), «Արցախասունն» (Artsakhland, Artsakh-home), «սրձանկէլ» (get statued), «սսկէրուհի» (shadowess, Miss-the-shadow), etc.

Key words: *active/mainstream vocabulary, author's neologism, new coinage/ protologism/, occasional words, potential words, word formation, poem.*

ԿԵՂԾ ԲԱՆԱԶԵՎ, ՈՐՈՎ ԲԱՔՈՒՆ ՔՈՂԱՐԿՈՒՄ Է ԶԱՎԹՈՂԱԿԱՆ ԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Аннотация

Нагорный Карабах по ПРАВУ не принадлежит Азербайджану. Мир знает об этом, но игнорирует право. А Баку это использует как разрешение на геноцид.

«Нагорный Карабах — это Азербайджан!» — вот клич, с которым азербайджанский президент Ильхам Алиев направил на войну-мясорубку свою армию и террористов. Но принятые самим Баку или с его участием документы по Нагорному Карабаху (НК) доказывают обратное.

ДОКУМЕНТ 1. Декларация независимости Азербайджанской Демократической Республики

<https://bit.ly/2T7gQ1W>

Выдержка из документа: «...Мусульманской Национальный Совет Азербайджана, избранный всехароным голосованием, ныне всенародно объявляет: отныне народы Азербайджана являются носителями суверенных прав и Азербайджан, состоящий из Восточного и Шжного Закавказья, - полноправнын, независимым государством».

Примечания к документу

Первое. Образованный в тот же день -27 мая 1918 г. – Мусульманский Национальный Совет (МУС) не мог быть избран всенародным голосованием в многонациональном регионе в том числе с исповедующими христианство народами. В хаосе развала Российской империи всенародного голосования в таком конфликтном регионе, каким был Восточное Закавказье не было и не могло быть.

Второе. Носителями суверенных прав объявляются народы Азербайджана. Ровно через семьдесят лет эти народы исчезнут из этнической карты Восточного Закавказья. Вместо них в результате агрессивной ассимиляции на этнической карте появится несуществующая в 1918 г. лже-этническая общность – азербайджанцы.

Третье. Азербайджанская Демократическая Республика декларируется не на основе референдума и потому МНС в декларации не мог указать границы, которые сложились бы на основе акта самоопределения. Он произвольно объявляет восточную и юго-восточную часть Закавказья территориями впервые появившейся республики против воли проживающих там народов. Через год АДР представила в Лигу Наций уже более обширные территориальные претензии – от Каспийского моря до Черного моря, включая Дербенд и часть Карсской области. Это были территории, на которых впервые возникшая АДР не только не имела исторического права, но и политического или административного контроля.

ДОКУМЕНТ 2: Решение Пятого комитета Ассамблеи Лиги Наций от 20.11.1920 об отклонении просьбы Азербайджана о приеме в Лигу Наций в связи с наличием у него территориальных споров (League of Nations. The Records of the First Assembly. Meetings of the Committees II. Geneva, 1920, p.173–174).

Выдержка из документа: «...Можно ли принять в Лигу Наций государство, которое очевидно не отвечает условиям, установленным Уставом Лиги и в особенности

требованию, касающемуся стабильности и территориального суверенитета и которое не было признано de jure ни одним членом Лиги Наций. Комитет... возвращает вопрос Ассамблее, выступая против его приема».

Примечание к документу

Документов, которые относились бы к политическому образованию с названием «Азербайджан» до 1918 г. нет, ибо политического образования не было. В апреле 1920 г. Азербайджанская Демократическая Республика (АДР) покинула историю без установленных или признанных границ.

ДОКУМЕНТ 2: Декларация АзРевкома в связи с установлением в Армении Советской власти от 2.12.1920 //Газета «Коммунист», Баку, 2.12.1920.

Выдержка: «Территории Зангезура и Нахичеванского уездов являются нераздельной частью Советской Армении, а трудовому крестьянству НК предоставляется полное право самоопределения».

Примечание

Днем раньше Баку провозгласил отказ от притязаний также на НК. В этой же декларации признается право НК на полное самоопределение.

ДОКУМЕНТ 3. Телеграмма Председателя Карабахского Армянского Национального Совета председателю делегации Республики Армения о расторжении IX Съездом крестьянства

ДОКУМЕНТ 3: Заявление об объявлении НК составной частью Армянской ССР от 12.6.1921 //Газета «Хорурдайн Айастан» (Ереван), 12.6.1921.

Примечание

Основания для заявления: постановления Съездов Полномочных Представителей НК 1918–1920 гг., провозгласивших НК неотъемлемой частью Республики Армения (РА), и признание права НК на полное самоопределение со стороны Баку.

ДОКУМЕНТ 4. Пленум Кавбюро РКП (б) о включении НК в состав АрмССР и о перенесении вопроса на окончательное решение в ЦК РКП (б) //ЦПА ИМЛ. Ф. 64, оп. 2, д. 1, л. 118.

Выдержка: «...Плебисцит произвести только в НК, т. е. только среди армян. Голосуют «за»: Орджоникидзе, Мясников, Фигантнер, Киров, Назаретян. Постановлено: НК включить в состав АрмССР, плебисцит провести только в НК».

Примечание

Выражение «Нагорный Карабах включить в состав АрмССР» по факту ложен, так как НК уже был объявлен неотъемлемой частью Советской Армении.

ДОКУМЕНТ 5: Решение Пленума Кавбюро РКП (б) о включении НК в пределы Азербайджанской ССР (АзССР) от 5.7.1921 //ЦПА ИМЛ, ф. 17, оп. 13, д. 384, л. 67.

Выдержка: «а) Исходя из необходимости национального мира между мусульманами и армянами, постоянной экономической связи Верхнего и Нижнего Карабаха, его связи с Азербайджаном, НК оставить в пределах АзССР, предоставив ему широкую областную автономию с административным центром в г. Шуше, входящем в состав автономной области. б) Поручить ЦК АзССР определить границы автономной области и представить на утверждение Кавбюро ЦК РКП. в) Поручить Президиуму Кавбюро ЦК переговорить с ЦК Армении и ЦК Азербайджана на чрезвычайном НК. г) Объем автономии НК определить ЦК Азербайджана и представить на утверждение Кавбюро».

Примечания

1. В отличие от решения предыдущего дня решение Кавбюро от 5 июля не было ни обсуждено, ни поставлено на голосование, т. е. не было принято.

2. В преамбуле решения понятия Нагорный Карабах и Азербайджан употреблены как географически разные понятия, указывающие, что Нагорный Карабах не есть Азербайджан.

3. Слова «оставить в пределах АзССР» в решении употреблены вопреки тому факту, что НК уже был объявлен неотъемлемой частью АрмССР.

4. Решение предоставить НК «широкую областную автономию» прямо указывает, что этот статус предоставляется всему НК, на что указывало первое название автономии — Автономная область Нагорного Карабаха (АОНК).

ДОКУМЕНТ 6: Декрет АзЦИКа Советов об образовании Автономной области Нагорного Карабаха от 7.7.1923 //Собрание узаконений и распоряжений Рабоче-Крестьянского Правительства АзССР за 1923 г., Баку, 1923 г., с. 384–385.

Выдержка: «1. Образовать из армянской части НК автономную область, как составную часть АзССР, с центром в местечке Ханкенди... Примечание: Все пастбища, леса, сады и фактическое владение водой сохраняется за нынешними владельцами...».

Примечания

1. Нарушив незаконное и фактически непринятое решение Кавбюро, Баку декретировал автономию на одной четвертой части НК. В 1936 г. область была переименована в Нагорно-Карабахскую автономную область (НКАО), отразив факт грабежа 75% территорий области уже внутри АзССР.

2. Декрет подтвердил принадлежность территорий армянам: «Все пастбища, леса, сады и фактическое владение водой сохраняется за нынешними владельцами».

ДОКУМЕНТ 7: Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР» от 3 апреля 1990 г. //Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР, 1990, N15, ст. 252.

Выдержка: «Статья 3. В союзной республике, имеющей в своем составе автономные республики, автономные области и автономные округа, референдум проводится отдельно по каждой автономии. За народами автономных образований сохраняется право на самостоятельное решение вопроса о пребывании в Союзе СССР или в выходящей союзной республике, а также на постановку вопроса о своем государственно-правовом статусе. В союзной республике, на территории которой имеются места компактного проживания национальных групп, составляющих большинство населения данной местности, при определении итогов референдума результаты голосования по этим местностям учитываются отдельно».

Примечание

Закон закрепил приоритет принципа самоопределения народов по отношению к произвольно установленным границам союзных республик, подтвердив, что за автономными образованиями вне политико-правовой системы СССР сохраняется право на самостоятельное решение вопроса о своем национально-государственном статусе вплоть до провозглашения суверенитета. Это было очередное признание права НК на самоопределение, за которое голосовали и депутаты Верховного Совета СССР от АзССР. Закон предоставил полное право НКАО и сопредельному армянонаселенному Шаумяновскому району провозгласить суверенное государство сразу после того, как в Баку провозгласили восстановление просуществовавшей в 1918—1920 гг. АДР, что

юридически было равноценно ее выходу из СССР.

ДОКУМЕНТ 8: Декларация Верховного Совета Азербайджанской Республики о восстановлении государственной независимости Азербайджанской Республики от 30.8.1991 //Газета «Бакинский рабочий», 3.9.1991.

Выдержка: «Верховный Совет Азербайджанской Республики, руководствуясь высшими государственными интересами народа Азербайджана и выражая его волю, отмечая, что с 1918 по 1920 год Азербайджанская Республика существовала как независимое, признанное со стороны международного сообщества государство... провозглашает восстановление государственной независимости Азербайджанской республики».

Примечание

Утверждение о международной признанности АР опровергается решением Пятого комитета Ассамблеи Лиги Наций об отклонении просьбы Азербайджана о приеме в Лигу Наций, приведенным выше (Док. 2).

ДОКУМЕНТ 9: Декларация о провозглашении Нагорно-Карабахской Республики от 2.9.1991 //Сб. Статус Нагорного Карабаха в политико-правовых документах, Ереван, 1995 г., с. 69–70.

Выдержка: «Совместная сессия Нагорно-Карабахского областного Советов народных депутатов с участием депутатов Советов всех уровней, выражая волю народа, закрепленную фактически проведенным референдумом и в решениях органов власти НКАО и Шаумяновского района в 1988—1991 гг.; ...констатируя провозглашение Азербайджанской Республикой «восстановления государственной независимости 1918–1920 гг., ... провозглашают Нагорно-Карабахскую Республику в границах нынешней Нагорно-Карабахской автономной области и сопредельного Шаумяновского района, сокращенно НКР».

Примечание

Декларация ссылается на отказ АР от правопреемства АзССР и восстановление не обретшей фактически установленных или признанных границ АДР. НК в 1918—1920 гг. не был в составе АДР, из чего и следует юридический вывод о том, что в 1991 г. НКР была провозглашена на территориях, не принадлежащих АР.

ДОКУМЕНТ 10: Конституционный акт о государственной независимости Азербайджанской Республики от 18.10.1991 //Газета «Бакинский рабочий», 7.11.1991.

Выдержка: «... 27–28 апреля 1920 г. РСФСР, грубо поправ международные правовые нормы,... оккупировала территорию суверенной Азербайджанской Республики, насильственно свергла законно избранные органы власти и положила конец независимости, достигнутой ценой огромных жертв азербайджанского народа.

...Статья 2. Азербайджанская Республика является преемницей существовавшей с 28 мая по апрель 1920 г. Азербайджанской Республики».

Примечание

1. Утверждение о возобновлении многовековых традиций государственности азербайджанского народа лишено фактического содержания, т. к. истории до XX века не известны ни азербайджанское государство, ни азербайджанский народ.

2. Провозгласив себя преемницей АДР, АР потеряла и те незаконные права в отношении НК, которые большевиками были даны АзССР.

ДОКУМЕНТ 11: *Заявление «двенадцати» о будущем статусе России и других*

бывших республик (Брюссель, Гаага, 23.12.1991)

Выдержка: «По решению Европейского Совета... 16.12.1991 в Брюсселе состоялось заседание Совета ЕС на уровне министров иностранных дел... Был определен общий подход «двенадцати» к вопросу официального признания новых государств на территории Советского Союза и в Восточной Европе... Согласованы следующие критерии официального признания...

Примечание

Заявление огласило условия ЕС признания новых государств на постсоветском пространстве. 21.12.1991 на совещании в Алма-Ате руководители 11 республик, в т. ч. Армении и Азербайджана, дали согласие на него. ЕС не уточнял правовые основания предъявленного условия. Лишь потом правоведы сошлись на том, что новые государства были признаны по принципу *Uti possidetis*, по которому за получающими независимость государствами признавались территории и границы, которые они имели прежде. Но это условие оказывается неприменимым к АР. Отказавшаяся накануне от правопреемства АзССР АР потеряла юридические отношения с насильственно включенными в пределы АзССР Нахичеваном и Нагорным Карабахом. В момент принятия декларации Баку не имел ни политического, ни административного контроля над Нагорным Карабахом. Он не владел Нагорным Карабахом, как это полагалось принципом *Uti possidetis*.

Postscriptum:

Признание АР с юридически не принадлежащими ей территориями в Баку поняли как право на продолжение геноцидной политики, которой он в неявных и явных формах придерживался все советские годы. Ныне урегулирование конфликта загнано в тупик ложного для данного случая противоречия принципов самоопределения народов и территориальной целостности государств. Право самоопределения народа НК признано неоднократно (см. Док. 2 и 7), в т. ч. самим Баку. Принцип же территориальной целостности не применим к АР в силу действующего Карсского договора от 1921 г. и отсутствия оснований на суверенитет АР над НК.

Основной вывод

Нагорный Карабах по ПРАВУ не принадлежит Азербайджану. Мир знает об этом, но игнорирует право. А Баку это использует как разрешение на геноцид.

«ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ» ՊՈԵՄԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Հոդվածում ցույց է տրվում, թե ինչ նշանակություն ունի «Մատյան ողբերգության» պոեմի ուսումնասիրությունը դպրոցում: Ուսումնասիրության նպատակն է աշակերտին օգնել հեռու մնալ արատավոր բարքերից, ընտրել կյանքի արդար ճանապարհները և Նարեկացու օրինակով փորձել աստվածանալ՝ մեղքերից ազատվելով, մաքրվելով:

Ուսումնասիրության նպատակն է նաև աշակերտների մեջ առաջացնել այն գիտակցումը, որ մարդը հրաշագործ է, Աստված և մահկանացու, և մարդը աստվածացավ այն ժամանակ, երբ բանականության լույսը նրան դուրս հանեց հեթանոսական խավարից: Մակայն մարդու մեջ մնաց չարիքի սերմը, որ սպառնում է ամեն ինչից ծիլել տալ: Եվ Նարեկացին է, որ սովորեցնում է մարդուն գիտակցաբար հեռու մնալ այն ամենից, ինչը չար է կամ կարող է չարության սերմեր գցել իր հոգում:

Հոդվածի նպատակն է նաև սովորեցնել աշակերտին ընկալել պոեմի բովանդակությունը և լեզվաոճական առանձնահատկությունները, ընդլայնել ճանաչողական դաշտը և ձևավորել բարձր արժեքային համակարգ ու քրիստոնեական մտածելակերպ:

«Այս գիրքն իմ ձայնով իմ փոխարեն պիտի աղաղակի», - գրում է Նարեկացին: Աշակերտը պիտի կարողանա ամեն ժամանակ լսի մեծ մարդասերի հոգու ձայնը, որը բոլոր ժամանակների համար դարձավ արդարության և ճշմարտության ձայնը:

Բանալի բառեր՝ *մաքրագործում, մեղք, գիտակցում, Բարձրյալ, լույս, աստվածակերպ, ողբ, որոնում, հավատ, արարում, հավերժություն, մարդկություն:*

Գրիգոր Նարեկացի (951-1003), հայ միջնադարյան հոգևորական, քրիստոնյա աստվածաբան, միստիկ բանաստեղծ, երաժիշտ և փիլիսոփա: Գրիգոր Նարեկացու գրական հոջակը սկսվել է իր կենդանության օրոք՝ դարձնելով նրան մեր առաջին մեծ բանաստեղծը, ով պոեզիան անջատեց եկեղեցական արարողություններից, գովերգեց բնությունն ու մարդուն: Նարեկացու՝ մեզ հասած գրական ժառանգության կարևորագույն ստեղծագործությունը «Մատյան ողբերգության» պոեմն է: «Մատյան ողբերգության» պոեմը հայ միջնադարյան գրականության մտքի ամենամեծ արգասիքն է, պատկանում է մարդկության ստեղծած գեղարվեստական մեծագույն արժեքների թվին: Պոեմը ամփոփում է այն լավագույնը, ինչ ստեղծել է հայ քերթողական միտքը անհիշելի ժամանակներից մինչև 10-րդ դարը: Պոեմում խտացված են բանաստեղծի ողբերգական ապրումները, տարակույսները, թե ինքը կարող է միանալ Աստծուն:

«Մատյան ողբերգության»... Գիրք, որ կարծես դարձել է ուղենիշ, որը տանում է մաքրագործվելու, սրբվելու այն աղտից, որ տիրում է այսօր ամենուր: Եվ Նարեկացու ծովածավալ ու ծովատրոփ այս «Մատյանն» էլ ունի իր ափունքը, որ կարելի է ձևակերպել ընդամենը երեք բառով. «ՄԵՂԱՅ – ԿՈՐԵԱՅ – ՈՂՈՐՄԵԱ»¹:

Փորձություններով, պատերազմներով լի մեր երկրում մարդուն մնում է միայն

¹ Գ. Օհանյան: Հայ գրականության քրեստոմատիա: Երևան, 2007թ., էջ 79, 507էջ:

տրտմել, տառապել և երկյուղել այնպես, ինչպես մեծ մարդասերը: Անտաբեր լինել բոլոր այն ցնցումների հանդեպ, որ տիրում է աշխարհում, պարզապես հանցագործություն է:

Եվ ի՞նչ է մնում ուսուցչին, եթե ոչ աշակերտի մեջ սերմանել մեծ սեր ու նվիրում իր նմանի՝ մարդու հանդեպ, սովորեցնել զգալ և ցավ քաշել յուրաքանչյուրի համար ու աղոթել Բարձրյալին, որ գթա, ողորմի ու ապրեցնի ժողովրդին, լուսավորի նրան այն լուսով, որը երագում էր մեծ մարդասերը՝ Գրիգոր Նարեկացին:

Հանրակրթական դպրոցն այսօր էլ ավելի պիտի անդրադառնա հոգևոր բարձր արժեքամակարդ ունեցող անհատ-աշակերտ և վաղվա քաղաքացի կրթելու գործին: Այն մեթոդները և մոտեցումները, որ կընտրի ուսուցիչը աշակերտի ուսուցման և հոգևոր դաստիարակության գործում, կբերեն այդ նպատակի իրագործմանը: Եվ ուսուցչի խնդիրն է մտավոր այնպիսի հասարակության ձևավորումը, որը առաջնահերթությունը կտա հոգևոր-բարոյական արժեքներին: Այսինքն՝ աշակերտը, ապրելով որոշակի սոցիալական միջավայրում, հնարավորինս պետք է զերծ լինի թերություններից, վնասակար ազդեցություններից և իր գործունեությամբ կարողանա փոխել իր իսկ միջավայրը հենց իր օրինակով²:

Եվ Նարեկացի կարդալն ու ուսումնասիրելը պետք է լինի ոչ թե սոսկ դասապրոցես, այլ մարդակային վարքի քննություն, ինչպես արել է մեծ հոգեխույզը «Մատյան ողբերգության» պոեմում:

Բանաստեղծը ուզում է քննել մարդու հոգին, բացել նրա բոլոր ծալքերը: Նա տառապանքով է անցնում դեպի աստվածային էությունը տանող որոնումների ճանապարհը: Նարեկացին իրեն անվերջ մեղքեր է վերագրում, ձգտում է հասնել Աստծուն, աստվածանալ՝ մեղքերից ազատվելով, մաքրվելով: Պոեմում հանդես եկող Աստված բարության, ազնվության խորհրդանիշ է, նա «գործերով է գրավում»:

Նարեկացին հումանիստների համար բնորոշ այն տեսակետն ունի, որ մարդը ծնվում է բոլորովին մաքուր և դրական հոգեկան հատկություններով, բայց հետո իրականության մեջ նա վատանում է, հետևաբար մարդակայինը դրականն է ու լավը: Ուստի՝ նա հավատում է մարդու վերափոխության հնարավորությանը և պահանջում է այդ³:

Եվ հենց այդ պահանջը մենք պետք է դնենք պոեմի ուսուցման հիմքում: Աշակերտը պիտի հավատա, որ կյանքի արատավոր երևույթներից խեղված մարդը շտկվելու, բարեփոխվելու հնարավորություն ունի, եթե հավատա, պայքարի և չտարակուսի:

Պետք է ստեղծել աշակերտի (մարդու) և Աստծո միջև կապ և նույնիսկ հասցնել երկխոսության, ինչպես պոեմում է: Մատյանում Նարեկացին հոգու լույս է ուզում և ձգտում է, որ կյանքում ամեն ինչ ծառայի մի բարձր, բարի նպատակի, ուստի մտավախություն է ապրում:

...Չլինի որ երկնեմ ես, բայց չծնեմ...

Աղերսամատյանում ձգտելով հասնել Աստծո էությանը՝ Նարեկացին տեսնում է տեսնել մարդուն կատարյալ, անթերի, սակայն ողբերգություն է ապրում՝ ամենուր տեսնելով չարություն և ստորություն:

Քրիստոսի ծննդյան հազարամյակն արգասաբեր եղավ եկեղեցու համար, քանի որ Գրիգոր Նարեկացին երկնեց իր աստվածաշունչ քերթվածը՝ «Մատյան ողբերգությա-

² Գր. Նարեկացի: «Մատյան ողբերգության»: Երևան, 1960թ., էջ 23, 409 էջ:

³ Վ. ԼԱՆՅԱՆ: «Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի խորհրդաբանական ընկալումները»: 2017թ., էջ 3, 23 էջ:

նը»⁴: Եվ երկրորդ հազարամյակում ապրող աշակերտ քաղաքացուն դժվար է ընկալել մեծ մարդասերի հույզերն ու ապրումները: Ստեղծված քաղաքական անկայուն իրավիճակը, պատերազմական գործողությունները, սոցիալական պայքարը մարդու միջից կարծես հանել են աստվածային ընկալումները, բարի, գթառատ, ներողամիտ մարդու կերպարը կարծես մնացել է սոսկ նարեկացիական ձգտում: Մարդը նորից հեռացել է Աստծուց, և ուսուցչի գործն է միջառարկայական կապի միջոցով աշակերտին տանել պատմության խորքերը և ցույց տալ երկու հասարակությունների նմանությունները՝ պատերազմներ, սոցիալական ընդվզումներ, ապագայի նկատմամբ անորոշություն:

Եվ հենց այս զուգահեռների միջոցով կարելի է աշակերտին սովորեցնել, որ չպետք է հրաժարվել պայքարի ոգուց և միշտ մարտիկ մնալ:

Մարդ լինելն ինքնին բնության ամենամեծ շնորհն ու պարգևն է, և հոգով մեռնում են նրանք, ովքեր չեն հասկանում, չգիտեն այդ պարգևի գինը:

Մատյանում Նարեկացին շոշափում, առաջ է քաշում քրիստոնեական այնպիսի դրույթներ, որոնք հաստատում են բարին, բարձրը: Իսկ դրան հասնելու ճանապարհը հավատն է: Ուսուցչի շնորհիվ աշակերտը պիտի սովորի հավատալ ապագային, իր առաջընթացին, քանզի հավատն է, որ օգնում է մարդուն ապրել, ապրել ու արարել:

Նարեկացու իդեալ Մարդ-Աստվածը սուրբ է, անթերի, անաղարտ: Պետք է սովորել անաղարտ լինել, հեռու մնալ կործանարար, չար կրքերից, մաքուր ու արթուն պահել խիղճը: Ինքնադատաստանով ամեն մեկն իր հոգու բժիշկը պիտի լինի, ինչպես երագում էր Նարեկացին:

Դժվար է մարդկային հոգու ընթացքն իմանալ ու ղեկավարել, թույլ չտալ, որ ճիշտ ճանապարհից խոտորվի: Եվ ուսուցչի գերխնդիրն է աշակերտին մոտեցնել դեպի ճշմարտություն տանող ճանապարհին: Աշակերտը պետք է ընկալի Նարեկացու դատապարտումը պատերազմ սանձագերծողներին, մարդկային այն էությանը, որն ընդունակ է կոտորելու, խոցելու, ոչնչացնելու, կեղծելու իր նմաններին: Մարդու մարդացման գործընթացը պետք է լինի նաև այսօրվա անհատի գերխնդիրը:

Կենդանական բնագոյներին գերի մարդը երբեք մարդ չի կարող համարվել:

Կյանքը գեղեցիկ և նորովի տեսնելու ձգտումն է թևածում Նարեկացու հոգում:

Պոեմում Նարեկացին ինքն է դառնում լավագույն կյանքի համար մղվող պայքարի մարտիկն ու մարգարեն, և նրա բողոքն ու քննադատությունը այսօր էլ ուղղված են կյանքի արատների դեմ, ունեն արդիական հնչեղություն:

Ստահոգված լինելով գալիք սերունդների ճակատագրով՝ քնարերգուն ուզում է բարի օրինակ լինել աստվածասեր լսողներին: Նա ուզում է, որ իր ողբերգությունը ցնցի նրան, ետ պահի մեղքերից մինչև վերջ:

Միջնադարի մեծ բանաստեղծը սիրում է կյանքը: Թեպետ ինքն էլ հաճախակի տանջալից հակասությունների մեջ է ընկնում, ալեկոծվում է ժամանակի լուծ ու կապանքից, սակայն կարողանում է իր անբասիր վարքով օրինակ ծառայել մյուսներին: Բանաստեղծը տագնապում է, որ ամեն մի նոր դարաշրջան ավելի է ծանրացնում մարդու կյանքը: Ապագայի հանդեպ իր մտավախությունները ստիպում են նրան երագել այն ժամանակները, երբ հոգու վերքերը կառողջանան:

Կիզվեն կապանքները, կխորտակվեն շղթաները,

Կվերանան ապականությունները...

Պետք է սովորեցնել աշակերտին, որ կյանքը վարձահատույց է լինում բարի մարդ-

⁴ Գ.Լ. ՆԱԼԵԿԱՅԷ: «Մատյան ողբերգության»: Երևան, 1960թ., էջ 23, 409 էջ:

կանց բարի գործերին: Եվ ով է բարի, եթե ոչ Աստված: Կատարյալ եղեք, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ⁵: Աստվածաշնչյան այս ուղերձն է ընկած «Մատյանի» հիմքում:

*Ստեղծողիդ ողորմությունն ինձ հետ թող լինի,
Եվ շունչն իմ ոգու միանա քեզ հետ անբաժանորեն ամրապինդ կերպով:
Եվ ով որ կարդա այս աղերսաձայն մաղթանքների աղոթքները
խնդրողական,*

*Ծեր թե երեխա, կույս թե երիտասարդ և կամ աղախին,
Ամեն ոք, ով որ աստվածասիրաբար ի քեզ պաղատի,*

Թող որ անխտիր, հավասարապես երանության մասն ընդունեն քեզնից...

Ընդհանրացնելով կարող ենք փաստել, աշակերտին սովորեցնել, որ «Մատյան ողբերգության» պոեմը այն ստեղծագործությունն է, որն օգնում է մարդուն ստեղծել և պահպանել Աստծո հետ կապը: Այն մարդուն սովորեցնում է մաքրվել բոլոր արատավոր հատկանիշներից, սովորեցնում է հաղորդակցվել և ապրել Աստծո հետ՝ քայլելով հավատի և արդարության արահետներով: Եվ դժվարության ժամանակ անգամ, երբ թվում է, թե այլընտրանք չկա, հիշել, որ դու Աստծո զավակն ես, նրա արարչագործության պսակը, և նա կենդանի Աստված է, որի հետ կարելի է անվերջ զրուցել, աղոթել, ինչպես անում էր մեծ մարդասերը՝ Գրիգոր Նարեկացին:

"НОВЫЕ ПОДХОДЫ ОБУЧЕНИЯ ПОЭМЫ "КНИГА СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ"- АЛВАРД НАЗАРЯН - В статье показана важность изучения поэмы "Книга скорбных песнопений" в школе. Цель изучения- помочь учащимся отказаться от порочных привычек , выбрать правильный образ жизни и, следуя примеру Нарекаци, постараться (попытаться) обожествиться, очиститься.

Цель исследования - породить в ученике осознание того , что человек-чудотворец, Бог и смертный. Человек стал божеством тогда, когда свет разума вывел его из языческой тьмы. Но семя зла осталось в человеке , которое каждую минуту грозит прорасти. Это Нарекаци учит человека сознательно держаться подальше от всего того, что может посеять семена зла в его душе.

Цель статьи-научить ученика воспринимать содержание и лингвостилистические особенности поэмы, расширить познавательное поле, сформировать систему высоких ценностей и христианское мышление.

"Эта книга моим голосом и вместо меня должен кричать",- пишет Нарекаци. Ученик всегда должен уметь слышать голос души великого гуманиста, который стал голосом справедливости и истины на все времена.

Ключевые слова: очищение, грех, осознание, Всевышний, свет, боговидный (богообразный), скорбь, искание, вера, творение, вечность, гуманность.

⁵ ԱՍՏՎԱԾՍԵՆԻՆԷ: ՆՈՐ ՀՏԱԿԱՐԱՆ: Մատթ. 5.48:

*NEW APPROACHES TO TEACHING THE POEM "THE BOOK OF SADNESS"-
ALVARD NAZARYAN - The article shows what meaning has the study of "Matyan
Voghbergutyan" poem at school. The aim of the study is to help pupils to step aside from
disgraceful morals, to choose the righteous ways of life and to try to become a divinity getting
rid of sins and cleaning up by Narekatsi's example.*

*The aim of the study is also to cause pupils realize that a human being is a wonder-
worker, God and a mortal. Human being became a divinity when the light of intelligence
took him out of pagan dark. However, the seed of evil remained in him and it menaces to
sprout any time. Narekatsi is the one teaching to avoid all that is evil or can sow seeds of evil
in one's soul.*

*The purpose of the article is teaching pupils to perceive the contents and linguistic-
stylistic peculiarities of the poem, to broaden recognition field and form a high evaluative
system and Christian way of thinking as well.*

*"This book will shout in my voice and instead of me ", writes Narekatsi. Pupils
should be able to listen to the great philanthropist's soul voice which has become the voice of
justice and truth of all times.*

Key words: *clean up, a sin, realization, The Most High, light, godlike, wail, search,
faith, creation, eternity, philanthropy.*

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՈՒՍՈՒՑՉԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ,
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՒՍՈՒՑՉԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՈՐԱԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Հոդվածի հիմքում աշակերտի սովորելու ցանկությունը խթանող ուսուցիչն է՝ իր մարդկային, բարոյական, հոգեբանական, մասնագիտական որակներով, դերակատարություններով: Հիմնավորվում է ուսուցչի դերը, և առաջարկվում են աշակերտի՝ օտար լեզուներ սովորելու խոչընդոտների հաղթահարման մի շարք ուղիներ:

Ուսումնասիրության նպատակն է նպաստել աշակերտների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների զարգացմանը, կարևորել անգլերենի դերն ու նշանակությունն արդի տեղեկատվական տեխնոլոգիաների աշխարհում: Անգլերենի ուսուցումն այսօր ժամանակակից անհատի կրթության անհրաժեշտ բաղադրիչներից մեկն է: Այն անհրաժեշտություն է տեղեկատվության փոխանակման, մշակման և պահպանման համար: Որպես օտար լեզվի ուսուցիչ՝ հոդվածում փորձել ենք ուսուցման շարունակական պրոցեսում աշակերտի մասնակցությունն ու դերն առաջնահերթություն համարել:

Բանալի բառեր՝ ժամանակակից ուսուցիչ, օտար լեզու, իմաստ, ուսուցչի դերակատարություն, ուսուցման շարունակական պրոցես, մոտիվացված աշակերտ, արդյունավետ մարտավարություն, մանկավարժական, փորձառություն, ուսուցման մեթոդներ, դասի պլանավորում, մասնագիտական պատրաստվածություն:

**«Մի գորագունդ երեխաների օգնությամբ
մենք կարող ենք սանձել հրեշին»:
Ֆուրիե**

Աշխարհահռչակ շատ մանկավարժներ իրենց աշխատություններում անդրադարձել են ուսուցչի նկարագրին, նրա առաքելությանը, անցած դժվարին ուղուն, երեխայի կրթության բազմազան եղանակներին: Հոդվածում ցանկանում եմ ներկայացնել ժամանակակից օտար լեզվի ուսուցչի նկարագիրը՝ փորձելով այն անցկացնել ինձ շրջապատող ուսուցիչների և իմ անձնական մանկավարժական փորձառության պրիզմայի միջով:

Ուսուցիչ՝ ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի միջոցով ապահովող և այդ գործընթացի համար անմիջականորեն պատասխանատու մանկավարժական աշխատող¹:

Մարդկության պատմության դեռ վաղ ժամանակներում մարդկանց, ում խոսքը լսելի և ընդունելի էր շատերի կողմից, ովքեր ընդունակ էին կշռադատված և խորիմաստ մտքեր արտահայտել, ովքեր օժտված էին իրենց հետևից տանել մարդկանց մեծ ու փոքր խմբեր, ում մեկ խոսքը կարող էր փրկել տգիտության մեջ խաբխափող ամբոխին, ովքեր իրենց հոգու և մտքի անսպառ լույսն առանց ափսոսալու կարող էին տալ

¹ Հանրակրթության մասին ՀՀ օրենք, 2009 թ. , գլուխ 1, հոդված 3:

դրա կարիքն ունեցողներին և բոցավառվել նրանց խավար ճանապարհին՝ ցույց տալով այդ խավարից դուրս գալու ուղիները, անվանում էին *Ուսուցիչ*: Ցանկանում եմ այս բառը գրել մեծատառով՝ շեշտելով նրա համամարդկային, տիեզերական էությունն ու արժեքը: Պատահական չէ նաև, որ Աստծո էության մեջ սովորեցնող, բացատրող, բազմիցս ներող և համբերատար ուսուցչի խորհուրդն է մարմնավորված: Այլ բան է այդ մեծությանը հասնելը, այդպիսին լինել կարողանալը:

Ուսուցչի դերը յուրաքանչյուր նոր սերնդի ձևավորման, նրա կրթության ու դաստիարակության, մարդկային կերպարի կայացման, անհատականության կերտման դժվարին գործում երբեք չի նվազել: Այն լուսատու ջահի նման ուղեկցել է հասարակությանը նրա գոյության բազմադարյա ճանապարհին: Այսօր էլ աշխարհի քաղաքակիրթ երկրներում, ամենուր, որտեղ կարևորվում է ժողովրդական կրթությունն ազգի բազմակողմանի զարգացման գործում, մեծ ու անգնահատելի է որակյալ և արհեստավարժ ուսուցչի դերը:

Գերխնդիրը, որն ինձ ի սկզբանե ամենից շատ է մտախոգել օտար լեզվի ուսուցչի աշխատանքում, կայացել է նրանում, թե ինչպես աշակերտների համար պարզաբանել նոր օտար լեզու սովորելու անհրաժեշտությունը ո՛չ որպես պարտադիր առարկա, որը գալիս է ծանրաբեռնելու նրանց միտքն ու դպրոցական գործունեությունը, ավելանալու արդեն ուսումնասիրվող առարկաների թվին, ստիպելու սովորել մի նոր օտար լեզու, որի անհրաժեշտությունը գուցե չեն գիտակցում, այլ փորձել փոքրիկ դպրոցականներին մոտեցնել այդ նոր լեզվին՝ որպես հնչյունի, երաժշտության, բույրի, մշակույթի, իմաստի, ինչպես նաև գույնի, զարմանքի և ուրախության զգացողության: Միշտ մտածել եմ սովորողների հետ առաջին իսկ հանդիպումների ընթացքում վանել նրանցից այն կարծրատիպը, որ գալիս է մի նոր օտար լեզու իր պարտադրող բառապաշարով, քերականական կանոններով, արտասովոր արտասանական դժվարություններով:

Կարելի է մտածել, որ անգլերենի՝ որպես միջազգային հաղորդակցման լեզվի գերակայությունն այդ լեզուն դասավանդող ուսուցիչներին կօգնի շահագրգռել աշակերտներին ուսուցման գործում: Խոսքն անգլերենի՝ որպես միջազգային հաղորդակցման լեզվի առաջնահերթության մասին է: Սակայն անգլերենի միջազգային դերը հազիվ թե վճռորոշ լինի ուսուցման շարունակական պրոցեսում, եթե այդ լեզվի ուսուցումը պարտադրված անհրաժեշտությունից չվերածվի այն գիտակցաբար ուսումնասիրելու մեծ ցանկության: Հետևաբար, ցանկացած օտար լեզվի (մեր դեպքում անգլերենի) ուսուցման իմաստի բացահայտումն աշակերտների համար կարող ենք համարել օտար լեզվի ժամանակակից ուսուցչին ներկայացվող առաջին հրամայականը. բացատրել աշակերտին, որ վերջինս կարող է հաղորդակցվել լեզվակիր երկրների ժողովուրդների հետ, իրականացնել աշխատանքային, զբոսաշրջային, ֆինանսական, անձնական, կրթական ու մշակութային ծրագրեր:

Voici en conséquence le premier message pour nos élèves: la langue est son, la langue est musique, la langue est saveur, la langue est parfum, la langue est culture, la langue est SENS². (Եվ ահա՝ առաջին ուղերձը մեր աշակերտներին. լեզուն հնչյուն է, լեզուն երաժշտություն է, լեզուն համ է և բույր, լեզուն մշակույթ է, լեզուն ԻՄԱՍՍ է):

Առաջնահերթ խնդիրն այս ամենի միասնությունը մատչելի և շահագրգիռ միջոցներով մեր սաներին հասանելի դարձնելն է: Նախ անհրաժեշտ է օտար լեզվի ուսուցման սկզբում աշակերտների մոտ մոտիվացիայի բացակայության դեմ

² Michel Boiron, ErevanLefrancaislanguaeavivreetapartager 1/8, mboiron@cavilam.com, www.leplaisirdapprendre.com.

գործնական միջոցներ ձեռնարկել՝ վարելով արդյունավետ մարտավարություն: Ինչպե՞ս: Բերենք մի պարզ օրինակ: Լեզվին դեռևս անծանոթ աշակերտներին առաջարկվում է լսել այդ լեզվով հնչող ոչ բարդ տեքստով և ռիթմիկ երաժշտությամբ որևէ երգ: Այն անմիջապես փոխում է երեխաների տրամադրությունը, ուրախ լիցքեր հաղորդում նրանց: Մի քանի ունկնդրումից հետո աշակերտները փորձում են երգի հեշտ մտապահվող բառերն ու տողերն առանց դժվարության կրկնել տեսանյութի ուղեկցությամբ: Նկատելիորեն անհետանում է նրանց անհամարձակությունը, կաշկանդվածությունն ու վախը նոր օտար լեզվի հանդեպ՝ տեղը զիջելով այն սովորելու ցանկությանն ու վճռականությանը:

Լինելով անզլերենի ուսուցիչ՝ հարկ եմ համարում պարզել մի շատ կարևոր հարց. ինչպե՞ս են մեր աշակերտները տիրապետում մայրենի լեզվին, նրա հնչյունաբանությանը, քերականությանը: Չէ՞ որ մայրենիին զուգահեռ սովորելու են իրենց համար նոր օտար լեզուներ: Անմիջապես հետո հետաքրքրվում եմ, թե ինչպես են յուրացնում դպրոցում դասավանդվող առաջին օտար լեզուն: Առաջին քայլերն ուղղվում են ուսուցանվող լեզուների միջև ընդհանրություններ և տարբերություններ փնտրելուն և հայտնաբերելուն (այբուբեն, տառատեսակ, տառաքանակ, հնչյուններ, որոնք ծանոթ են կամ նոր): Դա օգնում է մեկից ավելի օտար լեզուներ սովորողներին հանդիպող հնարավոր դժվարությունները դասակարգելու հարցում: Այս պատասխանատու խնդիրները լուծելու համար գիտակցում ենք ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջների ու պարտականությունների կարևորությունը՝ մասնագիտական խոր պատրաստվածություն, վարպետություն, լեզվի հրաշալի իմացություն, աշակերտի հոգեբանության ճանաչում: Ֆրանսիացի մանկավարժ և լեզվաբան Միշել Բուարոնը խորհուրդ է տալիս հետևել ջութակի ուսուցչի օրինակին:

L'objectif d'un professeur de violon par exemple est que ses élèves apprennent à jouer du violon. Et pour cela, les élèves jouent du violon. Il n'est pas possible d'apprendre à jouer de cet instrument sans le toucher, tenir un archer, faire vibrer les cordes. L'enseignant se place à coté de l'élève, il guide ses gestes, il soutient ses efforts...


Son rêve est peut-être d'avoir parmi ses élèves une personne très douée qui un jour deviendra soliste ou professeur de violon à son tour³ (Ջութակի ուսուցչի նպատակն իր աշակերտների՝ ջութակ նվագել սովորելն է: Եվ դրա համար աշակերտները ջութակ են նվագում: Հնարավոր չէ ջութակ նվագել՝ առանց նրան դիպչելու, առանց աղեղը ձեռքն առնելու ու առանց լարերը հնչեցնելու: Ուսուցիչը տեղավորվում է աշակերտի կողքին, ուղղորդում նրա շարժումները, ոգևորում ջանքերը: Նրա երազանքը, գուցե, իր աշակերտների մեջ առավել օժտված մեկին ունենալն է, ով մի օր իր հերթին կդառնա մենակատար կամ նույնպես ջութակի ուսուցիչ):

Այս խնդրի լուծման լավագույն ճանապարհն ուսուցչի համար նրա դերակատարությունների բազմազանությունը կարող է լինել: Ճիշտ գնահատելով աշակերտի դժվարություններն աշխատանքի պահին՝ ուսուցիչը կարող է ստանձնել բազմաթիվ դերեր. դառնալ երաժիշտ, դերասան, աշակերտի աշխատանքը հեշտացնող ընկեր, հոգեբան, խորհրդատու և այլն: Կարևոր է ճանաչել աշակերտի հնարավորությունները, կարողություններն ու հմտությունները նրան որևէ առաջադրանք տալուց առաջ: Մարդուց պետք է պահանջես այն, ինչ նա կարող է անել⁴:

³ Michel Boiron, նշվ. աշխ., 3/8.

⁴ Անտուան դը Սենտ-Էքզյուպերի, «Փոքրիկ իշխանը», թարգմանությունը՝ Մամվել Գասպարյանի – Եր.: «ՄՀՄ գրատուն» հրատ., 2020, Գլ. X, էջ 31, 80 էջ:

Ուսումնասիրենք ուսուցչի դերակատարությունները ներկայացնող գծապատկերը:



Անիվը, որի կենտրոնում ուսուցիչն է, պայմանական թվով դերեր է պատկերում: Դրանք իրականում կարող են շատ ավելին լինել: Իր ամենօրյա աշխատանքում ստանձնելով բազմաթիվ դերեր՝ ժամանակակից ուսուցիչը պետք է ի վերջո հասնի իր ամենակարևոր նպատակին. ունենա իր հետ աշխատող, իր դասավանդած օտար լեզուն սովորելու համար մոտիվացված աշակերտ, ով ուսուցման դժվարահաճ անիվի ամենաբարձր կետում է և ներկայացվում է որպես ուսուցչի երկարատև և դժվար ջանքերի ուրախալի արդյունք: Այս օրինակով ուսուցիչը դիտարկվում է ոչ միայն որպես անձ, ով գիտի, հանձնարարում է, ով ասում է, թե ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ, այլ նաև որպես ուսուցման գործընկեր և աշակերտին գործելու, իր պարտավորություններն ընդունելու մղող հեղինակություն: Այդ նա է ուղղորդում իր աշակերտին ինքնահաստատման, մղում գիտելիքների շարունակական հարստացման: Արդյունքում սրտանց կիսում է իր սաների հաջողության ուրախությունը:

Յուրաքանչյուր դասից հետո անհրաժեշտ է անկեղծորեն վերլուծել արված աշխատանքը դասարանում, դասապրոցեսի կազմակերպման համապատասխանությունը օրվա դասի պլանավորմանը, դասարանի՝ որպես կենդանի օրգանիզմի աշխատանքային և հոգեբանական մթնոլորտն ու գործունեությունը, մանկավարժական մարտավարության արդյունավետությունը: Իր աշխատանքի բնույթն ու էությունը գիտակցող ամեն ուսուցիչ պետք է իրեն բազմաթիվ հարցեր ուղղի: Ահա՝ դրանցից մի քանիսը.

1. Մշտապես զբաղվո՞ւմ եմ արդյոք ինքնակրթությամբ՝ ուսուցչին ներկայացվող նոր որակական պահանջները բավարարելու համար:

2. Լիարժեք ճանաչում մեկ իմ աշակերտներին, նրանց ներաշխարհին ու կարողությունները:
3. Իմ կողմից կիրառվող մանավարժական հնարներով հաջողվում է բարձրացնել երեխաների մոտիվացիան:
4. Կարողանում մեկ քննադատաբար վերլուծել վարած դասերս և օբյեկտիվ գնահատական տալ դրանց:
5. Որոշք եմ վարած դասերիս թույլ կողմերն ու բացթողումները:
6. Որքանով է հաջողվում օգտագործել ժամանակակից ՏՀՏ-ները դասերին, ինչ արդյունք են նրանք ապահովում:
7. Պատրաստ եմ դիմակայել արտակարգ իրավիճակների թելադրանքով հանրակրթության առջև ծառացած նոր մարտահրավերներին:

Միայն ուսուցչին մտահոգող հարցերի ընդամենը մի փոքր մասն են, որոնք թույլ չեն տալիս ուսուցչին ճահճանալ, ստիպում են մշտապես թրծվել մանկավարժական որակների հղկման և կատարելագործման դարբնոցում:

Հոգիվածում ներկայացված են հանրակրթական դպրոցի օտար լեզվի ժամանակակից ուսուցչի մանկավարժական գործունեության մի շարք ձևեր: Հարկ է նշել, որ կրթության առջև կանգնած արդի մարտահրավերները ուսուցչից պահանջում են ձկուն մարտավարություն՝ ուսուցման գործընթացը առանց երկարատև ընդհատումների իրականացնելու համար: Դա իր հերթին բերում է ուսուցչի գործունեության ձևերի փոփոխման անհրաժեշտություն: Մի բան, սակայն, անփոփոխ է մնում. աշակերտը ուսուցչի գործունեության կենտրոնում է:

ОБРАЗ СОВРЕМЕННОГО УЧИТЕЛЯ ИНОСТРАННОГО ЯЗЫКА, ЕГО РОЛЬ, КАЧЕСТВЕННЫЕ ТРЕБОВАНИЯ, ПРЕДЪЯВЛЕННЫЕ УЧИТЕЛЮ- АРЕВИК БАБАЯН - В основе статьи - учитель, который стимулирует желание учиться своего ученика своими гуманными, моральными, психологическими, профессиональными качествами, ролями, требованиями и обязанностями, которые стоят перед ним. Обосновывается роль учителя и предлагаются некоторые пути преодоления препятствий при изучении иностранного языка.

Цель изучения – помочь развитию умственных, духовных, физических и социальных способностей учеников, подчеркнуть важность роли и значение английского языка в мире современных информационных технологий. В наши дни обучение английского языка является важной частью образования современного человека. Оно необходимо для обработки, обмена и сохранения информации. Как учитель иностранного языка, я постаралась показать в статье приоритет участия и роли учеников в продолжительном процессе обучения.

Ключевые слова. *современный учитель, иностранный язык, смысл, роль учителя, продолжительный процесс обучения, мотивированный ученик, результативная стратегия, педагогический профессионализм, методы обучения, планирование урока, профессиональная подготовка.*

THE DESCRIPTION AND THE ROLE OF A FOREIGN LANGUAGE MODERN TEACHER AND HIS QUALITY REQUIREMENTS – AREVIK BABAYAN - The basis of the article is teacher stimulating pupil's desire of learning with his humane, moral, psychological, professional qualities, with demands and responsibilities presented to him. Teacher's role is grounded and a number of ways of overcoming pupil's obstacles of foreign language learning are suggested.

The aim of the research is to contribute to the development of pupils' intellectual, spiritual, physical and social abilities, to highlight the role and meaning of English in the world of modern informative technologies. English teaching is one of the necessary components of a modern individual's education nowadays. It is a necessity for exchanging, working out and preserving information. As a teacher of English, I have tried to consider the participation and role of a pupil as a priority in continuing teaching process.

Key words: *contemporary teacher, foreign language, meaning, teacher's roles, continuing teaching process, motivated pupil, effective strategy, pedagogical experience, teaching methods, lesson planning, professional schooling.*

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՎ ՏՀՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՄԱԺԱՄԵՐԻՆ ՈՐՊԵՍ ԴԱՍԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

Այսպիսով, ցանկացած մեթոդի կիրառում սովորողների համար ապահովում է գիտելիքների որոշակի պաշար: Գիտելիքների յուրացումը թույլ և ուժեղ սովորող աշակերտների մոտ կատարվում է տարբեր ձևով: Մանկավարժի խնդիրն է՝ հաշվի առնել բոլոր աշակերտների կարողությունները, բոլորին ներգրավել դասապրոցեսին՝ իրենց ուժերին և կարողություններին համապատասխան: Ուսուցչի ընտրած մեթոդների արդյունավետության ընդհանուր չափանիշը սովորողների կրթության, դաստիարակության և զարգացման գործում այդ մեթոդների կիրառման շնորհիվ ձեռք բերած վերջնական արդյունքներն են և դրանց համապատասխանությունն է այն խնդիրներին, որոնք պետք է լուծել ուսուցման ընթացքում սովորողների ռեալ ուսումնական հնարավորություններին համապատասխան: Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության միջոց է, հնար և հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին, գիտելիքների ձեռքբերմանը, կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

Բանալի բառեր: Մեթոդ, ՏՀՏ գործիք, «Վենի դիագրամ», «Դաճն աղյուսակ», «Ապագայի անիվ», դասի արդյունավետություն, թեստային աշխատանք, կարողություններ, ուսումնական խաղեր, գնահատման համակարգ:

Ներածություն

Մեթոդը հունարեն բառ է, որ բառացի նշանակում է ինչ որ տեղ տանող ուղի ճանապարհ: Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտի հետևողական, փոխկապակցված գործողությունների համակարգն է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացումը: Մեթոդը նպատակին հասնելու միջոց է, աշակերտի և ուսուցչի համագործակցությունն է ուսումնական միջավայրում ուղղված ուսումնական նպատակներին: Ուսուցչի հաջողված դասը կախված է նրա դասի ճիշտ պլանավորումից և մեթոդների ճիշտ ընտրությունից: Պետք է ընտրել այնպիսի մեթոդներ, որ աշակերտները մասնակից լինեն դասի բոլոր փուլերին: Ուսուցիչը պետք է կարողանա այդ մեթոդներն օգտագործի այնպես, որ նպատակի աշակերտների մտածողության զարգացմանը, ինքնուրույն և համագործակցաբար աշխատելու կարողություններ ձևավորի, ապահովի սովորողների ներգրավվածությունը՝ հատկապես ԿԱՊԿՈՒ սովորողների: Ընտրել մեթոդ տվյալ դասի համար, դա դեռ չի նշանակում դասը հասցնել նպատակին: Անհրաժեշտ է այդ մեթոդների հստակ իմացություն և դրանց կիրառումը թեմաներին ու դասի փուլերին համապատասխան: Մեթոդների ընտրության հարցը մանկավարժական բարդ խնդիր է, որի ճիշտ լուծումից է կախված դասի և ուսուցման արդյունավետությունը: Ընտրված մեթոդները պետք է համապատասխանեն դասի նպատակներին: Մեթոդների ընտրության ժամանակ միշտ պետք է հաշվի առնել սովորողների տարիքային և

հոգեբանական առանձնահատկությունները, գիտելիքների մակարդակը:

*<<Յուրաքանչյուր ոք կարող է սովորել, միայն թե ոչ միևնույն օրը և ոչ միևնույն ճանապարհով>>:
Ջորջ Էվանս*

Իսկ ինչպե՞ս են վերաբերվում աշակերտները բազմաբովանդակ մեթոդներով հագեցած դասերին: Միտում են, արդյոք, ընդունում, թե՛ հակառակը: Շատ կարևոր հանգամանք է, որ այդ մեթոդներն ընդունվեն աշակերտների կողմից, քանի որ դրանք միտված են գիտելիքների յուրացումը դարձնել ավելի դյուրին:

*«Միասին քայլելը կարող է սկիզբ լինել, միասնականությունը՝ ուղի դեպի առաջընթաց, միասին աշխատելը՝ ուղի դեպի հաջողություն»
Հենրի Ֆոր*

Դպրոցում դասավանդում ենք պատմություն և հասարակագիտություն առարկաները: Պատմության դասավանդման նպատակներից է աշակերտների մեջ ձևավորել պատմության համամարդկային հարցերի վերաբերյալ պատկերացումներ, հայրենասիրություն, կրթել նրանց ազգային դաստիարակության ավանդույթներով, մշակել հիմնախնդիրների վերհանման և վերլուծության կարողություն: Պատմության դասավանդման հաջողության կարևոր պայմաններից մեկը մեթոդի ճիշտ ընտրությունն է:

6-9-րդ դասարաններում սովորող աշակերտների շրջանում կատարել ենք հետազոտություն և եկել այն եզրահանգման, որ նրանց հետաքրքրում են բազմաբովանդակ դասերը՝ հագեցած գծագրերով, տեսանյութերով, դերային խաղերով, շնորհանդեսներով, բազմաբնույթ աղյուսակներով և թեստային աշխատանքներով, իսկ վերջին շրջանում լայն տարածում ունեն արդեն S2S գործիքներով անցկացվող դասերը ինչպես առկա, այնպես էլ հեռավար դասերի ընթացքում: Աշակերտները ձանձրանում են միապաղաղ, միայն թվերի իմացություն պահանջող հարցերից: Երբ այդ նույն թվականները ներկայացվում են գրատախտակին գունավոր կավիճներով կամ աղյուսակի տեսքով, կենտրոնանում է աշակերտների ուշադրությունը և զարգանում է տեսողական հիշողությունը:

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել մեթոդները կոնկրետ օրինակներով (<<Վենի դիագրամ>>, <<T-աձև աղյուսակ>>, <<Ապագայի անիվ>>.), S2S գործիքներ դասի փուլերին համապատասխան, որոնք հաճախ ենք կիրառում՝ դասի արդյունավետության բարձրացման նպատակով:

ԳԼՈՒԽ 1. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ ՈՐՈՇՄ ԴԱՍԻ ԱՐԴՑՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

*<<Մեթոդը ճանապարհ է, որով ուսուցիչն աշակերտին
տանում է անգիտությունից դեպի գիտելիք,
անկարողությունից*

դեպի կարողություն, նրա մտավոր ուժերի զարգացման ուղի>>:

Մ.Լ.Սկատսկին

Կրթության ոլորտը ամենաբարդ ոլորտներից մեկն է, որն անընդհատ կատարելագործվելու կարիք ունի: Հասարակության զարգացման տարբեր փուլերում ուսուցիչն անընդհատ սովորելու և ժամանակի պահանջներին համապատասխան

վերափոխվելու խնդիր է ունեցել: Ուսուցիչը որպես ստեղծագործող անձնավորություն անընդհատ շարժման, մասնագիտական աճի ու զարգացման, ինքնակատարելագործման գործընթացի մեջ է: Ուսուցիչը պետք է հանդես գա ոչ թե որպես նոր մոտեցումների, գաղափարների ու մեթոդների ուղեկից, մեխանիկական կատարող, այլ դրանց շուրջ մտածող ու ձևավորող անձ:

Մտածող ուսուցիչն ազատ է, նրան տրվում են նպատակներ, չափորոշիչներ, որոնց նա պետք է հասնի, իսկ բովանդակության մշակումը, ուսուցման ձևերն ու մեթոդները և ուսուցման հետ կապված հարցերը կատարում է ինքը՝ ուսուցիչը:

<<Ի՞նչ է նշանակում դասավանդել-Դա նշանակում է սխտեմատիկորեն զարմացնել սովորողներին իրենց սեփական բացահայտումներով>>:

Մպենսեր

Այժմ կփորձենք ներկայացնել վերը թվարկված մեթոդները, որոնք հաճախ կիրառում ենք պատմության ուսուցման գործընթացում:

1. Պատմության դասաժամերին կիրառվող մեթոդներից է **Դաձև աղյուսակը**: Աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի երկու հակադիր կողմերը համեմատելու համար, ներկայացնելու որևէ երևույթի դրական ու բացասական կողմերը:¹ Դաձև աղյուսակը ճկուն է այն իմաստով, որ դրա օգտագործումը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում:

2. Մեթոդը աշակերտների կողմից ընդունված է, այն հաճախ ենք կիրառում դասի ամփոփման փուլում՝ պարզելու, թե ինչքանով են նոր դասը յուրացրել աշակերտները: Երբեմն այն հանձնարարում ենք խմբային աշխատանքի ժամանակ, խմբերից մեկն առանձնացնում է միևնույն երևույթի դրական, իսկ մյուս խումբը՝ բացասական կողմը: Այնուհետև պարտադիր կատարվում է քննարկում:

Հայ-արաբական 652թ. պայմանագիրը

1. Հայերն իրավունք ունեին պահելու 15000-անոց այրուձի արաբների հաշվին	1. Հայաստանն անկախություն ձեռք չբերեց, գտնվում էր Արաբական խալիֆայության տակ:
2. 3 տարով ազատվելու էին հարկերից:	
3. Խալիֆայությունը պահպանելու էր Հայաստանի ներքին ինքնավարությունը:	

3. Պատմության դասաժամերին առավել հաճախ կիրառվող մեթոդներից է **<<Վենի դիագրամը>>:**

Վենի դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու

¹ Վ. Գյուլազյան, Լ. Առուշանյան, Մ. Գասպարյան, Ուսուցչի ուղեցույց - տեսք, Երևան 2009թ. էջ 14:

կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Այն կարևոր համակարգող դեր ունի և հիմնականում օգտագործվում է դասի խթանման և ամփոփիչ փուլերում: ²

Բաթումի պայմանագիր

Սևրի պայմանագիր

1.1918թ հունիսի 4

1.1920թ. օգոստոսի 10

2.Ալ.Խատիսյան

2.Ավ.Ահարոնյան

3.12000քկմ տարածք

3.160000քկմ

4.Երկաթուղիների վերահսկող.

4.Սահմանը գծելու էր


Անցավ Թուրքիային

Վուդրո Վիլսոնը

Զիրագործված պայմանագրեր

Վենի դրագրամով հաճախ ենք համեմատում միևնույն արքայատոհմի երկու արքաների գործունեությունները: Դրանով ամրապնդում ենք և՛ նոր նյութը և՛ միաժամանակ անդրադառնում և ամրապնդում ենք արդեն ուսումնասիրած թեմաները:

3.Որևէ երևույթի պատճառահետևանքային կապը գտնելու համար կարելի է կիրառել <<Ապագայի անիվ>>մեթոդը: ³



Այս մեթոդի օգնությամբ զարգացնում ենք աշակերտների տրամաբանությունը, ձևավորում ենք թեման վերլուծելու, պատճառահետևանքային կապը վեր հանելու կարողություններ, ինչը շատ կարևոր է պատմության դասավանդման մեջ:

Մեթոդները բազմաթիվ են և բազմազան, ուսուցիչն ինքը կարող է ընտրել կամ

² Վ. Գյուլազյան, Լ. Առուշանյան, Մ. Գասպարյան, Ուսուցչի ուղեցույց -տետր, Երևան 2009թ. էջ 15:

³ Վ. Գյուլազյան, Լ. Առուշանյան, Մ. Գասպարյան, Ուսուցչի ուղեցույց -տետր, Երևան 2009թ էջ 23:

ստեղծել մեթոդներ, որոնց շնորհիվ ձեռք բերած արդյունքները կհամապատասխանեն այն խնդիրներին, որոնք պետք է լուծել ուսումնառության ընթացքում:

ԳԼՈՒԽ 2. ՏՀՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ ՈՐՊԵՍ ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ժամանակակից կրթակարգում շատ կարևորվում և խրախուսվում է հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունը ուսումնական գործընթացում: ՏՀՏ գործիքների արդյունավետ օգտագործումը թույլ է տալիս ուսումնական նյութը ներկայացնել զանազան ձևերով, և հենց դրանով է, որ ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ է դառնում: ՏՀՏ գործիքները շատ կիրառելի են նաև հեռավար դասերի ընթացքում:

ՏՀՏ-ի սրընթաց զարգացումն արդի ժամանակաշրջանում բնականաբար նոր պահանջներ է դրել նաև կրթական համակարգերի առջև ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: ՏՀՏ-ը դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալմանը, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից ուսուցման, գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: Դրանք նպաստում են մանկավարժների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու ՏՀՏ հմտությունների զարգացմանը: ՏՀՏ-ը հնարավորություն էն ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռք բերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ որակապես նոր խնդիրներ: Ի վերջո ՏՀՏ-ը թույլ էն տալիս դասավանդողին ու սովորողին հաղորդակցվել միևնույն միջավայրում և նույն «լեզվով»⁴:

ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսի տարբեր փուլերում:

1. Նոր թեմայի ներակայացում.

Դասի թեման ներկայացվում է լուսանկարների տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ՝ տեսության համառոտ ներկայացմամբ: Նմանատիպ դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, աշակերտները ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում: Օգտագործվում են կոնկրետ դասերի համար ստեղծված նյութեր՝ համառոտ տեքստ, հիմնական բանաձևեր, գծագրեր, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ: Նման դեպքերում երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով և հաճույքով են կատարում առաջադրանքները, իսկ ներկայացված նյութը լինում է կիրառական, տեսանելի ու հասկանալի⁵:

Այս փուլում կարելի է կիրառել padlet գործիքը՝

<https://padlet.com/anaidaa1982/lfd1yt3t47849fc5>:

⁴ <https://icttraining.armedu.am/mod/page/view.php?id=10627>:

⁵ <https://www.imdproc.am/info/usucichnerin/thtn-usumnakan-gorcyntacum>:

Ժամանակակից մանկավարժության տարրերից են հանդիսանում տեսահոլովակները և սահիկաշարերը, քանի որ լսարանում տրված դասընթացը կարելի է փոխարինել տեսահոլովակում և սահիկաշարերում տրված նյութերով:

<http://somup.com/crfQ23b8zY>

Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների գործածությունն ուսման գործընթացում նպաստում է սովորողների մոտիվացիայի աճին: Բացի նրանից, որ ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ:

<https://sway.office.com/WAJ5eYVSuften6dR7?ref=Link>,

<https://sway.office.com/JxEcz6SfrKbHTRv?ref=Link>

2. Աշակերտի անհատական աշխատանք.

Ուսուցիչը դառնում է ուղեկից, ով ցույց է տալիս ճանապարհը, բայց ճանապարհի ամբողջ «ծախսն» իր վրա չի վերցնում: Աշակերտը ընթացքում ոչ միայն պետք է ապահովի իր ներակայությունը, այլև լինի ակտիվ մասնակից, ջանք գործադրի, ցույց տա իր մոտեցումներն ու ինքը փորձի ճանապարհին առավել գեղեցկացնել, հետաքրքրացնել սեփական գաղափարներով ու մոտեցումներով: Նորագույն տեխնոլոգիաների միջավայրը երեխաների սիրելիներից է, որը կարելի է և պետք է օգտագործել ի շահ նրանց:

Խաղալու փոխարեն ինչու՞ երեխան համակարգչով չպատրաստի հետաքրքիր սահիկաշար դասի թեմայի վերաբերյալ, ինչու՞ իր անհատական ուսումնասիրությունը չանցկացնի և ինչու՞ չփորձի ինքը գտնել իր հարցերի պատասխանները:[6] Աշակերտներին կարելի է հանձնարարել ստեղծել սահիկաշարեր թեմային համապատասխան տարբեր գործիքների միջոցով:

<https://drive.google.com/file/d/1Dj...ew?usp=sharing>

<https://drive.google.com/file/d/1M3B...ew?usp=sharing>

3. Գիտելիքի ստուգում.

Համակարգչային թեստավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ակտիվացնում է դպրոցականների ճանաչողական գործունեությունը: Հնարավոր է կազմել այնպիսի ստուգիչ թեստեր, որ յուրաքանչյուր աշակերտ ստանա իր ունակություններին ու կարողություններին համապատասխան առաջադրանքներ: Սա ամենահարմար տարբերակներից է. ապահովել շերտավոր ուսուցում, անհատական մոտեցում: Եվ եթե դասարանում սովորում է անգամ 30 երեխա, յուրաքանչյուրը կստանա տարբեր առաջադրանքներ, վերջիններս էլ կստուգվեն ինքնաբերաբար: Գիտելիքների ստուգման փուլում կարելի է կիրառել [Kahoot](#), [Google Forms](#), [Socrative](#), [Quizizz](#) միավորային գնահատում պահանջող ՏՀՏ գործիքներով պատրաստած թեստային աշխատանքները, որոնք միաժամանակ կհեշտացնեն աշակերտների գնահատման գործընթացը: Նշված գործիքներով կազմած թեստային աշխատանքները կարելի է կիրառել թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքների ժամանակ:

<https://create.kahoot.it/details/87c...9-79b1615e7088>

<https://b.socrative.com/teacher/#import-quiz/48766125>

<https://b.socrative.com/teacher/#edit-quiz/57564779>

<https://quizizz.com/admin/quiz/5f048ad44e8ecc001bced1a9>

ՏՀՏ գործիքների օգնությամբ կարելի է ոչ միայն կատարել գնահատում կամ նոր նյութ ներկայացնել, այլ ուսուցանող գնահատման միջոցով ստուգել աշակերտի

յուրացման մակարդակը ժամանակի որոշակի հատվածում, որպեսզի տեղեկություն ստանանք այն մասին, թե ինչպես կատարելագործենք նրա կողմից նյութի յուրացումը: Այդպիսի գործիքներ են **Learning apps**-ը և **Wordwall**-ը, որոնք հնարավորություն են տալիս ստեղծել հետաքրքիր ուսումնական խաղեր: Այդպիսի վարժությունների հանձնարարումը սովորողներին հնարավորություն կտա դասավանդողներին հեշտությամբ իրականացնել ուսուցանող գնահատում: Այն կարելի է կիրառել դասի խթանման և կշռադատման փուլերում:

<https://learningapps.org/watch?v=pp5aszqit20>

<https://learningapps.org/display?v=pbybnzvz320>

<https://wordwall.net/resource/2617900>

<https://wordwall.net/resource/2617622>

ПРИМЕНЕНИЕ СОВРЕМЕННЫХ МЕТОДОВ И ИНСТРУМЕНТОВ ИКТ НА УРОКАХ ИСТОРИИ КАК СРЕДСТВО ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ УРОКА-БАГИЯН КАРИНЕ, АРАКЕЛЯН АНАИТ - Таким образом, применение любого метода дает учащимся определенный объем знаний. Приобретение знаний слабыми и сильными учениками происходит по-разному. Задача педагога - учесть способности всех учеников, вовлечь всех в учебный процесс в соответствии с их сильными сторонами и способностями. Общей мерой эффективности методов, выбранных учителем, являются конечные результаты, полученные в результате использования этих методов в обучении, воспитании и развитии учащихся; Метод обучения - это средство педагогической деятельности, возможно и основной инструмент, с помощью которого осуществляется взаимодействие преподавателя и ученика, направленное на достижение желаемого результата обучения, приобретения знаний, развития умений и навыков.

Ключевые слова: Метод, инструменты ИКТ, «Диаграмма Вена», «Т-диаграмма», «Колесо будущего», эффективность урока, тестовая работа, способности, обучающие игры, система оценок

APPLICATION OF MODERN METHODS AND ICT TOOLS IN HISTORY CLASSROOMS AS A MEANS OF INCREASING LESSON EFFICIENCY - KARINE BAGHIYAN, ANAHIT ARAQELYAN - Thus, the application of any method provides a certain amount of knowledge for learners. Acquisition of knowledge by weak and strong students is done in different ways. The pedagogue's task is to take into account the abilities of all students, to involve everyone in the lesson process in accordance with their strengths and abilities.

The general measures of the effectiveness of the methods chosen by the teachers is the final result obtained through the use of these methods in the education, upbringing and development of the learners. The teaching method is a means of pedagogical activity, a possible and main tool by which the teacher-student cooperation is carried out, aimed at the intended result of learning, the acquisition of knowledge, the development of abilities and skills.

Keywords: Method, digital tools, «Ven diagram», «T-shape chart», «Future wheel», lesson efficiency, test work, abilities, educational games, rating system.

ԷԼԻՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԱՌՆՔՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մաս I

Ռուս-հայկական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը հարուստ ավանդություններ ունի, և վաղուց արդեն ձևավորվել է բավական պատկառելի գրադարան: Մակայն այդ հարաբերությունների՝ ռուսական պատմագրության գնահատականներին շատ քիչ անդրադարձ է կատարվել, իսկ առկա ուսումնասիրություններն էլ դրվագային են. համակողմանի ուսումնասիրություն չկա: Այնինչ ժամանակաշրջանի պատմագրության մեջ է հենց ցայտուն արտահայտվում պետական իշխանության դիքորոշումը համապատասխան հարցի, խնդրի վերաբերյալ: Ռուսական պատմագիտության գնահատմամբ վերլուծելով ռուս-հայկական հարաբերությունները հնարավոր է հասկանալ Այսրկովկասի և, մասնավորապես, Հայաստանի քաղաքական դերը, տնտեսական նշանակությունը Ռուսաստանի համար: Այսրկովկասում մերօրյա զարգացումները պահանջում են «ռուսական գործոնին» համապարփակ, ճիշտ, համընդգրկուն գնահատականներ տալ, որոնք ուղենիշ կլինեն քաղաքական ճիշտ ռազմավարության մշակման համար: Հոդվածում վերհանվել և վերլուծվել են ռուսական տարեգրության մեջ հայերի ու Հայաստանի մասին ամենավաղ հիշատակությունները, ապա և մանրագնին ուսումնասիրվել հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ մինչև 10-րդ դարը ռուսական պատմագրության անդրադարձները:

Թեմայի շրջանակներում առաջադրված խնդիրների համապարփակ ուսումնասիրության ընթացքում կիրառվել են ընդհանուր գիտական՝ դիալեկտիկական, տրամաբանական, պատմական, ինչպես նաև մասնավոր կամ հատուկ մեթոդներ, որպիսիք են պատմահամեմատական, վերլուծական, վիճակագրական, համակարգակառուցվածքային մեթոդները:

Բանալի բառեր՝ առևտրա-տնտեսական հարաբերություններ, տարեգրություն, պատմագիտություն, Կիևյան Ռուսիա, Բագրատունյաց Հայաստան, Այսրկովկաս, առևտրային ճանապարհ, շուկաներ, տնտեսական և քաղաքական շահեր:

Հին ռուսական տարեգրություններում արդեն իսկ հանդիպում ենք հիշատակությունների հայերի և Հայաստանի, ինչպես նաև Կիլիկիայի, Ադվանքի մասին. «Հաբեթին բաժին հասան հյուսիսային և արևմտյան երկրները՝ Միդիան, Ադվանքը, Հայաստանը՝ **փոքր և մեծ*** (Է.Մ.), Կապադովկիան, Ֆեֆլագոնիան, Կողքիսը...»¹: Ճիշտ է՝ հիշատակությունը բիբլիական ժամանակաշրջանին է վերաբերվում՝ Հայաստանն այնտեղ բնորոշվում է որպես Նոյի որդիներից մեկի՝ Հաբեթի ժառանգած տարածքների մի մաս: Հայաստանի մասին վերոհիշյալ վկայությունը տեղ է գտել Նեստորի (մոտ 1056-

¹ Полное Собрание Русских Летописей (ПРСЛ), т. I Лаврентевская и Троицкая летопись, СПб, 1846, с. 4. (26).

*Հետաքրքիր է, որ ԽՄՀՄ ԳԱ կողմից 1926 թվականին վերահրատարակված «Полное Собрание Русских Летописей» I հատորում «փոքր և մեծ» (բնագրում «малая и великая») բնորոշչյունները վերագրվում են Կապադովկիա-Գամիրքին, իսկ ահա մինչյտրիորդային ժամանակաշրջանում Արխեոգրաֆիկ կոմիտեի կողմից հրատարակված տարբերակում (1846թ., Սանկտ-Պետերբուրգ, Է. Պրացի տպագրատուն) դրանք լրացնում, բնորոշում են «Հայաստան»-ին:

1114)² տարեգրության տեքստում՝ ըստ Լավրենտյան ցանկի, որն էլ ընդգրկում է 852 թվականից մինչև 1110 թվականը, ընդ որում այս տեղեկությունները արտագրվել են ավելի ուշ ժամանակաշրջանի տարեգրությունների ժողովածուներում՝ Սոֆիյան և Կիրակնոբյա տարեգրություններից³ մինչև ընդհուպ 16-րդ դարի Նիկոնովյան և Սեմեոնովյան ժամանակագրությունները⁴:

Ժամանակագրորեն հաջորդ տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին տեղ են գտել Ռուսական Քրոնոգրաֆի կամ Ժամանակագրության էջերում, որտեղ ի տարբերությունը առաջին տարեգրությունների, ավելի մեծ տեղ էր հատկացվում քրիստոնեության տարածման պատմությանը, առանձին-առանձին անդրադարձ կատարվում տարբեր սրբերի կյանքին-գործունեությանը, քրիստոնեական բարոյախոսությանը: Ժամանակագրությունն անդրադառնալով մի շարք ժողովուրդների (հնդիկներ, իբերներ) մեջ քրիստոնեության տարածմանը՝ հակիրճ, բայց հստակ ներկայացնում է Հայաստանի քրիստոնեության ընդունման պատմության հայկական տարբերակը⁵: Ժամանակագրությունը մանրամասներ է հայտնում Տրդատ թագավորի, Գրիգորի մասին, որ «Անակի որդին էր» և թագավորի հրամանով «դաժան չարչարանքներով պահվում էր Արարատ քաղաքի մոտ գտնվող հորում և 15 տարի կերակրվում էր այրու կողմից», անգամ Կուսարադուկտի (Խոսրովադուխտ)՝ Տրդատի քրոջ «աստվածային տեսիլքի» մասին⁶: Այստեղ հայոց պատմության վաղ ժամանակաշրջանի վերաբերյալ ռուսական տարեգրության տեղեկությունները ընդհատվում են. ադեն հաջորդ վկայությունները վերաբերում են 16-րդ դարին: Չնայած ռուս տարեգրիչների կցկտուր հաղորդումներին, Հայաստանի և հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության առումով ռուսական տարեգրությունը կարևոր նյութեր է պարունակում, ինչը հնարավորություն է տալիս ճշտելու, հաստատելու կամ հերքելու տարբեր փաստեր, պատմական իրադարձություններին նայել օտարի աչքերով, հասկանալ դրանց վերաբերյալ ռուս մարդու վերաբերմունքն ու դիրքորոշումը, որն էլ այսօրվա քաղաքականության մեջ ծանրակշիռ տեղ ունի:

Եթե արարչագործությունը և քրիստոնեության ընդունումը Հայաստանին ու հայերին անդրադառնալու առաջին ուղղությունն էր, ապա առևտրային կապերը հաջորդ կարևոր թիրախն էին հայ-ռուսական հարաբերությունների ուսումնասիրման հարցում: Հայաստանը, որ իր աշխարհագրական, ռազմավարական դիրքով հնուց տարանցիկ առևտրի կարևոր հանգույց էր, Ք.ա. 2-րդ դարավերջին Չինաստանից եկող տրանսասիական մայրուղու վերջնական ձևավորմամբ վերածվեց «միջազգային» առևտրական աուրտայի մերձավորարևելյան հյուսիսային երակի՝ հիմնական և կարևոր օղակ հանդիսանալով Իրանի և սևծովյան շուկաների միջև: Հնդկական, չինական, միջինասիական ապրանքները Արևմուտք հասնում էին էքսպատանով՝ Մծբինում ու Արտաշատում տեղակայված մաքսակետերում հարկվելուց հետո⁷: Անդրադառնալով վաղ շրջանի Հայաստանի առևտրատնտեսական հարաբերություններին ռուսական արևելագիտության դպրոցի հիմնադիրներից ակադեմիկոս Վ.Վ.Բարտոլդն իր

² *Историография истории России, под. ред. А.А. Чермонаевой, Москва, 2014, с.39.*

³ *ПСРЛ, т. 5, (Софийская первая летопись), с. 1 (82),*

⁴ *Розов Н.Н., (1978) О русско-армянских книжных связях древнейшего периода, "Историко-филологический журнал", N 3, Ереван, 1978, с. 207.*

⁵ *Григорян К.Н., Из истории русско-армянских литературных и культурных отношений (X-начало XX вв.), Ереван, 1974, с. 16-17.*

⁶ *ПСРЛ, т. 22 (Русский Хронограф), ч. II, Петроград, 1914, с. 87.*

⁷ *Манандян Я.А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры - XV в. н. эры), Эривань, 1930, с. 81.*

«Историко-географический обзор Ирана» աշխատության մեջ⁸ նշում է, որ Հայաստանի քաղաքները «առևտրա-արդյունաբերական զարգացմամբ գերազանցում էին» Իրանի քաղաքներին՝ իր տեսակետը հիմնավորելով «հունական և քրիստոնեական մշակույթի ազդեցությանը տևական ենթարկվելու» հանգամանքով: Հետաքրքիրն այն է, որ վաճառականները նախընտրում էին տարանցիկ առևտրի ցամաքային վերոնշյալ մայրուղու Հայաստանով անցնող հյուսիսային ուղեճյուղը՝ Էբքատան-Գանձակ-Արտաշատ, քան թե առավել կարճ՝ ծովային Կասպիական ճանապարհը: Այդ մասին վկայություններ ենք հանդիպում դեռ Ստրաբոնի մոտ, ով անդրադառնալով Կասպյան ափամերձ տարածքների մեծ մասին տնօրինող առքսների քարավանային առևտրին՝ նշում է, որ «առքսները ուղտերի վրա հնդկական և բաբելոնական ապրանքներ էին տեղափոխում՝ ստանալով դրանք հայերից և միդիացիներից»⁹: Այստեղից կարող ենք հետևություն անել, որ հնդկական ապրանքները Հյուսիսային Կովկաս և հարավային Ռուսաստան հասցվում էին ոչ թե ենթադրյալ կարճ ճանապարհով՝ Կասպից ծովով, այլ ցամաքային՝ Միդիա-Հայաստան-Ատրպատական-Դերբենդ ճանապարհով: Ճիշտ է՝ դեպի Հարավային Ռուսիա տանող առևտրային ճանապարհը բանուկությամբ ու ծանրաբեռնվածությամբ մինչև 7-րդ դարը անհամեմատ զիջում էր Հայաստանով դեպի Արևմուտք ու հարավսևծովյան շուկաները տանող մայրուղուն:

Հակիրճ անդրադառնանք այն հանգամանքներին, թե երբ և ինչ պայմաններում դարեր շարունակ Սև ծովի հարավային հատվածով անցնող քարավանային միջազգային ճանապարհը տեղափոխվում է Կուրի ավազան, ինչն էլ, անկասկած, Հայաստանի և խազարների, բուլղարների ու սլավոնների արևելյան առևտրի աշխուժացման հենքը դարձավ:

Արաբների արշավանքները, ապա և Խալիֆաթի տիրապետությունը ոչ միայն դեպի անկում տարան Հայաստանի ներքին առևտուրը, այլև բացարձակապես սառեցրին Հայաստանով կատարվող միջպետական առևտրափոխանակությունը: 7-րդ դարից մինչև 9-րդ դարավերջը Պոնտական Տավրոսից Միջերկրածովյան ավազանն ընկած սահմանագծի ողջ երկայնքով Բյուզանդիայի և Արաբական տերության միջև անընդհատ պայքարի հետևանքով Հայաստանի՝ տարանցիկ առևտրային խոշոր կենտրոններ հանդիսացող քաղաքները դադարեցին վաճառաշահ հանգույցներ լինել: Դրանց փոխարեն արաբները ռազմական-վարչական կայաններ դարձրին Պարտավը, Գանձակը, Դվինը, որը նաև Հայաստանում արաբների վարչա-քաղաքական կենտրոնն էր՝ «Հայաստանում արաբ Էմիրների մայրաքաղաքը»¹⁰: Դառնալով ռազմա-վարչական կայանատեղիներ՝ վերոհիշյալ քաղաքները սկսեցին կարևոր դեր խաղալ նաև միջազգային առևտրում, առավել ևս երբ Արաբական Խալիֆաթի մայրաքաղաքը Աբբասյանների օրոք տեղափոխվեց Դամասկոսից Բաղդադ: Այսպես, միջազգային առևտրական հարաբերությունները տեղափոխվեցին հյուսիս՝ Բաղդադ - Դվին - Պարտավ - Գանձակ - Դերբենդ¹¹ ճանապարհով՝ զարգացնելով ակտիվ ապրանքափոխանակությունը հարավային Ռուսիայի հետ¹²: Ընդ որում՝ առևտրական այդ ուղեծրի՝ Հայաստանյան հատվածի ողջ երկայնքով տեղակայված բնակավայրերը (անգամ դժվարանցանելի Սողքը, Արցախում՝ Հաթերք գավառը) ոչ թե պարզապես վերածվեցին առևտրական քարա-

⁸ Бартолд В.В., *Историко-географический обзор Ирана*, СПб, 1903, с. 149-151.

⁹ Страбон, *География*, Пер. с греч. с предисл. и указ. Ф.Г.Мищенко, Москва, 1879, с. 517.

¹⁰ Бартолд В.В., *Историко-географический обзор Ирана*, с. 149.

¹¹ Козубский Е.И., *История города Дербента*, Темир-Хан-Шура, 1906, с. 81.

¹² Караулов Н.А., *Сведения арабских географов IX и X веков по Р. Хр. о Кавказе, Армении и Азербейджане*, т. 2, Тифлис, 1901, с. 66-67.

վանակայանների, այլև տարանցիկ առևտրում «ազատ քաղաքի»՝ որոշ հարկերից ու մաքսերից ազատված բնակավայրի հատուկ կարգավիճակ ստացան¹³: Արաբական տիրապետության օրոք միջազգային առևտրում մեծ ճանաչողություն ունեին հայկական գորգերը, որոնք արաբ խալիֆների կողմից որպես թանկագին նվերներ էին ուղարկվում այլ տիրակալների, նաև կտորեղենը, որի արտադրությամբ հայտնի էր Դվին քաղաքը¹⁴: Եթե հյուսիսից առևտրափոխանակության կենդանի միջնորդներ էին դարձել խազարները, վուլգյան բուլղարները և սլավոնները, ապա հարավից այդ գործառույթը ստանձն էին առել հրեաները, արաբները, հայերը՝ կապելով բալթյան հյուսիսն արաբական արևելքի հետ¹⁵: Հայ վաճառականների առևտրային հարաբերությունները Հյուսիսի հետ ոչ միայն անհամեմատ աշխուժացան, այլև տեղում արմատներ ձգեցին. «Արաբական առևտրի ծաղկման շրջանում Վուլգայի վրա Հին Բուլղարական թագավորության սահմաններում ծաղկում էր ապրում հայկական վաճառական գաղութը»¹⁶:

9-րդ դարավերջին անկախացած Բագրատունյաց Հայաստանը, կոմպլեմենտար քաղաքականություն վարելով և՛ Բյուզանդիայի, և՛ Խալիֆայի հետ, փոխադարձ պատերազմների մեջ ներքաշված երկու հակառակորդների համար դարձավ տարածաշրջանում միակ չեզոք, անվտանգ բուֆերային տարածքը տարանցիկ առևտրի ու միջպետական տնտեսական հարաբերությունների համար: Հայաստանի Դվին մայրաքաղաք վաճառականներ էին ժամանում Հնդկաստանից, Պարսկաստանից, Հռոմից, Բյուզանդիայից, ինչպես նաև Դոնի ավազանից, Ղրիմից, Մերձվոլգովյան շրջաններից¹⁰: Վ.Վ.Բարտոլդը ընդգծում է, որ հենց Դվինով էր անցնում Տրապիզոնից եկող առևտրային ուղին և որ «արդյունքում փորձ է կատարվել այդ ճանապարհը ուղղորդել դեպի Արաքս գետի Արփաչայ վտակի վրա գտնվող Անի, ուր 10-րդ դարում ապրում էին Բագրատունյաց դինաստիայի թագավորները...»¹¹: Հայաստանը ոչ միայն վերականգնում է տարանցիկ առևտրափոխանակման խաչմերուկի իր կարգավիճակը, այլև սեփական արտադրանքով էր մասնակցում միջազգային առևտրին. «Հայերը չէին սահմանափակվում իրենց թագավորության սահմանների ներսում և հարակից տեղաբաշխված ցեղերի հետ առևտրով. նրանք ներթափանցում էին... Սև ծովով Վրաստան, Ղրիմ, ռուսական Թմուրթարական իշխանություն (Թաման), Կասպից ծովով և Վոլգա գետով դեպի Բուլղարներ և ապա դեպի Հյուսիսային Ռուսիա»¹²:

Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում Ռուսիայի հետ հայերի ակտիվ առևտրական կապերը փաստում են նաև աղբյուրագիտական նյութերը. դեռևս 1847 թվականին Կիևում պեղումների ժամանակ գտնվել են Բագրատունյաց շրջանի Դվինի հայ վարպետների ձեռագործ ականջօղեր¹³: Ռուս պատմաբան, հնագետ Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ն.Պ.Կոնդրակովն իր «Русские клады. Исследование древностей великокняжеского периода» գրքի հենց սկզբնամասում, անդրադառնալով Հին Ռուսիայի՝

¹³ Մանանդյան Հ.Հ., Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պետինգերյան քարտեզի, Երևան, 1936, էջ 191-196.

¹⁴ Бартолд В.В., указ. соч., с. 150-151.

¹⁵ Ключевский В.О., Курс русской истории: Лекции, СПб, 1904, с.139-140.

¹⁶ Марр Н.Я., Кавказский культурный мир и Армения, Петроград, 1915, с. 47.

¹⁰ Атаджанян И.А., Из истории русско-армянских взаимоотношений с X по XIII века, Ереван, 2006, с. 29.

¹¹ Бартолд В.В., указ.соч., с. 150.

¹² Собрание актов относящихся к обозрению истории армянского народа, ч. II, Москва, 1838, с. 282.

¹³ Кондаков Н.П., Русские клады.Исследование древностей великокняжеского периода, т.1, СПб, 1896, с.218.

առաջավորասիական մշակույթի հետ կապերին, վերլուծում է արաբ աշխարհագրագետ Իբն Հորդադեի «Ճանապարհների և պետությունների գրքեր» աշխատության (960-ականներ) տեղեկությունները ռուս վաճառականների նախընտրած ջրային և ցամաքային ճանապարհների վերաբերյալ և արձանագրում, որ վաճառականները իրենց երկրից տարբեր կենդանիների մորթիներ վաճառելու համար հասցնում էի Բաղդադ, «երբեմն ընտրում էին Հայաստանով անցնող ճանապարհը դեպի սլավոնների երկիր, հետո դեպի Խազարական մայրաքաղաքի ծովածոց, ապա Ջուրջանա ծովով (Կասպից ծովի հարավային՝ վրացական մասը) դեպի Բալխա ու Մավարաննագրու (Վազիրաբադ, Աֆղանստան – ծանոթ. Մ.Է.), հետո մինչև Սինա (Չինաստան)»¹⁴:

Նմանօրինակ առևտրային ուղի անցնում էր Հարավային և Կիևյան Ռուսիայով դեպի Լեհաստան, որով ակտիվ առևտուր էին անում հայ վաճառականները, ընդ որում նրանք հանդես էին գալիս ոչ միայն որպես վաճառականներ, այլ որոշ դեպքերում նաև դիվանագետներ¹⁵. «Չնայած սովորաբար Արևելք ուղարկվող դիվանագիտական առաքելության գլուխ կանգնած էր հայտնի մեծահարուստ կամ հայտնի շլախտական տան ներկայացուցիչ սկսնակ երիտասարդ դիվանագետ, սակայն դե-ֆակտո դեսպանը պատվիրակության կազմի մեջ թարգմանի համեստ դերում հանդես եկող հայկական վաճառականն էր»¹⁶:

Ռուս-հայկական հարաբերությունների դրվագներից են նաև դեպի Կասպից ծովի արևմտյան ափ ռուսների արշավանքները¹⁷: Մեր խնդրո առարկայի շրջանակներում մեզ հետաքրքրում է դեպի Պարտավ 943-944 թվականների արշավանքը¹⁸, որը Հայոց պատմության մեջ համընկավ Աբաս Բագրատունու գահակալության երկրորդ շրջափուլի սկզբնաժամանակին ու Ռուսիայի պատմության մեջ՝ այդ պետության առաջացումից (882 թվական) հետո միջազգային ասպարեզում ազդեցության տարածման ու տարածքային ընդարձակման փուլին: Արևելյան Այսրկովկաս ռուսների ջոկատները ներխուժել են հիջրայի 332 թվականին (04.09.943թ.–23.08.944թ.) և գրավելով «հայերով բնակեցված» Պարտավն ու Մարադան¹⁹, մի շարք ճակատամարտերում ջախջախիչ պարտության են մատնել 941 թվականի վերջերից Ատրպատականը, հարակից երկրամասերն ու անգամ Դվինը տնօրինող Սալարյանների (Մուսաֆիրների) ներկայացուցիչ Մուրզաբան իբն Մուհամմադ իբն Մուսաֆիրին՝ հարմար պայմաններ ստեղծելով Աբաս Բագրատունու թագավորության հետագա ամրապնդման համար: Փաստորեն, ռուսները 943-944 թվականների արշավանքով զգալի հարված հասցվեց Հայաստանի արևելյան հակառակորդի հզորությանը՝ նպաստելով Աբաս թագավորի անկաշկանդ գործունեությանը²⁰: Իսկ ռուսների պատմության տեսակետից 943-944 թվականների արշավանքն իր նախորդներից տարբերվում էր

¹⁴ Кондаков Н.П., указ. соч. т.1, СПб, 1896, с. 27.

¹⁵ Рашба Н.Ц., Авербух С.И., Армяне на польской дипломатической службе в XVI-XVII веках, «Историко-филологический журнал», N 2, Ереван, 1974, с. 181., Пингирян Г.П., Роль польских дипломатов-армян в турецко-польских отношениях первой четверти XVII века, «Историко-филологический журнал», N4, Ереван, 1986, стр. 183.

¹⁶ Линиченко И.А., Общественная роль армян в прошлом Юго-Западной Руси, Киев, 1895, с. 7.

¹⁷ Խոսքը Կասպիական շրջի 10 արշավանքներից 4-րդի մասին է:

¹⁸ Якубовский А.Ю., Ибн-Мискавейх о походах Русов в Бердаа в 332г.=943/4г., «Византийский временник», т. XXIV, Ленинград, 1926, с. 63-64.

¹⁹ Дорн Б.А., Каспий. О походе древних русских в Табаристан с дополнительными сведениями о других набегих их на побережье Каспийского моря, СПб, 1875, с. XXIV.

²⁰ Եղիազարյան Ս., Աբաս Բագրատունի: Թագավոր Հայոց, Երևան, 2017, էջ 56-57:

նրանով, որ ռուսները թալանից ու ավարառությունից անցել էին տարածքների նպատակային նվաճման քաղաքականության²¹:

Այս արշավանքն աննշմար է մնացել հին ռուսական տարեգիրների համար, և ռուս պատմաբանները այդ մասին հիմնականում տեղեկություններ են քաղել այլալեզու (արաբական, հրեական, հայկական) սկզբնաղբյուրներից²²: Ընդ որում՝ ռուսական պատմագրությունը, որպես կանոն, այն ուսումնասիրում է ռուս-խազարական²³ և, առավելապես, ռուս-բյուզանդական հարաբերությունների համատեքստում: Հիմք ընդունելով իրադարձությունների ժամանակագրությունը, երբ դեպի Կասպից արևմտյան ափ ռուսների ներխուժումներին (912-913 և 943-944) նախորդել են ռուսների արշավանքները դեպի Բյուզանդիա և հույների հետ պայմանագրերի կնքումը՝ կարելի է ենթադրել, որ այդ արշավանքները ռուս-բյուզանդական հաշտության պայմանագրերի²⁴ հետևանք են և ձեռնարկվել են ի կատարումն Բյուզանդիայի հետ դաշնակցային պարտավորությունների՝ նպատակ ունենալով թուլացնել Բյուզանդիայի քաղաքական հակառակորդներին Մերձկասպյան շրջանում: Վերոհիշյալը, սակայն, չի բացառում Ռուսիայի սեփական շահերի առկայությունը Կասպից ծովի տարածաշրջանում և մասնավորապես Այսրկովկասյան հատվածում, առավել ևս երբ մինչ այդ ռուսները որոշակիորեն ապահովել էին իրենց թիկունքն արևմուտքից՝ վերջնականապես ազդեցության տակ վերցնելով «վարյագներից հույներ»՝ ճանապարհը: Նշենք նաև, որ Կասպից տարածաշրջան ռուսների ռազմարշավներին նախորդել է այստեղ տնտեսական ներթափանցման ոչ կարճ ժամանակաշրջանը. առնվազն 9-րդ դարից ռուսներն տնտեսական շահեր ունեին տարածաշրջանում, որի մասին վկայություններ ենք հանդիպում արաբ ճանապարհորդ Իբն Հորդադեյի մոտ, ով Արևելյան Եվրոպայից Արևելք՝ Դոն գետով և Ներքին Վոլգայով, ապա Կասպից ափամերձ տարածքով և այդ ժամանակաշրջանում դեռ մասամբ «ծովով» մինչև Ջուրջան և Բաղդադ ճանապարհին անվանում է ռուս առևտրականների մայրուղի²⁵: Դա փաստվում է նաև դեռևս 9-րդ դարավերջին՝ 872-884 թվականների հատվածում Կասպից ծովափնյա Ջուրջան և Ռեյ քաղաքներում ռուսների առևտրային ֆակտորիաները դեյլեմիհների թալանից պաշտպանելու համար ձեռնարկված ռուսների առաջին արշավանքով:

Այսպիսին էին հպման կետերը ռուս-հայկական հարաբերությունների վաղ

²¹ Коновалова И.Г., *Походы русов на Каспий и русско-хазарские отношения*, «Восточная Европа в исторической ретроспективе. К 80-летию В.Т. Пашуто», Москва, 1999, с 111-112.

²² Տես՝ գրել արարված աղբյուրներ, «Schechter letter»/«Кембриджский документ», перевод и указ. П.К.Коковцова, Москва, 1932. Կաղանկատվածի Մովսես, Պատմութիւն Աղուանից աշխարհի, գիրք 3, գլուխ 22.

²³ Տես՝ Гаракави А.Я., *Сказания еврейских писателей о хазарах и Хазарском царстве*, СПб., 1957, с.32-37. Якубовский А.Ю., *О русско-хазарских и русско-кавказских отношениях в IX—X вв.*, «Известия АН СССР», Серия истории и философии, № 5, Москва, 1946, с. 461-475. Новосельцев А.П., *Хазарское государство и его роль в истории Восточной Европы и Кавказа*, Москва, 1990, с. 211-219.

²⁴ Տես՝ Летопись по Лаврентьевскому списку, Изд. Археологической комиссии, СПб, 1872 г., стр. 32. Дмитрию А.К., *К вопросу о договорах русских с греками*, «Византийский временник», т. II. СПб., 1895, с. 541-543. Мейчик Д.М., *Русско-византийские договоры*, «Журнал Министерства народного просвещения», новая серия, ч. LVII, Петроград, 1915, с. 296. Эвер С.Г., *Древнейшее русское право в историческом его раскрытии*, СПб, 1835, с. 134-135 (<https://www.prilib.ru/item/408082>). Левченко М.В., *Русско-византийские договоры 909 и 911 гг.*, «Византийский временник», т. V (30), изд. Академии наук СССР, Москва, 1952, с. 105-126.

²⁵ Kitab al-masalik wa'l-mamalik auctore...Ibn Khordadbeh, M.J. de Goeje, Lugdani Batavorum, 1889, p. 154 (BGA, VI), տես նաև րուսերն րարգւ. Իбн Хордадбех, Книга путей и стран, перевод с араб., коммент., исслед., указ. и карты Н.Велихановой, Баку, 1986, с. 124.

փուլում, մինչ 10-րդ դարը՝ քրիստոնեական արժեքների քարոզչությունից մինչև առևտրային հարաբերություններ:

ИСТОКИ РАЗВИТИЯ РУССКО-АРМЯНСКИХ ОТНОШЕНИЙ В РУССКОЙ ИСТОРИОГРАФИИ – ЭЛИНА МХИТАРЯН - История изучения русско-армянских отношений имеет хорошие традиции и довольно богатую, внушительную библиотеку. Но наряду с этим почти нету весомых исследований об оценке русской историографии относительного этого вопроса. Так как историография в основном выражает курс политической власти, то изучая русско-армянские отношения по трудам русской историографической мысли можно понять/ выявить политическую роль, экономическую значимость Закавказья и, в частности, Армении для России. А нынешние развития в Закавказье требуют дать «русскому фактору» правильные, многогранные оценки, что может стать маятником для разработки национальной политической стратегии. В статье выявляются и анализируются самые первые упоминания, сведения про армян и Армению в русской летописи и историографии до 10-ого века.

При всестороннем изучении поставленных в рамках темы проблем, использовались общенаучные методы - диалектические, логические, исторические, а также индивидуальные /частные/ или специальные методы, такие как сравнительно-исторические, аналитические, статистические и системные.

Ключевые слова: торгово-экономические отношения, хронология, историография, Киевская Русь, Багратидская Армения, Закавказье, торговые пути, рынки, экономические и политические интересы .

THE ORIGINS OF DEVELOPMENT OF RUSSIAN-ARMENIAN RELATIONS IN RUSSIAN HISTORIOGRAPHY – ELINA MKHITARYAN - The history of the study of Russian-Armenian relations has good traditions and a rather rich, impressive library. But along with this, there are almost no significant studies on the assessment of Russian historiography in relation to this issue. Since historiography mainly expresses the course of political power, then by studying Russian-Armenian relations based on the works of Russian historiographic thought, one can understand / identify the political role, economic significance of Transcaucasia and, in particular, Armenia for Russia. And the current developments in Transcaucasia require the "Russian factor" to be given correct, multifaceted assessments, which can become a pendulum for the development of a national political strategy. The article identifies and analyzes the very first upaminations, information about Armenians and Armenia in the Russian chronicle and historiography up to the 10th century.

In comprehensive research of problems, posed under the theme, have been used general scientific methods- dialectical, logical, historical, as well as individual / partial / or special methods, such as legal-comparative, comparative historical, analytical, statistical and systemic.

Key words: trade and economic relations, chronology, historiography, Kievan Rus', Bagratid' Armenia, Transcaucasia, trade routes, markets, economic and political interests.

ՄՅՈՒՆԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ 6-7-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Արշակունյաց արքայատոհմի անկումից հետո Սյունիքը և Սյունի իշխանական տոհմը շարունակում էր մնալ Հայաստանի ամենաազդեցիկ իշխանական տներից մեկը: Չնայած մատենագիտության մեջ նշված է 6-7-րդ դարերում իշխած Սյունիքի իշխանների ամբողջական անվանացանկը և կառավարած տարիների քանակը, սակայն ճշտման խնդիր կա կառավարման տարիների շուրջ: Փորձ է արվում ամփոփ ներկայացնել 6-7-րդ դարերի Սյունի իշխանների կառավարման մոտավոր ժամանակացույցերը, կանանց իշխանական տոհմերի պատկանելության հարցը:

Բանալի բառեր. Սյունիք, իշխանական տուն, Սյունի, Ստեփաննոս Օրբելյան, կառավարման տարիներ, 6-7-րդ դարեր:

Սյունիքի և Սյունի իշխանական տան 6-7-րդ դարերի պատմության վերաբերյալ աղբյուրագիտական տեղեկությունները սակավ են: Այդ ժամանակաշրջանի պատմական գլխավոր աղբյուրը համարվում է 13-րդ դարի պատմիչ Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը: Սյունի իշխանների մասին որոշակի տեղեկություններ են հաղորդում նաև միջնադարի հայ պատմիչներ Սեբեոսը, Մովսես Դասխուրանցին (կոչված նաև Կաղանկատվացի), Շապուհ Բագրատունին և ուրիշներ: Սակավ, սակայն արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև վրաց և արաբ մատենագիրների երկերը:

Այսպես՝ Ստեփաննոս Օրբելյանը Գդիհոնից հետո որպես Սյունիքի իշխան է հիշատակում Վռամին՝ տալով նրան 7 տարվա իշխանություն¹: Մեր կարծիքով, Վռամը (484-491 թթ.) Գդիհոնի որդին էր: Նրա վերաբերյալ մեր տեղեկությունները սահմանափակվում են Օրբելյանի ընդամենը այդ մեկ վկայությամբ: Թերևս նրան կարելի է նույնացնել Ջուանշեր Ջուանշերիանիի «Վախթանգ Գորգասալի պատմության» մեջ հիշատակվող Սյունիքի Արև իշխանի հետ²: Ինչպես նշում է Հր. Աճառյանը, Վռամ անունը Վահրամ անվան կրճատ տարբերակն է, որն իր հերթին Վահագն անվան տարբերակն է, իսկ Վահագնը հայոց հին դիցաբանում արևի աստվածն էր³:

Վռամին մեկամյա ընդմիջումից հետո հաջորդել է Վասակ II-ը (492-503 թթ.): Նրա մասին մեր տեղեկությունները նույնպես սահմանափակվում են Ստեփաննոս Օրբելյանի մեկ վկայությամբ: Հ. Աճառյանը նրա իշխանության տարեթիվ է նշում 494-505

¹ Ստեփաննոսի Միւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Սոսկվա, 1861, էջ 36:

² Картлис Цховреба, Джуаншер Джуаншерияни, Жизнь Вахтанга Горгасала, пер., Г. Цулая, Тбилиси, 2006, с. 83; Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (V-XI դդ.), գիրք Ա, Եր., 2013, էջ 189:

³ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ե, Եր., 1962, էջ 9, 20, 126:

թթ.⁴, Ղ. Ալիշանը 497-508թթ.⁵, իսկ Մ. Բրոսսեն՝ 503-514 թթ.⁶: Հավանական ենք համարում, որ նա լինել Վասակ I-ի թոռը, նրա Բաբիկ որդու որդին: Դրա ապացույցը կարող է լինել **Վասակ** անունը, որով նա հավանաբար անվանակոչվել էր ի պատիվ իր պապի: Վասակ II-ը իր որդուն՝ Բաբգեն III-ին, նմանապես անվանադրել է ի պատիվ իր պապ Բաբիկի: Այդ ժամանակաշրջանում նախարարական տոհմերում նահապետի կամ իշխանական տան տոհմապետի իշխանությունը հիմնականում անցնում էր տոհմի ամենատարեց անդամին՝ ըստ ավագության կարգի: Կարծում ենք, այստեղ չպետք է բառացի հասկանալ Օրբելյանի այն վկայությունը, երբ նա, թվարկելով Սյունյաց իշխանների հերթականությունն ու նրանց կառավարման տևողությունը, նշում է. «Ահա սրանք են, որ Բաբիկից ի վեր մինչև այժմ իշխեցին՝ որդին հորը հաջորդելով, թվով քսան, երեք հարյուր երեսուներկու տարի»⁷: Թերևս, այստեղ նա նկատի է ունեցել, որ Սյունիքի իշխանները միշտ եղել են նույն Սիսական տոհմի ներկայացուցիչները, առավել ևս, որ 330 տարվա մեջ դժվար է 20 սերունդ տեղավորել: Պատմական փաստերից երևում է, որ տանտնտերության պաշտոնը միշտ չէր, որ անցնում էր հորից որդուն. այսպես՝ Վաղինակ I-ին (մոտ 320-348 թթ.) հաջորդել է նրա եղբայր Անդոկը, Բաբիկից հետո Սյունիքի իշխան է դառնում նրա սենեկապետ Սամը, ապա՝ եղբայր Վաղինակը և այլն:

Վասակ II-ին հաջորդել է **Արտաշիրը** (503-512 թթ.)՝ կառավարելով 9 տարի⁸: Նա Քաշունիք կամ Սյուն Բաղք գավառում 5 գյուղ է նվիրում Ադուանքի թագավոր Վաչագան II Բարեպաշտին (485-523 թթ.) ու նրա փեսա՝ պարսիկ արքայազն Աբլ Աբասին՝ նրանց կողմից կառուցված վանքի կարիքները հոգալու համար⁹: Նա Սյունիքի եպիսկոպոս Մուշեի հետ մասնակցել է Հայոց կաթողիկոս Բաբգեն I (490-516 թթ.) կաթողիկոսի կողմից 506 թ. հրավիրված Դվինի եկեղեցական ժողովին¹⁰:

Արտաշիրին կամ Աշիրին 3 ամյա ընդմիջումից կամ անիշխանությունից հետո հաջորդել է **Բաբգեն III-ը** (515-525 թթ.), որին Ստեփաննոս Օրբելյանը տալիս է 10 տարվա իշխանություն¹¹: Նա հավանաբար նախորդի եղբայր էր: Հայր Ղ. Ալիշանը նրա իշխանության տարիները նշում է 520-530 թթ.¹², Մ. Բրոսսեն՝ 526-536 թթ.¹³, իսկ Գր. Գրիգորյանն՝ 512-522 թթ.¹⁴: Մեր կարծիքով՝ նրա կինն էր Սահակիա իշխանուհին, որին Ղ. Ալիշանը համարում է Աշիրի կինն ու Սահակ Կամսարականի դուստրը¹⁵, իսկ

⁴ Անդ, էջ 45:

⁵ Հ. Ղ. Ալիշան, Սիսական. Տեղագրություն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 17:

⁶ Histoire de la Siounie par Stéphanos Orbélian, traduite de l'arménien par M. Brosset, premier livraison, Saint-Petersbourg, 1864, p. 32.

⁷ Պատմություն տանն Սիսական, էջ 36:

⁸ Պատմություն տանն Սիսական, էջ 36:

⁹ Պատմություն տանն Սիսական, էջ 62:

¹⁰ Գիրք թղթոց, Մատենագրություն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 42:

¹¹ Պատմություն տանն Սիսական, էջ 36:

¹² Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 17:

¹³ M. Brosset, op. cit., p. 32.

¹⁴ Գ. Գրիգորյան, Ս. Հախվերդյան, Սյունիքի պատմություն, Եր., 2001, էջ 250:

¹⁵ Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 13, 17:

Մ. Բրոսսեն գտնում է, որ Սահակիան Վասակ II-ի կամ Աշիրի կինն էր¹⁶: Ստեփաննոս Օրբելյանը նշում է, որ. «Յամս Կալատայ արքայի Պարսից ի մարզպանությանն Հայոց Վահանայ Մամիկոնեի, ի հայրապետությանն տեառն Մուշեի կաթողիկոսի վախճանի երանելի եպիսկոպոսն Սիւնեաց Մուշե՝ կալեալ զաթոռն ամս երեսուն և վեց: Եւ զի պակասեալ էր իշխանն Սիւնի, և էր նորա կին մեծահաւատ լի ամենայն բարեպաշտութեամբ՝ Սահակիա անուն»¹⁷:

Պարսից Կավատ I արքան կառավարել է (488-496, 499-531 թթ.), Վահան Մամիկոնյանը Հայաստանի մարզպանն էր (485-505 թթ.), իսկ Հայոց կաթողիկոս Մուշե I Այլաբերդցին աթոռակալել է (526-534 թթ.): Ինչ վերաբերում է Սյունիքի Մուշե եպիսկոպոսի աթոռակալության տարիներին, ապա պետք է նկատի առնել, որ ոչ միայն Մուշեի, այլև մինչև 8-րդ դարի վերջը Սյունիքի եպիսկոպոսների աթոռակալության տարիների վերաբերյալ հստակ ու ճշգրիտ տվյալներ չունենք: Ճիշտ է, Ստեփաննոս Օրբելյանը թվարկում է Սյունիքի բոլոր եպիսկոպոսների անուններն ու նրանց աթոռակալման տևողությունը, սակայն դա ամենևին չի հեշտացնում տվյալ խնդրի պարզաբանումը: Կարծում ենք, այստեղ Վահան Մամիկոնյանի հիշատակումը ժամանակագրական անճշտություն է, քանի որ ընդունված է, որ 506 թ. նա արդեն կենդանի չէր¹⁸, և մարզպանի պաշտոնում նրան հաջորդել էր նրա եղբայր Վարդը¹⁹: Վերոհիշյալ իրադարձությունը չէր կարող տեղի ունեցած լինել մինչև 506 թ., ուստի և միանշանակ պետք է ընդունել, որ Սահակիան, իսկապես, Բաբգեն III-ի, այլ ոչ թե Աշիրի կինն էր, իսկ նշված իրադարձությունները տեղի են ունեցել 525 թ. հետո, երբ հայոց հայրապետն էր Մուշե I-ը: Ենթադրում ենք, որ Բաբգեն III-ի մահից հետո նրա որդու՝ Հովհանի մանկահասակության պատճառով Սյունիքի իշխանության խնամակալությունը իրականացնում էր նրա այրին՝ Սահակիան: Ընդունելի ենք համարում Ղ. Ալիշանի տեսակետը, որ Սահակիան պետք է լիներ Սահակ Կամսարականի (մահ. մոտ. 510 թ.) դուստրը: Քանի որ Ստեփաննոս Օրբելյանը Բաբգեն II-ից հետո նշում է 11 տարվա անիշխանություն²⁰, ապա կարող ենք այդ տարիները համարել Սահակիայի (525-536 թթ.) խնամակալության տարիները: Այս փաստերի ընդունումը մեզ հնարավորություն կտա ճշտել նաև Սյունիքի մի քանի եպիսկոպոսների աթոռակալության մոտավոր տարիները՝ Մուշե եպիսկոպոսի աթոռակալության վերջին տարին՝ 526/7 թ., նրա հաջորդ Երիցակ եպիսկոպոսին՝ 527-528 թթ.:

Բաբգեն III-ի մահից հետո 13 ամյա ընդմիջումից հետո Սյունիքի տանուտեր է դառնում նրա որդի Հովհան I-ը (536-554 թթ.), որին Ստեփաննոս Օրբելյանը տալիս է 18 տարվա իշխանություն²¹: Հովհանի և նրա անմիջական հաջորդներ Վասդուղի (554-555 թթ.) ու Գրիգոր I-ի (555-565 թթ.) մասին մեր տեղեկությունները սահմանափակ-

¹⁶ *Histoire de la Siounie par Stéphanos Orbélian, traduite de l'arménien par M. Brosset, second livraison, introduction, Saint-Petersbourg, 1866, p. 18.*

¹⁷ *Պատմութիւն տանն Միսական, էջ 52:*

¹⁸ Մ. արք. Օրմանեան, *Ազգապատում, հտ. Ա, Պէյրոյթ, 1959, էջ 257:*

¹⁹ *Լեո, Երկերի ժողովածու, հտ. II, Եր., 1967, էջ 133:*

²⁰ *Պատմութիւն տանն Միսական, էջ 36:*


²¹ *Նույն տեղում:*

վում են Ստեփաննոս Օրբելյանի ընդամենը մեկ հիշատակությամբ²²։ Կարծում ենք, որ նրանք Հովհան I-ի որդիներն էին և հաջորդաբար Սյունիքի տանուտիրական գահին հաջորդեցին իրար։ Հովհանի կառավարման վերջին տարում՝ 554 թ. Սյունիքի Պետրոս եպիսկոպոսը մասնակցեց Դվինի 2-րդ եկեղեցական ժողովին²³։ Հնարավոր ենք համարում, որ այդ ժամանակ Հովհան I-ը մահացել էր, իսկ նրա հաջորդ Վասդուղը դեռևս չէր նշանակվել իշխան։ Դրանով կարելի է բացատրել նշված ժողովին Սյունիքի իշխանի բացակայությունը²⁴։ Ստեփաննոս Օրբելյանի այն վկայությունը, թե Դվինի ժողովին մասնակցել է Սյունիքի իշխան Միհր Արտաշիրը²⁵, ինչպես իրավացիորեն նկատել է Ա. Աբրահամյանը, իրականում վերաբերում է Դվինի 584 թ. ժողովին²⁶։

Հովհան I-ի կինն էր Սյունիքի Վարազդուխտ իշխանուհին. «որ յառաջ քան զհայ թուականն [=551 թ.] շինեալ էր զՄիհրի վանս ի Վայոց ձոր»²⁷։

Ըստ Սեբեոսի՝ 570-ական թվականներին Սյունիքի իշխանն էր Վահանը, որին չի հիշատակում Ստեփաննոս Օրբելյանը։ Սեբեոսը վկայում է, որ Պարսկաստանի դեմ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ 571 թ. ապստամբության նախօրյակին Սյունիքը անջատվել էր Հայաստանից. «Յայնժամ յառաջ քան զայս ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սինեաց, եւ խնդրեաց ի Խոսրովայ արքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Սինեաց ի Դընայ ի Փայտակարան քաղաք, եւ կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի, զի մի եւս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա։ Եւ կատարէր հրամանն»²⁸։

Հակված ենք կարծելու, որ ընդունելի չէ Ն. Ակինյանի այն ենթադրությունը, ըստ որի՝ Վահան Սյունին և Վասակ Սյունին նույն անձնավորությունն են²⁹։ Ընդունելի չէ հատկապես Ն. Ակինյանի կազմած 6-րդ դարի Սյունիքի իշխանների տոհմապատկերը, որտեղ շփոթված են 5-րդ և 6-րդ դարերի Սյունիքի իշխանների անունները³⁰։



²² Նույն տեղում։

²³ Նույն տեղում, էջ 65։ Գիրք թղթոց, էջ 73։ Մ. արք. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 281։

²⁴ Գիրք թղթոց, էջ 74։

²⁵ Պատմություն տանն Միսական, էջ 70։

²⁶ Ստեփաննոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը Ա. Ա. Աբրահամյանի, Եր., 1986, էջ 435-436, ծնթ. 251։

²⁷ Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 13։ Պատմություն տանն Միսական, էջ 248։

²⁸ Պատմություն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Եր., 1979, էջ 67։

²⁹ Հ. Ն. Ակինեան, Եղիշե վարդապետ եւ իւր Պատմություն Հայոց պատերազմի, մասն Գ, Վիեննա, 1960, էջ 9։

³⁰ Հ. Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 214։

Առավել ընդունելի է Վահան իշխանին նույնացնել Գրիգոր I-ի հետ: Մեր կարծիքով՝ **Գրիգոր** անունը կարող էր լինել Վահանի մկրտման անունը, ինչպես սովորաբար ընդունված էր հայ իշխանական ընտանիքներում. օրինակ՝ Գրիգոր-Դերենիկ՝ Արծրունիների մոտ, Հովհաննես-Համամ՝ Շաքիի իշխանատոհմում և այլն:

Մ. արք. Օրմանյանի կարծիքով՝ Սյունիքի բաժանվելը «պարսկական» Հայաստանից, պետք է տեղի ունեցած լիներ 564 թ. հետո և «Սուրեն մարզպանի բռնություններին ազատելու միջոց մը, եւ ոչ թե Մամիկոնեանց ազդեցութենէն դուրս ելլելու նպատակ մը»³¹: Իսկ, Հ. Մանանդյանի կարծիքով, Սյունիքի անջատվելը տեղի է ունեցել 571 թ.՝ կապված Մամիկոնյանների ուժեղացման և ապստամբ նախարարներին Բյուզանդիայի տված խոստումների հետ³²: Բ. Հարությունյանը նշում է, որ դատելով 5-7-րդ դարերի հայկական սկզբնաղբյուրների և Զաքարիա Հոեհոռիի հաղորդած տեղեկություններից, Սյունիքը Հայկական մարզպանության շրջանակներում լայն ինքնավարություն էր ձեռք բերել դեռ մինչև 571 թ.³⁶: Իսկապես, ասորի պատմիչ Զաքարիա Հոեհոռը նկարագրելով 6-րդ դարի կեսերին Այսրկովկասի քաղաքական պատկերը Սյունիքը ներկայացնում է որպես Վիրքի և Աղուանքի նման ինքնավար երկիր³⁷:

Լեոն գտնում է, որ դեռևս 5-րդ դարում Սյունիքի նախարարական տունը համարվում էր Հայաստանում առաջացած պարսկական կուսակցության ուժեղ ներկայացուցիչը, սաստիկ պարսկասեր էր և այդպիսին էլ մնաց մինչև 6-րդ դարի վերջին քառորդը՝ Հայաստանից նրա անջատվելը, Վահան իշխանի օրոք³⁸: Բ. Հարությունյանը գտնում է, որ «այն պարսից արքունիքի կողմից Սյունյաց իշխանությանը սիրաշահելու, Սյունյաց իշխանների դիրքը Այսրկովկասում ուժեղացնելու միջոցով պարսկական տիրապետությունն ամրապնդելու քաղաքական ծրագրի արտահայտություններից էր»³⁹:

Միաժամանակ Հայոց եկեղեցու ազդեցությունից դուրս է գալիս նաև Սյունիքի եպիսկոպոսական թեմը: Ըստ Ստեփաննոս Օրբելյանի՝ այդ իրադարձությունը կատարվել է Պետրոս եպիսկոպոսի օրոք և կապված էր Հայոց կաթողիկոսական աթոռի՝ երկու մասի բաժանման հետ³⁰: Անկասկած, այստեղ առկա է ժամանակագրական անհամապատասխանություն, քանի որ Պետրոս եպիսկոպոսը աթոռակալել է 550-ական թվականներին, իսկ Հայոց հակաթոռ կաթողիկոսական աթոռի հաստատումը տեղի է ունեցել 591 թ.: Իսկ եպիսկոպոսական աթոռի անջատման իրական պատճառները Օրբելյանը չի մատնանշել: Վ. Ալեքսանյանի կարծիքով, կաթողիկոսական և Սյունյաց աթոռների փոխհարաբերությունները ընդհատվել են Սյունյաց

³¹ Մ. արք. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 287:

³² Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Եր., 1934, էջ 297:

³⁶ Բ. Հարությունյան, Մեծ Հայքի Սյունիք աշխարհն ըստ «Աշխարհացոյցի»-ի (Պատմա-աշխարհագրական դիտարկումներ), – «ՊԲՀ», Եր., 2003, № 1, էջ 144:

³⁷ Н. В. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, Москва-Ленинград, 1941, с. 165.

³⁸ Լեո, նշվ. աշխ., էջ 51, 53, 58:

³⁹ Բ. Հարությունյան, Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, – «ԼՀԳ», Եր., 1981, № 12, էջ 69:

³⁰ Պատմություն տան Միսական, էջ 65:

Գրիգոր Բ եպիսկոպոսի պաշտոնավարման շրջանում՝ (584-599թթ.)³¹: Սյունյաց եպիսկոպոսական աթոռի այս անջատ վիճակը երկար չտևեց: Արդեն VII դարի սկզբին, հենց Սյունյաց եպիսկոպոսների եռանդուն կրոնական գործունեության շնորհիվ վերականգնվեց Հայոց եկեղեցու միասնականությունը: Սյունյաց եպիսկոպոսական աթոռը կրկին Հայոց կաթողիկոսների իրավասության տակ է անցնում 607 թ. Սյունյաց Քրիստափոր եպիսկոպոսի օրոք³²: Ըստ Ն. Ալիսյանի Քրիստափոր եպիսկոպոսը աթոռակալել է (599-608թթ.)³³:

Հ. Հյուբշմանը գտնում է, որ «Մէկ իշխանի տակ միացած Սիւնեցիք՝ Հայաստանի պետական կազմին մէջ միշտ բաւական անկախ եւ յատուկ դիրք մը գրաւած էին, եւ ասոր ապացոյց որ իրենց ուզելովք Հայաստանէն բաժնուեցան»³⁴: Նրա կարծիքով՝ Սյունյաց աշխարհի դիվանը Դվինից Ատրպատականի Փայտակարան տեղափոխվելը տեղի է ունեցել 571 թ. և այդ իրավիճակը շարունակվել է մինչև 640 թ.՝ արաբների կողմից Պարսկաստանի նվաճումը³⁵: Նա նշում է. «Մինչեւ այս ատեն Սիւնիք հպատակ էր Հայոց մարզպանին ի Դուին, այս մարզպանն ալ կախում ունէր Ատրպատականի սպայապետէն, այսուհետեւ ուղղակի կախում ունեցաւ Ատրպատականի սպայապետէն և դադրեցաւ Հայոց երկրին մասն ըլլալէ»³⁶: Կարելի է կարծել, թե Հյուբշմանը նկատի ուներ, որ Սյունի իշխանը չէր ցանկանում ենթակա լինել Հայաստանի մարզպանին, ով կախում ուներ Ատրպատականի կառավարչից և այդ քայլով նպատակ ուներ իր դիրքով հավասարվել Հայաստանի մարզպանին, դրանով իսկ պարսից արքունիքի այսպես կոչված աստիճանների ցուցակում ավելի բարձր դիրք զբաղեցնել, քան Հայաստանի մյուս իշխանները: Ընդունելով այս տեսակետը՝ առավել հնարավոր ենք համարում, որ Սյունիքի անջատվելը Մարզպանական Հայաստանից ավելի շուտ ուղղված էր Մամիկոնյանների բյուզանդամետ քաղաքականության դեմ, քան թե հուսահատական քայլ էր՝ Սուրեն մարզպանի բռնություններից ազատվելու:

Սյունի իշխանները միշտ էլ «հավատակից» Բյուզանդիայից եկող սպանալիքը ավելի վտանգավոր էին համարում, քան «հեթանոս» Պարսկաստանից եկող վտանգը: Եւ, ինչպես ցույց տվեց ժամանակը, նրանք չէին սխալվում: Բյուզանդիային ենթակա Հայաստանի արևմտյան մասում հայերի ձուլման և ուծացման քաղաքականությունը հանգեցրեց այդ շրջանի հայության քաղկեդոնականությունն ընդունելուն, նախարարական համակարգի քայքայմանն ու արագ հունականացմանը: Դրան հակառակ՝ Սյունիքն ու Հայաստանի այն շրջանները, որոնք քիչ էին ենթակա Բյուզանդիայի ազդեցությանը, կարողացան պահպանել իրենց ազգային նկարագիրն ու ինքնությունը:

³¹ Վ. Ալեքսանյան, *Սյունյաց-եպիսկոպոսական-աթոռը-VII-դարի-առաջին-կեսին*, «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայագիտություն», 132.1, Եր., 2010թ., էջ 37:

³² Պատմություն տանն Սիսական, էջ 71:

³³ Ն. Ալիսյան, *Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց*, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1903, №8, էջ 252, տես նաև Վ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 37: Ըստ Ղ. Ալիշանի Քրիստափորը աթոռակալել է 595-605թթ. (տես Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 20):

³⁴ Հ. Հյուբշման, *Հին Հայոց տեղւոյ անունները*, Վիեննա, 1905, էջ 58:

³⁵ Նույն տեղում, էջ 36-37, 99-100:

³⁶ Նույն տեղում, էջ 36, ծնթ. 4:

Այս ամենին հավելենք նաև Սյունի և Մամիկոնյան տոհմերի մրցակցությունը Հայաստանում քաղաքական գերիշխանության համար: Եթե Մամիկոնյանները Հայաստանում իրենց ազդեցության ուժեղացումն ու ամրապնդման ճանապարհը համարում էին Բյուզանդիայի հետ համագործակցությունը, ապա Սյունիները դա տեսնում էին Մասանյաներին հավատարմորեն ծառայելու մեջ: Ն. Ալիյանը ևս գտնում է, որ. «Մպարապետության Մամիկոնեաններու մենաշնորհն նկատուիլը մէկ կողմանէ եւ միւս կողմանէ անոնց յարատեւ միտումը դէպի Բիւզանդիոն եւ անոր քաղաքականութեան ծառայելու տենչը չէին կրնար հանդուրժելի երեւալ պարսկասեր Սիւնեցիներուն, որոնք, իրենց բախտը սահմանակից պետութեան մէջ կը տեսնէին»³⁷:

Մատենագիտական սակավ տեղեկությունների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ իրենց հերթին Մասանյան արքաները մեծ վստահությամբ էին վերաբերվում Սյունի իշխաններին: Ինչպես կտեսնեք ստորև, 574 թ. Փիլիպոս Սյունին նշանակվեց Հայաստանի մարզպան, իսկ Խոսրով II Փարվեզն իր դստերը կնության տվեց Գրիգոր II-ին: Մասանյան արքաների վստահության մասին է վկայում նաև այն փաստը, որ Խոսրով I Անուշիրվանը Սյունիքի իշխաններին է վստահել Կովկասի լեռնանցքների հսկողությունը: Արաբ հեղինակների վկայությամբ՝ Խոսրովը, կառուցելով Դերբենդի ամրությունները, այնտեղ բնակեցրեց սիյասիջին (շատերի կարծիքով՝ սիսական) կոչվող ժողովրդին³⁸, որոնք ռազմատենչ և քաջարի ցեղ էին³⁹: Ս. Երեմյանի կարծիքով՝ Դերբենդի ամրությունների պաշտպանության նպատակով Մասանյանները այնտեղ Սյունիքի բնակիչներից՝ պյունեցիներից ստեղծեցին զինվորական բնակավայրեր⁴⁰: Եթե հավաստի համարվի Մատթեոս Ուռհայեցու տեղեկությունը Դերբենդի հայկական թագավորության մասին⁴¹, ապա հենց այս պյունեցիների ժառանգները կարող էին լինել այդ թագավորության հիմնադիրները:

Այս ամենը հաշվի առնելով՝ արդարացի չէ Վահան իշխանին «ուրացող»⁴² կամ «դավաճան» պիտակավորելը, առավել ևս, որ մենք փաստեր չունենք նրա ուրացության վերաբերյալ: Ինչ վերաբերում է Սյունիքի «անջատմանը» Մարզպանական Հայաստան-

³⁷ Թուրթ Մակարայ Բ. Երուսաղեմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղագս կարգաց եկեղեցոյ, բնագիր եւ քննութիւն, աշխատասիրեց Հ. Ներսէս վ. Ալիւնեան, Վիեննա, 1930, էջ 53:

³⁸ Баладзори, Книга завоевания стран, текст и пер. П. К. Жузе, Баку, 1927, с. 5.

³⁹ Н. А. Караулов, Сведения арабских писателей X и XI веков по Р. Хр. о Кавказе, Армении и Азербейджане, – Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Вып. XXXI, Тифлис, 1902, էջ 15-17:

⁴⁰ С. Т. Еремян, Сюния и оборона сасанидами кавказских проходов, – ՄՄՌՄ ԳԱ հայկական ֆիլիալ, Տեղեկագիր, № 7, Եր., 1941, էջ 38:

⁴¹ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմ. և ծանոթագրությունները՝ Հր. Բարթիկյանի, Եր., 1991, էջ 248: Ս. Բարխուդարյան, Դերբենդի հայ-աղվանական թագավորությունը, – «ՊԲՀ», Եր., 1969, № 3, էջ 125-148; С. Бархударян, Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений, Научн. редакторы А. Акопян и К. Асатрян, Ер., 2011, էջ 97-148: Դերբենդի հայկական թագավորության հավաստիության վերաբերյալ հակառակ տեսակետի փաստարկումներն ամփոփված են Ալեքսան Հակոբյանի հոդվածում. Ա. Յակոբյան, Մատթեոս Ուռհայեցու վկայությունը 961 թուականին Անին մայրաքաղաք հռչակելու մասին (նոր աղբյուրագիտական քննություն), – ՄՄԱԵԺ, հտ. XXIX, Եր., 2014, էջ 309-331:

⁴² Բ. Ա. Ուլուբաբյան, Դավաճներ Հայոց Արևելից կողմանց պատմություն (V-VII դդ.), Եր., 1981, էջ 200:

նից, ապա այդ ժամանակաշրջանը տևել է մի քանի տասնամյակ: Արդեն Վահանի անմիջական հաջորդներ Միհր Արտաշիրին ու Փիլիպպոսին տեսնում ենք Հայաստանի քաղաքական ու կրոնական հարցերի ակտիվ մասնակիցների թվում:

Գրիգոր-Վահանին Սյունիքի իշխանական աթոռին հաջորդում է նրա որդի Միհր Արտաշիրը (565-588 թթ.), ով Ստեփաննոս Օրբելյանի վկայությամբ կառավարել է 23 տարի⁴³: Ղ. Ալիշանը նրան տալիս է 13 տարվա իշխանություն՝ համարելով, որ նա կառավարել է 558-570 թթ.⁴⁴, իսկ Մ. Բրոսսեն նշում է 576-599 թթ.⁴⁵: Վերնում նշեցինք, որ Միհր Արտաշիրը Սյունիքի եպիսկոպոս Վրթանեսի հետ մասնակցել է Դվինի 584 թ. եկեղեցական ժողովին, որտեղ ի թիվս այլ հարցերի, վերջնականապես մտցվեց նաև Հայոց Մեծ թվականությունը: Նրանց էր ուղղված Հայոց կաթողիկոս Հովհաննես II Գաբելյանի (557-574 թթ.) թուղթը, որտեղ կաթողիկոսը նրանց խորհուրդ էր տալիս թույլ չտալ Սյունիքում նեստորականության, քաղկեդոնականության և այլ մոլորությունների տարածումը⁴⁶:

Միհր Արտաշիրի եղբայրը կարող էր լինել Սեբեոսի մոտ որպես Սյունիքի տեր հիշատակվող Փիլիպպոս իշխանը: Նա Դվինի և Խաղամախիսի միջև, ապա Վանանդի Ութսմու գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտերում պարտություն է կրում բյուզանդացիներից, բայց Հայաստանի մարզպան է մնում 7 տարի⁴⁷: Եթե 7 տարին վրիպակ չէ, ապա Փիլիպպոսը Հայաստանի մարզպան է եղել 574-581 թթ.: Կ. Թումանյանը գտնում է, որ Փիլիպպոսը Հայաստանի մարզպան է եղել 574-576 թթ.⁴⁸: Նրա՝ «Սյունիքի տեր» հիշատակվելը վկայում է, որ նա և իր Միհր Արտաշիր եղբայրը հոր մահից հետո Սյունիքի իշխանությունը բաժանել էին իրար միջև: Հավանաբար, Փիլիպպոսի իշխանությունը երկարատև չէր, և 480-ական թվականների սկզբին նա քաղաքական ասպարեզից արդեն հեռացած էր:

Գտնում ենք, որ Միհր Արտաշիրից հետո Սյունիքի իշխանական գահին հաջորդաբար գահակալած երեք իշխանները նրա որդիներն էին: Ստեփաննոս Օրբելյանի վկայությամբ՝ 3-ամյա ընդմիջումից հետո իշխել է Պիրանը (590-591 թթ.), 2-ամյա ընդմիջումից հետո՝ Սարգիսը (593-595 թթ.) և 3-ամյա ընդմիջումից հետո՝ Սահակ I-ը⁴⁹ (598-608 թթ.): Առաջին երկուսի մասին մեր տեղեկությունները սահմանափակվում են Օրբելյանի վերոհիշյալ մեկ վկայությամբ: Ղ. Ալիշանը Պիրանի փոխարեն նշում է **Տիգրան** անունը՝ նրա իշխանության համար նշելով 588-590 թթ.⁵⁰: Գտնում ենք, որ ավելի ճիշտ կլինի ընդունել **Տիրան** տարբերակը: Սահակի անվանը մենք հանդիպում ենք նաև Սեբեոսի «Պատմության» մեջ՝ 597/598 թվականների դեպքերի

⁴³ Պատմություն տանն Սիսական, էջ 36:

⁴⁴ Հ. Ղ. Ալիշան, նշված. աշխ., էջ 17:

⁴⁵ M. Brosset, *Histoire de la Siouanie*, 1864, p. 32.

⁴⁶ Պատմություն տանն Սիսական, էջ 66-69, Գիրք թղթոց, էջ 78-80: Հմմ. Մ. արք. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 287-288:

⁴⁷ Սեբեոս, նշվ. աշխ., էջ 70:

⁴⁸ C. Toumanoff, *Studies in Christian Caucasian History* (Georgetown University Press), Washington, 1963, p. 214.

⁴⁹ Պատմություն տանն Սիսական, էջ 36:

⁵⁰ Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 17:

նկարագրության մեջ. «Իսկ Ստեփանոս Սինույ պայքարեալ վասն տանուտերութեան (լեալ) ընդ հարեղբարն իւրում Սահակայ: Իսկ Սահակ գրէր ի վերայ նորա գիր մահապարտութեան, եւ կնքէր մատանեալ իւրով եւ տանն եպիսկոպոսի, եւ մատանեալք այլ եւս իշխանաց Սինեաց, յիշեցուցանել թագաւորին զվնաս նոցա ապստամբութեանն»⁵¹:

Ինչ վերաբերում է Սահակի եղբորորդի Ստեփանոս Սյունուն, ապա նա մասնակցել էր 596 թ.⁵² Ատատ Խոռխոռունու և Սամուել Վահկունու զլիսավորած ապստամբությանը ընդդէմ Պարսկաստանի, ապա ներում ստանալով՝ կրկին ծառայության էր անցել պարսից արքա Խոսրով II Փարվեզի մոտ և ի վերջո տանուտիրության համար պայքարի մեջ մտնելով իր հորեղբոր հետ՝ սպանվել էր նրա մատնության հետևանքով⁵³: Հավանաբար, նա Սարգիսի որդին էր և հոր մահից հետո իրեն համարելով Սյունիքի իշխանության ավելի օրինական ժառանգորդ՝ պայքար էր սկսել հորեղբոր դէմ, բայց հաջողության չհասնելով՝ մահապատժի էր ենթարկվել Խոսրով II-ի կողմից:

Սահակ I-ի գործուն աջակցությամբ Սյունյաց եպիսկոպոսական աթոռը վերստին միացավ Հայոց եկեղեցուն՝ դուրս գալով Աղուանից կաթողիկոսության իրավասությունից⁵⁴: Գ. Գրիգորյանը գտնում է, որ Սահակ I-ի կինն էր Հերակլ I կայսերը 624 թ. Սյունիքում դիմավորած Բյուրեղ իշխանուհին⁵⁵, ինչը, կարծում ենք, ճիշտ չէ:

Ստեփանոս Օրբելյանը նշում է, որ Սահակից հետո՝ 13 տարվա ընդմիջումից հետո կառավարել է Գրիգոր իշխանը (որ առողջ և ուժեղ կազմվածքի առավելության պատճառով «քաջաց նվիրակ» կոչվեց)՝ տալով նրան 16 տարվա իշխանություն⁵⁶:

Որպես Սյունիքի իշխան Գրիգորը հիշատակվում է 607/608 թթ.՝ Աղուանքի հոգևորականներին ուղղված Վրթանես Քերթոդի պատասխան նամակում⁵⁷: Այդ հիշատակությունը մեզ թույլ է տալիս եզրակացնելու, որ նա անմիջապես հաջորդել է Սահակ I-ին և Օրբելյանի նշած 13 տարվա ընդմիջումը պետք է գումարել նրա իշխանության տարիներին: Գտնում ենք, որ Գրիգոր II-ը (608-637 թթ.) Խոսրով II Փարվեզի (590-628 թթ.) հրամանով շուտով կանչվել է Տիգրան և այդ 13 տարիներին ծառայության մեջ եղել Պարսից արքայի մոտ: Երբ նա գտնվում էր Պարսից արքունիքում, աչքի է ընկնում Խոսրով II-ի կազմակերպած մի հանդիսության ժամանակ՝ իր աղեղից արձակած նետով սպանելով մի խոշոր ու սևաթույր թռչնաքաշտ թռչունի⁵⁸: Խոսրով «թագաւորն լցեալ խնդութեամբ՝ կոչէ յառաջ զԳրիգոր և հրամայէ նմա զծանրագոյնն խնդրել խնդիր. և Գրիգոր՝ Սինեաց տէր ասէ. «տէ՛ր իմ արքայ՝ մինչ հրամայեցեր խնդրել՝ տացի դուստր արքայի ինձ ի կնութիւն»: Եւ առ

⁵¹ Սեբեոս, նշվ. աշխ., էջ 95:

⁵² Մ. արք. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 300:

⁵³ Սեբեոս, նշվ. աշխ., էջ 87, 88, 94, 95, 96:

⁵⁴ Պատմութիւն տանն Սիսական, էջ 72; Մ. արք. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 320:

⁵⁵ Գ. Գրիգորյան, Մ. Հախվերդյան, նշվ. աշխ., էջ 52:

⁵⁶ Պատմութիւն տանն Սիսական, էջ 36:

⁵⁷ Գիրք թղթոց, էջ 196:

⁵⁸ Տես Պատմութիւն տանն Սիսական, էջ 37:

Ժամայն կատարեցաւ խնդիրն բազում և մեծամեծ պարգևօք բարձրագոյն փառօք»⁵⁹: Գտնում ենք, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել 610-615 թթ. միջակայքում, քանի որ 637 թ. Նեհավենդի ճակատամարտում Գրիգորի հետ զոհվեց նաև նրա որդիներից մեկը⁶⁰, ով պետք է ամենաքիչը մոտ 20 տարեկան լինէր, որպեսզի կարողանար մասնակցել պատերազմական գործողություններին: Կարծում ենք, Գրիգոր II-ի կինը և Խոսրով II-ի դուստր էր Անանուն Զրուցագրի աշխատության մեջ հիշատակվող Սյունիքի իշխանուհի Բյուրեղը, ով 624 թ. դիմավորեց Սյունիքի վրայով Պարսկաստան արշավող Հերակլ կայսրին (610-641 թթ.). «Լսելով այդ մասին՝ Սիւնեաց տիկինը, որի անունը Բիւրեղ էր, ընդառաջ եկաւ Հերակլ արքային եւ բերեց ոսկէ թանկարժէք իրեր [զանձեր], թանկագին հագուստներ, բազմաթիւ ձիեր, ջորիներ, հազար [Ռ] պատերազմական զրահ, չորս հարիւր [ԴՃ] ոսկեկուռ զէնքեր եւ հազար [Ռ] սաղաւարտ: Իր հետ բերեց նաեւ [երեք հազար] ռազմիկ մարդկանց: Եւ նա գեղեցիկ ու չափազանց իմաստուն կին էր եւ հաճութիւն պատճառեց Հերակլ արքային»⁶¹:

Չնայած այն հանգամանքին, որ Բյուրեղն իր ոխերիմ թշնամի Խոսրով II-ի դուստրն էր, Հերակլ կայսրը Սյունյաց իշխանուհուն վերաբերվեց մեծագույն հարգանքով: Այս իրադարձության հետ է կապված նաև Հացունյաց խաչի պատմությունը, որի համաձայն՝ Հերակլ կայսրը Քրիստոսի խաչափայտի մի կտորը նվիրում է Բյուրեղ իշխանուհուն⁶²:

Գրիգոր II-ը, հավատարիմ մնալով վասալական ու փեսայական պարտավորություններին, հայազգի մի շարք նախարարների հետ հավատարմորեն ու անձնվիրաբար պայքար մղեց Սասանյան խորտակվող գահը փրկելու համար: Սակայն 628 թ. Խոսրով II-ի սպանությունից հետո Սասանյան Պարսկաստանը արագորեն ու վերջնականապես դեպի կործանում գլորվեց: Լեոյի պատկերավոր արտահայտությամբ՝ «Խոսրով Փարվեզի գլխի հետ կտրվում էր և Սասանյան Պարսկաստանի գլուխը»⁶³: Սասանյան գահի համար սկսված գահակալական պայքարն էլ ավելի թուլացրեց առանց այդ էլ Բյուզանդիայի դեմ երկարատև պատերազմից ուժասպառ տերությունը: 637 թ. Կադեսիայի ճակատամարտում արաբներից պարտություն կրելուց հետո՝ մեկուկես տասնամյակ անց, դադարեց գոյություն ունենալուց: Կադեսիայի ճակատամարտում բազմաթիվ հայ նախարարների հետ սպանվեց նաև «Գրիգոր Սիւնեաց տէր միով որդով»⁶⁴:

Հնարավոր է, որ Գրիգորի դուստրն էր Խոսրովանույշը, որը դարձել էր

⁵⁹ Նույն տեղում:

⁶⁰ Սեբեոս, նշվ. աշխ., էջ 137:

⁶¹ Անանուն Զրուցագիր (Կարծեցեալ Շապուհ Բագրատունի), Պատմութիւն, Թարգմ., առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վ. Առաքելեանի, Խմբ.՝ Ա. Յակոբեան, Եր., 2011, էջ 64-65: Հմմ. <http://www.vostlit.info/Texts/rus4/Schapuch/frameset1.htm>:

⁶² Պատմութիւն տուրք խաչին Հացունեաց, գոր էառ ի Հերակլայ կայսերէն Բիւրեղ տիկինն Սիւնեաց, – «Արարատ», Վաղարշապատ, 1888, էջ 399-404: Հմմ. Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 14:

⁶³ Լեո, նշվ. աշխ., էջ 253:

⁶⁴ Սեբեոս, նշվ. աշխ., էջ 137:

Աղուանքի իշխան Ջվանշիրի կողակիցը⁶⁵: Այս մասին Մովսես Դասխուրանցու երկում նշվում է, որ Աղուանքի իշխան Ջվանշիրը «...յԱրուիճան տոհմէն առնոյր կին գղուստր իշխանին Սիսականեան աշխարհին, ընդ որ յաւեժ ուրախ եղեն Սինիք»⁶⁶: Դրա ապացույցը կարող է լինել հենց Խոսրովանույշ անունը, որով, անշուշտ, անվանակոչել են ի պատիվ նրա նշանավոր պապ Խոսրով II-ի⁶⁷:

Գրիգոր II-ի գոհվելուց հետո Սյունիքի իշխան է դառնում նրա երկրորդ որդին՝ Հրահատը, որին Ստեփաննոս Օրբելյանը տալիս է 16 տարվա իշխանություն⁶⁸:

Եթե հետևենք Սյունյաց իշխանների՝ Բաբիկից մինչև Քուրդոյի կառավարման վերջը՝ 332 տարիների Ստեփաննոս Օրբելյանի հատկացրած ցանկին⁶⁹, ապա, ինչպես ժամանակին իրավացիորեն նկատել է Ղ. Ալիշանը, կստանանք 10 տարվա բաց⁷⁰: Մեր կարծիքով՝ այդ բացը կապված է Օրբելյանի կողմից Սյունիքի 5-րդ դարի իշխաններ Վարազվադանին 25 և Գդեհունին 17 տարվա իշխանության տալու փաստի հետ⁷¹: Քանի որ հստակ է Վարազվադանի կառավարման առաջին տարին՝ 452 թ., և Գդեհունի սպանության տարեթիվը՝ 484 թ., ապա, ինչպես արդեն նշել ենք, նախորդ հոդվածում, անհրաժեշտ է Վարազվադանի և Գդեհունի 25+17=42 տարվա փոխարեն նրանց համար նշել իրականությանը համապատասխանող 34 տարվա իշխանություն⁷², իսկ այդ ավել 10 տարիները կա՛մ գումարել 6-րդ դարի վերջում կառավարած Սյունիքի իշխաններից որևէ մեկի կառավարման տարիներին, կա՛մ Օրբելյանի հաշված 332 տարիների փոխարեն նշել 322 տարվա ժամանակաշրջան:

Ղ. Ալիշանը այդ 10 տարիների համար առաջարկում է Քուրդոյից առաջ նշել Բաբկեն Գ-ին՝ տալով նրան 10 տարվա՝ 683-693 թթ. իշխանություն: Նա նշում է, որ 735 թ. Սյունիքի եպիսկոպոս Ստեփանոս Ա-ի ընտրության ժամանակ Ստեփաննոս Օրբելյանի հիշատակած Բաբկեն և Քուրդ իշխաններին⁷³ կարելի է տեղափոխել 7-րդ դարի վերջը⁷⁴: Մ. Բրոսսեն այդ 10 տարիների բացը լրացնելու համար Գրիգոր II-ի իշխանության վերջին տարին նշում է 649 թ., իսկ մյուս իշխանների համար նշում հետևյալ տարեթիվերը՝ Հրահատ՝ 649-665 թթ., Հովհան II՝ 665-692 թթ. և Քուրդոն՝ 692-710 թթ.⁷⁵:

Քանի որ ստույգ հայտնի է Գրիգոր II-ի իշխանության վերջին տարին՝ 637 թ., և Բաբիկի կառավարման առաջին տարուն՝ 377 թվին գումարելով 332 տարին, ստանում ենք Քուրդոյի (691-709 թթ.) կառավարման վերջին տարին՝ 709 թ., ապա

⁶⁵ Տե՛ս. Մ. Կաղանկատվացի, *Պատմություն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը* Վ. Առաքելյանի, Եր., 1983, էջ 189:

⁶⁶ *Պատմություն Աղուանից աշխարհի*, էջ 179:

⁶⁷ Այլ տեսակետ տե՛ս Արմեն Ղարազորյանի հոդվածում (Ա. *Карагемян, К локализации гавара Кашатаг, – «ԼՀԳ»*, Եր., 1987, № 1, էջ 42):

⁶⁸ *Պատմություն տանն Սիսական*, էջ 36:

⁶⁹ Նույն տեղում:

⁷⁰ Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 13:

⁷¹ *Պատմություն տանն Սիսական*, էջ 36:

⁷² Ժ. Միրումյան, *Սյունիքի իշխանական տունը մինչև 5-րդ դարի վերջը*, – «Սյունիք», Գիտական նյութերի ժողովածու, Հայագիտություն, № 1, Եր., 2016, էջ 218:

⁷³ *Պատմություն տանն Սիսական*, էջ 100:

⁷⁴ Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 13, 17:

⁷⁵ M. Brosset, նշվ. աշխ., p. 32.

նպատակահարմար ենք գտնում այդ 10 տարվա բացը լրացնելու համար ոչ թե նոր իշխանի անուն ավելացնել (առավել ևս, որ սկզբնաղբյուրները, առաջին հերթին՝ Ստեփաննոս Օրբելյանը, այդ մասին չեն նշում), այլ Հրահատի իշխանության տարիներին հավելել այդ պակասող տարիները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հրահատը, լինելով Գրիգոր II-ի կրտսեր որդին, իշխան է դարձել բավականին երիտասարդ տարիքում՝ մոտ 18-20 տարեկանում, ու մահացել է մոտ 45-47 տարեկանում, ուստի նույնիսկ այդ 10 տարիների ավելացումն էական ազդեցություն չի ունենում Սյունիքի հետագա իշխանների ժամանակաշրջանների վրա:

Հրահատի (638-664 թթ.) և նրա որդի Հովհան II-ի վերաբերյալ մեր տեղեկությունները նույնպես սակավ են:

Հրահատի օրոք՝ 653 թ., Սյունիքը ենթարկվեց արաբների արշավանքին: Ինչպես նշում է արաբ մատենագիր Բալազորին, արաբ զորավար «Հաբիբ իբն Մասլաման եկավ Սիսական, որի բնակիչները կովեցին, սակայն նա հաղթեց նրանց ու գրավեց Վայքը և Սիսականի ամրոցի բնակիչների հետ պայմանագիր կնքեց խարաջ վճարելու պայմանով»⁷⁶:

Պարսկական տերության անկումից հետո (652 թ.) Հրահատը, ինչպես մինչև այդ Սյունիքի իշխանները, չէր վստահում Բյուզանդիայի՝ Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականությանը, Հայոց իշխան և սպարապետ Թեոդորոս Ռշտունու հավատարիմ զինակիցն ու համախոհն էր:

Հրահատին հաջորդել է նրա որդի Հովհան II-ը (664-691 թթ.), որին Ստեփաննոս Օրբելյանը տալիս է 27 տարվա իշխանություն⁷⁷: Ղ. Ալիշանը գտնում է, որ Հովհան II-ի կառավարման տարիներն են 655-683 թթ.⁷⁸: 681 թ., օգտվելով Արաբական խալիֆայության մեջ բռնկված գահակալական պայքարից՝ Հայաստանն, Աղուանքն ու Վիրքը տապալում են արաբական տիրապետությունը և հրաժարվում հարկատվությունից:

Սյունիքի 7-րդ դարի վերջին իշխանն էր Քուրդ I-ը (691-709 թթ.), որին Ստեփաննոս Օրբելյանը տալիս է 18 տարվա իշխանություն⁷⁹: Մ. Բրոսսեն Սյունիքի իշխանուհի է համարում տիկին Շուշիկին, ով ապաստան տվեց և կործանումից փրկեց 703 թ. Վարդանակերտի ճակատամարտից փրկված 300 արաբ զինվորների⁸⁰: Ղ. Ալիշանը ևս գտնում է, որ Շուշանը՝ «Միւնեաց տիկինն թուրի»⁸¹: Կարծում ենք, ավելի ճիշտ է Հր. Աճառյանը, ում տեսակետով՝ Շուշան իշխանուհին հանդիսանում է Վահան պատրիկի դուստրը և Շիրակի տեր Ներսէհ Կամսարականի կինը⁸²:

7-րդ դարի վերջին Արաբական խալիֆայությունը զգալիորեն ուժեղանում է

⁷⁶ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Արաբական աղբյուրներ. Գ. Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և թարգմանությունը բնագրերից Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 2005, էջ 271-272 (Բալազորի, Երկրների նվաճումը); Баладзорн, էջ 11:

⁷⁷ Պատմություն տանն Սիսական, էջ 36:

⁷⁸ Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 17:

⁷⁹ Պատմություն տանն Սիսական, էջ 36:


⁸⁰ M. Brosset, Histoire de la Siounie, 1866, p. 21-22.

⁸¹ Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 555, ծնթ. 1:

⁸² Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, Եր., 1945, էջ 181:

Օմայյան 5-րդ խալիփա Աբդ-ալ Մալիքի (685-705 թթ.) օրոք: Նրա իշխանության ժամանակ Բյուզանդիայի դեմ մղված պատերազմներում գերազանցությունն անցնում է արաբների կողմը: Աբդ-ալ Մալիքը 696 թ. Հայաստանի ուստիկան է նշանակում իր եղբայր Մուհամմադ իբն Մրվանին և մեծ զորքով ուղարկում Հայաստան: Վերջինս 696-699 թթ. անօրինակ դաժանությամբ ճնշելով հայերի դիմադրությունը՝ վերջնականապես խալիփայությանն է հնազանդեցնում Հայաստանը, Վիրքն ու Աղուանքը: Ինչպես նշում են արաբ մատենագիրները 703 թ. դեպքերի նկարագրության մեջ, Մուհամմադը դաժան հաշվեհարդար տեսավ ապստամբ հայերի հետ, Նախճավանի և Վասպուրականի եկեղեցիներում հրկիզելով բազմաթիվ նախարարների. «այդ արշավանքների ժամանակ էլ Սիսականից գերեվարվեց Յազիդ իբն Ուսայդի մայրը, որը նրա պատրիկի դուստրն էր»⁸³: Հ. Նալբանդյանը Սյունիքի իշխանի դստեր Դամասկոս գերի տարվելու տարեթիվն է նշում 695 թ.⁸⁴: Ըստ պատմիչ Ղևոնդի՝ հայ նախարարների ողջակիզումը տեղի է խալիփա Վլիթի (Վալիդ I 705-715 թթ.) կառավարման առաջին տարում⁸⁵, այսինքն՝ 705 թ., ինչն էլ համապատասխանում է իրականությանը: Հաշվի առնելով ժամանակագրական տեղեկությունները՝ գտնում ենք, որ Յազիդ իբն Ուսայդ ալ-Մուլամիի մայրը Քուրդ I-ի դուստրն էր: Յազիդը Հայաստանի ուստիկան է նշանակվել 3 անգամ՝ 752-754, 759-770, 775-780 թթ.⁸⁶:

Այսպիսով՝ մատենագիտական տեղեկությունները հնարավորություն են ընձեռում ամբողջական տեսքով ներկայացնել 5-րդ դարի վերջից մինչև 8-րդ դարի սկիզբը Սյունիքի իշխանների հաջորդականությունն ու կառավարման մոտավոր ժամանակաշրջանը: Ստորև ներկայացնում ենք նաև այդ ժամանակաշրջանի Սյունիքի իշխանների տոհմապատկերը.



⁸³ Օտար աղբյուրները..., խալիֆա իբն խալլաթ, Պատմություն, էջ 148; Բալազուրի, նշվ. աշխ., էջ 276:

⁸⁴ Հ. Նալբանդյան, Արարացի ուստիկաները Հայաստանում, – ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, Եր., 1956, № 8, էջ 111:

⁸⁵ Ղևոնդ, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 1982, էջ 37:

⁸⁶ Օտար աղբյուրները..., Բալազուրի, նշվ. աշխ., էջ 280, 366: Տե՛ս նաև Ա. Տեր-Ղևոնդյան, Արմինիայի ուստիկանների ժամանակագրությունը, – ՊԲՀ, Եր., 1977, № 1, էջ 121:

КНЯЖЕНСКИЙ ДОМ СЮНИ В 6-7 ВЕКАХ-ЖИРАЙР МИРУМЯН - После падения королевской династии Аршакидов Сюник и княженский род Сюни продолжили оставаться одним из самых влиятельных княжеских домов Армении. Несмотря на то, что в литературе представлены весь список правящих князей Сюника 6-7 веков и сроки их правления, тем не менее необходимо уточнить годы их правления. Делается попытка обобщенно представить приблизительное время правления князей Сюнидов 6-7 веков и принадлежность их жен к княжеским родам.

Ключевые слова: Сюник, княжеский дом, Сюни, Степаннос Орбелян, годы правления, 6-7 века.

THE PRINCE HOUSE OF SYUNI IN THE 6TH TO 7TH CENTURIES-JIRAYR MIRUMYAN - After the fall of the royal family of the Arshakuni, Syunik and the Prince Dynasty of Syunik remain one of the most influential prince houses of Armenia. Though the total list of names of the princes of Syunik ruling in the 6th to 7th centuries and the years of rule are mentioned in the literature, the problem of identifying the exact dates of their rule is still questionable. An attempt to represent the approximate timetable of the rule of the princes of Syunik as well as their wives belonging to the prince dynasties has been made.

Key words: Syunik, Prince dynasty, the Syuni, Stepannos Orbelyan, Years of ruling, the 6th-7th centuries.

ՏՈՒՆԴԱՐՁԻ ՆՈՐՄ՝ ԲԱԶՄԱԹԻՎ ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐՈՎ

Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարների 2020 թվականի նոյեմբերի 9-ի համատեղ հայտարարության 7-րդ կետի համաձայն՝ ներքին տեղահանված անձինք և փախստականները վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո:

Չնայած կողմերը հայտարարության համաձայնեցման պահին «Լեռնային Ղարաբաղի» տակ նկատի են ունեցել որպես վարչաքաղաքական և հարակից շրջաններից առանձնացված միավոր կամ որպես նախկին ինքնավար մարզի տարածքով կամ էլ նրա մի մասով առանձնացված միավոր, բայց Ադրբեջանի նախագահը պարբերաբար հայտարարում է, որ չկա «Լեռնային Ղարաբաղի» հասկացություն կամ հիմնահարց և դա անցյալի գիրկն է անցել:

Հողվածում բացահայտվում է հայտարարության 7-րդ կետում օգտագործված բոլոր եզրույթների էությունը և միջազգային իրավունքի դիրքերից պարզաբանվում, թե ՀՀ և ԱՀ անվտանգության տեսակետից ի՞նչ խտրեր կան թաքնված այդ նորմի տակ, ո՞վ, ե՞րբ և ինչպե՞ս պետք է կատարի խնդրահարույց իրավական նորմի պահանջները ու դրանք ի՞նչ հետևանքներ կունենան իրենց բնակավայրերը կորցրած արցախահայության համար:

Բանալի բառեր՝ միջազգային պայմանագիր, Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ, փախստականներ, ներքին տեղահանված անձինք, ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակ, ինքնավար մարզ, շփման գիծ:

Բեռլինի վեհաժողովում (1878թ.) Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Գորչակովը վետո դրեց Թուրքահայաստանի ինքնավարության ծրագիրը կոնգրեսի օրակարգ ընդգրկելու վրա՝ պատճառաբանելով, թե հայերն անկախություն չեն ուզում: Մկրտիչ Խրիմյանի այն հարցին, թե ինչու 16-րդ հոդվածը դարձավ 61, Ռուսաստանի անունից Սան Ստեփանոյի պայմանագիրը ստորագրած կոմս Իգնատևը պատասխանել է, որ, - Հայրի՛կ, 16-ը գրվել է ռուսների, այլ ոչ թե հայերի համար: Անցավ 142 տարի:

Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարների 2020 թվականի նոյեմբերի 9-ի համատեղ հայտարարության (այսուհետ՝ Հայտարարություն) 7-րդ կետի համաձայն՝ ներքին տեղահանված անձինք և փախստականները վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո¹:

Սկզբունքորեն գեղեցիկ է հնչում այս նորմը, բայց ո՞ւմ համար է գրվել և ինչպե՞ս պետք է աշխատի այն, ՀՀ և ԱՀ անվտանգության տեսակետից, ի՞նչ խտրեր

¹ Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների 2020թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունը. azatutyun.am (a) 30940162:

կան թաքնված վերաբերման այս նորմի տակ, ո՞վ, ե՞րբ և ինչպե՞ս պետք է կատարի իրավական նորմի պահանջները ու դրանք ի՞նչ հետևանքներ կունենան իրենց բնակավայրերը կորցրած արցախահայության համար:

Նախ, նշենք, որ «Միջազգային պայմանագրերի մասին» Վիեննայի կոնվենցիայի² և Հայաստանի Հանրապետության «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի³ համաձայն՝ պետությունների միջև ցանկացած գրավոր համաձայնություն, որը ձևակերպվել է պայմանագրի, համաձայնագրի, կոնվենցիայի, հուշագրի, արձանագրության, նոտաների փոխանակման կամ միջազգային պրակտիկայում ընդունված այլ անվանմամբ փաստաթղթի տեսքով, միջազգային պայմանագիր է համարվում: Հայտարարության իրավական նորմերը ոչ թե ներպետական, այլ միջազգային իրավունքից բխող նորմեր են, որոնց կարգավորման առարկան միջպետական և այլ միջազգային հարաբերություններ են: Ուստի հայ ժողովրդի վզին փաթաթված այդ աղետալի Համաձայնությունը միջազգային պայմանագիր պետք է համարել: Ինչևէ:

7-րդ կետում կիրառված՝ «Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ», «ներքին տեղահանված անձինք», «փախստականներ» և «ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակ» հասկացություններից ոչ մեկի սահմանումը Հայտարարության մեջ չի տրված: Դրանցից վիճահարույցը, այսպես ասած՝ քաղաքական և իրավական գլուխկոտրուկը «Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ» եզրույթն է: Ի՞նչ պետք է հասկանալ դրա տակ և ի՞նչ են նկատի ունեցել Հայտարարությունը ստորագրողները:

Դիմենք պատմությանը: 1813 թվականին պատմական Արցախի տարածքը կցվեց ցարական Ռուսաստանին, որի տիրապետության առաջին վեց տասնամյակների ընթացքում կայսրության տարածքում մի շարք վարչատարածքային փոփոխություններ կատարվեցին: Այսպես, Շուշիի խանությունը վերացնելուց հետո (1822թ.), նրա տարածքի վրա ստեղծվեց նոր վարչական միավոր՝ «Ղարաբաղի մարզ» անվանումով, որտեղ մտցվեց ռուսական կառավարում: Ղարաբաղը, սկզբում որպես մարզի, իսկ այնուհետև՝ Շուշիի գավառի կարգավիճակով, մինչև 1846թ. մտնում էր Կասպիական մարզի, 1846թ. Շամախու, 1859թ. Բաքվի, 1867թ. Ելիզավետպոլի (Գանձակ) նահանգների կազմի մեջ: Պատմական Արցախի տարածքը մինչև 1869թ. հիմնականում մտնում էր Շուշիի գավառի և, մասամբ՝ Ջանգեզուրի գավառի մեջ: 1869թ. Շուշիի գավառը մասնատվեց և նրա հյուսիս-արևելյան մասում ստեղծվեց նոր՝ Ջիվանշիրի գավառը, որի մեջ ներառվեցին Ջրաբերդի (Մարտակերտի շրջանի մի մասը) և Գյուլիստանի (Շահումյանի շրջանը) մելիքությունների տարածքները, ինչպես նաև Պարտավի և Թարթառի թաթարաբնակ շրջանները: 1873թ. Շուշիի գավառը վերստին մասնատվեց և նրա հարավային մասում ստեղծվեց նոր՝ Ջաբրայիլի գավառը՝ ներառելով իր մեջ Դիզակի (Հաղրութի շրջանի մի մասը) մելիքության տարածքը և Կարյազինոյի (Ֆիզուլիի) ու Բայլականի թաթարաբնակ շրջանները: Փաստորեն պատմական Արցախի տարածքը բաժանվեց երեք գավառների միջև և Կայսրության փլուզման նախօրյակին, Շուշիի գավառի մեջ մտել են միայն Կարանդայի մելիքության (ներկայիս Արցախի Հանրապետության Մարտունու և Շուշիի շրջանները), Խաչենի մելիքության (Ասկերանի շրջանը և Մարտակերտի շրջանի մի մասը), ինչպես նաև թաթարաբնակ Աղջաբեդիի շրջանը:

1917 թվականի փետրվարյան հեղաշրջման հետևանքով ցարական

² «Միջազգային պայմանագրերի մասին» Վիեննայի կոնվենցիան:

³ ՀՀ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքը. (ընդունվել է 2018թ. Մարտի 23-ին):

ինքնակալությունը տապալվեց և դեպքերն Անդրկովկասում անկանխատեսելի կերպով փոփոխվեցին: Ավելի քան մեկ տարի հետո ստեղծվեցին վրացական, ադրբեջանական և հայկական հանրապետությունները: Պահը չափազանց լուրջ էր, ուստի հայկական Ղարաբաղի քաղաքական ուժերի ղեկավարները կարողացան իրենց ձեռքը վերցնել երկրամասի կառավարման վարչական ղեկը:

Ղարաբաղի հայության առաջին համագումարը, որը տեղի ունեցավ 1918 թվականի հուլիսի 22-ին, Շուշի քաղաքում, Ղարաբաղը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց Ազգային խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած կառավարություն՝ դրանով իսկ հռչակելով իր «անկախության իրավունքը»: Համագումարի աշխատանքներին մասնակցել են Դիզակի, Վարանդայի, Խաչենի և Գյումրիստանի (Շահումյանի շրջանը) գյուղական հասարակությունների կողմից ընտրված պատգամավորները: Ասել է թե՛ համագումարի ընդունած որոշումները տարածվել են նաև Գյումրիստանի վրա:

«Լեռնային Ղարաբաղ» եզրույթին առաջին անգամ հանդիպում ենք Ղարաբաղի հայության 7-րդ համագումարի նյութերում, որտեղ 1919 թվականի օգոստոսի 22-ին ընդունվեց մի փաստաթուղթ, որը կրում էր «Լեռնային Ղարաբաղի հայության ժամանակավոր համաձայնությունը Ադրբեջանի կառավարության հետ» հորջորջումը⁴: Փաստաթուղթը, կազմված լինելով 26 կետից, ստորագրել են համագումարից լիազորված 15 պատգամավորներ և այն վավերացվել է Ադրբեջանի կառավարության ներկայացուցչի կողմից: Փաստաթղթի 2-րդ կետից նկատելի է, որ «Լեռնային Ղարաբաղ» միավորի տակ նկատի է առնվում Շուշիի, Ջաբրայիլի և Ջիվանշիրի գավառների լեռնային մասը (Դիզակը, Վարանդան, Խաչենը և Ջրաբերդը), որտեղ բնակիչները հայեր են, ժամանակավորապես գտնվում է Ադրբեջանի Հանրապետության սահմաններում: Հարկադրաբար նման քայլ կատարելով, հայերը հույս ունեին՝ Ղարաբաղի լեռնային մասի կարգավիճակի հարցը լուծել Փարիզի խաղաղության վեհաժողովում: Հետագա բոլոր փաստաթղթերում, այդ թվում՝ արցախահայության 8-10-րդ համագումարներում, «Լեռնային Ղարաբաղ» եզրույթը կյանքի իրավունք ստացավ:

Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատումից հետո (1920թ. մայիս), երբ ստեղծվեցին գավառային հեղկոմներ, Ջրաբերդի շրջանը մտավ Ջիվանշիրի գավառի մեջ, Դիզակին՝ Ջաբրայիլի, իսկ Խաչենն ու Վարանդան մնացին Շուշիի գավառում: Իսկ երբ 1920թ. հունիսին Լեռնային Ղարաբաղի հեղկոմը միավորվեց Դաշտային Ղարաբաղի հեղկոմի հետ, առաջինը, մինչև 1923թ., որպես վարչական ինքնուրույն և միասնական միավոր, դադարեց գոյություն ունենալ: Ավելորդ չէ նշել, որ Զանգեզուրը Հայաստանին անցնելու կապակցությամբ, նրա արևելյան մասում Ադրբեջանը 1920թ. ստեղծեց Կուբաթլի գավառը, որի մեջ մտնում էին նաև Ղարաղջլաղ և շրջակա հայկական գյուղերը:

Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի ու քեմալական Թուրքիայի սիրախաղերի արդյունքը եղավ միջազգային իրավունքի տեսանկյունից իրավական ակտի ուժ չունեցող Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության կողակալան բյուրոյի 1921 թվականի հուլիսի 5-ի կուսակցական որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի սահմաններում թողնելու մասին՝ նրան տրամադրելով մարզային ինքնավարություն: Արցախահայության համար ստորագուցիչ այդ որոշմամբ Ադրբեջանը պետք է որոշեր մարզի սահմանները և

⁴ Հարություն Թումյան, *դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1918-1923թթ.*, Երևան, 2014թ. էջ 95:

ինքնավարության շրջանակները: Սակայն, Ադրբեջանը չէր շտապում: Երկար ձգձգումներից հետո Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն 1923թ. հուլիսի 7-ին ընդունեց դեկրետ՝ Լեռնային Ղարաբաղի հայկական մասից ինքնավար մարզ կազմավորելու մասին, որին տրվեց «Ինքնավար մարզ Լեռնային Ղարաբաղի» (ԻՄԼՂ) անվանումը, և այն կիրառվեց մինչև ԽՍՀՄ 1936թ. Սահմանադրության ընդունումը, որից հետո երկրամասը վերանվանվեց «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ» (ԼՂԻՄ): 1923թ. օգոստոսի 15-ին մարզի տարածքում ստեղծվեցին 4 շրջաններ՝ Զրաբերդի (Մարտակերտ գյուղկենտրոնով), Խաչենի (Խանքենի գյուղկենտրոնով), Վարանդայի (Ճարտար գյուղկենտրոնով) և Դիզակի (Հադրութ գյուղկենտրոնով): Մեկ տարի հետո ստեղծվեց Շուշիի շրջանը (Շուշիի քաղաքային կենտրոնով): Հետագա տարիներին Զրաբերդի շրջանը վերանվանվեց Մարտակերտի, Վարանդային՝ Մարտունու, Դիզակին՝ Հադրութի, Խաչենին՝ Ստեփանակերտի⁵: Վերջինս 1978թ. վերանվանվեց Ասկերանի շրջանի:

Ինքնավար մարզի սահմանները վերջնականապես ճշտվեցին միայն 1925 թվականին: Իսկ ինչպե՞ս որոշեցին: Ի կատարումն Ադրբեջանի Կենտրոնական Կոմիտեի 7-ի որոշման՝ Ինքնավար մարզի կարգավիճակի վերաբերյալ Խորհրդային տեսակի առաջին փաստաթուղթն Ադրբեջանի կողմից մարզին «շնորհված» Սահմանադրությունն էր, որը լույս տեսավ կուսակցական բարձրագույն մարմնի «Կոմունիստ» հայերեն թերթի 1924 թվականի հուլիսի 6-ի համարում: Սահմանադրության համաձայն, բացի Շուշի և Ստեփանակերտ քաղաքներից, ԼՂԻՄ կազմի մեջ մտնում էին Շուշիի գավառից՝ 115, Զիվանշիրի գավառից՝ 52, Կարյազինոյի գավառից՝ 30 գյուղ և Կուբաթլիի գավառից՝ Ղարադշլաղ գյուղը (Բերդաձորը)՝ շրջակա գյուղերով: Հետագայում մարզի արտաքին սահմաններն այնպես որոշեցին, որ 11,5 հազար քառ. կմ տարածք ունեցող պատմական Արցախի նահանգից թողնվեց 4,4 հազար քառ. կմ-ը: Մարզից կտրեցին դաշտային բերրի հողերը, Արցախի հյուսիսային շրջանները՝ շփման ոչ մի կետ չթողնելով Մայր Հայրենիքի հետ:

Ինքնավար մարզը ԽՍՀՄ ժողովուրդների սոցիալիստական ազգային պետականության ձևերից մեկն էր: Պետական շինարարության վարչաքաղաքական ինքնավարության վերին օղակն ինքնավար հանրապետությունն էր, իսկ ստորին օղակը՝ ինքնավար օկրուգը: Մինչև Խորհրդային Միության փլուզումը Լեռնային Ղարաբաղն ինքնավար մարզի կարգավիճակով գտնվում էր Խորհրդային Ադրբեջանի կազմում: Սակայն, Արցախի հայերը չեն հաշտվել այդ կարգավիճակի հետ և տասնյակ տարիներ մշտապես պայքարել են Մայր Հայրենիքի հետ վերամիավորվելու համար:

Երբ Խորհրդային Միության մայրամուտին. Ադրբեջանը 1991թ. օգոստոսի 30-ին հայտարարեց ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու մասին, Արցախին այլ բան չէր մնում բացի այն, քան հրաժեշտ տալ Խորհրդային Ադրբեջանին, ուստի զգալով պահի լրջությունը և հիմք ընդունելով ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից 1990թ. ապրիլի 3-ին ընդունված՝ ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու մասին օրենքի պահանջները, երկրամասի ժողովուրդը դիմեց միակ ճիշտ և իրավական տեսանկյունից անխցելի քայլին. ժողովրդական պատգամավորների ԼՂ մարզային և Շահումյանի շրջանային համատեղ նստաշրջանը 1991թ. սեպտեմբերի 2-ին ընդունեց Հռչակագիր՝ ինքնավար մարզի և հարակից Շահումյանի շրջանի սահմաններով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հռչակելու մասին: Սակայն Ադրբեջանը չհանդուրժեց դա և նրա Գերագույն խորհուրդը 26.11.91թ. ընդունեց օրենք՝

⁵ «Путеводитель по АКАО, Баку. 1969 стр. 31»:

«Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը լուծարելու, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ կազմավորելու մասին» Ադրբեջանի Կենսագործկոմի 1923թ. հուլիսի 7-ի դեկրետը և «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին» 1981թ. հունիսի 16-ի Ադր. ԽՍՀ օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին: Դա այն դեպքում, երբ ԼՂԻՄ-ի մասին օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «ինքնավար մարզի տարածքը չի կարող փոփոխվել առանց ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի խորհրդի համաձայնության»:

Վերոնշյալ հակասահմանադրական օրենքի համաձայն՝ Ստեփանակերտ, Մարտակերտ և Մարտունի քաղաքները վերանվանվեցին համապատասխանաբար Խանքենդի, Ադդարա և Խոջավանդ թրքահունչ անուններով: Նախկին ինքնավար մարզի տարածքը մտցվեց Ադդարայի (Մարտակերտի շրջանը), Խոջավանդի (Մարտունու և Հադրութի շրջանները), Խոջալուի (Ասկերանի շրջանը) և Շուշիի շրջանների մեջ, իսկ Ստեփանակերտը (Խանքենդին) համարվեց հանրապետական ենթակայության քաղաք: Ինքնավար մարզը լուծարելու մասին օրենքը չնայած ճանաչվեց հակասահմանադրական և ԽՍՀՄ սահմանադրական վերահսկողության կոմիտեի 1991թ. նոյեմբերի 27-ի որոշմամբ վերացվեց, սակայն այդ որոշումն Ադրբեջանի համար որևէ նշանակություն չունեցավ, քանզի Խորհրդային կայսրությունն արդեն հոգևարքի մեջ էր: Հետագայում բոլոր նորմատիվ իրավական ակտերում, այդ թվում՝ երկրի հիմնական օրենքում, Ադրբեջանը հարաժարվեց օգտագործել «Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ» վարչատարածքային հասկացությունը: Բացառություն է կազմում Ադրբեջանի՝ «Ռազմական դոկտրինայի մասին» օրենքը (2010թ.), որում ամրագրված է, որ իբր չՀՀ-ն «բռնագավթել է Լեռնային Ղարաբաղը և նրա հարակից շրջանները»:

Արցախի Հանրապետությունը պատվով դուրս եկավ առաջին պատերազմից, որի արդյունքում նրա տարածքը շարժնթաց ապրեց և այն ամրագրվեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով, ըստ որի՝ Հանրապետության տարածքը ներառում է Ստեփանակերտ քաղաքը, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Շուշիի, Շահումյանի և Քաշաթաղի շրջանները: Նույն օրենքի համաձայն՝ արտաքին սահմանների առումով, Մարտակերտի և Մարտունու շրջանները սահմանակցում են Ադրբեջանի Հանրապետությանը, Հադրութի շրջանը՝ Ադրբեջանի Հանրապետությանը և Արաքս գետով՝ Իրանի Իսլամական Հանրապետությանը, Քաշաթաղի շրջանը՝ Իրանի Իսլամական Հանրապետությանը և Հայաստանի Հանրապետությանը, Շահումյանի շրջանը՝ Ադրբեջանի Հանրապետությանը և Հայաստանի Հանրապետությանը: Եթե նախկինում ԼՂՀ շուրջ տարածքներին տրվում էր ազատագրված կամ գրավյալ տարածքներ, անվտանգության գոտի կամ որևէ այլ ձևակերպում, ապա հետագայում դրանք ԱՀ տարածքի անբաժանելի մասը կազմեցին՝ ամրագրվելով երկրի Հիմնական օրենքով: Այդպիսի տարածքով (12.000 քառ.կմ) 2020թ. սեպտեմբերի 27-ին պատերազմի մեջ մտանք Ադրբեջանի, Թուրքիայի և նրանց աջակցող միջազգային ահաբեկչության հրոսակախմբերի հետ, որի աղետաբեր հետևանքներն ամրագրվեցին Հայտարարության 9 կետերում:

Ինչպես նկատելի է, Հայտարարության մեջ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը չի շոշափվում, բայց նրա 1-ին կետում՝ «Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում...», 3-րդ կետում՝ «Լեռնային Ղարաբաղում շփման գծի երկայնքով...», 6-րդ կետում՝ «Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ...» (միակ մխիթարանքը, որտեղ «Լեռնային Ղարաբաղ» և «Հայաստան» անվանումները միասին

հիշատակվել են) և 7-րդ կետում՝ «Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ» նշված բառակապակցությունները, մեր կարծիքով, վկայում են, որ Կողմերը Հայտարարության համաձայնեցման պահին «Լեռնային Ղարաբաղի» տակ նկատի են ունեցել որպես վարչաքաղաքական և հարակից շրջաններից առանձնացված միավոր կամ որպես նախկին ինքնավար մարզի տարածքով կամ էլ նրա մի մասով առանձնացված միավոր:

Բայց հետագա դեպքերը ցույց են տալիս, որ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղը դիտարկում է որպես մի սովորական աշխարհագրական տարածք: Ինչպես պատերազմից հետո, այնպես էլ հիմա Ադրբեջանի նախագահը պարբերաբար հայտարարում է, որ չկա Լեռնային Ղարաբաղի հասկացություն կամ հիմնահարց, դա անցյալի գիրկն է գնացել և հայերը պետք է ինտեգրվեն Ադրբեջանին որպես այդ պետության քաղաքացիներ: Ըստ երևույթին, Ալիևը նոր բան չի ասում, քանի որ Ադրբեջանի մայր օրենքում Լեռնային Ղարաբաղի մասին որևէ խոսք չկա և չի էլ կարող լինել, որովհետև վերջինս ավելի քան 30 տարի առաջ հրաժեշտ է տվել Ադրբեջանին: Ադրբեջանի բռնապետը, հավատարիմ մնալով իր նախկին հայացքներին՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 76-րդ նստաշրջանում կոչ արեց անդամ երկրներին չօգտագործել Լեռնային Ղարաբաղ անվանումը՝ վերստին կրկնելով, թե հակամարտությունը մնացել է անցյալում: Ըստ Ադրբեջանի նախագահի՝ Բաքուն 30-ամյա հակամարտությունը լուծել է ռազմաքաղաքական միջոցներով, վերականգնել իր տարածքային ամբողջականությունը: Ադրբեջանն այլևս չունի Լեռնային Ղարաբաղ անունով վարչատարածքային միավոր, ահա Ալիևի բարբաջանքը: Ինչպես ասում են արջը յոթ երգ գիտե, յոթն էլ տանձի մասին:

Լեռնային Ղարաբաղի «հարակից շրջաններ» եզրույթին առաջին անգամ հանդիպում ենք Բաքվում 1990թ. հունվարի 13-ին հայ բնակչության ջարդերի կապակցությամբ ընդունված փաստաթղթում, երբ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության 15.01.1990թ. որոշմամբ արտակարգ դրություն հայտարարվեց «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ու նրա հարակից շրջանների, Հայկական ԽՍՀ Գորիսի շրջանի տարածքում»: Եթե նայենք նախկին ԼՂԻՄ-ի քարտեզին, ապա պարզ է դառնում, որ Աղդամի, Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի, Լաչինի, Քելբաջարի, Շահումյանի, Պարտավի և Միր Բաշիրի շրջաններն ինքնավար մարզի տարածքին հարակից են: Բայց Արցախի Հանրապետության արդի աշխարհագրական դիրքը բոլորովին այլ տեսք ունի, քանի որ վերջին պատերազմը շատ ծանր հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար:

Համաձայն ՀՀ Կառավարության 2020թ. նոյեմբերի 21-ի N 1820-Լ որոշման՝ թշնամու վերահսկողության տակ են գտնվում ԼՂՀ Քաշաթաղի, Շահումյանի և Հադրութի շրջաններն ամբողջությամբ ու Մարտակերտի, Շուշիի, Ասկերանի և Մարտունու շրջանների մի շարք բնակավայրեր (ընդամենը՝ 143 բնակավայր): Այդ բնակավայրերից 41-ը գտնվել են նախկին ԼՂԻՄ-ի տարածքում: Ներկա պայմաններում «շփման գիծ» եզրույթը կողմերի համար բոլորովին նոր իմաստ և բովանդակություն է ստացել: Եթե մինչև պատերազմը Ադրբեջանում «շփման գծին» հաճախ տալիս էին «օկուպացիայի գիծ» անվանումը, դրանով իսկ ակնարկելով Հայաստանի Հանրապետության կողմից Ադրբեջանի բռնագրաված հողերը, իսկ հայկական կողմի համար «շփման գիծը» Արցախի և Ադրբեջանի միջև պետական սահմանի դեր էր կատարում: Այժմ, իրերի վիճակը (ստատուս քվո) փոխվելու հետևանքով, նախկին շփման գծից համարյա ոչինչ չի մնացել: Նոր շփման գծից այն կողմ են մնացել ոչ միայն այն տարածքները, որոնք մաս չէին կազմում ԼՂԻՄ-ին, այլև

ինքնավար մարզի բուն հայաբնակ տարածքների մի մեծ մասը:

Հայտարարության 7-րդ կետում, առանց հասցեական, օգտագործված են նաև «ներքին տեղահանված անձինք» և «փախստականներ» եզրույթները: Ընդունված է փախստականներ անվանել այն անձանց, ովքեր արտակարգ հանգամանքների ուժով լքել են իրենց երկիրը, որտեղ մշտապես բնակվել են:

«Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիան ընդունվել է 1951 թվականի հուլիսի 28-ին՝ Փախստականների կարգավիճակի և ապարտեիդի հարցերով լիազորված մասնակիցների կոնֆերանսում՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1950 թ. դեկտեմբերի 14-ի թիվ 429 (Y) որոշմամբ: Ուժի մեջ է մտել 1954 թվականի ապրիլի 22-ին⁶:

2003թ. նոյեմբերի 26-ին ընդունված «Փախստականների մասին» օրենքի համաձայն՝ փախստական է համարվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձը, որն ըստ ռասայական, ազգային, կրոնական, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական համոզմունքների համար հետապնդումների գոն դառնալու հիմնավոր երկյուղի պատճառով գտնվում է իր քաղաքացիական պատկանելության պետությունից դուրս և չի կարող կամ չի կամենում օգտվել այդ պետության պաշտպանությունից, կամ, չունենալով որևէ պետության քաղաքացիություն և գտնվելով իր նախկին հիմնական բնակության վայրի պետությունից դուրս, չի կարող կամ չի կամենում վերադառնալ այդ պետություն, կամ եթե անձը միաժամանակ մի քանի պետության քաղաքացի է, սակայն երկյուղ ունի, որ չի կարող օգտվել այդ պետություններից որևէ մեկի պաշտպանությունից: Օրենքը փախստականի կարգավիճակ հայցող է դիտում այն անձին, ով դիմում է կամ մտադրություն ունի դիմելու լիազորված մարմնին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստանալու համար: Փախստականների վերաբերյալ նույն բնորոշումը տրված է նաև «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում: Գույքային հարաբերությունների բնագավառում փախստականների մասին կոնվենցիան ստորագրած պետությունները փախստականների համար պետք է առավել նպաստավոր պայմաններ ստեղծեն:

Փախստականների հիմնահարցը սերտորեն կապված է ներգաղթյալների (միգրանտ) հիմնահարցի հետ: Փաստորեն փախստականը դա նույն ներգաղթյալն է, քանի որ երկուսն էլ մի տեղից տեղափոխվում են մեկ այլ տեղ. Մակայն, ներգաղթյալը, ի տարբերություն փախստականի, կամավոր է թողնում իր երկիրը և տեղափոխվում այլ վայր:

Կենցաղային առումով, փախստականների թվին հաճախ դասվում են նաև ապաստան խնդրող ներքին տեղահանված անձինք (որոնք դեռևս փախստականի կարգավիճակ չեն ստացել) և ընդհանրապես բոլոր այն անձինք, որոնք զինված հակամարտության հետևանքով թողել են իրենց մշտական բնակության վայրը, բայց մնացել իրենց քաղաքացիական պատկանելության երկրում՝ օգտվելով նրա պաշտպանությունից (ներքին փախստականներ): Միջազգային իրավական փաստաթղթերում հարկադիր վերբնակիչները, որպես կանոն, նշվում են «տեղահանված անձինք» եզրույթով: Այդ հասկացությանը հանդիպում ենք ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի բազմաթիվ բանաձևերում, որոնցում նշված է, որ տեղահանված անձանց վիճակը նման է փախստականների վիճակին, քանի որ այն իրադրությունը, որի մեջ հայտնվել են նրանք, առաջ է եկել «մարդկանց կողմից

⁶ «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիան (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1950թ. Դեկտեմբերի 14-ի թ. 429 որոշմամբ):

ստեղծած տարերային դժբախտությունների» պատճառով: 1975 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովը հաստատեց Հնդկաչինից տեղափոխված անձանց հումանիտար օգնության ցուցաբերումը, դրանով իսկ փաստելով տեղահանված անձանց հասկացության միջազգային ասպեկտը:

Արդի աշխարհում փախստականների հարցերով մի շարք միջազգային կազմակերպություններ կան: Դրանցից մեկն էլ ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակն է, որի Գերագույն հանձնակատարն ընտրվում է ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից երեք տարի ժամկետով՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ներկայացմամբ: Գերագույն հանձնակատարն ապահովում է փախստականների միջազգային պաշտպանությունը՝ աջակցելով նրանց՝ նոր երկրներ կամավոր ներգաղթման և ուժացման գործընթացներին:

Իսկ ի՞նչ գործընթացներ են սպասվում վիրավոր Արցախի Հանրապետության ապագայի շուրջ: Ակնհայտ է, որ ադրբեջանական կողմի վերահսկողության տակ են անցել ոչ միայն բանակցությունների առարկա 5+2 շրջանները՝ Ակնա (Ադդամ), Վարանդա (Ֆիզուլի), Ջրական (Ջաբրայիլ), Կովսական (Ջանգելան), Սանասար (Կուբաթլու), Քարվաճառ (Քելբաջար), Բերձոր (Լաչին), այլև Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) կազմում եղած Հադրութի շրջանը, Շուշի քաղաքն ու ևս մի քանի տասնյակ բնակավայրեր, որոնք պատերազմի ընթացքում գրավվել էին հակառակորդի կողմից: Ըստ բաց աղբյուրների, այդ տարածքներում բնակվում էր ավելի քան 35 000 քաղաքացի: Նկատի ունենալով, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից թուրք-ադրբեյնների թիրախավորման տակ էին ոչ միայն շփման գծին մոտ, այլև խորը թիկունքում՝ մինչև 90-100 կմ խորության վրա գտնվող բնակավայրերի խաղաղ բնակչությունն ու քաղաքացիական օբյեկտները, ուստի հրթիռակոծվող Արցախից զանգվածաբար դուրս բերվեցին երեխաները, տարեցներն ու կանայք:

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության տվյալների համաձայն՝ պատերազմի ընթացքում Արցախից տեղահանվածների թիվը 93 300-ից ավելի էր: Պատերազմի ավարտից հետո նրանց մեծ մասը վերադարձել է Արցախի Հանրապետություն:

«Փախստականների կարգավիճակի վերաբերյալ» Ժնևի կոնվենցիայի 1-ին հոդվածի «Ե» կետով սահմանվում է, որ «Մույն Կոնվենցիայի դրույթները չեն կիրառվում այն անձի նկատմամբ, որն այն երկրի իրավասու մարմինների կողմից, որտեղ նա ունեցել է բնակության վայր, ճանաչվել է այդ երկրի քաղաքացիությունն ունենալու հետ կապված իրավունքներ ու պարտականություններ ունեցող»:

1999 թվականի փետրվարի 24-ին Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության միջև «անձնագրային համակարգի կազմակերպման» մասին համաձայնագրով Հայաստանը պարտավորվեց Արցախի Հանրապետության բնակիչներին որոշակի պայմաններում տրամադրել անձնագրեր: Համաձայնագրի առաջին հոդվածով նախատեսվում է. «Կողմերը համաձայնում են, որ իրենց քաղաքացիները կողմերից յուրաքանչյուրի տարածքում ունենան ազատ տեղաշարժվելու եւ բնակվելու իրավունք»: Նման պայմաններում, Արցախից Հայաստան տեղահանվածները չեն ստանում ապաստանյալի կամ փախստականի կարգավիճակ, քանի որ չեն բավարարում օրենքը կարգավորող վավերապայմաններին:

Ամենացավոտ հարցն այն է, թե ե՞րբ կարող են տեղահանված արցախահայերը վերադառնալ իրենց պապենական բնակավայրերը: Այդ տեսանկյունից ադրբեջանցի տեղահանվածների համար ոչ մի խոչընդոտ չկա, ցանկացած ժամանակ, Արցախի

Հանրապետությունից Ադրբեջանին անցած, այսպես ասած՝ անվտանգության գոտի համարվող տարածքներում բնակվելու համար: Այլ է դրությունն արցախահայերի դեպքում, որտեղ հարցի դժվարությունը կայանում է նրանում, որ նախկին ԼՂԻՄ-ի տարածքի մի մասը գտնվում է Ադրբեջանի վերահսկողության ներքո: Այդ տարածքների համայնքներում այժմ հանգրվանել է հակառակորդը, ոմանց տները հիմնահատակ ավերվել են, ոմանք էլ, թշնամուց մի քանի մետր հեռավորության վրա ապրելը սպառնալիք համարելով, հրաժարվում են վերադառնալ ու գերադասում են մյուսների պես «օդից կախված» մնալ՝ առանց կարգավիճակի ու որևէ տեսլականի: Իսկ Հայտարարության 1-ին կետը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը կանգ են առնում 2020թ. նոյեմբերի 10-ի դրությամբ իրենց զբաղեցրած դիրքերի վրա: Հարց է ծագում՝ Արցախը լքած ադրբեջանցի փախստականները նույնպես իրավունք ունեն՝ վերադառնալ իրենց նախկին բնակության վայրեր: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մ. Զախարովան, 2021թ. փետրվարի 11-ի ճեպագրույցում անդրադառնալով Լեռնային Ղարաբաղ փախստականների վերադարձի խնդրին, հայտարարել է, որ եռակողմ Հայտարարության 7-րդ կետը տարածվում է բոլորի վրա, ովքեր ստիպված էին հեռանալ իրենց նախկին բնակության վայրերից: Իհարկե, այս պահին չկան կարճաժամկետ լուծումներ, որ անմիջականորեն կլուծեն Արցախից տեղահանվածների՝ իրենց բնակավայրեր վերադարձի հարցը: Չնայած ռուսական կողմից հայերի եւ ադրբեջանցիների համատեղ բնակության հեռանկարը դիտարկող քաղաքական հայտարարություններ են արվում, դրանք իրատեսական համարվել չեն կարող:

Ի՞նչ խոսք կարող է լինել համատեղ բնակության մասին, երբ Ադրբեջանի ղեկավարն իր պաշտոնական մի ելույթի ժամանակ հայտարարել է, թե՛ հաղթանակի պատճառներից մեկն այն է, որ իրենց երիտասարդ սերնդին դաստիարակել են հայատյացության ոգով: Էլ չենք ասում, որ բռնագրավված տարածքներում պետական մակարդակով հայատյաց քաղաքականություն է տարվում՝ սկսած մշակութային ժառանգության ոչնչացումից, պատմության աղավաղումից եւ կեղծումից, ավարտած ատելության խոսքի քարոզով եւ հայերի դեմ բռնի հանցագործություններ կատարած անձանց հերոսացմամբ:

Եթե Հայտարարության առաջին 6 կետերը կատարված են, իսկ վերջին 8 և 9-րդ կետերը գտնվում են կատարման ընթացքում, ապա, այսօրվա դրությամբ 7-րդ կետը փաստորեն գտնվում է անշարժության (ստատիկ) վիճակում: Սփոփանք պետք է համարել միայն այն, որ Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատար Ֆիլիպո Գրանդիի հետ հունիսի 28-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ քննարկել է Լեռնային Ղարաբաղ փախստականների վերադարձի հարցը:

Անշուշտ, 44 օրյա պատերազմի հետևանքները շատ ծանր են: Միանգամայն տեղին է մեջ բերել ազգագրագետ Հրանուշ Խառատյանի խոսքերն առ այն, որ հանձնված տարածքներից շատերի բնակիչներն արդեն երկրորդ անգամ են լքում իրենց բնակավայրերը. «Նոր Մեյսուլան, Նոր Մարաղա, Նոր Մանաշիդ, Նոր Գետաշեն» այսպիսի մի քանի տասնյակ բնակավայրեր, որոնց բնակիչները մի քանի շերտի փախստականներ են: Նրանք փախստական են ԽՍՀՄ-ի շրջանից՝ դեռևս «Գոլց» օպերացիայից, նրանք Ղարաբաղի առաջին պատերազմի փախստականներ են: Շատ դժվար է ամեն անգամ նոր վայրում կյանք դնելը, կյանքը շարունակելը, այն դեպքում, երբ այս ընթացքում շատ ընտանիքներ նաև զոհեր են ունեցել: Այս մարդիկ ամեն

կողմից հարված են ստացել՝ պատերազմի, եղած որոշումների, ցավալի լուծումների հետևանքով»:

Ամեն դեպքում՝ պատերազմն ավարտվել է հրադադարի կնքմամբ և ոչ հաշտության պայմանագրով, ուստի տեղահանված արցախահայության հարցի լուծումը քաղաքական ենթաշերտ ունի: Միայն համապարփակ հաշտության պայմանագրում են ամրագրվում բոլոր լուծումները և փոխըմբռնելի տարբերակները: Այդ առումով հայկական դիվանագիտությունը կանգնել է նոր մարտահրավերների առաջ: Պետք մի կողմ թողնենք պատրանքները, հարցին նայենք ոչ թե Ստեփանակերտից կամ Երևանից, այլ մարդկային գոյության բարձունքներում տիրող ուժի դիրքերից, ձգտենք հասնել հնարավոր առավելագույնին (ոչ թե երազելի առավելագույնին):

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը Հայտարարության կողմ է հանդիսանում, ուստի նա՝ իր ստանձնած միջազգային բոլոր պարտավորություններով, միջազգային իրավական հարթակներում պետք է կոնկրետ քայլեր ձեռնարկի տեղահանված արցախահայության իրավունքների պաշտպանության համար, որպեսզի հազարավոր ունեզրկվածներ կարողանան վերադառնալ իրենց նախկին բնակության վայրերը, կամ ստանան համապատասխան փոխհատուցում՝ Հայրենիքի կորստի դիմաց:

Շատ ազգեր են պարտություն կրել և անհայտացել աշխարհի թատերաբեմից: Բայց կան ազգեր, որոնք կուլ չեն գնացել դառն իրականությանը և իրենց համառ ու քրտնաջան աշխատանքով բարձրացել են ընկած տեղից՝ վերափոխվելով իրենց պատմությանը ընթացքը: Դա, առաջին հերթին, վերաբերում է մեզ: Ինչքան էլ աղետալի լինեն հետևանքները, պետք չէ լավկանությամբ զբաղվենք, այլ պետք է հընթացս ոտքի կանգնենք, թափ տանք մեր վրայի փոշին և ժամանակի հետ քայլենք: Իսկ ժամանակն անցնում է ակնթարթի պես, աշխարհը փոխվում է մեր առջև, նոր իրողությունների մեջ ենք հայտնվել, նոր խաղացողներ են հանդես գալիս տարածաշրջանում, որոնք, Արցախի կարգավիճակի վերաբերյալ տարբեր մոտեցումներ ունեն, ուստի բանակցությունները երկարատև գործընթաց են ենթադրում և մենք պարտավոր ենք զարգացնել մեր տնտեսությունը, հզորացնել զինված ուժերը, վերացնել կոռուպցիան, արտագաղթը, հրաժարվել հոչակազրային հայտարարություններից և դասեր քաղել անցյալից:

Հապաղելու դեպքում՝ կհայտնվենք թուրքական պարկում կամ կվերանանք աշխարհի երեսից:

НОРМЫ ВОЗВРАЩЕНИЯ: С МНОГОЧИСЛЕННЫМИ ВОПРОСАМИ - ВЛАДИМИР ОВСЕПЯН - Согласно пункту N7 от 9 ноября 2020г совместного заявления руководителей Армении, России и Азербайджана беженцев и внутренне перемещенные лица возвращаются на территорию Нагорного Карабаха и прилегающие районы под контролем исполнителя по делам беженцев. С момента объявления соглашения стороны под "Нагорным Карабахом" имели ввиду административно - политическую единицу по отношению к соседним районам или как территорию прежней автономной области. Однако президент Азербайджана переодически объявляет, что нет понятия или вопроса "Нагорный Карабах" и что этот вопрос остался в прошлом. В статье раскрывается сущность всех терминов, использованных в объявлении 7 пункта. Из суждения международного права с точки зрения безопасности РА и НКР разъясняется: какие камни преткновения скрыты под этими нормами, кто? когда? как? должен исполнить

требования этой спорной юридически- правовой нормы и какие последствия они будут иметь для армян Нагорного Карабаха, покинувших свои жилые дома.

Ключевые слова: международный договор, территория Нагорного Карабаха, прилегающие районы, беженцы, внутренне перемещенные лица, автономная область, линия соприкосновения, канцелярия главного исполнителя по делам беженцев ООН.

THE NORM OF HOMECOMING -VLADIMIR HOVSEPYAN - Due to paragraph 7 of the joint statement of the leaders of Armenia, Russia and Azerbaijan on November 9, 2020, internally displaced persons and refugees return to the territory of Nagorno-Karabakh and adjacent areas under the supervision of the Office of the UN High Commissioner for Refugees.

Although at the time of the agreement, the parties referred to "Nagorno Karabakh" as a unit separated from the adjacent administrative-political regions or as a unit separated from the territory of the former autonomous region or part of it, the President of Azerbaijan regularly states that there is no concept or issue of "Nagorno Karabakh" and it is in the arms of the past.

The article reveals the essence of all the terms used in point 7 of the statement; from the position of international law it is clarified what gaps are hidden under the norm from the point of view of the security of the Republic of Armenia and Republic of Artsakh. Who, when and how must fulfill the requirements of the problematic legal norm and what are their consequences? What consequences will have the Armenians of Artsakh , who lost their homes.

Key words: international treaty, Nagorno-Karabakh and adjacent areas, refugees, internally displaced persons, the Office of the United Nations High Commissioner for Refugees, autonomous region, line of contact.

ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒՅԹՅՈՒՆԸ

Հողվածում դատական քննության հրապարակայնության սկզբունքի իրավական բնույթը և գործողության շրջանակները բացահայտվել են Արցախի Հանրապետության դատավարական իրավունքի բոլոր ճյուղերում՝ համալիր կերպով, պարզաբանվել է այդ սկզբունքի կարևոր նշանակությունը արդարադատության իրականացման գործում: Ընդգծվել է հրապարակայնության սկզբունքի կոնկրետ և սահմանադրաիրավական կարգավիճակը, հիմնավորվել, որ այդ սկզբունքն իրացվում ու դիմումիկ զարգացում է ապրում նորանկախ և ժողովրդավարական պետություն հանդիսացող Արցախի Հանրապետությունում:

Ցույց են տրվել տեսական և կիրառական բնույթի հիմնախնդիրները, ներկայացվել Արցախի Հանրապետության՝ դատական քննության հրապարակայնությունը կարգավորող օրենսդրության ու դատական պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Բանալի բառեր: Արցախի Հանրապետության դատավարական իրավունք, դատական քննության հրապարակայնության սկզբունք, դոնբաց դատական նիստ, դատական ակտերի հրապարակում, դատական քննության հրապարակայնության սահմանափակում, դոնփակ դատական նիստ, լրագրողներ, դատական նիստի կամ դրամի մասի ֆիքսում, տեղեկություններ ստանալու իրավունք, արդարադատության շահ:

Դատական քննության հրապարակայնությունը պատմականորեն փոխարինել է գաղտնի (դոնփակ) դատավարությամբ: Դատական քննության հրապարակայնության սկզբունքը Ռուսաստանում, որի կազմում 19-րդ դարի սկզբում հայտնվել են նաև Հայաստանն ու Արցախը, առաջին անգամ իր օրենսդրական ամրագրումը ստացել է 1864 թվականին՝ Դատական կանոնագրքերում, այդ ժամանակներում էլ դատավարագիտության մեջ տրվել է դրա՝ հիրավի դասական բնորոշումը: Այն է՝ հրապարակայնությունը հանրության համար դատական նիստերի մատչելիությունն է, ինչպես նաև անորոշ շրջանակի անձանց համար դատական ակտերին ծանոթանալու հնարավորությունը:¹ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 11.04.2012թ. ՍԴՈ-1020 որոշմամբ, անդրադառնալով հրապարակայնության սկզբունքին,՝ արձանագրել է. «...դատավարության հրապարակայնությունն առաջին հերթին նշանակում է հասարակական վերահսկողության իրականացման հնարավորություն դատավարության և դատարանի ընդունած ակտերի նկատմամբ»:

Դատական քննության հրապարակայնությունը սահմանադրական սկզբունք է: «Արդար դատաքննության իրավունքը» վերտառությամբ Արցախի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ, սահմանում է, որ յուրաքանչյուր

¹ Տե՛ս, օրինակ, Малышев К. И. Курс гражданского судопроизводства, т.1, СПб, 1874, էջ 374:

ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու համար անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք² :

Դատական քննության հրապարակայնության սկզբունքի վերաբերյալ ընդհանուր կանոն առկա է դատական իշխանության և դրա գործունեության կազմակերպումը կարգավորող ԱՀ դատական օրենսգրքում (ընդունվել է 21.07.2017թ.), իսկ սկզբունքն առարկայացվել է դատավարական օրենսգրքերում՝ ԱՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում (ընդունվել է 17.12.2008թ.), ԱՀ քրեական դատավարության օրենսգրքում (ընդունվել է 17.12.2008թ.): Սակայն այդ դատավարական օրենսգրքերը, ընդունված լինելով Սահմանադրության ընդունումից շատ ավելի շուտ, Սահմանադրության ու Դատական օրենսգրքերի վերոնշյալ դրույթներին որոշ դեպքերում չեն համապատասխանում:

Քրեական գործերով դատական քննության հրապարակայնությունը սահմանված է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, քաղաքացիական գործերով՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ, 105-րդ, 160-րդ հոդվածներով: Հրապարակայնությունը ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքով ուղղակիորեն սահմանված չէ, սակայն իրացվում է. ԼՂՀ Վարչական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 17.12. 2008թ.) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վարչական դատավարության կարգը սահմանվում է նաև ԱՀ դատական օրենսգրքով, իսկ օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Դատական քննության հրապարակայնությունն ապահովվում է դոնբաս դատական նիստ անցկացնելով: Արցախի Հանրապետության դատարաններում դատական նիստերը դոնբաս են: Դոնբաս դատական նիստում կարող է ներկա լինել յուրաքանչյուր քաղաքացի, այդ թվում զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ(լրագրողներ): Ցանկացողները դատարաններում գտնվող գործերի, գործը քննող դատարանի, կողմերի, նիստերի ժամանակացույցի, գործի շարժի մասին տեղեկությունները կարող են ստանալ ԱՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Դատավարության մասնակիցները և դոնբաս դատական նիստին ներկա այլ անձինք իրավունք ունեն կատարելու գրառումներ, սղագրություն, ձայնագրություն, ինչի համար դատարանի թույլտվությունը չի պահանջվում: Դատարանի թույլտվությունն

² Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետությունը միջազգային փաստաթղթերին միանալու հնարավորությունից զրկված է՝ դեռևս չճանաչված լինելու պատճառով: Այնուամենայնիվ, հանրապետության դատարանները, որպես ժողովրդավարական պետության դատարաններ, կազմավորվելուց անմիջապես հետո սկսել են կիրառել Եվրոպական կոնվենցիայի դրույթներն ու դեկավարվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումներով: 2015 թվականի ապրիլի 15-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի դիմումի հիման վրա քննության առնելով Եվրոպական կոնվենցիայում ամրագրված դրույթների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը, որոշել է, որ դրանք համապատասխանում են Սահմանադրությանը(ԼՂՀ Ազգային ժողովի կողմից օրենքն ընդունվել է 20.04.2015թ., ԼՂՀ Նախագահի կողմից վավերացվել՝ 15.05.2015 թ.):

անհրաժեշտ է միայն դատական նիստի կամ դրա մի մասի կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ հեռահաղորդակցության կապի այլ միջոցով կատարելու դեպքում՝ կողմերի համաձայնությամբ³:

Դատական քննության հրապարակայնությունը ենթադրում է նաև դատավարության արդյունքների հրապարակում դատական նիստի ընթացքում ու պաշտոնական հրապարակում: ԼՂՀ դատական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի վերջնական (եզրափակիչ), իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը ենթակա են հրապարակման: Դատական նիստի ընթացքում հրապարակելու դեպքում հրապարակվում է դատական ակտի եզրափակիչ մասը: Գործը քննող դատարանի, կողմերի, գործի էության, նիստերի ժամանակացույցի, գործի շարժի մասին տեղեկություները, վերջնական (եզրափակիչ) դատական ակտերը պարտադիր հրապարակվում են Արցախի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Անձնական կյանքի տվյալներ, կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ, ինչպես նաև երեխայի անձնական տվյալներ պարունակող դատական ակտերը հրապարակվում են այդ անձնական տվյալներն ապանձնավորված: Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում Գերագույն դատարանի կայացրած որոշումները ենթակա են պարտադիր հրապարակման նաև «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում /3-րդ, 6-րդ, 8-րդ կետեր/:

Դատական նիստում դատական ակտի հրապարակման ժամանակ դատավորի հատուկ կարծիքի առկայության մասին հայտարարվում է, սակայն այն չի հրապարակվում⁴:

Ինչու⁵ է անհրաժեշտ հրապարակային դատական քննությունը:

Դատական քննության հրապարակայնությունը դատավարության ժողովրդավարական ձևի բաղադրիչներից մեկն է, արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարր ու ապահովում է արդարադատության մատչելիությունը և թափանցիկությունը: Հանրությունը հետամուտ է դատական իշխանության բնագավառում խորապես տեղեկացված լինելուն:

Հրապարակայնությունը դատավորների անկախության սկզբունքի կարևոր երաշխիքներից է. հրապարակայնության պայմաններում դժվար է ազդել դատավորի վրա, ինչը երաշխավորում է վերջինիս անկախությունը և անձեռնմխելիությունը: Այն ունի նաև դաստիարակչական նշանակություն:

³ Իսկ եթե կողմերը համաձայն չեն՝ Մեր կարծիքով՝ եթե դատարանը գտնում է, որ դատական նիստի կամ դրա մի մասի կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ հեռահաղորդակցության կապի այլ միջոցով չեն հանգեցնի դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի խախտմանը, ապա նա չպետք է կաշկանդված լինի դատավարության մասնակիցների սուբյեկտիվ և չփաստարկված պատճառաբանություններով, ուստի հարցն անհրաժեշտ է կարգավորել օրենսդրորեն:

⁴ ՀՀ դատավարական օրենսդրությամբ նախատեսված է, որ հատուկ կարծիքը հրապարակվում է դատական ակտի հետ միաժամանակ:

Հրապարակայնությունը դատավորների, դատավարության մասնակիցների վրա դրական ազդեցություն է ունենում նրանց կողմից օրենսդրության նորմերը պահպանելու, իրենց պարտականությունները բարեխղճորեն կատարելու առումով, ինչն իր հերթին գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտերի կայացման նախադրյալ է:

Միայն հրապարակային դատաքննության ժամանակ է հնարավոր կողմերի իրական մրցակցությունը:

Հրապարակայնությունը տեղեկություններ ստանալու սահմանադրական իրավունքի երաշխիք է:

Դատական քննության հրապարակայնությունը մեծ նշանակություն ունի նաև բնակչության իրավագիտակցության բարձրացման գործում. քաղաքացիները հնարավորություն են ստանում հետևելու արդարադատության իրականացմանը, ծանոթանալու գործող իրավունքին և այլն:

Դատական քննության հրապարակայնությունը կարող է սահմանափակվել և անցկացվել դոմինիկ դատական նիստ, որտեղ կողմնակի անձանց մուտքը չի թույլատրվում: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ն մասի համաձայն՝ մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ դրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը: Փոքր ինչ այլ ձևակերպում, ակայն ըստ էության նույն բովանդակությունն ունեն նաև ԱՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասը և ԱՀ դատական օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչը չի կարելի ասել ԼՂՀ դատավարական օրենսգրքերի համապատասխան դրույթների մասին:

Գ. Ս. Կոստանյանն իրավացիորեն գտել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի բացարձակաօրենսդրում դատական քննության հրապարակայնության սկզբունքը և նախատեսում է որոշակի սահմանափակումներ, որոնցից հետևում է, որ ամեն մի գործով դատական նիստը կամ դրա մի մասը ոչ հրապարակային անցկացնելու հարցի լուծումը թողնվում է դատարանին: Վերջինս որոշում կայացնելիս պետք է հաշվի առնի պաշտպանվող սոցիալական արժեքների կարևորությունը՝ ինչպես անհատի, այնպես էլ հասարակության և պետության համար: Ամեն դեպքում, այդ որոշումը պետք է լինի պատճառաբանված: Ոչ հրապարակային դատավարություն անցկացնելու միակ հիմքը հանգում է նրան, որ հրապարակայնությունը կարող է վնասել բարոյականությանը, հասարակական կարգին, ազգային անվտանգությանը, անչափահասների շահերին, մասնավոր կյանքին և արդարադատության շահերին: Այս հիմքերն ունեն գնահատողական բնույթ, և հետևաբար, պետություններն ունեն որոշակի հայեցողության դրսևորման հնարավորություն⁵: Ի դեպ, 2018 թ. ընդունված ՀՀ քաղաքացիական

⁵ Տե՛ս Կոստանյան Գ. Ս. Պետության հայեցողության հիմնախնդիրները սահմանադրաիրավական և կոնվենցիոն կարգավորումների համատեքստում, իրավաբանական գիտությունների դոկտորի

դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրվել է, որ դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դռնփակ դատական նիստում: Այսինքն՝ համապատասխանեցվել է կոնվենցիոն նորմին: Թվարկված հանգամանքները, որպես հրապարակային դատաքննությունը սահմանափակելու հիմք, նախատեսված են նաև ՀՀ 2021թ. քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասում: Անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել նաև ԱՀ դատավարական օրենսգրքերում, ավելի ճիշտ կլիներ ընդհանրապես նոր օրենսգրքերի ընդունումը:

Դռնփակ դատական նիստի պարագայում հրապարակայնության սկզբունքի գործողությունը դրսևորվում է նրանում, որ դատական ակտերը հրապարակվում են: Դրանցում չպետք է տեղ գտնեն այնպիսի տվյալներ, որոնք հիմք են ծառայել դատական նիստը դռնփակ անցկացնելու համար:

Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու հարցը լուծվում է դռնփակության պայմաններում: Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու մասին դատարանը կայացնում է պատճառաբանված որոշում:

Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու դեպքում ունեն ներկա լինելու դատական նիստերի քարտուղարը, գործին մասնակցող անձինք, նրանց ներկայացուցիչները, դատական կարգադրիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկան, փորձագետը, մասնագետը և թարգմանիչը: Նշված անձինք դատարանի կողմից ստորագրություն վերցնելու միջոցով նախագրույցացվում են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին:

Դռնփակ դատական նիստում գործի քննությունն իրականացվում է դատավարության կանոնների պահպանմամբ:

Դռնփակ դատական նիստում տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառումն արգելվում է:

Դռնբաց դատական նիստը կարող է իրականացվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ընթացակարգի կիրառմամբ: Հրապարակայնության սկզբունքը ենթադրում է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ընթացակարգի /բանավոր լսումների/ կիրառում⁶: Այն իրացվում է նաև պարզեցված վարույթներում:

Դատարանի վերջնական (եզրափակիչ), իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը ենթակա են հրապարակման անկախ դատական քննության անցկացման ձևից:

Հրապարակայնության սկզբունքի խախտումը համարվում է, արդյոք, դատավարական օրենքի էական խախտում և դատական ակտի բեկանման հիմք: Այս հարցը ԱՀ դատավարական օրենսդրությամբ ուղղակիորեն կարգավորված չէ: ԱՀ դատական

գիտական աստիճանի հայցման առեմախոսության սեղմագիր, Երևան 2017:

⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 11.04.2012թ ՄԴՈ -1020 և 02.04.2019թ. ՄԴՈ -1452 որոշումները:

պրակտիկայում դատական ակտի բեկանման նման դեպք չի արձանագրվել⁷:

Արդարադատության շահը այն բարձրագույն նպատակն է, որին ձգտում է դատական համակարգը: Դատական նիստում ներկա լինելու, դատական քննության ընթացքի ֆիքսման իրավունքների չարաշահումները համարվում են դատական նիստի կարգի խախտումներ, որոնց դեպքում դատարանի կողմից կարող են կիրառվել օրենսդրությամբ նախատեսված սանկցիաներ:

Դատարանը պարտավոր է հարգել դատավարության հրապարակայնության սկզբունքը: Մեծ է զանգվածային լրատվամիջոցների դերը դատական իշխանության հանդեպ վստահության ձևավորման և ամրապնդման գործում: Դատավորների կողմից դիտավորությամբ այնպիսի պայմաններ ստեղծելը, որոնք կսահմանափակեն կամ կբացառեն հանրության, այդ թվում զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների մուտքը դռնբաց դատական նիստ կամ դրա ֆիքսմանը խոչընդոտելը, հիմք են դատավորների նկատմամբ կարգապահական միջոցներ կիրառելու համար՝ ԱՀ դատական օրենսգրքի 119-րդ հոդվածի ուժով:

Դատական նիստի ընթացքն օրենքով սահմանված կարգով արձանագրվում է: Հարկ է նշել, որ դատաիրավական բարեփոխումների շրջանակում վերջին տարիներին ԱՀ Գերագույն դատարանի, ԱՀ Վերաքննիչ դատարանի, ԱՀ Առաջին ատյանի դատարանի նստավայրերի դատական նիստերի դահլիճներում տեղադրվել ու գործում է դատական նիստերի ընթացքի ձայնագրման համակարգ: Ցավոք, 2021թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված 44-օրյա պատերազմը և դրա հետևանքները բացասական ազդեցություն թողեցին նաև դատաիրավական բարեփոխումների ընթացքի վրա, ներկայումս Ադրբեյջանի վերահսկողության տակ են գտնվում ԱՀ Առաջին ատյանի դատարանի Հադրութի և Շուշիի նստավայրերը:

ГЛАСНОСТЬ СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА - ГРЕТА АРЗУМАНЯН - В статье были раскрыты правовая природа и пределы действия принципа гласности судебного разбирательства комплексно - во всех отраслях процессуального права Республики Арцах, а также разъяснено важное значение этого принципа в деле осуществления правосудия. Был подчеркнут конвенционный и конституционно-правовой статус принципа гласности и было обосновано, что этот принцип динамично развивается во вновь созданном и демократичном Республике Арцах.

Были показаны проблемы теоритического и практического характера и представлены предложения, направленные на усовершенствование законодательства, регулирующего гласность судебного разбирательства.

⁷ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը(2021թ.), որպես քրեադատավարական օրենքի էական խախտում ու դատական ակտի բեկանման հիմք, նախատեսում է քրեական վարույթի որևէ սկզբունքի խախտումը (362-րդ հոդվածի 4-րդ մաս): Ակնհայտ է, որ դա վերաբերում է նաև դատական քննության հրապարակայնության սկզբունքին: Ի դեպ, Ռուսաստանի Դաշնության դատական պրակտիկայում առաջին անգամ՝ 2021 թվականին արձանագրվել է դատաքննության հրապարակայնության սկզբունքի խախտման հիմքով դատավճիռների բեկանման երկու դեպք (տե՛ս http://rapsinews.ru/judicial_news/20210402/306924454.html):

Ключевые слова: процессуальное право Республики Арцах, принцип гласности судебного разбирательства, открытое судебное заседание, оглашение судебных актов, ограничение гласности судебного разбирательства, закрытое судебное заседание, журналисты, фиксация хода судебного заседания или его части, право на получение информации, интерес правосудия.

PUBLICITY OF PROCEEDINGS - GRETA ARZUMANYAN - The article reveals comprehensively the legal nature and limitation of publicity of proceedings principle in all the branches of procedural law of the Republic of Artsakh, as well as the importance of this principle in administration of justice. The author underlines the legal status of the publicity principle being conventional and constitutional. It was justified that this principle is being implemented and is developing dynamically in the newly independent democratic Republic of Artsakh.

The oretical and practical problems were shown along with ptoposals aimed at improving the legislation which regulates the publicity of proceedings.

Key words: publicity of proceedings principle, open court, announcement of the judgement, limitation of publicity of proceedings, **procedural** law of the Republic of Artsakh, announcemevit of a judgement, closed proceed, publication of judicial acts, journaeists, fixation of proceedings or of its part, right to recieve information, interest of justice.

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քրեական դատավարության իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկն էլ դատապարտյալի իրավական վիճակն է: Հոդվածում քննության է առնվում դատապարտյալի կարգավիճակի, նրա հիմնական իրավունքների և պարտականությունների հետ կապված հարցերը: Այդ առումով հոդվածագիրը զուգահեռներ է անցկացնում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության օրենսդրությունների միջև, ինչպես նաև վերլուծվում են դատապարտյալների իրավունքների մասին միջազգային իրավական փաստաթղթերը: Առանձին շեշտադրումներ են կատարվում կին դատապարտյալների և ձերբակալված ու կալանավորված անձանց իրավունքների առանձնահատկությունների վերաբերյալ:

Բանալի բառեր՝ ձերբակալված անձ, կալանավորված անձ, դատապարտյալ, խափանման միջոց, փաստաբանների միություն, դատավճիռ, քրեակատարողական հիմնարկ, կոնվենցիա:

Երկու հայկական հանրապետությունների քրեակատարողական օրենսդրությունը հիմնվում է մարդասիրության, օրինականության, օրենքի առջև դատապարտյալի հավասարության, պատիժների կատարումը տարբերակելու և անհատականացնելու, պատիժների և ուղղման միջոցների զուգակցման սկզբունքի վրա:

Հայաստանի Հանրապետությունը վավերացնելով մի շարք միջազգային իրավական ակտեր, ինչպես նաև մտնելով Եվրոպական խորհրդի մեջ, պարտավորություն է ստանձնել Հանրապետության քրեակատարողական օրենսդրության մեջ մտցնել մարդու իրավունքների պաշտպանության և դատապարտյալների հետ վերաբերվելու համընդհանուր ճանաչված սկզբունքները և նորմերը: Դատապարտյալի իրավունքները և պարտականությունները սահմանվում են՝ ելնելով նշանակված պատժի տեսակի կարգից և պայմաններից: Այսպես օրինակ, ազատազրկման դատապարտված դատապարտյալները զրկվում են ընտրական իրավունքից, ի տարբերություն այն դատապարտյալների, որոնք ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ են կրում:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի /ԼՂՀ քր. դատ. օրենսգրքի 59 հոդված/ համաձայն՝ մեղադրյալը, որի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն մեղադրական է, կոչվում է դատապարտյալ¹: Նման սահմանում է տալիս նաև «Իրավաբանական մեծ բառարանը»²:

Հարկ է նշել, որ անձը, որի վերաբերյալ մեղադրական դատավճիռ է կայացվել, դեռևս գտնվում է քրեական դատավարության իրավունքի դաշտում, քանի որ նա օգտվում է անմեղության կանխավարկածից, այսինքն՝ կարող է բողոքարկել վերադաս դատական ատյանին իր նկատմամբ կայացված դատական ակտը՝ օգտվելով իր սահմա-

¹ Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից հուլիսի 1998 թ.: ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի, Ստեփանակերտ:

² Большой юридический словарь, Москва 2003, стр. 405:

նադրական իրավունքներից: Այսպես, ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի /ԼՂՀ Սահմանադրության 66-րդ հոդված/ համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Իսկ Սահմանադրության 69-րդ հոդվածի /ԼՂՀ Սահմանադրության 69-րդ հոդված/ համաձայն՝ հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք³:

Նախքան դատապարտյալի իրավունքներին և պարտականություններին հանգամանակից անդրադառնալը, մի քանի խոսք ձեռքակալված և կալանավորված անձանց իրավական կարգավիճակի մասին:

Ձերբակալված և կալանավորված անձանց ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը հայտարարելու պահից նրանց տրամադրվում են առանձին, անարգել տեսակցություններ պաշտպանի հետ առանց քանակի և տևողության սահմանափակման, իսկ օրինական ներկայացուցչի հետ՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Տեսակցությունները տրամադրվում են գործին որպես պաշտպան մասնակցող փաստաբանի հետ անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև Փաստաբանների միության կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում⁴:

Ձերբակալված և կալանավորված անձանց տեսակցությունը պաշտպանի հետ տրամադրվում է այնպիսի պայմաններում, որոնցում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողները նրանց կարողանան տեսնել, բայց չկարողանան լսել: Ձերբակալված կամ կալանավորված անձը, իսկ ձերբակալված կամ կալանավորված անձի համաձայնության դեպքում նաև նրա պաշտպանն իրավունք ունեն պահանջելու անցկացնել դատաբժշկական հետազոտություն: Ձերբակալված և կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների, իսկ կալանավորված անձանց՝ նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, տրամադրվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ: Ձերբակալված անձանց չի տրամադրվում տեսակցություն զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Քննության շափերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին: Ձերբակալված անձին մերձավոր ազգականների հետ տրամադրվում է առնվազն մեկ տեսակցություն՝ մինչև մեկ ժամ տևողությամբ: Կալանավորված անձին մերձավոր ազգականների, զանգվածային

³ ՀՀ Սահմանադրություն, Երևան, Ընդունված է: 05.07.1995, ԼՂՀ Սահմանադրություն, Ստեփանակերտ, 2017, էջ 28-29:

⁴ Դատապարտյալի իրավունքներ / Երևան, «Անտարես», 2010, 112 էջ:

լրատվության միջոցների կամ այլ անձանց հետ ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն երկու տեսակցություն՝ մինչև երեք ժամ տևողությամբ:

Հայաստանի Հանրապետությունը պաշտպանում է դատապարտյալների իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը պատիժը կատարելու ընթացքում, ապահովում է դատապարտյալի նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցների օրինականությունը:

Պատիժը կատարելու ընթացքում դատապարտյալի իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել դատարանի դատավճռով, քրեակատարողական օրենսգրքով և այլ օրենքներով: Դատապարտյալը քաղաքացիական պարտականությունների կատարումից կարող է ազատվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Դատապարտյալի իրավունքները, ազատությունները և պարտականություններն իրականացնելու կարգը սահմանվում է քրեակատարողական օրենսգրքով, ինչպես նաև ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով: Դատապարտյալն իր իրավունքները ազատությունները և պարտականություններն իրականացնելու կարգը սահմանում քրեակատարողական օրենսգրքով, ինչպես նաև ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով: Դատապարտյալն իր իրավունքները, ազատությունները և պարտականություններն իրականացնելիս չպետք է խախտի պատիժը կրելու կարգն ու պայմանները, ինչպես նաև ոտնահարի այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:

Մասնավորապես, դատապարտյալն իրավունք ունի՝

-Մայրենի կամ իրեն հասկանալի լեզվով տեղեկություններ ստանալու իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների, դատարանի նշանակած պատժի կատարման կարգի և պայմանների, դրանց փոփոխությունների, առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև միջազգային համապատասխան փաստաթղթերի մասին:

-Իր նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի:

-Իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմ:

-Իրավաբանական օգնություն ստանալու:

-Անձնական անվտանգության ապահովման և այլն:

Օտարերկրյա քաղաքացի դատապարտյալն իրավունք ունի կապեր հաստատելու և պահպանելու Հայաստանի Հանրապետությունում իր պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության հետ: Այն դատապարտյալը, ով Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հաստատություն չունեցող երկրի քաղաքացի է, ինչպես նաև փախստականը կամ քաղաքացիություն չունեցող դատապարտյալներն իրավունք ունեն կապեր հաստատելու և պահպանելու այն պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության հետ, որը ստանձնել է այդ անձանց շահերի պաշտպանությունը կամ նրանց պաշտպանությամբ զբաղվող ցանկացած ազգային կամ միջազգային մարմնի հետ⁵:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով տրված են ինչպես դատապարտյալի իրավունքների, այնպես էլ պարտականությունները:

⁵ Դատապարտյալի իրավունքներ / Երևան, «Անտաբես», 2010, էջ 112:

րի վերաբերյալ սահմանումները, որոնք են՝ դատապարտյալը պարտավոր է դրսևորել օրինապահ վարքագիծ, կատարել և պահպանել պատիժը կամ պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կրելու կարգը և պայմանները սահմանող իրավական ակտերի պահանջները, բարեկիրթ վերաբերմունք դրսևորել պատիժները կատարող մարմինների կամ հիմնարկների ծառայողների և աշխատողների, այդ մարմիններ կամ հիմնարկներ այցելող անձանց և մյուս դատապարտյալների նկատմամբ, պահպանել անձնակն և ընդհանուր հիգիենայի կանոնները, խնամքով վերաբերվել պատիժները կատարող հիմնարկների գույքին, կատարել պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի օրինական պահանջները:

Դատապարտյալն իր պարտականությունները, ինչպես նաև պատիժները կատարող մարմինների և հիմնարկների վարչակազմի օրինական պահանջները չկատարելու դեպքում ենթարկվում է օրենքով սահմանված պատասխանատվության: Դատապարտյալը իր առաջարկությունները, դիմումները և բողոքները կարող է ներկայացնել ամեն օր, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Գրավոր բողոքները ոչ ուշ քան, մեկ օրվա ընթացքում, ուղարկվում են հասցեատերերին: Դատապարտյալի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները գրաքննության ենթակա չեն:

Պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմի որոշումների ու գործողությունների առթիվ դատապարտյալի ներկայացրած առաջարկությունները, դիմումները և բողոքները չեն կասեցնում այդ որոշումների և գործողությունների կատարումը:

Դատապարտյալի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկող մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են քննարկել դրանք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում և ընդունված որոշումների մասին տեղյակ պահել դատապարտյալին: Արգելվում է որևէ ձևով հետապնդումը դատապարտյալի նկատմամբ իր իրավունքների և օրինական շահերի խախտումների վերաբերյալ առաջարկություններ, դիմումներ, բողոքներ ներկայացնելու դեպքում: Նման հետապնդում իրականացնող անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Գործող օրենսդրությամբ կին դատապարտյալների կարգավիճակը որոշակի առանձնահատկություններ ունի: Հայաստանում իրականացվող բարեփոխումների հիմնական նպատակներից մեկը մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխանող կառուցակարգերի հիմնումն է: Խոսքը հատկապես վերաբերվում է ազատությունից զրկված անձանց իրավունքների խախտման տեսանկյունից՝ առավել խոցելի վիճակում գտնվող անձանց⁶:

Դատապարտյալ տղամարդկանց համեմատությամբ դատապարտյալ կանայք առանձնահատուկ սրությամբ են ընկալում հասարակությունից մեկուսացվելու հանգամանքը: Նրանց հոգեֆիզիոլոգիական էության առանձնահատկությունները պայմանավորում են նրանց գերզգայունությունը, շրջապատի բացասական ազդեցության ընկալման բարձր աստիճանը, լակկանությունը և գրգռվածությունը: Նրանց մոտ ավելի հաճախ, քան տղամարդկանց մոտ լինում են նյարդահոգեկան խախտումներ⁷, առաջանում են սթրեսային վիճակներ: Դատապարտյալ կանանց մեծ մասն անհանգիստ է, ինչը պայմանավորված է մերձավորների և շրջապատող անձանց օտարմամբ/ ընտա-

⁶ ՀՀ քրեակատարողական օրենսդրության համապատասխանեցիկությունը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին: Զեկույց: Երևան, 2011, էջ 5:

⁷ Մանրամասն տես *шелдон С.если наступит завтра.М.1992. էջեր 47-107:*

նեկան բռնությունը, ամուսնալուծությունը, ծնողների կողմից հոգատարության և սիրո բացակայությունը⁸: Վիճելի հարցերից մեկը մնում է դատապարտյալների աշխատանքի վերաբերյալ միջազգային և ազգային իրավունքի նորմերի միջև հակադրությունը: Աշխատելու պարտադիր լինելու նշանակությունն այն է, որ այն իրականացվում է մեծ ծավալներով, ունի անմիջական կապ դատապարտյալների վերահանրայնացման հետ, հնարավորություն է տալիս պատշաճ կերպով օգտագործելու ՔԿՀ-ների կողմից տրամադրվող աշխատանքային ուժը և իրականացնում է հանրության այն սպասելիքները, որ պատիժը կրելու ընթացքում դատապարտյալները պետք է պարտադիր կերպով ներգրավվեն աշխատանքի մեջ: Միջազգային փաստաթղթերում աշխատանքը չի համարվում հարկադիր, եթե այն սահմանված է դատավճռի հիման վրա⁹, իսկ ՀՀ ՔԿՕ –ի 85-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ դատապարտյալը հնարավորության դեպքում ապահովվում է աշխատանքով կամ նրան հնարավորություն է տրվում ինքնուրույն իրեն ապահովելու աշխատանքով:

Հայաստանի Հանրապետությունը իր անդամակցության արարողության պահին ստորագրել է Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության 1950 թվականի եվրոպական կոնվենցիան¹⁰, և նրա թիվ 1, 4, 6, 7 արձանագրությունները: Սույն արձանագրության մեջ ամրագրված է արդար դատաքննության իրավունքը: Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ, անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը: Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կազմակերպելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան¹¹: Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին, բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով, կամ եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը, հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները

⁸ Антонян Ю.М. Преступность среди женщин. М. 1992. էջեր 65-66:

⁹ ՀՀ արկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին ԱՄԿ-ի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը:

¹⁰ Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին (4-ը նոյեմբերի, 1950թ., Հռոմ), ՀՀ կողմից ստորագրվել է՝ 25/01/01, վավերացվել է՝ 26/04/02, ուժի մեջ է մտել՝ 26/04/02:

¹¹ մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր:

ենթարկվեն հարցաքննության և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները, ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

Հավելենք, որ հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը: Իսկ հանցագործության համար դատապարտված անձը ներման ակտով կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը:

ПРАВА И ОБЯЗАННОСТИ ОСУЖДЕННОГО - КАРИНЕ ДАВТЯН - Одним из важнейших институтов уголовного судебного права является круг прав и обязанностей осужденного. В статье исследуются вопросы, связанные с положением осужденного, основных его прав и обязанностей. В связи с этим автор статьи проводит параллели между конституциями Республики Арцах и Республики Армении, а также анализируются международные правовые документы, свидетельствующие о правах осужденных. Отдельно акцентируются особенности прав задержанных и заключенных лиц, а также женщин-осужденных.

Ключевые слова: задержанная личность, заключенная личность, осужденный, мера предостережения, союз адвокатов, приговор, уголовно-исправительное учреждение, конвенция.

THE RIGHTS OF THE CONVICTED PERSON AND RESPONSIBILITIES - KARINE DAVTYAN - One of the most important institutions of criminal proceeding law is the legal status of the convict. The article examines issues related to the status of the convict, his basic rights and responsibilities. In this regard, the author draws parallels between the legislations of the Republic of Armenia and the Republic of Artsakh, as well as the analysis of international legal documents on the rights of convicts. Particular emphasis is placed on the specifics of the rights of female convicts, arrested and detained persons.

Key words: arrested person, arrested person, convict, precautionary measure, bar association, verdict, penitentiary institution, convention.

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՌԴԴՏՈՒՄ ՈՐՈՇԵՍ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՌԻՍԿԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Ընկերությունների ֆինանսական աուդիտի որոշ ընթացակարգեր իրականացվում են ընտրանքային ստուգումների միջոցով, ինչը մեծացնում է աուդիտորական ռիսկը: Սույն հոդվածն առաջարկում է ընտրանքներ ձևավորելու փոխարեն աուդիտի ընթացակարգերի իրականացման նպատակով կիրառել տվյալների վերլուծական ծրագրաշարեր, որոնք ունակ են ուսումնասիրել տվյալների խոշոր հենքեր՝ ապահովելով առավել հիմնավոր աուդիտորական ապացույցներ և խնայելով հատկացվող ռեսուրսները:

Բանալի բառեր. Համապարփակ ընթացակարգեր, ներքին վերահսկողական համակարգի ընթացակարգ, աուդիտորական ապացույց, ընտրանքային ռիսկ, վիճակագրական ընտրանք, տվյալների վերլուծական ծրագրաշար, հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվություն:

Ներածություն

Արտաքին աուդիտ իրականացնող ընկերություններն աուդիտորական ընթացակարգեր իրականացնելիս մշտապես բախվում են ժամանակի և ռեսուրսների սահմանափակության խնդրին և փորձում են աշխատանքները կազմակերպել այնպես, որ ձեռք բերվի բավարար հիմնավորվածություն աուդիտի ենթարկվող ընկերության ֆինանսական հաշվետվության մասին կարծիք արտահայտելու համար: Աուդիտորական ընթացակարգերը բաժանվում են 2 խմբի. ներքին վերահսկողական համակարգի թեստեր և համապարփակ ընթացակարգեր: Պրակտիկայում ընդունված է աուդիտորական ընթացակարգերի իրականացման 2 մոտեցում: Դրանք են՝

1. Նախապես իրականացնել ներքին վերահսկողության համակարգի ստուգում և վերջինիս բարձր արդյունավետությամբ աշխատելու մասին բավարար հիմնավորվածության պարագայում նվազեցնել իրականացվող համապարփակ ընթացակարգերի շրջանակը,
2. Համապարփակ ընթացակարգերն իրականացնել ամբողջությամբ:

Խոշոր ընկերությունների դեպքում նախընտրելի է կիրառել առաջին մոտեցումը, քանի որ արդյունավետ և համապատասխան ներքին վերահսկողական համակարգի առկայության դեպքում բավարար աուդիտորական ապացույցների պահանջվող մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ համապարփակ ընթացակարգերի ծավալը կրճատվում է: Առավել փոքր ընկերությունների դեպքում, սովորաբար, ներքին վերահսկողական համակարգը հարաբերականորեն թույլ է, և անհրաժեշտություն է առաջանում համապարփակ ընթացակարգերը իրականացնել ողջ ծավալով:

Անդրադառնալով խոշոր ընկերություններին՝ հարկ է նշել, որ վերջիններիս թե՛ ներքին վերահսկողական համակարգերի թեստերի և թե՛ համապարփակ ընթացակարգերի ստուգումները հիմնականում արվում են նախապես ձևավորված ընտրանքի հիման վրա: Այս փուլում է, որ աուդիտորը առնչվում է ընտրանքային ռիսկին: Վերջինիս նշանակությունը հասկանալու համար նախ կներկայացվի աուդիտորական ռիսկը: Աուդիտորական ռիսկը կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ անհամապատասխան կամ սխալ կարծիք արտահայտելու ռիսկն

է՛: Մաթեմատիկոսներն այն կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով².

Աուդիտորական ռիսկ ~ Էական խեղաթյուրումների ռիսկ

× Հիայտնաբերման ռիսկ

Էական խեղաթյուրումների ռիսկը բաղկացած է կազմակերպությանը բնորոշ ռիսկից (բիզնեսի ոլորտ, ֆինանսական պարտավորություններ, բարդ կառուցվածք և այլն) և ներքին վերահսկողական համակարգից բխող ռիսկից³: Էական խեղաթյուրումների ռիսկը գտնվում է աուդիտորի ներգործության դաշտից դուրս: Հետևաբար, աուդիտորական ռիսկը նվազեցնելու միակ լուծումը չհայտնաբերման ռիսկը նվազեցնելն է:

Չհայտնաբերման ռիսկը լինում է ընտրանքային և ոչ ընտրանքային⁴: Ոչ ընտրանքային ռիսկը կապված է մարդկային գործոնի, անարդյունավետ պլանավորման, հսկողության հետ: Ընտրանքային ռիսկը պայմանավորված է նրանով, որ կատարվող աուդիտորական ստուգումներն առնչվում են բացառապես ընտրանքում հայտնված միավորներին, հետևաբար, ընտրանքի ուսումնասիրության արդյունքում արված եզրահանգումը կարող է տարբերվել այն եզրահանգումից, որը կստացվեր, եթե աուդիտորական ստուգումներն իրականացվեին տվյալների ողջ բազմության վրա: Հնարավոր խնդիրները, որ կարող են առաջանալ ընտրանքային ստուգումների հետևանքով, այն է, որ ընտրանքում կարող են հայտնվել առավելապես բարենպաստ միավորներ, որոնք կստիպեն կարծել, որ Էական խեղաթյուրումներ չկան և լրացուցիչ ուսումնասիրություններ չեն կատարվի՝ մեծացնելով աուդիտորական ռիսկը, կամ ընտրանքում կհայտնվեն առավելապես ոչ բարենպաստ միավորներ, որոնք կգուժեն Էական խեղաթյուրումների մասին, ինչը կստիպի աուդիտորին կատարել լրացուցիչ ուսումնասիրություններ՝ անհրաժեշտ աուդիտորական վկայություններ ձեռք բերելու համար: Բնականաբար, մեծացնելով ընտրանքը հնարավոր է նվազեցնել ընտրանքային ռիսկը: Լավագույն հնարավոր սցենարում կուսումնասիրվեին բոլոր միավորները, որը, սակայն, իրատեսական չէ ռեսուրսների և ժամանակի սահմանափակության պարագայում: Հենց այս խնդրի լուծմանն է ուղղված տվյալների վերլուծական ծրագրերի կիրառումը արտաքին աուդիտում:

Ուսումնասիրություն

Կան բազմաթիվ տվյալների վերլուծական ծրագրեր, որոնք առնչվում են աուդիտին: Դրանցից են «CaseWare IDEA»⁵, «Arbutus»⁶, «Netwrix»⁷, «SoftLake Solutions»⁸, «Zero»⁹ ծրագրաշարերը: Տվյալ ուսումնասիրության ընթացքում դիտարկվել է «CaseWare IDEA» ծրագրաշար, գործիքակազմի հնարավոր պրակտիկ կիրառությունը արտաքին աուդիտում: Տվյալ ծրագրաշարի առաջնային էջը ներկայացված է գծապատկեր 1-ում:

¹ ACCA, Audit risk, <https://www.accaglobal.com/in/en/student/exam-support-resources/fundamentals-exams-study-resources/f8/technical-articles/audit-risk0.html>

² Accountingguide.com, Audit Risk, <https://accountingguide.com/audit-risk/>

³ Corporate Finance Institute, What is the Risk of Material Misstatement?, <https://corporatefinanceinstitute.com/resources/careers/map/accounting-careers/risk-of-material-misstatement/>

⁴ International Journal of Accounting Research, Importance of Applying Statistical Sampling to Increase Confidence in Financial Statements, <https://www.longdom.org/open-access/importance-of-applying-statistical-sampling-to-increase-confidence-in-financial-statements-37577.html>

⁵ <https://idea.caseware.com/the-complete-guide-to-auditing-with-data-analytics-tools/>

⁶ <https://www.arbutussoftware.com/en/home>

⁷ <https://www.netwrix.com/auditor.html>

⁸ <https://www.softlakesolutions.com/audit-analytics/>

⁹ <https://www.teamzero.com/>


Գծապատկեր 1. «CaseWare IDEA» ծրագրաշարի սկզբնական պատուհանը

Ինչ վերաբերում է ընտրանքային ստուգումներին, հարկ է նշել, որ տվյալ ծրագրաշարը հնարավորություն է ընձեռում ձևավորել վիճակագրական ընտրանքներ, ինչը հաճախ աուդիտորների կողմից ընտրանք ձևավորելու նախընտրելի տարբերակն է¹⁰, քանի որ ընտրանքում հայտնված միավորների ընտրությունը հիմնավորվում է ավտոմատացված ծրագրաշարի աշխատանքով, մինչդեռ դատողական ընտրության դեպքում աուդիտորը ինքը պետք է հիմնավորի ընտրության դրդապատճառները և իր մոտեցումը:

Հարկ է նշել, որ արտաքին աուդիտի ընթացքում աուդիտորները աուդիտորական վկայություն ստանալու նպատակով ուսումնասիրում են հաճախորդի վարած հաշվապահությունը, ինչը կատարվում է հաճախորդի կողմից տրամադրված (Provided by client կամ PBC) տեղեկատվության հիման վրա:

Հաշվի առնելով այն փաստը, որ աուդիտորներն իրենց ընթացակարգերը իրականացնելիս և փաստաթղթավորելիս գլխավորապես օգտվում են «Ms Excel» ծրագրաշարից ավտոմատացված համակարգերով («1S», «ՀՕ հաշվապահ» և այլն) հաշվապահություն վարող խոշոր ընկերություններն ուսումնասիրվող տվյալները արտահանում է «MS Excel»-ին հասանելի ձևաչափերով (xls, xml, csv, և այլն): Այնուամենայնիվ, նշված ձևաչափերով արտահանված տեղեկատվությունը «MS Excel» ծրագիր ներբեռնելիս առաջ է գալիս «MS Excel»-ի մեկ էջի 1,048,576 տողի արգելքը: Հասկանալի է, որ խոշոր ընկերությունների դեպքում տարեկան հաշվապահական գրանցումների քանակը կարող է բազմապատիկ անգամ գերազանցել նշված սահմանափակումը և աուդիտորները զրկված են լինում ընդհանուր «Գործարքների մատյան» (General Ledger) ունենալու հնարավորությունից: Լավագույն դեպքում այն կտեղավորվի «MS Excel»-ի մի քանի էջում, ինչը, սակայն, բարդացնում և խճճում է աշխատանքը:


Աուդիտորի «CaseWare IDEA» ծրագրաշարով աշխատելու դեպքում վերոնշյալ խնդիրը վերանում է, քանի որ ծրագրաշարի համար ընթեռնելի են ոչ միայն «MS Excel» ձևաչափով ֆայլերը, այլև առավել տարողունակ ֆայլեր (տես գծապատկեր 2-ում), ինչպիսիք են, օրինակ, «MS Access»-ի ֆայլերը, որոնք կարող են պարունակել մինչև 2 գեգաբայթ հիշողությամբ ինֆորմացիա, ինչը զգալիորեն գերազանցում է «MS Excel»-ի հնարավորությունները: Բացի այդ, ընդունելի ձևաչափով ֆայլը «IDEA» ծրագիր ներբեռնելուց հետո տվյալները դառնում են «միայն ընթեռնելի» (Read-Only), ինչը



¹⁰ Ալիսիա Տոնվիլա, *Detection Risk*, <https://www.investopedia.com/terms/d/detection-risk.asp>, 27. 02. 21

բացառում է աուդիտորի կողմից դիտավորյալ կամ պատահական փոփոխությունները սկզբնական տվյալների հենքում:

Գծապատկեր 2. «CaseWare IDEA» ծրագրաշարի համար ընդունելի ձևաչափերը



Այժմ դիտարկենք, թե տվյալների վերլուծական ծրագիրը ինչպես կարող է հեշտացնել աուդիտորական ընթացակարգերի իրագործումը:

Ենթադրենք՝ աուդիտորը ուսումնասիրում է տարվա ընթացքում հաճախորդի կատարած ծախսերը: Ծախսերի նկատմամբ բավարար աուդիտորական ապացույցներ հավաքելու նպատակով աուդիտորը պետք է «Գործարքների մատյան»-ի ծախսային հոդվածներում գրանցված գործարքները համադրի էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերի (E-Invoicing) գրանցումների հետ: Շնորհիվ այն բանի, որ «IDEA» ծրագիրը ընդունում է «Ms Access» ձևաչափի ֆայլեր՝ աուդիտորը հեշտությամբ կարող է ողջ «Գործարքների մատյան»-ը վերբեռնել «IDEA» ծրագրում և գտել անհրաժեշտ ծախսային հոդվածները: Մյուս կողմից, էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերի տվյալները ծրագիր ներբեռնելուց հետո, 2 տվյալների հենքերը կարելի է հեշտությամբ համադրել՝ ունենալով ընդհանուր և չկրկնվող արժեք (key value), օրինակ՝ փաստաթղթի համարը: Նշված միջամտությունն իրականացնելու համար անհրաժեշտ է 2 տվյալների հենքերը միավորել «Join» հրամանի միջոցով, որի համընկնում (match) վանդակում պետք է նշել այն չկրկնվող արժեքը, որը կնույնականացնի 2 տվյալների հենքերի միևնույն գործարքը: Նշված հրամանների իրականացումը ներկայացված է գծապատկեր 3-ում և 4-ում:

Գծապատկեր 3. Տվյալների հենքերի միավորման հրամանի պատուհանը

Join Databases

Primary database: Journal of Entries
Number of records: 51292
Criteria:

Secondary database: E-invoicing
Number of records: 350

File name: Join Databases

☒ Matches only
☐ Records with no secondary match
☐ Records with no primary match
☐ Create a virtual database

Buttons: Fields, Select, Match, OK, Cancel, Help

Գծապատկեր 4. Տվյալների հենքերի միավորման համար անհրաժեշտ նույնականացնող արժեքի ընտրություն

Primary	Order	Secondary
ՓԱՍՏԱԹՂԹԻ_ISN (C)	Ascending	ՍԵՐԻԱԼ_Լ_ՀԱՄԱՐ (C)

Buttons: OK, Delete, Cancel, Help

Ընդ որում, «Join» հրամանը ունի իրագործման մի քանի հնարավորություն: Դրանք են՝

1. Matches only - ցույց տալ այն գործարքները, որ կրկնվում են 2 տվյալների բազաներում,
2. Records with no secondary match - ցույց տալ այն գործարքները, որ առկա են 1-ին տվյալների բազայում, սակայն բացակայում են 2-րդում,
3. Records with no primary match - ցույց տալ այն գործարքները, որ առկա են տվյալների 2-րդ բազայում, սակայն բացակայում են 1-ինում:

1-ին տարբերակը հեշտությամբ կլուծվի աուդիտորի՝ ծախսերի համադրման անհրաժեշտ մակարդակը ստանալու խնդիրը, 2-րդ տարբերակի միջոցով կբացա-

հայտվեն ծախսերին վերաբերող այն գործարքները, որոնց դիմաց էլեկտրոնային հաշիվ ապրանքագրերը բացակայում են, և հետևաբար, աուդիտորը կձեռնարկի լրացուցիչ ուսումնասիրություն՝ բացակայող էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերի պատճառը պարզելու համար: 3-րդ տարբերակի միջոցով կառանձնացվեն այն գործարքները, որոնց գծով փաստացի էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրեր են ստացվել և վճարվել, սակայն հաշվապահական ծրագրում համապատասխան գրանցում չի կատարվել, որի պատճառով դրանք բացակայում էին «Գործարքների մատյանից»: Այսպիսով, շատ կարճ ժամանակում աուդիտորը կարող է իրականացնել անհրաժեշտ ստուգումը՝ խնայելով մեխանիկական աշխատանքի վրա ծախսվող ժամանակը:

Ընտրանքային ստուգման փոխարեն ուսումնասիրելով ծախսերին առնչվող բոլոր գործարքները՝ աուդիտորը կստանա առավել հիմնավոր աուդիտորական ապացույցներ եզրակացություն հայտնելու համար:

Վերևում նկարագրվածը վերաբերում էր ծախսային հոդվածների համապարփակ ընթացակարգերին: Այժմ դիտարկենք, թե ինչպես կարող է ծրագրաշարը հեշտացնել ներքին վերահսկողական համակարգի ստուգումների գործընթացը:

Ենթադրենք՝ աուդիտորը իրականացնում է առևտրային բանկի՝ ՓԼ/ՄՖ-ի դեմ (փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման) դեմ պայքարի մասին ՀՀ օրենքին համապատասխանության վերաբերյալ ստուգում և փորձում է ձեռք բերել աուդիտորական ապացույց առ այն, որ բանկն օրենքով սահմանված լիազոր մարմնին՝ ՀՀ Կենտրոնական բանկին (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) տեղեկացվել է բոլոր պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների մասին¹¹: Համաձայն վերոնշյալ օրենքի՝ հաճախորդները դասակարգվում են 3 ռիսկի դասերից որևէ մեկում՝ բարձր, միջին կամ ցածր¹²: Ենթադրենք՝ աուդիտորը բավարար վստահություն է ձեռք բերել առ այն, որ ռիսկի բարձր դասում հայտնված հաճախորդների գործարքների դեպքում Բանկը հետևում է օրենքով սահմանված պահանջներին, սակայն մասնագիտական կասկածամտություն է դրսևորում միջին և ցածր ռիսկի դասի հաճախորդների գործարքների դեպքում օրենքի պահանջները պահելու վերաբերյալ: Տվյալ պարագայում աուդիտորին անհրաժեշտ է հաշվետու տարվա բոլոր գործարքներից գտել միջին և ցածր ռիսկի դասի հաճախորդների գործարքները և, ստացված տվյալների նոր հենքից առանձնացնելով օրենքով սահմանված շեմը գերազանցող գործարքները, համադրել բանկի փաստացի ՀՀ ԿԲ-ին տեղեկացված գործարքների ցանկի հետ, որը տրամադրում է հաճախորդը տեղեկացման ավտոմատացված համակարգից արտահանելուց հետո: Ցանկացած անհամապատասխանություն կպահանջի լրացուցիչ հետազոտություն աուդիտորի կողմից:


Տարվա ընթացքում բանկի կողմից իրականացրած գործարքների քանակը կարող է գերազանել մի քանի տասնյակ միլիոնը, հետևաբար նման ծավալի տվյալների հետ «Ms Excel» ծրագրով աշխատելը իրատեսական չէ: Տարվա բոլոր գործարքները «IDEA» ծրագրաշար ներբեռնելուց հետո անհրաժեշտ է օգտվել «գտել» (Extraction) հրամանից, որը եղած տվյալների հենքից կարող է գտել տվյալ ստուգման համար անհրաժեշտ պայմաններին բավարարող գործարքները: Կանխիկ և անկանխիկ գործարքների հաշիվներով հենքերը առանձնացնելուց հետո, նշված հրամանի միջոցով կարող ենք գտել՝ «Հավասարում» (Equation) դաշտում գրելով անհրաժեշտ պայմանները (տես գծա-

¹¹ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93142>

¹² <https://www.arbutussoftware.com/en/home>

պատկեր 5-ում): Արդյունքում գտված գործարքներով տվյալների հենքը կարելի է պահպանել և համադրել բանկի տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ին տեղեկացված գործարքների ցանկի հետ:

Գծապատկեր 5. «Զտել» հրամանի «հավասարում» դաշտում անհրաժեշտ պայմանների ձևակերպում



Եզրակացություն

Խոշոր ընկերությունների ֆինանսական աուդիտի ժամանակ, ելնելով ռեսուրսների սահմանափակությունից, աուդիտորական ընկերությունները հաճախ իրականացնում են ընտրանքային ստուգումներ, ինչը մեծացնում է աուդիտորական ռիսկը:

Սույն հոդվածը առաջարկում է նվազեցնել աուդիտորական ռիսկի միակ բաղադրիչը, որը գտնվում է աուդիտորի ուղղակի ներգործության տակ, այն է՝ ընտրանքային ռիսկը՝ օգտվելով տվյալների վերլուծական ծրագրաշարերից: Հոդվածում ներկայացված մեթոդների կիրառության շնորհիվ վերջիններս հնարավորություն են տալիս արագորեն ուսումնասիրել հաճախորդի կողմից ներկայացված տեղեկատվությունն ամբողջությամբ՝ վերացնելով ընտրանք ձևավորելու կարիքը:

Նշված ծրագրաշարերը կարող են օգտագործվել ինչպես համապարփակ ընթացակարգերի, այնպես էլ ներքին վերահսկողական թեստերի ստուգումներ իրականացնելիս:

Վերլուծական ծրագրերի ներդրումը աուդիտում թույլ կտա աուդիտորական ընկերություններին խնայել աշխատանքային ռեսուրսներ և կրճատել ֆինանսական աուդիտի համար պահանջվող ժամանակահատվածը: Մյուս կողմից, աուդիտորները, խնայելով մեխանիկական աշխատանքներին հատկացվող ժամանակը, կարող են ավելի շատ ժամանակ հատկացնել մասնագիտական դատողություններ անելուն՝ բարձրացնելով իրենց պրոֆեսիոնալիզմը և աշխատանքային արդյունավետությունը:

*ИСПОЛЬЗОВАНИЕ ПРОГРАММНОГО ОБЕСПЕЧЕНИЯ ДЛЯ АНАЛИЗА ДАННЫХ В АУДИТЕ КАК СПОСОБ СНИЖЕНИЯ РИСКА ВЫБОРКИ - **ГЕНРИК МАНУКЯН** - В некоторых компаниях процедуры финансового аудита проводятся посредством выборочной аудиторской проверки, что увеличивает аудиторский риск. В этой статье предлагается использовать программное обеспечение для анализа данных, которое способно исследовать большие базы данных, предоставлять более надежные свидетельства аудита и экономить ресурсы.*

***Ключевые слова:** процедуры аудита по существу, тестирование системы внутреннего контроля, аудиторские доказательства, риск выборки, статистическая выборка, программное обеспечение для анализа данных, информация, предоставленная клиентом.*

*THE USE OF DATA ANALYTICS SOFTWARE IN AUDITING AS A WAY TO REDUCE SAMPLING RISK- **HENRIK MANUKYAN** -Some companies' financial audit procedures are carried out through audit sampling, which increases the audit risk. This article proposes to use data analytics software, which is capable of examining large databases, providing more reliable audit evidence and saving resources.*

***Key words:** substantive audit procedures, test of internal control system, audit evidence, sampling risk, statistical sampling, data analytics software, provided by client.*

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Հայ գեղարվեստական մտածողության պատմության մեջ մեծատաղանդ բանաստեղծ Պարույր Սևակն իր ստեղծագործությամբ մի նոր աստիճան նշանավորեց: Նա այն հազվագյուտներից էր, որն ուներ բնատուր մեծ տաղանդ, ժամանակի սուր և խորն զգացողություն, գեղարվեստական: Մշակույթի բազմակողմանի իմացության, ավանդույթների և համարձակ նորարարության զուգակցման կարողություն:

Հայրենիք, ժողովուրդ, պատմություն, դրանք առանձնահատկություններ չեն մեծ բանաստեղծի համար: Նա հայրենիքը ուզում է տեսնել այնպիսի մարդկանցով, որոնք ոչ թե եղել են շալակյան աշխարհի, այլ աշխարհն են շալակած տանում: Այնպիսի մարդկանցով, որոնք սիսալվել, սակայն չեն ստել, կորցրել են հաճախ, բայց նորից գտել, որոնք սայթաքել ու վայր են ընկել, ընկել են, սակայն երբեք չեն ծնկել, այլ մազլցել են կատարից կատար, եղել են անվերջ, բարձրացել են վեր՝ քո ահեղ դարից առնելով թներ...

Բանալի բառեր՝ դաստիարակություն, մեծ եղեռն, ոճրագործություն, դասական, ավանդական, հոգևոր, մտավոր, սահմանել, մշակույթ, երգ երգոց, սիրային դրամա, մարդագիտություն, աշխարհայացք, գաղափարաբանություն:

Դարից ավելի է անցել թուրքերի՝ պատմության ճակատն մրտոդ աննախադեպ ոճրագործությունից: Մարդկության պատմությունը այդպիսի նողկալի ոճի դեռ չէր տեսել: Բիրլիական հողի վրա, ուր Նոյ Նահապետի օրից հայն իր հողն էր մշակում, քարից հաց քամում, քարը երգ դարձնում, այդ երգով ապրում, ոճրագործների սմբակի տակ տորովեցին ծեր ու մանուկ, ավերվեցին շեն գյուղերն ու քաղաքները. ազգ ու մշակույթ, պատմություն ու քաղաքակրթություն հազիվ մազապուրծ եղան գորշ գալլերի ժանիքներից:

**Հինավուրց տռեմիկ մի ազգ
Չմեռա՛վ, այլ... մահացավ:**

**Հացառատ մի ողջ աշխարհ
Մարքեցին փշրանք-նշխար,
Սո՛ւրբ նշխար՝ շան բերանում,-
Ուզեցին մեկ հայ թողնել,
Եվ այն էլ... թանգարանում...¹**

Ու երբ բրոնզեդարյան հնավայրի տեղում վեր խոյացավ Մեծ եղեռնին նվիրված հուշահամալիրը՝ որպես ամենայն հայոց հավաքական հիշողություն, ժողովուրդը վաղորդայնից մինչև ճրագալույց հորդում էր Ծիծեռնակաբերդ:

Յուրաքանչյուր գրող, դառնալով իր ժամանակի շունչը, իր «ես»-ով արտահայտում է ընդհանուրի խոհերը, զգացումները, տառապանքը, կարոտն ու սերը, հայրենասիրությունը:

¹ Սահակյան Վ., Աֆորիզմներ, էջ 60:

Պ.Սևակը ամենից առաջ մեծ հայրենասեր էր: Ուսանողների հետ մի հանդիպման ժամանակ Պ.Սևակին հարցրել են՝ ի՞նչ է հայրենասիրությունը: Նա պատասխանել է. «հայրենասիրությունն այն է, որ յուրաքանչյուր մարդ իր գործը կատարում է խղճի մտքով.....երբ ամեն մարդ, ամեն հայ նվիրումով կատարի իր պարտականությունները, իրեն վստահված գործը – դա էլ կլինի իսկական հայրենասիրությունը»:

Պարույր Սևակը հայրենասեր էր ոչ միայն խոսքով, այլև գործով: Նա իր ձեռքով տուն է կառուցել, այգի գցել, երգել ու պարել կոմիտասյան ազգային երգերի ու երաժշտության տակ և պատգամել՝ իրեն թաղել իր տնկած ծիրանենու տակ:

«Ինձ համար իմ ժողովրդի պատմությունը սկսվում է իմ գյուղից... Հենց այդ էլ ինքնաճանաչում է կոչվում...«Ծանի՛ր գրեզ», ... Մեսրոպի ձեռքով գրված առաջին բառերն են...»²:

«Չկա ավելի խորը զգացում, քան հայրենասիրությունը: Եվ սխալվում էին՝ կարծելով, «թե սերը կույր է»: Համենայն դեպս չի կարող կույր լինել սիրո այն տեսակը, որ հայրենիքն է հարուցում»: (5, 209)

Այս խոսքերի վառ հաստատումն են նրա հայրենասիրական ստեղծագործությունները: Հայրենիքի գեղարվեստական կերպարն ստեղծելու ցանկությունը Սևակին ուղեկցել է դեռևս գրական առաջին քայլերից: Այդ ոգու լիարժեք արտահայտությունը դարձան «Հարկ հոգեկան» շարքը, «Եվ այր մի՛ Մաշտոց անուն», «Անլուրի զանգակատուն», «Եռաձայն պատարագ» պոեմները: Տարբեր տարիների նա գրել է նաև հայրենասիրական բազմաթիվ բանաստեղծություններ՝ «Հայրենիք», «Հայաստան», «Մենք քիչ ենք, բայց հայ ենք»....

Սևակի հայրենասիրական պոեզիան անմնացորդ նվիրում է իր ժողովրդի պատմությանը, գոյությունը պահպանելու, հայրենիքը, լեզուն, մշակույթը, հոգևոր կերտվածքն ու ազգային տեսակը չկորցնելու դժվարին մաքառումներին: Նվիրումն ուղեկցվում է երդում – հավաստիացումով, որ «Հայրենիքի» մեջ արտահայտվում է այս սողերով.

*Քեզնով երդվելիս
Ձեռքս դնում եմ իմ սրտի վրա՝
Մեղմելու նման,
Որ... հանկարծակի չպայթի դողից...
Ինձնով երդվելիս
Ափքս դնում եմ քո մի ափ հողին,
Ինչպես իմ նախնիք՝
Սուրբ Գրքին իրենց...*

Սևակը հասնում է հայրենիքի կերպարի իմաստավորման այն սկզբունքին, որ ժողովրդի պատմության և նրա անունից խոսող բանաստեղծ որդու միաձուլումն է մեկ ամողջության մեջ: «Երգ եռաձայնը» այս միասնության հիմնն է.

*Ա՛խ, իմ հայրենի ք...
Դու՜
հազարամյա իմ ազգանունը,
Ես –
այնպես ապրել կարողանայի,
Որ ինձ ազգանուն բաշխելուդ համար*

² Բաբայան Վ., «Պարույր Սևակի հետ», էջ 58:

Դու երբեք անհարմար չգրաս...

1961-1962թթ. Մ.Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի կապակցությամբ Սևակը գրեց գործեր՝ նվիրված հայոց գրին ու նրա ստեղծողին («Խոսք հավաստիքի», «Մայրենի լեզու», «Հայոց լեզու», «Եվ այդ մի՝ Մաշտոց անուն», «Թրի դեմ՝ գրիչ»):

«Խոսք հավաստիքի» բանաստեղծության մեջ հեղինակը խոստանում և հաստատում է, որ նրա ստեղծածը մենք բոլորս՝ ապագա «սերունդ ու սերունդ», ոչ միայն սրբությամբ կպահպանենք, այլև կդառնանք աջակից նրա գործի:

**Չէ՞ որ ինչ-որ տեղ փոքրերս ու Մեծըդ
Հավասարվում ենք, դառնում աջակից.**

- Դու... գործն ես արել,

Մենք... հանձն ենք առել:

«Մայրենի լեզու» բանաստեղծության մեջ շեշտում է, որ ինչքան էլ ուռիւր շատ բանից է մեզ զրկել՝ մեր կերած հացին քսել է ժանգ, մեր խումին խառնել է արցունք ու արյուն, բայց «մենք չենք զրկվել մեր բերնի համից», այլ

- Քաղցրացել ենք մենք... մեր քաղցր բառով,

Սևակն ամբողջությամբ համակված էր Մաշտոցի անձի ու գործի իմաստավորմամբ: Այդ նպատակով գրեց «Թրի դեմ՝ գրիչ» հոդվածը:

«Մաշտոցը մեզ երևում է նախ և առաջ իբրև մի վիթխարի քաղաքագետ, որի շահած անարյուն ճակատամարտի հետ չի կարող համեմատվել մեր սպարապետների փառավոր հաղթանակներից և ոչ մեկը»:

Նա ծնվել է ճիշտ ժամանակին և ապացուցել, որ «վերջը մի տեղ դառնում է սկիզբ, որ հրաշք չկա, այլ կա լոկ կարիք, որ այնտեղ է լոկ սխրանքը սկսվում, ուր վերջանում է ամեն մի հնար»: Այդ սխրանքը Աստծո գործությամբ իրականություն դարձրեց Մ.Մաշտոցը, ստեղծեց մեր անգուգական այբուբենը, որի ամեն մի տառը մի զորագունդ է՝ ուսուցչապետ Մ.Մաշտոցի հրամանատարությամբ:

Ու մեր մայրենին է, որ մեզ հայ է պահել, դարձել մեր գոյատևման հզոր զենքը:

Դու մեր մեծ երթի գավազանակիր

Եվ մեր պատմության մեծագույն դիվան,

Մեր ազնվության գովասանագիր,

Մեր մտքի պահեստ, հոգու օթևան,

Անցյալին պարզված դու մեր լսափող

Եվ մեր խոսափող՝ գալիքին ուղղված,

Դու մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով,

Նարեկացիով օծված ու յուղված:

Մինչև գրերի ստեղծումը մեր ժողովրդի կյանքն անցավ առանց «ինքնահիշողության», և Մաշտոցն էր, որ եկավ դառնալու մեր հիշողությունը. հիշողությունը մեր իսկ գոյության, մեր իսկ մասին:

Մ.Մաշտոցն էր, որ մեզ տվեց ինքնաճանաչում, անվստահության տեղ դնելով ինքնավստահություն, բայց ոչ անձնասպանություն, հուսահատության տեղ՝ հուսալիություն, բայց ոչ կարճատեսություն. հավատաբեկության տեղ՝ հավատ, բայց ոչ ինքնակուրություն, ինչպես նաև

Քանակի դեմ՝ թև,

Թվի դեմ՝ թռիչք,

Արյան դեմ՝ թանաք,

Թրի դեմ՝ գրիչ

Եվ դարանի դեմ՝ Մատենադարան...

«Ազգի ռազմական հանճարը հայրենասիրությունն է, սերը դեպի հայրենիքը»:
(Լիխտենբերգ)

Իսկ Պ.Սևակի հայրենասիրությունը անսահման էր, խորն ու գիտակցված, տառապալից ու հպարտ:

«Յոթ ինստիտուտ ու համալսարան չեն կարող տալ այն, ինչ տալիս է ուսուցիչներից մեծագույնը՝ տառապանքը»: (Պ.Սևակ)

Ու Պ.Սևակը տառապում էր խորապես, նրան ցավ էին պատճառում ու վրդովում սուտն ու կեղծիքը, անարդարությունն ու անազնվությունը, մեծամտությունն ու սնապարծությունը, իսկ ամենից շատ՝ իր ժողովրդին բաժին հասած դառն ճակատագիրը:

Այնպիսի հայրենասեր բանաստեղծ, ինչպիսին Պ.Սևակն էր, չէր կարող անտարբեր լինել իր ժողովրդի ամենամեծ ողբերգության՝ 1915 թվականի ցեղասպանության նկատմամբ:

1956 թվականին Մոսկվայում սկիզբ առավ ստեղծագործական խիզախման հորդառատ մի գետ՝ «Անլռելի զանգակատուն» պոեմը՝ «իբրև ազատագրություն, իբրև թոթափումն այն ապրումների ու խոհերի, որոնք տարիներ շարունակ ավտոմատիկ առնետների նման կրծել էին իմ հոգեպատերը»:

Ամբողջ կյանքում Պ.Սևակը տառապել է կոմիտասասիրությունից: Դա սեր չէր միայն, այլ պաշտամունք, որ պահեց բանաստեղծը ամբողջ կյանքում: Միքում էր կոմիտասյան երգը և երգում էր այնպիսի մի ներշնչանքով ու ոգևորությամբ, որ օտար մեկի կամ լսողության նշույլ իսկ չունեցողի մեջ արյան եռք էր առաջացնում:

Մոսկվայում սովորող հայ ուսանողները Պ.Սևակից են առել Հայաստանի և Երևանի կարոտը, հայ երգի կարոտը, իսկ շատ - շատերն էլ նրա միջոցով ու նրա շնորհիվ են կապվել ու սիրել կոմիտասյան երգը:

Գրել Կոմիտասի մասին հավասարագոր էր գրել հայ ժողովրդի վերջին հարյուր տարվա պատմությունը՝ ժողովրդի կյանքով ու երազանքներով, կենցաղով ու գոյամարտով, երգով ու լացով, եվրոպական դիվանագիտությամբ ու թուրքական բարբարոսությամբ, ազգագրությամբ ու ազգագիտությամբ, անցյալով ու ապագայով:

«Անլռելի զանգակատուն» պոեմը նվիրված է մեր ժողովրդի համար վաղուց ի վեր խորհրդանիշ դարձած անմահ Կոմիտասի կյանքին և նրա գործի պատմական ու ժամանակակից նշանակությանը, ինչպես նաև հայ ժողովրդի համար ճակատագրական դեր խաղացած պատմական այն ժամանակաշրջանի անցուդարձերի գեղարվեստական իմաստավորմանը, որ համընկել է Կոմիտասի կյանքին:

«Անլռելի զանգակատուն» երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունք էր: Բանաստեղծը 19-րդ դարի 70-ական թվականներից մինչև 1915 թվականը հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված դեպքերն ու իրադարձությունները ուսումնասիրել է խստապահանջ պատմաբանի նման և կազմել ժամանակագրական ցանկ:

Բանաստեղծը անընդմեջ փնտրել ու որոնել է, մինչև որ գտել է բանալին ու սկիզբ դրել «Զանգակատան» համազանգերին ու ղողանջներին: «Գործը մտահոգացվել է իբրև համանվագ սիմֆոնիա կամ իր եկեղեցական կարգը նկատի ունենալով՝ իբրև օրատորիա...»: Պոեմի կառուցվածքի երաժշտական բնույթը պայմանավորված է գլխավոր հերոսի՝ Կոմիտասի ստեղծագործական նկարագրով, որի կյանքը հայրենի երգի միջով ճանապարհ է դեպի ժողովուրդը և ժողովրդի ցավի միջով՝ դեպի խելագարություն ու ողբերգություն:

Այս մասին հեղինակը գրել է. «կառուցվածքը՝ ըստ կոմիտասյան երգերի, այսինքն՝ շարադրել Կոմիտասի ողջ կյանքը ըստ նրա համապատասխան երգերի. եթե

որք է՝ «Անտունի», եթե պանդուխտ է՝ «Կռունկ», եթե սիրո մասին է՝ «Սոնա յար»»:

Տեսակով պոեմը պատմականսագրական է: Ըստ Սևակի՝ Կոմիտասի ստեղծագործությունը ավելի շատ հիշեցնում է Մաշտոցի գործը. եթե Մաշտոցը հայոց այբուբենն է ստեղծել, ապա Կոմիտասը հայ երգը մաքրագործել է օտար նստվածքներից, նոտագրել այն ու հնչեցրել զուլալ, անխառը: Բայց պոեմում ոչ մի անգամ չի լսվում Կոմիտասի ձայնը: Նրա խոսքին փոխարինում է ժողովրդական երգը: Կոմիտասը դառնում է երգ և կա այնքանով, որքանով կա երգը:

Կոմիտասի կերպարի բացահայտումը Մաշտոցով, որի անվան մեջ իսկ խտացված է ժողովրդի ազգային դեմքը, ինքնին արդեն հայտնություն էր, հերոսի կերպարը մարմնավորելու բանալի:

Հագվադեպ է պատահում, ինչպես նշում է Սևակը, որ բանաստեղծը կամ արվեստագետը ունենա նշանակալից կենսագրություն, որ համապատասխանի տվյալ դարին ու ժողովրդին: Այդպիսի հագվադեպերից էր Կոմիտասը:

Երբ սկսվեց Եղեռնը, Կոմիտասը Կ.Պոլսում էր, իր գործունեության ծաղկման շրջանում, սակայն հենց այդ պահին էլ վրա է հասնում համազգային ողբերգության ամենացնցող արարը:

Խաղաղ ու հանգիստ պատումով է Սևակն սկսում առաջին գլուխը՝ «Ցայգալույսի համազանգը», որտեղ պատմում է Կոմիտասի կյանքը. որբություն, երգի քննությունը Ամենայն Հայոց կաթողիկոսին, դրան զուգահեռ Կոմիտասի մարդկային ճակատագիրը դիտվում է ժողովրդի պատմության հենքի հետ: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ «Սուլթանն ու արքան Ձեռք ձեռքի տվին Միևնույն թվին»: Սկսվում է մեծ ողբերգության առաջին արարը. «կարմիր» կոչված սուլթանն սկսում է Ադանայի կոտորածը:

Սրան հաջորդում է «Արևագալի համազանգը». պատկերվում է հայոց աշխարհի աշխատանքային առօրյան՝ ամեն պահին բնորոշ կոմիտասյան երգերով:

Գալիս է կյանքի կեսօրը, խփում է «միջօրեի գանգը». նկարագրում է կոմիտասյան երգի ակունքները սնող ժողովրդական սովորություններն ու ծիսակատարությունները:

Հայ երգը հանձին Կոմիտասի արժանանում է միջազգային ճանաչման: («Ծավալվող համազանգ»)

Գեղարվեստական լարվածությունը հասնում է գագաթնակետին՝ ծնունդ տալով «Եղեռնի համազանգին», որի բոլոր դողանջներն ահավոր աղետի գույժ են:

Բազում հանճարների հետ քստրովում է նաև Կոմիտասը, սրը, սակայն, տեսնելով իր ժողովրդի ողբերգությունը, կորցնում է հոգեկան հավասարակշռությունը: «Նախճիր», «Եղեռնական», «Մթագնումի» դողանջներում հնչում է ահավոր ցավի ահավոր ողբը:

Աշխարհի խիղճն է մեռել, հարյուր տարի անց անգամ չեն ճանաչում Հայոց եղեռնը, ընդհակառակը, նոր ցեղասպանությունները շարունակվում են, հատկապես՝ հայերի նկատմամբ (Սուրգայիթ, Շուշի, Արցախ...), և չկա մեկը, որ բռնի չարագործի ձեռքը. անպատժելիությունը ավելի է սրում ոսոխի ատամները, ու Սիամանյոյի նման ուզում ես գոռալ՝ «Ո՛վ մարդկային արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ...»:

Այո՛, քանի քնած է խիղճը, արթուն է դահիճը:

Բայց, ո՞վ Մեծն երգահան, դու վերածնվեցիր, ինչպես քո ժողովուրդը փյունիկի պես հառնեց մոխիրներից, և 20 տարի հետո հանգրվանեցիր քո հող հայրենիի գրկում:

Կոմիտասի վերադարձը հայ երգի վերադարձն էր: Իսկ կոմիտասյան երգը վերջ չունի և պիտի հնչի բոլոր սերունդների հետ մեկտեղ:

Պարույր Սևակի հայրենասիրական տրամադրությունների վերջին արտահայտությունը եղավ «Եռաձայն պատարագ» պոեմը, որը մենախոսության ձևով ընդհանրացնում է Մաշտոցին և Կոմիտասին, հայոց լեզվին ու հայ ժողովրդին նվիրված նախորդ բոլոր երկերում արծարծված հիմնահարցերը:

Հեղինակը նախ փորձում է բանաձևել իր ժողովրդի պատմական ուղին՝ «Ողբամ մեռելոց, բեկանեմ շանթեր, կոչեմ ապրողաց» և ապա այդ ուղին դիտել համաշխարհային պատմության խաչուղիներում: Պոեմն ավարտվում է զանգի պատկերով, որը ոչ թե մշտահունչ է, ինչպես «անլռելի զանգակատունը», այլ այստեղ զանգակատան զանգերը հավերժորեն լուռ են: Այդ զանգերը Մեծ և Փոքր Արարատներն են: Բանաստեղծը դառնում է այս վիթխարի զանգերի զանգահարը՝ բառերի վերածելով նրանց լուռ դողանքը, որ գալիս է դարերի խորքից:

-Համայն աշխարհում

Այդ քանի՞ երկիր Արարատ ունի,-

Ով էլ որ չասի

Աստվածաշունչը իր մագաղաթե դեմքը դեմ կանի

Ու կասի՝ կարդա:

Բսկ Արարատը...

Է՛հ, անունը կա-ամանում չկա...³

Ամեն ինչ սկսվում և ավարտվում է հափշտակված պատմական հայրենիքի և բյուրավոր նահատակների հիշատակի ոգեկոչումով: Չարենցի նման Սևակը ևս իր պատգամն է հղում:

Դու այսուհետև ժողովվես պիտի

Նախ ինքդ քո մեջ, և ապա քո շուրջ...

Նա արծարծում է նաև հայրենիքի և ժողովրդի միավորման այս տեսակետը:

Մեր հայրենիքը մեզնից դատարկվեց:

Բայց... ո՛չ մի վայրկյան, ո՛չ մի ակնթարթ

Մենք չենք դատարկվել մեր հայրենիքից:

Մենք սպանվեցինք մեր հայրենիքում,

Բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց...

«Ընդհանրապես հայրենասեր չեն ծնվում, ինչպես որ չեն ծնվում ատամներով: Հայրենասեր դառնում են, ինչպես որ ատամ են հանում: Բայց ճշմարիտ բանաստեղծը հայրենասեր ծնվում է, ինչպես որ պատահում են նաև ատամնավոր նորածիններ»: (Պ.Սևակ)

Հեղինակը սա կարծես հենց իր մասին է ասել. նա հայրենասեր էր ծնվել, հայրենասիրությունը նրա համար կեցվածք չէր, այլ էություն: Իր ամբողջ էությամբ նա քայլող հայրենասիրություն էր. հայոց լեզվի «հրեղեն խոսքով» հայրենասիրությունը հորդում, ժայթքում էր նրա հրդեհված հոգուց, ինչպես դարերով բանտված հրաբուխը:

Պ.Սևակը հայոց լեզվի ամբողջ գունագեղությամբ ու ճոխությամբ, բազմաթիվ ձևերով ներկայացնում է իր «տառապած ու փառապանծ» ժողովրդի պատմությունը, նրա ազգային հոգեբանությունը, ավանդույթները, հարուստ մշակույթը:

Խոսել Սևակի հայրենասիրական ստեղծագործությունների մասին, բայց չանդրադառնալ նրա «Հայաստան», «Մենք քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծություններին, սխալ կլիներ: Այս բանաստեղծությունները ընդգրկված են դպրոցական դասագրքերում: Հետևաբար, մեր աշակերտների հայրենասիրությունը սնունդ է առնում և

³ Սահակյան Վ., «Մարգարիտներ Պ. Սևակի մտքի զանձարանից», էջ 60:

ձևավորվում հենց այդպիսի ստեղծագործությունների օգնությամբ:

«Հայաստան» բանաստեղծության մեջ հեղինակը հակադրում է հին ու նոր Հայաստանը: Ինչպիսի սիրով, հպարտությամբ է խոսում հեղինակը իր հայրենիքի մասին, երբ դիպուկ որակավորումներով բնութագրում է նրա պատմությունը, մշակույթը, բնաշխարհը, բարոյական արժեքները:

«Մենք քիչ ենք, բայց հայ ենք»: - Այո՛, մենք հպարտ ենք, որ հայ ենք, որովհետև երևի աշխարհի ամենախաղաղասեր ժողովուրդն ենք, որովհետև մենք առաջինն ենք ընդունել քրիստոնեությունը որպես պետական կրոն, առաջիններից մեկն ենք, որ 5-րդ դարից ունեցել ենք սեփական զինուոր, որ աշխարհին տվել ենք հանճարներ՝ Նարեկացի՝ տիեզերական Վարդապետ՝ սրբերի շարքը դասված, Մ.Մաշտոց ու Կոմիտաս, Խ.Աբովյան ու Հ.Թումանյան, Վ.Համբարձումյան ու Ա.Թամանյան, Տ.Պետրոսյան ու Ա.Խաչատրյան...

Հայը կարծես աշխարհի աղն ու ջիղը լինի. որտեղ էլ որ եղել է, «ջանացել է ամենքի համար. պաշտպանել է նրանց հոգևոր ցրտից.

Ամեն տեղ թողել մեր աչքից ցուանք,

Մեր հոգուց մասունք,

Եվ նշխար՝ սրտից:

Հայը հպարտ է, բայց ոչ սնապարծ, որովհետև ինչպես Սևակն է ասում՝ սնապարծությունը ազգային ինքնասպանության ամենադուրիս ձևն է. այն նման է տաք ջրով լեցուն լողարանի մեջ սեփական երակը կտրելուն:

Գուցե հենց այդ սնապարծությունը մեզ հանգեցրեց 2020թ. 44-օրյա պատերազմում պարտությանը:

Դարձյալ անդրադառնանք Պ. Սևակին. «Եթե մենք պարտվել ենք, պարտվել ենք ոչ այն պատճառով, որ թշնամին մեզանից ուժեղ է եղել, այլ մենք չենք ուզեցել հաղթել, չենք դրսևորել մեր հոգու և կյանքի ողջ կարողությունը»⁴:

Սակայն՝ «Այն ժողովուրդը, որը չի ուզում մեռնել, աշխարհի ատոմային ռումբերն էլ գլխին թափեն, չի մեռնի: Իսկ ով բռնել է մեռնելու (ինքնասպանության) ճանապարհը, աշխարհում և ոչ մի աստված էլ նրան փրկել չի կարող»⁵:

Պ. Սևակի նման մեծ բանաստեղծն ու մեծ մարդը միայն կարող էր այսքան խորը ընկալել ու մեկնաբանել իր ժողովրդի ազգային բնավորությունն հոգեբանությունը ընդգծելով իր ժողովրդի ապրելու անկոտրում կամքը:

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПАТРИОТИЧЕСКОЙ ЛИРИКИ ПАРУЙРА СЕВАКА - АРКАДИЙ ТОВМАСЯН - В истории армянского художественного мышления талантливый поэт Паруйр Севак своим произведением озаменовал новый уровень. Он был одним из тех редких поэтов, который имел огромный вражденный талант, острое и глубокое чувство времени, разносторонние знания художественной культуры, умение сочетать традиции и смелые новшества. Родина, народ, история - это не особенности для выдающегося автора. Он хотел видеть на родине таких людей,

⁴ Թովմասյան Ա., Պարույր Սևակի անձի և ստեղծագործության հոգեբանության մի քանի հարցեր, էջ 204:

⁵ Թովմասյան Ա., Պարույր Սևակի անձի և ստեղծագործության հոգեբանության մի քանի հարցեր, էջ 256:

которые были не грузом мира, а мир бы несли на себе. Таких людей, которые ошибались, но не лгали, часто теряли и снова, которые подскользнулись и упали, упали, но не на колени, а карабкались с вершины на вершину, поднимались вверх, укрепляя крылья свои.

Ключевые слова: воспитание, большая резня, преступление, классический, традиционный, духовный, умственный, определить, культура, песнь песней, любовная драма, человековедение, мировоззрение, идеология.

*THE PSYCHOLOGICAL MERITS OF PARUYR SEVAK'S PATRIOTIC LYRIC-
ARKADI TOVMASYAN - Poetry In the history of Armenian artistic thinking a great talent Paruyr Sevak marked a new stage with his works. He was one of the rare ones, who had huge natural talent, sharp and deep sense of time, an artistic ability to combine a multifaceted knowledge of culture, traditions and bold innovation. Motherland, people, history are not unique features for the writer. He wants to see the Motherland surrounded with those people, who were not on the earth, but those, who carried the earth. Surrounded with those people, who had made mistakes, but they did not lie, who had lost very often but again found, who stumbled and fell down, but never knelt down, but they climbed from one pick to another, were forever, have risen from the dreadful centuries.*

Keywords: upbringing, genocide, villainy, classical, traditional, spiritual, intellectual, define, culture, song, love drama, anthropology, world view, ideology.

**ԿՈՄԵՐՑԻՈՆ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՎ ԱՆԻՎԱԿՈՐ ՌԱԶՄԱԿԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԲԱԶՄԱՅԻ ՄՇԱԿՈՒՄ**

Հողվածում ներկայացված են ընդհանուր օգտագործման կոմերցիոն ավտոմոբիլների շահագործման արդյունավետության բարձրացման ուղիներից՝ փոխադրումների ինքնարժեքի նվազեցման խնդրի վերլուծության արդյունքները, տեխնիկական շահագործման տեխնոլոգիական բաղադրիչի, ամորտիզացիոն հատկացումների և նորմաների որոշման մեթոդաբանությունը, մասնավորապես տեխնիկա-տնտեսական եղանակը, ինչպես նաև ավտոմոբիլի որակի փոփոխության դինամիկան շահագործման ընթացքում:

***Բանալի բառեր՝** ամորտիզացիոն նորմա, տեխնիկա-տնտեսական եղանակ, որակական հատկանիշներ, որակի իրացում:*

Ժամանակակից կոմերցիոն ավտոմոբիլների, ինչպես նաև ռազմական անիվալոր տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման գործող դրույթները, դրա հիմքում դրված հայեցակարգը, նորմատիվ բազան և տեխնոլոգիան չեն համապատասխանում անսարքությունների և խափանումների կանխարգելման իրատեսական, փաստացի գործընթացին:

Իրավիճակի հիմնական պատճառը, կանխարգելիչ աշխատանքների անվանացանկի, կատարման պարբերականության և աշխատատարության անհամապատասխանությունն է փաստացի անհրաժեշտությանը: Դա պայմանավորված է տրանսպորտային միջոցների կառուցվածքային նոր լուծումների փաստով և շահագործական նյութերի որակական փոփոխությամբ:

Ստեղծված իրավիճակում գործող դրույթները¹ և ռազմական անիվալոր տրանսպորտային միջոցների շահագործման «պլանը»², դրանցում ամրագրված նորմատիվ բազան, կատարման պարբերականությունը, աշխատանքների անվանացանկը, աշխատատարությունը շատ հաճախ առաջ են բերում ավելորդ, ոչ անհրաժեշտ

¹ Положение о ТО и ремонте подвижного состава автомобильного транспорта утвержд. Министерством автомобильного транспорта РСФСР.

² План-конспект по теме военно-технической подготовке „Организация эксплуатации ремонта и хранение автомобильной техники” <https://shtab.su/>

աշխատանքների կատարում և որպես հետևանք մեծացնում են աշխատանքային և նյութական ծախսերը, ավելանում են ոչ արդյունավետ պարապորտները, նվազում է տրանսպորտային միջոցների պատրաստականության գործակիցը:

Որպես բնութագրական օրինակ նշենք ավտոմոբիլների շարժիչների, արգելակային համակարգի, կցորդման ագույցի և այլ ագրեգատների շահագործական կարգավորումների համար հատկացված աշխատատարությունը, որի անհրաժեշտությունը գործնականում այլևս չկա, քանի որ դրանք լուծված են կառուցվածքային նորույթներով՝ բացի այդ շարժիչի կարտերային և տրանսմիսիայի յուղերի հովացնող հեղուկի մակարդակի և ջերմաստիճանի էլեկտրոնային էլեկտրոմեխանիկական հսկողության կառավարում և այլն³:

Նշված աշխատանքների աշխատատարությունը տեխնիկական սպասարկում(SU2) անվանացանկի մեջ կազմում են 8÷12%:

Ռազմական տրանսպորտային միջոցների շատ մեքենամասեր ժամանակի ընթացքում ֆունկցիոնալ գործողություն չկատարելու պատճառով կորցնում են իրենց հերմետիկությունը, ֆիզիկա-մեխանիկական հատկանիշները, հատկապես ռետինատեխնիկական մեքենամասերը, լծորդումներում առկա վրանները, միացաօղերը, բոլոր տեսակի փականները, զսպանակները, շարժիչի սնման համակարգը մարտական գործողություններ կատարելուց հետո և այլն, որոնց համար անհրաժեշտ է լրացուցիչ աշխատանքների անվանացանկ և աշխատատարություն:

Ներկայացված օրինակներից հետևում է, որ ավտոմոբիլների և անիվավոր ռազմական տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հայեցակարգը, որը հիմնված է պլանա-նախագծուշական ստրատեգիայի վրա, այլևս չի ապահովում թե կոմերցիոն և թե ռազմական տրանսպորտային միջոցների արդյունավետ տեխնիկական շահագործում հուսալիության հատկանիշների բարձր մակարդակով, մասնավորապես անխափան աշխատանքի հավանականության բարձր մակարդակ, անխափան աշխատանքի միջին վազք և գամմա տոկոսային ռեսուրս⁴: Վերջին ցուցանիշը հույժ կարևոր է ռազմական անիվավոր տրանսպորտային միջոցների համար:

Ելնելով ստեղծված իրավիճակից դիտարկենք կոմերցիոն ավտոմոբիլների և անիվավոր ռազմական տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման այլընտրանքային հայեցակարգ, որը հիմնված է պատահական ստրատեգիայի վրա, և իրացվում է տեխնիկական վիճակի վերականգնման կանոնակարգված պարտադիր աշխատանքների անվանացանկով, ըստ գամմա տոկոսային ռեսուրսի երաշխիքային արժեքի:

Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի վերականգնման պա-

³ Моси́кин К.А. и др. „Эксплуатационные регулировки и показатели безотказности двигателя 3М3-402 при работе на сжатом природном газе” World Science Index импакт-фактор> Одесса 2014г. том.2 стр.35-40.

⁴ ГОСТ 27.002-2015, ГОСТ 27.002-89. Надежность в технике.

տահական ստրատեգիան հիմնված է **օրդինար** բնույթի խափանումների (հիմնականում մաշվածության) վերականգնման **ստացիոնար** հոսքի Մոնտե-Կառլոյի եղանակի վրա⁵: Ըստ այդմ խափանումների հավանականությունը որոշվում է Պուասոնի հայտնի արտահայտությամբ.

$$P_k(t) = \frac{(\omega t)^k}{K!} e^{-\omega t} \quad (1)$$

որտեղ՝ $k=0,1,2,\dots$ խափանումների քանակն է t ժամանակամիջոցում

ω - խափանումների հոսքի պարամետրն է :

Իրականում պատահական ստրատեգիայի դեպքում t -ն ընտրվում է կանոնակարգված երաշխիքային վազքի չափով, որը որոշվում է՝

$$\bar{t} = \frac{\sum_{i=0}^n t_i}{n} \quad (2)$$

որտեղ՝ n -ը սպասարկվող ավտոմոբիլների քանակն է:

K -ն որոշվում է շահագործական վիճակագրական փորձարկումների միջոցով, հետազոտելով խափանումների, որպես պատահական մեծությունների բաշխման օրինաչափությունները:

Խափանումների բաշխման օրինաչափությունների հետազոտությունները կատարվելու են ըստ ԳՈՍՏ-27.002-2015 և ԳՈՍՏ 27.002-89 «Հուսալիությունը տեխնիկայում»⁶: Նշված փաստաթուղթը մշակված է Ռուսաստանի Դաշնության կողմից, այն ՀՀ տարածքում գործում է միջկառավարական համապատասխան համաձայնությամբ (արձանագրություն թիվ 84-Պ 28.12.2015թ):

Դիտարկենք կոմերցիոն ավտոմոբիլների և ռազմական անիվալոր տրանսպորտային միջոցների համար պատահական ստրատեգիայի կիրառման նպատակահարմարությունը ըստ դոմինանտ ցուցանիշի:

Կոմերցիոն ավտոմոբիլների համար դոմինանտ ցուցանիշը՝ դա շահագործման ողջ ընթացքում անմերժ աշխատանքի հավանականությունն է: Այն ձևավորվում է ավտոարդյունաբերության կողմից գիտատեխնիկական և տեխնոլոգիական առաջընթացին համապատասխան, պահպանվում է ռացիոնալ տեխնիկական շահագործման ռեժիմների միջոցով, արտադրական և հզորությունների հազեցվածությամբ և շահագործական նյութերի փաստացի որակով: Հաշվի առնելով ավտոմոբիլային տեխնիկայի զարգացման ժամանակակից մակարդակը և դրանով պայմանավորված խափանումների օրդինար բնույթը տեխնիկական վիճակի վերականգնման պատահական ստրատեգիան համապատասխանում է խափանումների վերականգնման ստացիոնար հոսքի բնութագրին:

Ռազմական անիվալոր տրանսպորտային միջոցների համար դոմինանտ

⁵ Вентцель Е.С. „Теория вероятностей”.Москва Наука 1969г. 576стр.

⁶ ГОСТ 27.002-2015, ГОСТ 27.002-89. Надежность в технике.

ցուցանիշը մեքենամասերի գամմա տոկոսային ռեսուրսն է, որը երաշխավորվում է տվյալ տրանսպորտային միջոցի համար: Հայտնի է, որ ռազմական անիվավոր տրանսպորտային միջոցները շահագործման ամբողջ ժամանակամիջոցում մարտական և այլ առաջադրանքներ կատարելու նպատակով պետք է ունենան տեխնիկական պատրաստականության ամենաբարձր գործակից: Տեսական ժամանակ ռազմական տրանսպորտային միջոցները չեն շահագործվում, իսկ տեխնիկական բարձր պատրաստականությունը ապահովվում է ռեգլամենտային աշխատանքների անվանացանկով և խիստ որոշակի պարբերականությամբ⁷: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեքենամասերի որոշակի քանակի սպասարկումը դուրս է մնում ռեգլամենտային աշխատանքների անվանացանկից և որոնց համար անհրաժեշտ է ուսումնասիրել հուսալիության հատկանիշներից կարևորագույնը, որն այս դեպքում հանդիսանում է պահպանելիությունը(сохраняемость).

Հետազոտությունները կատարվել են ըստ ГОСТ-ի⁸ պահանջների, որն ապահովում է արդյունքների ճշգրտություն մինչև 0.95 չափով:

Ուսումնասիրությունները կատարվելու են տրանսպորտային միջոցների փաստացի շահագործման պայմաններում երկու տարիների ընթացքում վիճակագրական տվյալների բարձր հավաստիության և ստացված օրինաչափությունների ադեկվատության բարձր մակարդակ ապահովելու նպատակով:

Հետազոտության արդյունքում մշակվելու և երաշխավորվելու են ներդրման՝

1. Կոմերցիոն ավտոմոբիլների տեխնիկական շահագործման կանոնակարգված ռեժիմներ՝ մշակված ըստ պատահական ստրատեգիայի:
2. Անիվավոր ռազմական տրանսպորտային միջոցների ռեգլամենտային աշխատանքների անվանացանկի փոփոխություններ և լրացումներ ըստ տեխնիկական շահագործման պատահական ստրատեգիայի:

ПОВЫШЕНИЕ ЭФФЕКТИВНОСТИ ЭКСПЛУАТАЦИИ ПОДВИЖНОГО ОСТАВА КОМЕРЧЕСКИХ АВТОМОБИЛЕЙ-ГЕГАМ МИКАЕЛЯН, КАРО МОСИКЯН, АРАМАИС ЕСОЯН-Представлены результат и анализа влияния технологического составляющего технической эксплуатации автомобиля взаимосвязь себестоимости перевозок и нормативов амортизационных отчислений и сроков амортизации а также динамика изменение качества автомобиля за период эксплуатации.

Ключевые слова: норма амортизации, технико-экономический метод, качественные показатели, реализация качества.

⁷ План-конспект по теме военно-технической подготовке „Организация эксплуатации ремонта и хранение автомобильной техники” <https://shtab.su/>.

⁸ ГОСТ 27.002-2015, ГОСТ 27.002-89. Надежность в технике.

IMPROVING THE EFFICIENCY OF COMMERCIAL VEHICLE ROLLING STOCK OPERATION - GEGHAM MIKAYELYAN, KARO MOSIKYAN, ARAMAYIS YESOYAN -

The results of the analysis of the influence of the technological component of the technical operation of the car, the relationship between the cost of transportation and the norms of depreciation and amortization rates, as well as the dynamics of the change in the quality of the car for the period of operation are presented.

Key words: *amortization norm, technique- economical mode, qualitative features, quality implementation.*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Լուստովիկա և Յակոբ Այնթապլեան կենտրոնի տնօրեն, Որակի ապահովման պատասխանատու
2. **ԵՐՎԱՆԴՅԱՆ ԶՈՒԽՐԱ** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **ԱՎԱԳՅԱՆ ԱՆԱՀԻՏ** - Չարենցավանի N2 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, Հայոց լեզվի և գրականության մասնախմբի նախագահ
4. **ԱՂՔԱՅՅԱՆ ԱԶԱՏՈՒՀԻ** - Չարենցավանի N 2 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
5. **ՄԱՐԳԱՐՅԱՆ ԻՆԳԱ** – Գորիսի պետական համալսարան, բանասիրական գիտությունների թեկնածու
6. **ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՅՅԱՆ** – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր
7. **ՆԱԶԱՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ** - Չարենցավանի № 2 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
8. **ԲԱԲԱՅԱՆ ԱՐԵՎԻԿ** - Չարենցավանի № 2 հիմնական դպրոցի անգլերենի ուսուցչուհի
9. **ԲԱՂԵՅԱՆ ԿԱՐԻՆԵ** - «Գյումրու թիվ 29 հիմնական դպրոց» ՊՈԱԳ-ի պատմության ուսուցչուհի
10. **ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ** - «Գյումրու թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԳ-ի պատմության ուսուցչուհի
11. **ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷԼԻՆԱ** - ԱՀ աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության Միգրացիայի և փախստականների հարցերի բաժնի պետ, ԱրՊՀ դասախոս
12. **ՄԻՐՈՒՄՅԱՆ ԺԻՐԱՅՐ** - Գորիսի պետական համալսարանի բանասիրության և պատմաիրավագիտության ամբիոնի դասախոս
13. **ՀՈՎՍԵԹՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ** - ԱՀ վաստակավոր իրավաբան, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ
14. **ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԳՐԵՏԱ** - ԱՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
15. **ԴԱՎԹՅԱՆ ԿԱՐԻՆԵ** - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս
16. **ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԵՆՐԻԿ** - ՀՖՀՀ, ֆինանսներ և կառավարում, մագիստրատուրայի 2-րդ կուրս
17. **ԹՈՎՄԱՅՅԱՆ ԱՐԿԱՂԻ** – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մանկավարժության ամբիոնի դասախոս

18. **ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԳԵՂԱՄ** - տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի բնագիտական առարկաների և մաթեմատիկայի ամբիոնի դասախոս
19. **ՄՈՍԻՑՅԱՆ ԿԱՐՈ** - տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի ազգային ազրարային համալսարան
20. **ԵՍՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՄ** - տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

1. **ГРИГОРЯН АМАЛИЯ** - кандидат филологических наук, доцент, директор западно-армянского арменоведческого научно-исследовательского центра «Нарекаци», ответственная по обеспечению качества
2. **ЕРВАНДЯН ЗУХРА** - кандидат филологических наук, доцент
3. **АВАКЯН АНАИТ**- учительница армянского языка и литературы в основной школе N2 Чаренцавана, председатель подгруппы армянского языка и литературы
4. **АХКАТЯН АЗАТУИ** - учительница армянского языка и литературы в основной школе N2 Чаренцавана
5. **МАРКАРЯН ИНГА** - Горийский государственный университет, кандидат филологических наук
6. **МАНАСЯН АЛЕКСАНДР**- доктор философских наук, член-корреспондент НАН РА, профессор кафедры философии и логики ЕГУ
7. **НАЗАРЯН АЛВАРД** - учитель армянского языка и литературы основной школы N2 Чаренцавана
8. **БАБАЯН АРЕВИК** - учительница английского языка в основной школе N2 Чаренцавана
9. **БАГИЯН КАРИНЕ** - "основная школа N 29 Гюмри" учительница истории ГНО
10. **АРАКЕЛЯН АНАИТ** - "основная школа N 28 Гюмри" учительница истории ГНО
11. **МХИТАРЯН ЭЛИНА** - преподаватель АрГУ, заведующая отделом министерства социального, труда, по вопросам миграции РА
12. **МИРУМЯН ЖИРАЙР** – преподаватель филологической и историко-юридической кафедры горийского государственного университета
13. **ОВСЕПЯН ВЛАДИМИР**- заслуженный юрист РА, заведующий юридической кафедрой в университете "Григор Нарекаци"
14. **АРЗУМАНЯН ГРЕТА** - заслуженный юрист РА, кандидат юридических наук, доцент
15. **ДАВТЯН КАРИНЕ** - преподаватель юридической кафедры степанакертского университета "Григор Нарекаци"
16. **МАНУКЯН ГЕНРИК**- ФУА, финансы и управление, магистрант 2 курса
17. **ТОВМАСЯН АРКАДИЙ**- кандидат педагогических наук, доцент, преподаватель педагогической кафедры степанакертского университета "Григор Нарекаци"
18. **МИКАЕЛЯН ГЕГАМ**- кандидат технических наук, доцент, преподаватель кафедры математики и естественных наук в университете "Григор Нарекаци"
19. **МОСИКЯН КАРО**- кандидат технических наук, доцент НАУА
20. **ЕСОЯН АРАМАИС** - доктор, профессор технических наук.

INFORMATION ABOUT AUTHORS

1. **AMALYA GRIGORYAN** - Candidate of Philological Sciences, Docent, Director of Lutovica and Agob Aintablean Western-Armenian and Armenology Research Centre at Stepanakert «Grigor Narekatsy» University, in charge of Quality Assurance
2. **ZOUKHRA YERVANDYAN** - Candidate of Philological Sciences, Docent
3. **ANAHIT AVAGYAN** – The Teacher of Armenian Language and Literature of Charentsavan N2 basic school, Chairman of the Armenian Language and Literature department
4. **AZATUHI AGHQATYAN** - The Teacher of Armenian language and literature of Charentsavan N 2 basic school
5. **INGA MARGARYAN** – Goris State University, Candidate of Philological Sciences
6. **ALEXANDR MANASYAN** - Doctor of Philosophy, Corresponding Member of NAS RA, Professor of the Chair of Theoretical Philosophy and Logic of YSU
7. **ALVARD NAZARIAN** - The Teacher of the Armenian Language and Literature of Charentsavan Basic School N2
8. **AREVIK BABAYAN** - The teacher of English language of Charentsavan № 2 basic school
9. **KARINE BAGHIYAN** - History teacher of "Gyumri Basic School No. 29" SNPO
10. **ANAHIT ARAQELYAN** - History teacher of "Gyumri Basic School No. 28" SNPO
11. **ELINA MKHITARYAN** – The Head of the Department of Migration and Refugees of the Ministry of Labor, Social and Migration of the Republic of Artsakh, Lecturer of Artsakh State University
12. **JIRAYR MIRUMYAN** -Lecturer of the Chair of Philology, History and Law of Goris State University
13. **VLADIMIR HOVSEPYAN** - Honored Lawyer of the Republic of Artsakh, Head of the Chair of Law at Grigor Narekatsy University of Stepanakert
14. **GRETA ARZUMANYAN** - Honored Lawyer of the Republic of Artsakh, Candidate of Law Sciences, Associate
15. **KARINE DAVTYAN** - Lecturer of the Law Department of the "Grigor Narekatsy" University, Stepanakert
16. **HENRIK MANUKYAN** – French University in Armenia, Finance and Management, 2nd year of master's degree
17. **ARKADI TOVMASYAN** – Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, Lecturer of the Pedagogical Department of the Grigor Narekatsy University, Stepanakert
18. **GEGHAM MIKAYELYAN** - Candidate of Technical Sciences, Associate Professor, Lecturer at the Chair of Natural Sciences and Mathematics, Grigor Narekatsi University, Stepanakert
19. **KARO MOSIKYAN** - Candidate of Technical Sciences, Associate Professor, Armenian National Agrarian University
20. **ARAMAYIS YESOYAN** - Candidate of Technical Sciences, Professor

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ»
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ 2 (12)-2021

Հասարակական գիտությունների հանդես

СТЕПАНАКЕРТСКИЙ УНИВЕРСИТЕТ
«ГРИГОР НАРЕКАЦИ»

ДПРАТУН 2 (12)-2021

Журнал социальных наук

STEPANAKERT «GRIGOR NAREKATSY»
UNIVERSITY

DPRATUN 2 (12)-2021

Journal of Social Sciences

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/8
Ծավալը՝ 18.25 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 300